33R2

28
R-93
333

Գ-5 №79

[illegible]

[illegible]

394.579

1887 [illegible] 6/18. [illegible]

[illegible]

«[illegible] 5»

2010

[illegible] 2001



# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

# ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

որ

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲԸ

ՀԱՄԱՌՕՏԱԲԱՐ ԿԸ ՍՈՐՎԵՑՈՒՆԷ ՔՐԻՍ-
ՏՈՆԷԻՑ ՀԱՐԿԱՒՈՐ

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

---

ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

---

ՆՈՐ ԵՕՐՔ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՏԵՏՐԱԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1883

Armenian.

11420

ՔՈՒ մանկութենէդ 'ի վեր Սուրբ Գիրքերը գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը: Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է, և օգտակար է սորվեցունելու, յանդիմանելու, շտկելու, ու արդարութեան խրատելու համար. որ Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործքերու պատրաստուած: Բ Տիմ. Գ. 15–17:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Пуб. Библиотека
ՀՍՍՀ-ССР А
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
5766
38

2012

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Քրիստոնէական ճշմարիտ հաւատքին մի միայն հաստատ հիմը՝ ու Քրիստոնէի մը լուսաւոր ճամբան առաջնորդողը՝ միայն Սուրբ Գիրքը ըլլալը՝ ինչպէս որ ամէն Քրիստոնեայ ազգ կը վկայէ, ասանկ ալ՝ այն անխախտելի հիմին վրայ հաստատուած և անոր վկայութիւնովը լեցուած գիրքերը կարող են առաջնորդել մեզի դէպ'ի այն շիտակ ճամբան երթալու, և անոր լոյսին ալ հաղորդ ըլլալու: Ուստի աս գրքիս նպատակն ալ ուրիշ բան չէ՝ բայց միայն այն լուսաւոր ճամբային շտկել ամէնուն դիտաւորութիւնը՝ որ անով լուսաւորուին. ու (ինչպէս որ Առաքեալը կ'ըսէ) թող տան խաւարին գործքերը: Աս ճշմարիտ պատճառներէս և մանաւանդ շատ Հայազգի ընթերցմունք սիրողներուն միշտ թախանձանքներէն ստիպուելով՝ որոնք առջի ու երկրորդ տպագրութենէն մեծ օգուտ քաղելով՝ կը փափաքին անոնց ամէն մէկերնին աս պիտանի գրքէս ունենալ՝ թէ՛ իրենց և թէ՛ զաւկըներնուն լուսաւորութեանը համար և առջի ու երկրորդ տպուածներուն թիւը հերիք չըլլալով՝ մինչեւ բարեկամներուն փափաքը լեցունելու համար ձեռք զարկինք անոր երրորդ տպագրութեանը: Իսկ առհասարակ ամէն մարդու՝ և մանաւանդ տղայոց ալ դիւրին հասկըցուելու ըլլալու համար՝ բոլորովին պարզ ու անզարդ բառեր գործածեցինք, չնայելով բնաւ Հայոց լեզուին ընդարձակ ճոխաբանութեանը՝ որով գուցէ ամենահարկաւոր գիտելիքները շատերուն մութ պիտի մնային:

Աստի աւելի՝ թէև փոքրիկ Գիրք մըն է , բայց մեծ օգուտներ կրնայ տալ որ և իցէ հասակի մարդոց . մանաւանդ որ իր պարզութեամբը՝ ռամիկ մարդիկ և նոր հասած տղաքն ալ Ճշմարտութեան սկզբունքները կրնան համառօտաբար ասկից քաղել : Ամէն մէկ յօդուածին սկիզբը դրուած գլուխները՝ նոյն յօդուածին իմաստին վերաբերելուն համար՝ կարդացողը երբոր անոնց հանդիպի , կրնայ բանալ Աստուածաշունչը և նոյն գլուխը կարդալ :

Արդ՝ կը յուսանք որ հոգեսէր վարժապետները իրենց ձեռքի աշակերտներուն , և բարեպաշտ ծնողք իրենց նոր հասած զաւկըներուն մտքին մէջ բարեպաշտութեան հոգին վառելու համար՝ պիտի փափագին կարդացունել անոնց աս ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԸ , և թէ որ կարելի է սերտել տալ . որպէս զի անոնք մանկութեան ժամանակէն կրթուելով հոգևոր գիտութեան մէջ՝ մեծցած ժամանակնին ազգին բարեկարգութեանը՝ և մանաւանդ քրիստոնէութիւնը օրէ օր աւելի ծաղկեցունելու հոգ տանին , իրենց քրիստոնեայ անուններուն համեմատ՝ քրիստոնէավայել վարքով ալ ծաղկելով 'ի փառս Քրիստոսի յուսոյն մերոյ :

# ՑԱՆԿ

## ՄԱՍՆ Ա

## ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ


ա . Աստուծոյ էակ ըլլալուն , և մէկ էակին միայն երկրպագութեան ընծայուելուն վրայ . . . . . 9

բ . Աստուծոյ յատկութիւններուն վրայ . . . . 12

1 . Աստուած անմահ է . . . . . . . 12

2 . Աստուած ամէն տեղ ներկայ է , ու ամէն բան գիտէ . . . . . . . . . 14

3 . Աստուած ամենակարող է . . . . . 16

4 . Աստուած սուրբ է . . . . . . . 18

5 . Աստուած բարի ու ողորմած է . . . . 20

6 . Աստուած արդար է . . . . . . . 24

7 . Աստուած Ճշմարտութեան Աստուած . . 28

գ . Սուրբ Երրորդութեան վրայ . . . . . . 32


## ՄԱՍՆ Բ

## ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ


ա . Բարի հրեշտակներու վրայ . . . . . . 37

բ . Չար հրեշտակներու վրայ . . . . . . . 41

## ՄԱՍՆ Գ

## ՄԱՐԴՈՒՆ ՎՐԱՅ


ա. Աստուծոյ ստեղծագործութեանը վրայ . . . . 47
բ. Դրախտին վրայ . . . . . . . . . . . 50
գ. Մարդուն փորձութեանը վրայ . . . . . . 52
դ. Մարդուն առաջին մեղքն ու իյնալը . . . . 56
ե. Մեր առաջին ծնողացն իյնալուն վրայ . . . . 60
1. Անոնք անհնազանդ եղան ու Դրախտէն դուրս ձգուեցան . . . . . . . . . 60
2. Մեր առաջին ծնողաց բոլոր սերունդը կորսուեցաւ իրենց մէկ մեղքովը . . . . 64
զ. Փրկութեան ճամբուն վրայ . . . . . . . . 69
1. Աստուած կը պատրաստէ մեզի համար կատարեալ փրկութիւն . . . . . . 69
2. Յիսուս Քրիստոսի մեր Փրկչին ով ըլլալը . 73
ա. Ինքը Աստուած է . . . . . . . . . . 73
բ. Ինքը մարդ է . . . . . . . . . . . 77
3. Ինչու Քրիստոս մարդ եղաւ . . . . . 81
4. Քրիստոս մեզ պատիժէն կ'ազատէ . . 85
5. Յիսուս Քրիստոս չարչարուեցաւ ու մեռաւ մեզի համար խաչին վրայ . . . . . 89
6. Տէր Յիսուս մեռաւ ամենուն համար . . 94
7. Անոնք միայն կը փրկուին՝ որ Յիսուսի կը հաւատան . . . . . . . . . . 97
8. Ի՞նչ է Յիսուս Քրիստոսի հաւատալը . 99
է. Մեր Քրիստոսի գալուն ու Երկինքին համար պատրաստուելուն վրայով . . . . . . . 105
1. Մենք կամք չունինք Քրիստոսի գալու մեր փրկութեանը համար. հապա Աստուած է որ կը փոխէ մեր սիրտերը ու իր Հոգիովը Քրիստոսի կ'առաջնորդէ մեզ . 105
2. Մենք պարտինք սրտի փոփոխութիւն ունենալ. այս սրտի փոփոխութիւնը ի՞նչ է, և ի՞նչպէս Սուրբ Հոգին իր գործը կը կատարէ ու Երկինքին համար կը պատրաստէ մեզ . . . . . . . . . 110
3. Սուրբ Հոգին կը խօսի մեզի Աստուածաշունչով . . . . . . . . . . 115
4. Սուրբ Հոգիին ով ըլլալը . . . . . 123
ը. Մահուան վրայ . . . . . . . . . . 127
1. Մարմինին մեռնելուն վրայ . . . . . 127
2. Հոգին ի՞նչ կ'ըլլայ երբոր մարմինը մեռնի 131
թ. Յարութեան վրայ . . . . . . . . . 133
ժ. Դատաստանին վրայ . . . . . . . . 139
ժա. Երկինքի վրայ . . . . . . . . . 144
ժբ. Դժոխքին վրայ . . . . . . . . . 149


---

## ՄԱՍՆ Դ

## ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ ՎՐԱՅ


ա. Օրէնքը տրուելուն վրայ . . . . . . . . 155
բ. Տասը Պատուիրաններուն վրայ . . . . . 158
Առաջին Պատուիրանքը . . . . . . 158
Երկրորդ Պատուիրանքը . . . . . . 162
Երրորդ Պատուիրանքը . . . . . . 167
Չորրորդ Պատուիրանքը . . . . . . 169
Հինգերորդ Պատուիրանքը . . . . . 175
Վեցերորդ Պատուիրանքը . . . . . . 180

Եօթներորդ Պատուիրանքը . . . . . 187
Ութերորդ Պատուիրանքը . . . . . 193
Իններորդ Պատուիրանքը . . . . . 198
Տասներորդ Պատուիրանքը . . . . . 202
Գ. Մասնաւոր պարտաւորութիւններու վրայ . . 207
1. Էրիկներուն պարտաւորութիւնը . . . 207
2. Կնիկներուն պարտաւորութիւնը . . . 209
3. Ծնողքներուն պարտաւորութիւնը . . . 211
4. Տղայոց պարտաւորութիւնը . . . . 216
5. Տէրերուն պարտաւորութիւնը . . . . 216
6. Ծառաններուն պարտաւորութիւնը . . . 218
7. Իշխաններուն պարտաւորութիւնը . . . 220
8. Ժողովուրդին պարտաւորութիւնը . . . 222


# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

## ՄԱՍՆ Ա

## ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ

### ա. ԱՍՏՈՒԾՈՅ ԻՆՉ ԸԼԼԱԼՈՒՆ, ԵՒ ՄԵՆՔ ԻՆՉՊԷՍ ԻՐԵՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ԸՆԵԼՆՈՒՍ ՎՐԱՅ։

Հարց. Ի՞նչ է Աստուած։

Պատասխան. Աստուած Հոգի է։

(Անիկայ) մարդիկներէն մէկը չտեսաւ, ոչ ալ տեսնելու կարող է։ ա Տիմ. Զ. 16։

Հ. Մենք ի՞նչպէս երկրպագութիւն ընելու ենք Աստուծոյ։

Պ. «Հոգիով ու ճշմարտութիւնով»։ Յովհ. Դ. 23, 24։

Հ. Օրը քանի՞ անգամ Աստուծոյ երկրպագութիւն ընելու ենք։

Պ. Գոնէ ամէն առտու ու իրիկուն։

Իրիկունը՝ առտուն ու կէս օրը պիտի բողոքեմ ու հառաչեմ, և անիկայ պիտի լսէ իմ ձայնս։ Սաղ. ԾԵ. 17։

Հ . Աստուծոյ Հոգի ըլլալուն վրայով ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչը :

Պ . "Աստուած Հոգի է . և իրեն երկրպագողներուն ալ պէտք է որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն" : Յովհ . Դ . 24 :

Հ . Ի՞նչ բանի համար ստեղծուեցանք :

Պ . Տէրոջը երկրպագութիւն ընելու և իրեն ծառայելու համար :

Ինչու որ ամէն բաները անկէ , ու անով , և անոր համար են . իրեն փառք յաւիտեանս . ամէն : Հռովմ . ԺԱ . 36 : Արդ՝ թէ՛ ուտէք թէ՛ խմէք՝ և թէ՛ ի՛նչ գործ որ ընէք , ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք : ա Կորնթ . Ժ . 31 :

---

Դուք հիմա գիտէք Աստուծոյ ի՛նչ ըլլալը : Մենք միս ու արիւն ունեցող մարմիններ ունինք . բայց Աստուած մեզի պէս չէ՛ . Ինքը Հոգի է . Ինքը ամէն տեղ ներկայ է . բայց մենք չենք կրնար տեսնել զինքը :

Հիմա գիտէք թէ ի՛նչպէս երկրպագութիւն ընելու էք Աստուծոյ . "Հոգիով" . այսինքն Հոգիի մը պէս (ա) .

---

ա . Դուն քեզի կուռք չշինես ո՛չ ալ վերը երկինքի մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը . Անոնց երկրպագութիւն չընես , ու զանոնք չպաշտես . ինչու որ ես քու Տէր Աստուածդ՝ նախանձոտ Աստուած եմ որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս . Եւ կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն : Երկրորդ Պատուիրանք . Ելից Ի . 4–6 : Որովհետև Աստուծոյ ցեղէն ենք , պէտք չէ որ անանկ սեպենք թէ Աստուածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի կամ քարի , որ մարդուս վարպե-



և ձեր հոգիովը , ձեր սրտովը իրեն աղօթելով ու մեղքերնիդ խոստովանելով , զինքը օրհնելով՝ սիրելով և ձեր բոլոր սրտովը իրեն ծառայելով : "Պէտք է երկրպագութիւն ընէք ճշմարտութիւնով ալ", այսինքն առանց կեղծաւորութեան , անկեղծ սրտով :

Ա . Աստուած կը սիրէ ու կը հաճի միայն անոնց՝ որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն կ'ընեն իրեն : Զգուշացէք ուրեմն որ Աստուծոյ երկրպագութիւն ըրած ատեննիդ հոգիով ու ճշմարտութիւնով ընէք :

Բ . Ամէն մարդիկ՝ ծեր ու պատանի , երկրպագութիւն ընելու են Աստուծոյ , հրապարակաւ ու առանձին : Հրապարակաւ՝ եկեղեցիին մէջ , և ընտանեաց մէջ . առանձին՝ գոնէ օրը երկու անգամ , առտու ու իրիկուն մէկ մասնաւոր տեղ մը՝ ուր որ մէկը չկրնար տեսնել կամ լսել բայց միայն Աստուած (ա) :

Ոմանք երկրպագութիւն կ'ընեն Աստուծոյ՝ օրը իրեք անգամ , առտու , ու ցորեկը , ու գիշերը :

Գ . Աստուած մեզ իրեն համար ստեղծեց , որ միշտ իրեն երկրպագութիւն ընենք ու իրեն ծառայենք : Ուստի թէ որ կ'ուզէք որ Աստուած սիրէ ձեզ ու ձեզի բարի ընէ , թէ որ կ'ուզէք երջանիկ ըլլալ աս աշխարհիս մէջ ու գալու աշխարհին մէջն ալ , երկրպագութիւն ըրէք Աստուծոյ "Հոգիով ու ճշմարտութիւնով" : ա Տիմ . Դ . 8 , 9 : "Աստուծո՛յ մօտեցէք , ու անիկայ ձեզի պիտի մօտենայ" : Յակ . Դ . 8 :

---

տութիւնովը ու խելքովը քանդակուած է : Գործ . ԺԷ . 29 : Դուք Աստուածը որո՞ւ կը նմանցունէք , ու զանիկայ ի՞նչ նմանութեան հետ կը հաւասարցունէք : Եսայ . Խ . 18 :

ա . Մտի՛ր քու ներքին սենեակդ , ու դուռդ գոցէ՛ : Մատթ . Զ . 6 :

## ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ։

### 1. Աստուած անմահ է

Հ. Ո՞վ ստեղծեց ու ո՞վ կը խնամէ ամէն բաները։

Պ. Աստուած։ Ծննդ. Ա. 1։

Հ. Աստուած ինքը ստեղծուա՞ծ է։

Պ. Չէ՛։ Եսայ. ԽԴ. 6։

Հ. Հայր ունի՞։

Պ. Չէ՛. ինքը հայր չունի։ Եփես. Է. 6։

Հ. Ուրեմն թէ որ Աստուած ստեղծուած չէ ու հայր ալ չունի, ո՞վ իրեն կեանք կու տայ։

Պ. Մէկը չտար։

Հ. Ուրեմն հայր Աստուած ի՞նչպէս ունի իր կեանքը։

Պ. Հայրը իր անձին մէջը ունի կեանք։ Յովհ. Ե. 26։

Հ. Աստուած սկիզբ ունեցա՞ւ։

Պ. Չէ՛։

Հ. Աստուած փոփոխութիւն կամ վերջ ունի՞։

Պ. Չէ՛։ Ծննդ. ԻԱ. 33։ Սաղմ. Ղ. 2։

Հ. Մեր ու ամէնուն կեանքը ո՞վ կու տայ։

Պ. Աստուած. քանզի "Անով կ'ապրինք և կը շարժինք ու կանք"։ Գործ. ԺԷ. 28։

Հ. Յաւիտեանս յաւիտենից պիտի ապրի՞նք։

Պ. Մեր մարմինները պիտի մեռնին, բայց հոգիներնիս պիտի ապրին։

Հ. Հապա մեր մարմինները պիտի յարութիւն չառնե՞ն վերջին օրը նորէն ապրելու համար։

Պ. Այո. "Յարութիւն պիտի ըլլայ, թէ՛ արդարներուն և թէ՛ մեղաւորներուն"։ Գործ. ԻԴ. 15։



Աստուած անմահ է. ինքը բնաւ սկիզբ չունեցաւ, բնաւ վերջ ալ պիտի չունենայ։ Ինքը չփոխուիր. ինքը նոյն է երէկ, այսօր, և յաւիտեան։

Ա. Ինքն է յաւիտենական հայրը, ինքն է կենաց Աղբիւրը ու ամէն բաներուն մեզի Տուողը։ "Անով կ'ապրինք և կը շարժինք, ու կանք"։ Հայրերնիս և մայրերնիս ու բարեկամներնիս աս աշխարհքիս մէջ կը մեռնին, ու մեզ մինակ կը ձգեն. բայց մեր երկնաւոր Հայրը ասոնցմէ աւելի մեծ է, և անմահ։ Ինքը անմահ է ու կրնայ հոգ տանիլ մեզի՝ մեր տղայութենէն մինչև գերեզմանը։ Սաղմ. ՃԳ. 1–5։

Բ. Իսկ քանզի ինքը կենդանի է, մենք ալ կենդանի պիտի ըլլանք։ Մենք անմահ ենք. մեր մարմինները կը մեռնին, բայց Աստուած նորէն պիտի յարուցանէ անոնք. մենք հոգիով ու մարմնով պիտի ապրինք յաւիտեան. աս է ճշմարտութիւնը։ Բ Տիմ. Ա. 9, 10։

Գ. Իսկ աս ուրախութիւն տուող ճշմարտութիւն մըն է մեզի՝ թէ որ մենք արդար ենք։ Թէ որ մենք արդար ենք, Աստուծոյ հետ երկինքին մէջը պիտի ըլլանք յաւիտեան։ Բայց ցաւելու ճշմարտութիւն մըն է թէ որ մենք չար ենք. ինչու որ սատանաներուն հետ պիտի բնակինք դժոխքին մէջը յաւիտեան։ Մատթ. ԻԵ. 46։

Դ. Ինչպէս Տէրն է՝ որ աս ներկայ կեանքերնիս կու տայ մեզի, անանկ ալ Տէրն է՝ որ անիկայ կ'առնէ մեզմէ։ Ուրեմն ջանք ընենք անանկ ապրիլ աս ներկայ կեանքերնուս մէջ, որ երբ Աստուած անիկայ առնելու ըլլայ, մենք կարենանք պատրաստ գտնուիլ իր դէմը ելլելու, ու իր հետը փառքի մէջ բնակելու՝ գալու կեանքով (ա)։

---

ա. Դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդոյ կու գայ անանկ ժամու մէջ՝ որ դուք չէք կարծեր։ Ղուկ. ԺԲ. 40։

2 . Աստուած ամէն տեղ ներկայ է , ու ամէն բան գիտէ ։

Հ . Աստուած ո՞ւր է ։

Պ . Աստուած ամէն տեղ է ։

Մէկը ծածուկ տեղուանք կրնա՞յ պահուիլ՝ որ ես զանիկայ չտեսնեմ , կ'ըսէ Տէրը . միթէ երկինքը ու երկիրը լեցնողը ես չե՞մ , կ'ըսէ Տէրը ։ Երեմ . իգ . 24 ։

Հ . Ինքը ի՞նչ կը տեսնայ ու գիտէ ։

Պ . Ամէն բաները ։ Գործ . ժե . 18 ։

Հ . Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը "Տէրոջը աչքերուն" վրայով ։

Պ . "Տէրոջը աչքերը ամէն տեղ չարերը ու բարիները կը դիտեն" ։ Առակ . ժե . 3 ։ Բ Մնաց . ժզ . 9 ։ Երեմ . լբ . 19 ։

Հ . Ընաւ ինքզինքնիս կրնա՞նք Աստուծմէ գաղտուկ տեղ մը պահել ։

Պ . Չէ՛ . ո՛չ ցորեկ և ո՛չ գիշեր ։ Երեմ . իդ . 24 ։ Սաղմ . ճլթ . 10 ; 12 ։ Յոբ . լա . 4 ։ Եբր . դ . 13 ։

Հ . Ի՞նչ էր ան անունը՝ որն որ Հագար Աստուծոյ տուաւ ։

Պ . "Տեսիլքիս մէջ երեւցած Աստուածն ես" ։ Ծննդ . ժզ . 13 ։ Առակ . ե . 21 ։

Հ . Թէ որ մեզմէ մէկը իմաստութեան կարօտի , որմէ՞ խնդրելու է ։

Պ . Աստուծմէ . ինչու որ բոլոր գիտութեան և բոլոր իմաստութեան Տէրը Աստուած է ։

Թէ որ ձեզմէ մէկը իմաստութենէ պակսած ըլլայ , թո՛ղ խնդրէ Աստուծմէ՝ որ ամէնուն առատապէս կու՛տայ ու չնախատեր , և անոր պիտի տրուի ։ Յակ . ա . 5 ։ Սաղմ . ղդ . 10 ։ Ճնէ . 5 ։ Եսայ . խ . 28 ։



Հ . Աստուած ի՞նչ տուաւ Սողոմոնին ։

Պ . "Եւ Աստուած Սողոմոնին իմաստութիւն ու խիստ շատ հանճար տուաւ" ։ Գ Թագ . դ . 29 ։

Հ . Ամէն մարդու ներսիդին ի՞նչ է ան՝ որն որ Աստուած միայն կատարելապէս գիտէ ։

Պ . Սիրտը ։

Վասն զի բոլոր մարդոց որդիներուն սիրտը մինակ դուն գիտես ։ Գ Թագ . ը . 39 ։ Սաղմ . խգ . 21 ։ Հռովմ . ը . 16 ։ Ա Կորնթ . դ . 5 ։

Հ . Ի՞նչ կ'ըսուի սրտին խաբեբայութեանը ու չարութեանը վրայով ։

Պ . "Սիրտը ամէն բանէն աւելի խաբեբայ ու խիստ չար է" ։ Երեմ . ժէ . 9 ։ Ծննդ . զ . 5 ։ ը . 21 ։ Հռովմ . գ . 10–19 ։ Եփես . բ . 3 ։ Տիտ . գ . 3 ։

Հ . Ինչո՞ւ համար Աստուած բոլոր մարդոց սիրտերը կը քննէ ։

Պ . Ամէն մէկուն իր գործքերուն պէս հատուցանելու համար ։ Ա Մնաց . իը . 9 ։ Սաղմ . ճլթ . 23 , 24 ։ Երեմ . ժէ . 10 ։ Յայտ . բ . 23 ։

---

Տէրը կը լեցունէ երկինքն ու երկիրը . ինքը ներկայ է ամէն տեղ , և կը տեսնայ ու գիտէ ամէն բաները ։

Ա . Ուստի թէ որ պառկինք թէ որ ելլանք , կամ թէ որ դուրս երթանք , և կամ ներս գանք , ո՛ւր որ ըլլանք , ի՛նչ որ ընելու ըլլանք , Աստուած մեր բոլորտիքն է ։ Մենք կրնանք մարդոցմէ պահուիլ , բայց Աստուծմէ ընաւ չենք կրնար ։ Ցորեկը ու գիշերը մէ՛կ է անոր . միշտ յիշենք ան անունը՝ որն որ Հագար Աստուծոյ տուաւ . "Տեսիլքիս մէջ երեւցած Աստուածը" . և վարուինք իբր թէ իր ներկայ ըլլալը զգալով . վախնանք գողնալէն , կամ սուտ խօսելէն , կամ անիծելէն կամ ո՛և իցէ չար բան մը ընելէն . քանզի ամէն բան Աստուած կը տեսնէ ու գիտէ ։

Բ. Ինքը նաև կը տեսնէ չէ թէ միայն մեր չար գործքերը, հապա բարի գործքերնիս ալ։ Ուստի եկէք քաջալերուինք բարի ընելու. Աստուած կը տեսնէ, և ներկայ է մեզի հետ, ու պիտի օրհնէ մեզ. մենք չպիտի կորսնցունենք մեր վարձքը։ Մատ. Զ. 18։

Գ. Միայն Աստուած գիտէ սիրտը. Ինքը չէ թէ միայն մեր գործքերը կը տեսնէ, հապա մեր սիրտերուն պինտ գաղտուկ խորհուրդներն ալ։ Ինքը մեզմէ աղէկ գիտէ մեզ. մենք կրնանք մարդ խաբել, բայց Աստուած չենք կրնար խաբել։ Ինքը կը գրէ ու պիտի դատէ ամէն սիրտի ամէն գաղտուկ խորհուրդները։ Աղաչենք Աստուծոյ Քրիստոսի անունովը որ գայ ու իշխէ մեր սիրտերուն մէջ և փոխէ ու սրբէ անոնք, և անանկ մեզ երկինքին համար պատրաստ ընէ։

Դ. Բոլոր իմաստութեան Տէրը Աստուած է. և բարի կերպով կը նայի ամէն բաները։ Մենք փափաքելու ենք որ Աստուած մեզի համար անանկ ընէ ճիշդ ինչպէս որ իրեն աղէկ կը թուի. և մենք հաճելու ենք ինչ որ ինքը ընէ. և երբոր իմաստութեան կարօտինք, երբոր ուզենք գիտնալ թէ ինչ պարտինք ընել կամ չընել, Աստուծմէ խնդրելու ենք որ ինքը մեզի սորվեցունէ։

---

3. Աստուած ամենակարող է։

Հ. Աստուած իր ամենակարող զօրութիւնը ցուցունելու համար ի՞նչ ըրաւ։

Պ. Աշխարհը՝ արեգակը՝ լուսինը՝ և աստղերը ստեղծեց ու կը կառավարէ անոնք։ Ծննդ. Ա. 1։ Յոբ. ԻԶ. 7։ Եսայ. Խ. 26։ Կող. Ա. 15, 16։ Եբր. Ա. 2, 3, 10։

Հ. Աստուած ի՞նչպէս ստեղծեց անոնք։

Պ. Իր կարող խօսքովը։ Ծննդ. Ա. 3։ Սաղմ. ԼԳ. 6–9։ Եբր. ԺԱ. 3։



Հ. Մէկը կրնա՞յ արգիլել զինքը՝ իր ուզածը ընելէն։

Պ. Ոչ։ Եսայ. ԽԳ. 13։ Դան. Դ. 3։

Հ. Ամենակարող Աստուածը մեր Աստուածը ու մեր փրկիչը ունենալնուս համար ի՞նչ պիտի ընենք։

Պ. Պարտինք մեծապէս ուրախանալ։

Հ. Կրնա՞նք մեղքի մէջ ամուր պահել ինքզինքնիս Ամենակարող Աստուծոյ դէմ ու յաջողութիւն ալ գտնալ։

Պ. Ոչ։

Անիկայ սրտով իմաստուն՝ և ուժով կարող է. ո՞վ անոր դէմ իր սիրտը խստացուցեր ու յաջողութիւն գտեր է։ Յոբ. Թ. 4։ Ամբարիշտները դժոխքը պիտի դառնան և ան ամէն ազգերը որ զԱստուած կը մոռնան։ Սաղմ. Թ. 17։ ԿԶ. 7։

Հ. Ո՞րուն ձեռքը իյնալը սոսկալի բան է։

Պ. Կենդանի Աստուծոյ ձեռքը։

Արդ իմացէք ասիկայ՝ ո՛վ դուք Աստուած մոռցողներ, չըլլայ որ ձեզ պատռեմ, և ազատող մըն ալ չգտնուի։ Սաղմ. Ծ. 22։ Դուն ո՛վ Տէր, Դուն ահաւոր ես՝ և ո՞վ կրնայ կայնիլ քու առջևդ քու բարկութեանդ ատենը։ Սաղմ. ՀԶ. 7։ Բորբոքած կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ Աստուած չեն ճանչնար, և որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանին չեն հնազանդիր. որոնք պիտի պատժուին յաւիտենական սատակումով Տէրոջը երեսէն ու անոր զօրութեանը փառքէն։ Բ Թես. Ա. 8, 9։

---

Աստուած ամենակարող է. ամէն բաները ինքը ստեղծեց ու ինքը կը պահէ իր կարող խօսքովը։ ''Ինքը ըսաւ, ու եղաւ''. Աստուծոյ առջին դժուարին բան մը չկայ. դուք կրնաք արգիլել մարդը, բայց ոչ զԱստուած։ Երեմ. ԼԲ. 27։

Библиотека ... ССРА

Ա. Ինքը կարող է փրկելու. ուստի մինակ իր յաւիտենական զօրութեանը ապաւինելու ենք։ Ինքը կարող է բոլոր մեզի պէտք եղածը տալու, մեզ ամէն վտանգներէ ազատելու և մեզ ամէն փորձութիւններուն մէջէն ապահով տանելու։ Բ̅ Կորնթ. ժբ̅. 9։ Ոչ մարդու՝ ոչ ալ սատանային զօրութիւնը կրնայ վնասել մեզի՝ թէ որ Աստուած մեզի հետ ըլլայ։ Բ̅ Տիմ. դ̅. 17, 18։ Հոգիին փրկութիւնը ապահով է երկրի վրայ. թող ուրախանան իր ժողովուրդները (ա̅)։

Ե. Ինքը կորսնցունելու ալ կարող է. մէկը չկրնար կայնիլ իր առջևը, ոչ ալ շատ զօրաւոր մեղաւորները։ Ինքը կրնայ կտոր կտոր ջարդել անոնք, ու մէկը չկրնար ազատել անոնք։ Իր բարկութիւնը ահագին է։

“Սոսկալի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը”։ Եբր. Ժ. 31։ Աստուծոյ զօրութիւնը չարերուն դէմ կը դառնայ, անոր համար թող չարերը վախնան, և ապաշխարեն ու Յիսուս Քրիստոսի միջնորդութիւնովը Աստուծոյ դառնան։

---

4. Աստուած սուրբ է։

Հ. Երբոր Եսայի մարգարէն Տէրը իր աթոռին վրայ նստած՝ ու հրեշտակներուն իրեն երկրպագութիւն ընելը տեսաւ, անոնք ի՞նչ կը կանչէին մէկզմէկու։

Պ. “Սուրբ, սուրբ, սուրբ, Զօրութեանց Տէրը, լեցուն է իր փառքովը բոլոր երկիրը”։ Եսայ. զ̅. 1-4։ Յայտ. դ̅. 8։

Հ. Անիրաւութիւն մը կա՞յ Աստուծոյ քով։

Պ. Ոչ՛. ոչ մեղք, ոչ անօրէնութիւն և ոչ անիրաւութիւն։ Սաղմ. ձժա̅. 6։ Եսայ. խգ̅. 15։ Գործ.

---

ա̅. Որ Աստուծոյ զօրութեամբը պահպանուած էք հաւատքով՝ ան փրկութեանը համար՝ որ պատրաստուած է վերջին ժամանակը յայտնուելու. որ անով կ'ուրախանաք։ ա̅ Պետ. ա̅. 5։



դ̅. 14։ Յովէ. ա̅. 13-17։ Հռովմ. թ̅. 14։ ա̅ Յովհ. ա̅. 5։

Հ. Ի՞նչ տեսակ տեղ մըն է երկինքը՝ ուր որ Աստուած կը բնակի։

Պ. Սուրբ տեղ մըն է։ Յայտ. իա̅. 10, 27։ իբ̅. 14, 15։

Ես բարձր ու սուրբ տեղը կը բնակիմ։ Եսայ. ծէ̅. 15։

Հ. Ի՞նչ կ'ընէ Աստուած չարերը։

Պ. Կ'ատէ զանոնք։ Սաղմ. ե̅. 4, 5։ ժա̅. 5, 7։ լդ̅. 16։ Յոբ. ժե̅. 14-16։

Հ. Ի՞նչ կ'ընէ Աստուած արդարները։

Պ. Կը սիրէ զանոնք։ Սաղմ. ժա̅. 7։

Հ. Թէ որ մենք սուրբ չըլլանք. Աստուած մեզ երկինքը պիտի ընդունի՞։

Պ. Ոչ՛։

Եւ հոն բնաւ անմաքրութիւն մը պիտի չմտնէ, ոչ ալ պղծութիւն ու ստութիւն գործող մը։ Յայտ. իա̅. 27։

Հ. Աստուած մեր սուրբ ըլլալուն վրայով ի՞նչ կ'ըսէ մեզի։

Պ. “Սուրբ եղէք, քանզի ես սուրբ եմ”։ ա̅ Պետ. ա̅. 15, 16։ Ղևտ. ժթ̅. 2։

Հ. Ի՞նչ բանի պարտինք հետևիլ՝ թէ որ Տէրը տեսնել ուզենք։

Պ. “Սրբութեան”։

Խաղաղութեան ետևէ՛ եղէք ամէնուն հետ՝ և սրբութեան, որ առանց անոր մէկը պիտի չտեսնէ Տէրը։ Եբր. ժբ̅. 14։ Ինչպէս որ ձեր անդամները անօրէնութեան համար ընծայեցիք՝ պղծութեան և անօրէնութեան ծառաներ ըլլալու, անանկ ալ հիմա ձեր անդամները սրբութեան համար ընծայեցէք՝ արդարութեան ծառաներ ըլլալու։ Հռովմ. զ̅. 19։

Աստուած սուրբ է․ Իր բնութիւնը իսկապէս սուրբ է․ իր սրբութիւնն է իր փառքը․ Ինքը անհուն մաքրութիւն է բոլոր իր խորհուրդներուն և խօսքերուն ու ճամբաներուն մէջը։ Ինքը կ՚ատէ մեղքը մեծ ատելութիւնով։

Ա․ Թէ որ Աստուած սուրբ չըլլար, իր ստեղծուածներուն սիրոյն արժանի չպիտի ըլլար։

Բ․ Ինքը կը սիրէ արդարները․ Ինքը պիտի հոգայ անոնք, ու երկինքին մէջ իր առջեւը տեղ պիտի տայ անոնց։

Գ․ Ինքը կ՚ատէ չարերը, և պիտի կորսնցունէ զանոնք․ վա՜յ իր սրբութիւնը արհամարհողներուն․ Թող մարդ չյուսայ թէ իր մեղքերուն մէջ առաջ երթալով՝ զԱստուած պիտի տեսնայ խաղաղութեամբ։

Դ․ Ուրեմն բնաւ մենք չենք կրնար երջանիկ ըլլալ, ոչ ալ Աստուծոյ շնորհքը առնելու յուսալ՝ թէ որ չդադարինք մեղքէն ու սրբութեան չհետեւինք։ Մեր սրբութիւնը իր օրէնքին հնազանդիլն է, խորհրդով՝ խօսքով՝ և գործով։ Ու աս սրբութիւնը Տէրոջմէն կը ստանանք (ա)։

---

5 · Աստուած բարի ու ողորմած է։

Հ․ Միայն ո՞վ բարի է։

Պ․ Աստուած միայն կատարելապէս բարի է ինքիրմէն, և բարի կ՚ընէ մեզի ու ամէն արարածներուն։ Սաղմ․

ա․ Ո՛վ Աստուած՝ իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ՛, և իմ ներսիդիս ուղիղ հոգի նորոգէ՛։ Ու երեսէդ մի՛ ձգեր, ու քու Սուրբ Հոգիդ ինծմէ մի՛ հաներ։ Սաղմ․ ծա․ 10–12։ Բայց որոնք որ զինքը ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը․ որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմնի կամքէ՝ ոչ ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան։ Յովհ․ ա․ 12, 13։ Իր ուզելովը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքովը որ մենք իր ստեղծածներուն երախայրի մը ըլլանք։ Յակ․ ա․ 18։



ճժթ․ 68։ Մատթ․ ժթ․ 17։ ա Մնաց․ ժզ․ 34։ Ելց լդ․ 6։

Հ․ Ըսէ՛ ինծի Աստուծոյ քեզի ըրած բարիքներուն մէկ քանին։

Պ․ Աստուած ինքը կու տայ մեզի հայր ու մայր, ուտելիք ու խմելիք, և հագնելու լաթեր․ և երբոր մենք հիւանդ ըլլանք՝ ինքը մեզ կ՚առողջացունէ։

Հ․ Ասոնցմէ պինտ աւելի մեծ բարութիւններն ալ չընե՞ր Աստուած։

Պ․ Այո՛․ Աւետարանը տարածուած երկրի մէջ մեզ կը բնակեցունէ, և մեզի իր սուրբ պատգամը կու տայ։

Հ․ Աստուծոյ մեզի ըրած բարերարութիւններուն մենք արժանի՞ ենք։

Պ․ Չէ՛։

Հ․ Ինչո՞ւ համար։

Պ․ Ինչու որ իրեն դէմ մեղանչեցինք։

Հ․ Մեզի մեղաւորներուս համար Աստուած ի՞նչ ամենամեծ բան ըրաւ՝ որ կը ցուցնէ թէ ինքը ոչ միայն բարի է, այլ նաև ողորմած։

Պ․ Ինքը իր Որդին մեզի համար մեռնելու խրկեց։ ա Յովհ․ դ․ 9, 10։

Հ․ Աստուած՝ որ մեզի հետ բարի ու ողորմած կերպով վարուեցաւ՝ ի՞նչպէս կը պատուիրէ մեզի իրարու հետ վարուիլ։

Պ․ Մենք ալ իրարու հետ բարի ու ողորմած կերպով վարուելու ենք։ Մատթ․ ե․ 44։

Գթած եղէք՝ ինչպէս որ ձեր Հայրն ալ գթած է։ Ղուկ․ զ․ 36։ Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է։ Մատթ․ ե․ 48։

Հ․ Աստուծոյ բարութիւնն ու ողորմութիւնը մեզ ի՞նչ բանի կ՚առաջնորդէ․

Գ. "Ապաշխարութեան":

Անոր անչափ քաղցրութիւնը՝ և համբերութիւնն ու երկայնմտութիւնը կ'արհամարհե՞ս, չգիտնալով որ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ դէպ'ի ապաշխարութիւն կ'առաջնորդէ: Հռովմ. Բ. 4:

---

Աստուած բարի է, և բարի կ'ընէ. երկինքն ու երկիրը լեցուն են իր բարութիւնովը. ամէն կենդանիները կը վայելեն իր բարութիւնը: Թռչունները, անասունները, ձուկերը, ճճիները, սողունները իր առատալից ձեռքովը կը կերակրին: Ինքը քաղցր խնամքով հոգ կը տանի անոնց ամենուն (ա): Սաղմ. ճդ. 19–30: Յոբ. լը. 41:

Մենք զԱստուած բարկացուցինք մեր վրայ՝ իրեն դէմ մեղք գործելովնիս, անանկ որ արժանի չենք իր բարութեանը: Ուստի մեզի ըրած բոլոր իր բարութիւնները ողորմութիւն է. իր ողորմութիւնն է որ մենք կ'ապրինք ու կը տեսնենք արեգակին և լուսնին զուարճալի լոյսը, և կը վայելենք գարունը՝ երբոր ծառերը ու խոտերը կը կանանչնան. ամառը՝ երբոր կ'ուտենք գեղեցիկ պտուղներ. աշունը՝ երբոր կը ժողվենք ցորենը. և ձմեռը՝ երբոր կը տաքնանք կրակին տաքութիւնովը: Իր ողորմութիւնն է որ մենք հայր ու մայր ունինք, ուտելիք ու խմելիք, մէջը բնակելու համար տուներ՝ և հագնելու լաթեր:

Իր ողորմութիւնն է որ մենք երբոր հիւանդ ըլլանք, մեզ կ'առողջացունէ. և երբոր մենք վնասուելու կամ սպաննուելու վտանգին մէջն ըլլանք, ինքը մեզ կ'ազատէ:

Ամէն բանէն աւելի իր ողորմութիւնն է որ իր Որդին մեզի համար մեռնելու խրկեց. և որ մենք կը բնակինք անանկ երկրի մը մէջ՝ ուր որ Յիսուս Քրիստոսի Աւետա-

ա. Ամենուն աչքերը քեզի կը սպասեն. ու ժամանակին անոնց կերակուրը դուն անոնց կու տաս: Քու ձեռքըդ կը բանաս, ու ամէն կենդանիին փափաքը կը լեցընես: Սաղմ. ճխե. 15, 16:



րանը գիտցուած է ու կը քարոզուի. քանզի տակաւին միլիոնաւոր մարդիկ կան որ Աւետարանը չունին և չեն գիտեր: Բայց մենք ունինք Աստուածաշունչը, եկեղեցիներ, Կիրակին, Քրիստոնէական գիրքեր, և բոլոր ան բաները որ հարկաւոր են մեր հոգիներուն փրկութեանը համար:

Ա. Պէտք է մեզի որ զգանք մեր մեղանչականութիւնը ու անարժանութիւնը, և փառաբանենք զԱստուած մեզի ցուցուցած բոլոր իր ողորմութիւններուն համար: Թէ որ Աստուծոյ ողորմութիւնը չըլլար, չէինք կրնար ապրիլ՝ աշխարհն ալ չէր կենար: Սաղմ. ճզ. 4:

Բ. Նաև պէտք է որ իր ողորմութիւնը մեզ ապաշխարութեան առաջնորդէ: Հռովմ. Բ. 4:

Բայց մենք մեր կենացը մէջ որչափ ատեն Աստուծոյ ողորմութիւնը չարաչար գործածեցինք ու իր Որդին անարգեցինք: Ասանկ կենցաղավարութիւն ունենալէն աւելի ուրիշ ի՞նչ բան կրնայ ցուցընել մեր սիրտերուն խորունկ չարութիւնը:

Չար կերպով գործածուած ողորմութիւնը աւելի սոսկալի բարկութիւն կը բերէ մեր վրայ: Մատթ. ժա. 21–24: Ուրեմն շուտ ապաշխարութիւնով Աստուծոյ հետ հաշտութիւն խնդրելու ենք իր Որդիին միջնորդութիւնովը:

Գ. Մենք պարտինք ողորմած ըլլալ, ինչպէս որ Աստուած ողորմած է իր ամէն արարածներուն:

Մենք պարտինք սնուցանել և հոգ տանիլ մեր բոլորտիքը եղած բոլոր արարածներուն. մեղք է բուն մեր զուարճութեանը համար անոնք մեռցունել, անօթի կամ ցուրտ պահելով սատկեցունել, ծեծել, չարչըրկել, չափէն աւելի աշխատցունել, կամ անոնցմէ մէկը տանջել: Աստուած ստեղծեց անոնք, և մեզի պէս անոնք ալ զգացում ունին (ա):

Նաև պարտինք իրարու ողորմած ըլլալ, մեզի դէմ եղած

ա. Արդարը իր անասուններուն կենացը համար հոգ կը տանի. բայց ամբարիշտներուն աղիքները անողորմ են: Առակ. ժբ. 10:

անիրաւութիւնները ներելով, անիծողը օրհնելով, ատելութեան փոխարէն սէր՝ չարին փոխարէն բարի հատուցանելով. ամէնուն բարերար ըլլալով և մանաւանդ խեղճերուն, հիւանդներուն, անօգնականներուն, տառապեալներուն: Մատթ. Ե. 7: Հռովմ. ԺԲ. 17–21: Մատթ. Ե. 43, 44: Յակ. Բ. 13–16:

---

6. Աստուած արդար է:

Ծննդ. ԺԸ. 1–28:

Հ. Երբոր արդարները կը մեռնին, ո՞ւր կ՚երթան:

Պ. Երկինք:

Հ. Իսկ չարերը ո՞ւր կ՚երթան:

Պ. Դժոխք:

Հ. Ո՞վ կը խրկէ զանոնք հոն:

Պ. Աստուած:

Հ. Աստուած ամենուն Դատաւորն է՞, և միշտ ինչ որ իրաւ ու արդար է՝ ան պիտի ընէ՞:

Պ. Հրամերես:

Քաւ լիցի քեզ ասանկ բան ընելը՝ որ արդարը ամբարշտին հետ մեռցընես, ու արդարը ամբարշտի պէս ըլլայ. քաւ լիցի քեզ. միթէ բոլոր երկրին Դատաւորը արդարութիւն պիտի չընէ՞: Ծննդ. ԺԸ. 25: Ինչու որ կու գայ երկիրը դատելու. պիտի դատէ աշխարհքը արդարութիւնով, ու ժողովուրդները իր ճշմարտութիւնովը: Սաղմ. ՂԶ. 13:

Հ. Աստուծոյ ամէն մարդ վարձատրելուն վրայով ի՞նչպէս կ՚ըսէ Սուրբ Գիրքը:

Պ. “Ամէն մէկուն իր գործքերուն համեմատ հատուցում պիտի ընէ”: Մատթ. ԺԶ. 27: Ա Կորնթ. Գ. 8: Բ Մնաց. ԺԹ. 7:



Հ. Ի՞նչ ըրաւ Աստուած ան հրեշտակներուն՝ որ մեղանչեցին երկինքին մէջը:

Պ. Դժոխքը ձգեց զանոնք:

Վասն զի թէ որ Աստուած մեղք գործող հրեշտակներուն չխնայեց, հապա խաւարի կապերով տարտարոսը ձգած՝ դատաստանի պահել տուաւ: Բ Պետ. Բ. 4:

Հ. Ի՞նչ ըրաւ Աստուած հին աշխարհի մեղաւորներուն:

Պ. Ջրհեղեղով խեղդեց զանոնք: Ծննդ. Զ, Է գլուխները:

Հ. Ի՞նչ ըրաւ Սոդոմ Գոմոր չար քաղաքները:

Պ. Կրակով ու ծծմբով այրեց զանոնք: Ծննդ. ԺԹ:

Հ. Ի՞նչ կը սորվինք աս ամէն բաներէն:

Պ. Աս ամէն բաներէն կը սորվինք թէ Աստուած անշուշտ պիտի պատժէ չարերը:

Անօրէնները թէև ձեռք ձեռքի տալով միաբանին, անպատիժ պիտի չմնան: Առակ. ԺԱ. 21:

Հ. Աստուած ո՞ր մարդը փրկեց տապանով՝ երբոր հին աշխարհը կորսնցուց:

Պ. Արդար Նոյը:

Հ. Աստուած ո՞ր մարդը փրկեց երբոր Սոդոմ ու Գոմոր քաղաքները այրեց:

Պ. Արդար Ղովտը:

Հ. Ի՞նչ կը սորվինք ասկէց:

Պ. Ասկէց կը սորվինք թէ ինքն անշուշտ պիտի փրկէ արդարները:

Հ. Կրնայի՞նք Աստուած սիրել ու իրեն ապաւինիլ՝ թէ որ ինքը ամէն բան իրաւունքով ու արդարութեամբ չընէր:

Պ. Ոչ:

Հ. Թէ որ Աստուած՝ միշտ ինչ որ իրաւ ու արդար է ան կ'ընէ, մեզմէ ալ ի՞նչ ընել կը պահանջէ:

Պ. Ինչ որ իրաւ՝ ու արդար է:

Ուստի ամէն ինչ որ կ'ուզէք՝ որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք. քանզի աս է օրէնքն ու մարգարէները: Մատթ. է. 12:

Հ. Թէ որ մէկը անիրաւութեամբ վարուի մեզի հետ ու զրկանք մը ընէ, որո՞ւն նայելու ենք, և մեզի օգնելու համար ո՞վ կանչելու ենք:

Պ. Աստուծոյ դիմելու ենք:

Բայց ինծի աւելի ոչինչ բան մըն է, որ ձեզմէ դատուիմ՝ կամ մարդոց դատողութենէն, մանաւանդ որ ես ալ իմ անձս չեմ դատեր. (վասն զի ես իմ անձիս վրայով չար գործ մը չեմ գիտեր. բայց չէ՛ թէ ասով կ'արդարանամ.) հապա զիս դատողը Տէրն է: Ուրեմն ժամանակէն առաջ դատողութիւն մի՛ ընէք, մինչև որ գայ Տէրը՝ որ խաւարին գաղտնիքը 'ի լոյս պիտի հանէ, ու սրտերուն խորհուրդները յայտնի պիտի ընէ. և ան ատենը ամէն գովութիւնը Աստուծմէ պիտի ըլլայ: ա Կորնթ. դ. 3–5: Որ կը նախատուէր, և փոխարէնը չէր նախատեր. կը չարչարուէր, ու սպառնալիք չէր ըներ. հապա ինքզինքը արդարութեամբ դատողին կը յանձնէր: ա Պետ. բ. 23: Չարութեան փոխարէն մէկուն չարութիւն մի՛ հատուցանէք. ամէն մարդոց առջևը բարի բաներ ընելու հոգ տարէք: Որչափ որ կարելի է ձեզի՝ ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք: Սիրելիք, վրէժխնդրութիւն մի՛ ընէք ձեր անձերուն համար, հապա բարկութեան տե՛ղ տուէք. ինչու որ գրուած է. Վրէժխնդրութիւնը իմս է. ես պիտի հատուցանեմ՝ կ'ըսէ Տէրը: Ուստի թէ որ քու թշնամիդ անօթեցեր է՝ հաց տուր անոր, և թէ որ ծարաւի է՝ ջո՛ւր տուր անոր. քանզի աս



ընելով՝ անոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի դիզես: Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիով յաղթէ չարին: Հռոմ. ժբ. 17–21:

Հ. Ի՞նչպէս պէտք է սիրել զԱստուած:

Պ. Մենք պարտինք սիրել զԱստուած մեր բոլոր սրտովը, մտքովը և զօրութիւնովը:

Հ. Ի՞նչպէս պէտք է սիրել մեր ընկերը:

Պ. Պարտինք սիրել մեր ընկերը մեր անձին պէս.

---

Աստուած արդար է. անկարելի է որ Աստուած անանկ բան մը ըսէ կամ ընէ որ իրաւ ու արդար չըլլայ: Իր արարածները կատարեալ արդարութեամբ կը դատէ: Ինքը մէկ մեղք մը պիտի չձգէ առանց դատելու. ինքը մէկու մը աչառութիւն պիտի չընէ. ոչ պզտիկի, ոչ մեծի, ոչ արուի ոչ ալ էգի, ոչ հարուստի ոչ ալ աղքատի, ոչ ծառայի ոչ ալ ազատի, ոչ իմաստունի ոչ ալ յիմարի, ոչ հրեշտակի ոչ ալ մարդու: Ինքը պիտի քննէ և յայտնէ ամէն սրտերուն գաղտնիքները, ու պիտի վարձատրէ ամէն մարդուն իր գործքերուն պէս: Ամէն մարդուն պիտի ըլլայ անաչառ քննութիւն և արդար դատաստան:

Ա. Ուրախացէք Աստուծոյ արդարութեանը համար, քանզի ամէն բան ուղիղ պիտի ելթայ վերջը: Արդարները պիտի վարձատրուին և չարերը պիտի պատժուին: Սաղմ. հէ: Եսայ. ժա. 21: բ Պետ. բ. 4–9: Իսկ երբոր խաբութեամբ ու անիրաւութեամբ վարուելու ըլլան մեզի հետ, մեր պարտքը Աստուծոյ արդար դատաւորին նայիլն է մեզ պաշտպանելու համար, և ինքը անշուշտ այնպէս պիտի ընէ (ա):

---

ա. Ես սեղանէն լսեցի՝ որ կ'ըսէր. Այո՛՝ Ամենակալ Տէր Աստուած, քու դատաստաններդ արդար եւ ճշմարիտ են: Յայտ. ժզ. 7:

Բ. Մենք պէտք է որ դողանք արդար Աստուծոյ առջեւը. մենք ամէնքս մեղաւոր չե՞նք. մեր մեղքերը արդարապէս պատժուելու արժանի չե՞ն. Ի՞նչպէս պիտի ազատինք անկէց՝ միայն Յիսուս Քրիստոսով: Ինքը կը վճարէ Աստուծոյ մեր մեղքերուն համար, ու Աստուած կը ներէ մեզի իրեն համար: Բայց թէ որ մենք չհաւատանք Յիսուսին՝ թէպէտ կարելի է որ անպատիժ մնանք աս աշխարհիս մէջ, բայց անշուշտ պիտի պատժուինք գալու աշխարհին մէջ: Հռովմ. գ. 20–26: ա Յոհ. ա. 9: Սաղմ. լա. 3, 4:

Գ. Ինչպէս որ Աստուած արդար է, մեզմէ ալ անանկ արդար ըլլալ կը պահանջէ: Պէտք է որ արդար ըլլանք առ Աստուած. իր սուրբ անունին արժան եղած փառքը տալով, սիրելով ու պաշտելով զինքը բոլոր սրտով, մտքով ու զօրութիւնով: Պէտք է որ արդար ըլլանք առ մարդիկ ամենուն մեր պարտաւորութիւնը կատարելով: Սիրէ՛ քու ընկերդ քու անձիդ պէս: Մատթ. է. 12: Հռովմ. ժգ. 8–10: ա Կորնթ. զ. 8–10: Նաեւ պէտք է որ արդար ըլլանք դէպ'ի մեր անձին: Առաջ մեր խիստ լաւ օգուտը խնդրելով՝ այսինքն մեր անմահ հոգիներուն փրկութիւնը (ա):

---

7. Աստուած ճշմարտութեան Աստուած է:

Գործ. ե. 1–10:

Հ. Աստուած ճշմարտութեա՞ն Աստուած է ու միշտ ճշմարտութիւնը կը խօսի՞:

Պ. Հրամերես: Բ Օրին. լբ. 4: Սաղմ. ձը. 15:

ա. Բայց առաջ խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը եւ անոր արդարութիւնը, ու աս բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուի: Մատթ. զ. 33: Ինչու որ մարմնին վարժութիւնը քիչ բանի օգտակար է, բայց Աստուածպաշտութիւնը ամէն բանի օգտակար է, որ թէ՛ ներկայ եւ թէ ապառնի կենաց խոստմունքն ունի: ա Տիմ. դ. 8:



Հ. Ի՞նչ կ'ըսուի Աստուծոյ անսուտ ըլլալուն վրայով:

Պ. «Անկարելի է Աստուծոյ սուտ զրուցել»:

Որ երկու անփոփոխելի բաներով՝ որոնցմով անկարելի է Աստուծոյ սուտ զրուցել, հաստատուն մխիթարութիւն ունենանք մենք՝ որ ապաստանեցանք առջեւնիս դրուած յոյսը ամուր բռնելու: Եբր. զ. 18: Յաւիտենական կենաց յուսովը, որ ինքը անսուտ Աստուածը խոստացաւ յաւիտենական դարերէն առաջ: Տիտ. ա. 2: Այլ այն Աստուած ճշմարիտ թող ըլլայ, եւ բոլոր մարդիկ՝ սուտ. ինչպէս որ գրուած է. Որ քու խօսքերուդ մէջ արդար ըլլաս, եւ դատուելու ատենդ դուն յաղթես: Հռովմ. գ. 4:

Հ. Ի՞նչ է ան պատուիրանքը որ մեզի կ'ըսէ, «Սուտութիւնը մէկդի ձգելով»:

Պ. «Սուտի սուտութիւնը մէկդի ձգելով, ճշմարտութի՛ւն խօսեցէ՛ք ամէն մէկերնիդ իր ընկերին հետ»: Եփես. դ. 25: զ. 14: Կող. գ. 9:

Հ. Ի՞նչ կ'ըսուի սուտ խօսող շրթունքներուն վրայով:

Պ. «Սուտ շրթունքը Տէրոջը զզուելի է»: Առակ. ժբ. 22:

Հ. Նաեւ ի՞նչ կ'ըսուի սուտ խօսող լեզուին վրայով:

Պ. «Սուտ շրթունքը Տէրոջը զզուելի է»: Առակ. ժբ. 22: զ. 16, 17.

Հ. Ո՞րոնք էին՝ սուտ մը զրուցելնուն համար՝ մահով պատժուողները:

Պ. Անանիան ու իր կնիկը Սափիրան: Գործ. ե. 1–10:

Հ. Կրնա՞նք սուտ մը զրուցել ու Աստուած չգիտնայ անիկայ:

Պ. Ոչ՛:

Ե. Բոլոր սուտ խօսողները, իրենց բաժինը հուր պիտի ունենան ։

Զ. "Կրակով ու ծծումբով վառած լճին մէջը" ։ Յայտ. ի՟ա. 8, 27 ։ ի՟բ. 15 ։

---

Աստուած ճշմարտութեան Աստուած է. անկարելի է իրեն որ սուտ խօսի. հիմա ինքը չխօսիր մեզի երկինքէն ։ Առաջուց կը խօսէր. և իր մեզի ըսելու ամէն բաները, այսինքն իր պատգամները, պատուիրանքները, խոստումները, սպառնալիքները Աստուածաշունչին մէջը կը գտնենք, այսինքն՝ Աստուծոյ Գրքին մէջ, որն որ բոլոր ուրիշ գրքերէն պինտ շատ վեր է, և է Գիրք Ճշմարտութեան ։

Ա. Մենք բնականաբար հակամիտեալ ենք Աստուծոյ չհաւատալու. և թէպէտ կ'ըսենք որ կը հաւատանք իրեն, բայց անանկ կը շարժինք՝ որպէս թէ իր ըսածը սուտ էր. աս է Աստուած սուտ զրուց ընելը և իր բարկութիւնը մեր վրայ բերելը ։

Բ. Մենք մեր թերահաւատութեանը վրայ սուգ ընելու ենք. և աղաչելու ենք Աստուծոյ որ տայ մեզի հաւատացող սիրտ մը, որ լսենք ու հնազանդինք իր ձայնին ։ Իր խօսքերուն ապաւինելու ենք. եթէ ինքը ըսէ որ երկինք ու դժոխք կան, կան ուրեմն երկինք ու դժոխք. եթէ ինքը ըսէ մեզի, թէ՝ անոնք որ կ'ապաշխարեն ու կը հաւատան՝ պիտի փրկուին. և անոնք որ չեն ապաշխարեր ու չեն հաւատար՝ պիտի կորսուին, անանկ պիտի ըլլայ. վերջապէս ինչ որ ըսէ ինքը՝ ճշմարիտ է. ուրեմն մեր պարտքը ու մեր օգուտն է մտիկ ընել ու հնազանդիլ իր խօսքին ։

Գ. Աստուած կը պահանջէ մեզմէ ճշմարիտ ըլլալ խօսքի ու գործքի մէջ՝ ինչպէս որ ինքն անանկ է ։

Նախ՝ ճշմարիտ ըլլալ մեր երկրպագութեանը և Աստուծոյ պաշտօնին մէջ ։ Երբոր մենք իր պաշտօնին մէջ ճշմարիտ ըլլանք, ինքը կ'ուրախանայ մեր վրայ, և մենք



կրնանք ինքզինքնիս իր հաւատարիմ պահպանութեանը յանձնել (ա) ։

Երբոր ճշմարիտ չըլլանք, ինքը մեզի ստախօսներու և կեղծաւորներու ու անհաւատներու պէս կը նայի որ լճին մէջը պատժուելու համար պատրաստուած են (բ) ։

Երկրորդ՝ մեր բոլորտիքը եղած ամենուն հետ ճշմարիտ ըլլալու ենք. ստախօսը գէշ անձ է՝ որ անիկայ Աստուած ալ կ'ատէ, մարդն ալ ։ Սուտզրուցին վերջը միշտ գէշ է ։ Սատանան է սուտը և ստութեան հայրը (գ) ։ Շատ ապահով ու լաւ է ձեզի որ միշտ ճշմարիտ խօսիք ամէն բանի մէջ (դ) ։ Թէ որ յանցանք մը ընես կամ ուրիշներուն յանցանք ընելը տեսնես, անոր վրայով շիտակը ըսէ ։ Թէ որ բան մը խոստանաս, կատարէ անիկայ. թէ որ բան մը պարտք ունիս, վճարէ անիկայ. թէ որ մէկէն

---

ա. Տէրը մօտ է ան ամենուն՝ որ զինքը կը կանչեն, ան ամենուն որ ճշմարտութեամբ զինքը կը կանչեն ։ Սաղմ. ճխե. 18 ։ Ուստի անոնք որ Աստուծոյ կամացը համեմատ կը չարչարուին, բարիք գործելով իրենց հոգիները թող անոր յանձնեն, իբրև հաւատարիմ Ստեղծողին ։ ա Պետ. դ. 19 ։

բ. Ահա դուն ճշմարտութիւն կ'ուզես երիկամունքներու մէջ, ու ծածուկ տեղը իմաստութիւն պիտի գիտցունես ինծի ։ Սաղմ. ծա. 6 ։ Թէ որ ըսենք թէ Անոր հետը հաղորդութիւն ունինք, ու խաւարի մէջ պտըտինք, սուտ կը զրուցենք՝ և ճշմարտութիւնը չենք ըներ ։ ա Յովհ. ա. 6 ։ Ան որ կ'ըսէ՝ թէ Ես անիկայ ճանչցայ, ու անոր պատուիրանքները չպահեր, ստախօս է, և անոր մէջը ճշմարտութիւն չկայ ։ ա Յովհ. բ. 4 ։

գ. Դուք ձեր հօրմէն սատանայէն էք, ու ձեր հօրը բաղձանքը կ'ուզէք ընել. անիկայ սկիզբէն հետէ մարդասպան էր, և ճշմարտութեան մէջ չկեցաւ, ինչու որ անոր ներսի դին ճշմարտութիւն չկայ. երբոր անիկայ ստութիւն խօսի, բուն իրեններէն կը խօսի. քանզի անիկայ ստախօս է և անոր հայրը ։ Յովհ. ը. 44 ։

դ. Ճշմարտախօս շրթունքը միշտ հաստատ կը մնայ. բայց ստախօս լեզուն վայրկենական է ։ Առակ. ժբ. 19 ։

բան մը կ'ուզես , խնդրէ անկէց . ուղիղ լեզուի պէս ուղիղ ձեռք ունեցի՛ր . սուտզրուցները Աստուծոյ արքայութիւնը չեն կրնար մտնել . անոնք Թշուառաբար պիտի կորսուին :

---

## Գ . ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ :

Մատթ . իը . 1–20 :

Հ . Քանի՞ Աստուած կայ :

Պ . Կայ միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Աստուած մը : Բ Օրէն . զ . 4 : Եսայ . խդ . 6 , 8 : Ա Կորն . ը . 4 :

Հ . Քանի՞ անձինք կան Աստուածութեան մէջ :

Պ . Երեք :

Հ . Ի՞նչ են անոնց անունները :

Պ . Հայր , Որդի , և Սուրբ Հոգի : Մատթ . իը . 19 : Բ Կորն . ժգ . 13 :

Հ . Աս երեք անձինքը միայն մէ՞կ Աստուած են :

Պ . Հրամերես . միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Աստուած են :

Հ . Ի՞նչպէս ստուգիւ գիտենք ասիկայ :

Պ . Աստուածաշունչը ասանկ կ'ըսէ մեզի :

Հ . Մեր Փրկիչը ի՞նչպէս մկրտել պատուիրեց Առաքեալներուն , և անոնցմէ ետքը եղած բոլոր պաշտօնեաներուն :

Պ . "Յանուն Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն Սրբոյ" :

Հ . Ինչո՞ւ աս անուններով մկրտուելու ենք , ու՞ անոնց երկրպագութիւն և պաշտօն մատուցանելու ենք :

Պ . Քանզի ան երեք անձինքը միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Աստուած են : Ա Յովհ . ե . 7 :



Հ . Մե՛ր Երկնաւոր Հայրը ի՞նչ ըրաւ մեզի համար :

Պ . Իր Որդին մեզի համար մեռնելու ղրկեց :

Հ . Որդին ի՞նչ ըրաւ :

Պ . Որդին՝ մեռնելով խաչին վրայ մեր մեղքերուն հատուցումը ըրաւ , և հիմա իր Հօրը աջ կողմը նստած անդադար բարեխօսութիւն կ'ընէ մեզի համար :

Հ . Սուրբ Հոգին մեզի համար ի՞նչ կ'ընէ :

Պ . Մեր սիրտերը կը փոխէ , և մեզ երկինքին համար կը պատրաստէ :

---

Կայ միայն մէկ Աստուած Ստեղծիչ երկնի և երկրի . և Աստուածութեան մէջ երեք անձինք կան . Հայրը , Որդին և Սուրբ Հոգին . աս երեքը մէկ Աստուած են . "նոյն են էութեամբ , հաւասար են զօրութեամբ և փառօք" : Անկէց զատ ուրիշ Աստուած մը չկայ : Ասիկայ գիտենք , ինչու որ բուն Աստուծոյ խօսքէն ասանկ կը սորվինք :

Ա . Անոնք որ Աստուծոյ Բանը չունին՝ իրենց տգիտութիւնովը և չարութիւնովը կը կարծեն որ շատ աստուածներ կան , և իրենք կուռքեր կը շինեն ու անոնց երկրպագութիւն կ'ընեն : Աղօթենք Աստուծոյ որ ղրկէ անոնց Աստուածաշունչը , որ մէկ դի ձգեն իրենց սուտ աստուածները , և սիրեն ու պաշտեն ճշմարիտ Աստուածը :

Բ . Կան ոմանք ալ որ Աստուծոյ խօսքերը ունին , բայց շիտակ չեն հասկընար և չեն ուզեր շիտակ հասկընալ . անոնք կ'ըսեն թէ Աստուածութեան մէջ երեք անձինք չկան : Անոնք կործանեալ սխալի մէջ են , և մենք աղօթելու ենք Աստուծոյ որ իր Բանը լսելու պինտ աւելի իմացողութիւն տայ անոնց :

Գ . Որովհետև միայն մէկ Աստուած կայ , պարտինք երկրպագութիւն չընել և չծառայել ուրիշ մէկու մը Աստուծոյ պէս . և Աստուծոյ տեղը՝ հրեշտակի մը՝ կամ մարդու մը՝ և կամ ուրիշ ստեղծուածի մը երկրպագութիւն

ընելը, կամ աղօթելը, կամ հաղորդիլը, դատապարտելի մեղք մըն է:

Դ. Մենք պարտինք երկրպագութիւն ընել և պատուել Հայրը և Որդին և Սուրբ Հոգին իբրև Աստուած, որ արժանի են հաւասար սիրոյ և օրհնութեան և փառաց: Ասկէ զատ ուրիշ կերպով չենք կրնար հաճոյական երկրպագութիւն մատուցանել Աստուծոյ. բայց ասկէ բոլոր ուրիշ երկրպագութիւնները և բոլոր կրօնքները սուտ և դատարկ են:

Ե. Աստուածաշունչը կը սորվեցունէ մեզի՝ թէ միայն մէկ Աստուած կայ, և թէ՝ Աստուածութեան մէջ երեք անձինք կան: Մենք բաւական չենք գիտեր աս ինչպէս ըլլալը իմանալու կամ զրուցելու. մենք՝ տկար ու տգէտ արարածներս՝ որ ինքզինքնիս անգամ չենք գիտեր, այսինքն մեր հոգիներուն և մեր մարմիններուն ինչպէս մէկ տեղ միաւորած ըլլալը, արդեօք կրնա՞նք իմանալ Աստուծոյ էութիւնը կատարելապէս: "Ահա Աստուած մեծ է և մենք զինքը չենք գիտեր": Օրհնեալ ըլլայ իր սուրբ անունը, որ իր բնութեամբը և փառքովը բարձրացեալ է բոլոր իր արարածներուն գիտութենէն գեր 'ի վերոյ, և ինքն անոնց Աստուածն ըլլալուն համար պէտք է որ ասանկ ըլլայ:

Զ. Երբոր մենք կը զգանք մեր տգէտ՝ մեղաւոր ու կորսուած արարածներ ըլլալը, որ կը բնակինք փորձութեան՝ ձախորդութեան՝ չարչարանաց ու մահուան աշխարհին մէջ, ան ատենը կ'իմանանք թէ մեր Աստուածը ճիշտ անանկ Աստուած մըն է որուն մենք կը կարօտինք:

Մենք Երկինքը Հայր մը ունինք որ հոգ կը տանի, և գութ ունի մեր վրայ՝ մեր ողորմելի վիճակին մէջ: Մենք Ամենակարող Փրկիչ մը ունինք որ հաճեցաւ չարչարուելու ու մեռնելու, Արդարը անարդարներուն համար: Եւ մենք Բարեխորհ Սուրբ Հոգի մը ունինք որ անոր գործը մեզ մեղքէն մաքրել է, մեզ կեանքի մէջ քաջալերել ու մխիթարել է, և մեզ մահուան՝ դատաստանին՝ և երկինքին համար պատրաստել է: Ալ ի՞նչ բանի կը կարօտինք: Ինքն է հոգիին հատուցանող բաժինը:

Այսպէս մենք Սուրբ Գիրքերէն կը սորվինք որ Աս-



տուած հոգի է, անմահ, ամէն տեղ ներկայ և ամէն բաները գիտցող, ամենակարող զօրութիւն ունի, մէկը չկրնար արգիլել զինքը իր կամքին բոլոր ուզածներն ընելէն. որ ինքը բարի ու ողորմած Աստուած է, արդար ու ճշմարիտ բոլոր իր խօսքերուն ու գործքերուն և ճամբաներուն մէջ. և թէ Տէրը մէկ Աստուած մըն է, բայց երեք անձինք ըլլալով Հայր, Որդի, և Սուրբ Հոգի, նոյն են էութեամբ, հաւասար զօրութեամբ և փառքով. և աս երեքը մէկ Աստուած են:

# ՄԱՍՆ Բ

## ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

---

### Ա. ԲԱՐԻ ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ։

Ղուկ. ժե. 1–10։

Հ. Ի՞նչ են բարի հրեշտակները։

Պ. Փառաւորեալ ու սուրբ էակներ։

Հ. Ո՞վ ստեղծեց անոնք։

Պ. Աստուած ստեղծեց։ Կող. ա. 15, 16։

Հ. Ո՞րչափ բարի հրեշտակներ կան։

Պ. Անթիւ բազմութիւն են։ Դան. է. 9, 10։ Գ Թագ. իբ. 19։ Սաղ. կը. 17։ Յայտ. ե. 11։ Եբր. ժբ. 22։ Մատթ. իզ. 53։ Ղուկ. բ. 13։

Հ. Ո՞ւր տեղ է անոնց բնակարանը։

Պ. Երկինքը։ Մատթ. իբ. 30։ Մարկ. ժբ. 25։ Բ Թես. ա. 7։

Հ. Ի՞նչ կ'ընեն երկինքին մէջը։

Պ. Աստուած կը փառաբանեն և իր կամքը կը կատարեն։ Սաղ. ճգ. 20, 21։ Մատթ. ժը. 10։ Ղուկ. բ. 13, 14։ Յայտ. ե. 11–13։

Հ. Աստուած երբեմն անոնք աս երկիրը կը խրկէ՞։

Պ. Հրամերես, մանաւանդ հին ատենները շատ անգամ անոնց ձեռօքը կը խրկէր իր պատգամները հին ատենի սուրբ մարդոցը։

Հ. Ի՞նչ դիտաւորութեան համար:

Պ. Բարի ընել անոնց՝ որ Աստուած կը սիրեն: Եբր. ա. 1: Սաղ. ղա. 11, 12: Մատթ. ժը. 10:

Հ. Ի՞նչ էր ան հրեշտակին անունը՝ որն որ Աստուած կոյս Մարիամին խրկեց, անոր Յիսուսի ծննդեան աւետիսը տալու.

Պ. Գաբրիէլ: Ղուկ. ա. 11-38:

Հ. Աստուած ուրիշ ի՞նչ բանի համար երբեմն բարի հրեշտակները աշխարհ խրկեց:

Պ. Չար մարդիկները պատժելու ու կորսնցունելու համար: Ծնն. ժթ. 1: դ Թագ. ժթ. 35:

Հ. Ի՞նչ է ան չար թագաւորին անունը՝ որն որ Տէրոջը հրեշտակը զարկաւ, անանկ որ որդնալից եղաւ ու մեռաւ:

Պ. Հերովդէս: Գործ. ժբ. 21-23:

Հ. Բարի հրեշտակները մեր փրկութեանը հոգ տանելնուն համար ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը:

Պ. "Ուրախութիւն կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջևը մեղաւորի մը համար որ կ'ապաշխարէ": Ղուկ. ժե. 10: ա Պետ. ա. 10-12: Եփես. գ. 10:

Հ. Երբոր բարի մարդ մը մեռնի, ո՞վ անոր հոգին երկինք կը տանի:

Պ. Բարի հրեշտակները:

Հ. Ան աղքատին անունը ի՞նչ էր որ մեռաւ ու հրեշտակներուն ձեռքովը Աբրահամին գիրկը տարուեցաւ

Պ. Ղազարոս: Ղուկ. ժզ. 22:

Հ. Պէ՞տք է հրեշտակներուն աղօթել ու անոնց երկրպագութիւն ընել ի՛նչ և իցէ կերպով:

Պ. Չէ՛. քանզի մեծ մեղք է:

Ու ես Յովհաննէս լսեցի ու տեսայ աս բաները. և երբոր լսեցի ու տեսայ, ինկայ որ երկրպագութիւն ընեմ ան



հրեշտակին ոտքերուն առջևը՝ որ աս բաները ինծի կը ցուցընէր: Ան ալ ըսաւ ինծի. Զգուշացի՛ր՝ մի՛ ըներ. ինչու որ ես քուկին՝ ու քու եղբայրներուդ մարգարէներուն՝ ու աս գրքիս խօսքերը պահողներուն ծառայակիցն եմ: Յայտ. իբ. 8, 9: Ես ալ անոր ոտքերուն առջևը ինկայ, որ անոր երկրպագութիւն ընեմ. ու ըսաւ ինծի. Զգուշացի՛ր՝ մի՛ ըներ. ինչու որ ես ալ քու ծառայակիցդ եմ՝ ու քու եղբայրներուդ՝ որոնք Յիսուսի վկայութիւնը ունին. Աստուծոյ երկրպագութի՛ւն ըրէ: Յայտ. ժթ. 10:

Հ. Բարի հրեշտակները պիտի գա՞ն Քրիստոսի հետ Դատաստանին մեծ օրը:

Պ. Հրամմերս: Մատթ. իե. 31: բ Թես. ա. 7, 8: ա Թես. դ. 15: Յուդ. 14:

Հ. Հրեշտակները մարմին ունի՞ն:

Պ. Չէ՛. քանզի անոնք հոգիներ են, անտեսանելի և անմահ: Ղուկ. իդ. 39: Կող. ա. 16: Մարկ. ժբ. 24, 25: Ղուկ. ի. 35, 36:

Հ. Պիտի տեսնե՞նք ու գիտնա՞նք և պիտի սիրե՞նք բարի հրեշտակները՝ թէ որ երկինք երթանք:

Պ. Հրամմերս: Եբր. ժբ. 22: Ղուկ. ժզ. 22: Յայտ. է. 9-17:

Հ. Բարի հրեշտակներուն քանի՞ն անունները գիտենք, և ո՞վ են անոնք:

Պ. Երկուքին. Գաբրիէլն և Միքայէլն: Դան. ը. 16: թ. 21: Ղուկ. ա. 19, 26: Յայտ. ժբ. 7:

---

Մարդոցմէ զատ՝ ուրիշ իմաստուն և հաշիւ տուող Աստուծոյ ստեղծուածները կան, հրեշտակները: Բայց թէ որ Աստուծոյ Խօսքը չըլլար, բնաւ մենք բան մը պիտի

չգիտնայինք անոնց վրայով . ինչու որ մենք անոնք ոչ կըրնանք տեսնել , ոչ կրնանք լսել , ոչ ալ կրնանք զգալ , որովհետեւ անոնք մարմին ու արիւն չունին մեզի պէս , հապա միայն հոգիներ են :

Անոնց վրայով ըսուած Աստուծոյ Խօսքին նայելով , բարի հրեշտակները պէտք է որ ըլլան՝ լեզուի պատմել կրցածէն աւելի լուսափայլ ու գեղեցիկ , փառաւորեալ ու երջանիկ : Անոնք սուրբ են , անոնք բնաւ չմեղանչեցին , և բնաւ պիտի չմեղանչեն : Աստուած անոնք սուրբ վիճակի մէջ հաստատեց : ա Տիմ . ե . 21 : Անոնց բազմութիւնը անթիւ է . անոնց բնակարանը Երկինքն է . անոնց գործը Աստուած փառաբանել և իր կամքը ընել է : Անոնք Աստուծոյ հրամանովը երկինքէն կ'իջնեն մարդոց ողորմութիւն կամ վրէժխնդրութիւն ընելու համար , և հովի կամ փայլակի պէս շուտով կը շարժին : Անոնք շատ հոգ տանելով մեր փրկութիւնը կ'ուզեն , և երկրպագութիւն կ'ընեն , Տէր Յիսուսին իր զարմանալի սիրոյն համար : Երբոր մեղաւոր մը կ'ապաշխարէ , երկինքը կը լեցուի անոնց ուրախութիւնովը : Ուրախութեամբ օգնութիւն կը հասնին Քրիստոսի աշակերտներուն , և անոնց բոլորտիքը կը հըսկեն բարի ընելու համար . և երբոր մեռնին՝ հրեշտակները երկինքը կը տանին անոնք ցնծութեան ձայներով : Եւ վերջին մեծ օրը անոնք պիտի գան Տէր Յիսուսին հետը իր փառքովը , և աշխարհի դատաստանին վերջին սարսափելի գործին ներկայ պիտի գտնուին :

Ե . Բայց մէկը թող չկարծէ որ մենք բարի հրեշտակներուն աղօթելու կամ երկրպագութիւն ընելու ենք : Ասիկայ հոգին կորսընցունող մեղք մը կ'ըլլայ ետքը . անոնք բնութեամբ աստուածներ չեն , հապա մեզի պէս արարածներ , թէպէտեւ աւելի փառաւոր : Աստուած ստեղծեց անոնք , և ինքն է որ անոնք կենդանի կը պահէ , և սուրբ ու երջանիկ վիճակի մէջ դրած է . և անոնք բան մը չեն կրնար ընել իրենց կամ մեզի համար առանց Աստուծոյ օգնելուն :

Բայց մենք պատուելու ենք անոնց սուրբ վարքը , և գոհ ըլլալու ենք անոնցմէ՝ իրենց մեզի ցուցուցած բարեկամութեանը և մարդասիրութեանը համար : Ինչու որ անոնք



կ'օգնեն Քրիստոսի ծառաներուն աս աշխարհիս մէջ , թէեւ մենք չենք կրնար տեսնել կամ զգալ անոնք :

Բ . Թէ որ անոնք այսչափ կը զգան՝ կամ մեր փրկութեանը համար այսչափ ուրախութեամբ կ'աշխատին , մենք ալ զգալու և ջանք ընելու ենք ապահով ընել բուն մեր փրկութիւնը . և մեր կարողութիւնովը ամէն պէտք եղածը ընելու ենք , ուրախութիւնով ուրիշներուն փրկութիւնն ալ ապահով ընելու համար :

Գ . Եւ կատարեալ սիրոյ՝ ու Աստուծոյ հնազանդելու համար՝ մեզի օրինակներ են անոնք : Մենք ջանք ընելու ենք Աստուծոյ կամքը կատարել երկրի վրայ , ինչպէս որ երկինքը կ'ըլլայ անոնցմով . և ինչպէս որ անոնց սրբութիւնը երջանիկ կ'ընէ անոնք , նոյնպէս թէ որ մենք ալ սրբութեան հետեւինք , մենք ալ պիտի տեսնենք Աստուած և անոնց պէս երջանիկ պիտի ըլլանք Քրիստոսով :

Դ . Երկինքին մէջը մենք պիտի տեսնենք և գիտնանք ու սիրենք անոնք , և անոնց ընկերութիւնը պիտի աւելցունէ մեր ուրախութիւնը :

---

## է . ՉԱՐ ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ :

Մատթ . դ . 1–11 :

Հ . Հրեշտակները բնաւ մեղանչեցի՞ն Աստուծոյ դէմ :

Պ . Հրամմերն՛ , անոնցմէ ոմանք մեղանչեցին : Յուդ . 6 : բ Պետ . բ . 4 :

Հ . Անոնք ո՞րչափ էին :

Պ . Շատ մեծ թուով :

Հ . Ո՞վ էր անոնց գլուխն ու մեղաց առաջնորդողը :

Պ . Բէեղզեբուղը , կամ դեւը : Մատթ . թ . 34 : ժբ . 24 :

Հ . Աստուած ո՞ւր ձգեց անոնք մեղանչելնուն համար :

Պ. «Դժոխք»։ բ Պետ. բ. 4։ Յուդ. 6։

Հ. Ի՞նչ ատեն չար հրեշտակները մեղանչեցին։

Պ. Աստուած չըսաւ մեզի։

Հ. Աստուած ըսա՞ւ մեզի անոնց ինչ մասնաւոր մեղք գործելը։

Պ. Չէ՛։ ա Տիմ. գ. 9։ Յոհ. ը. 44։ ա Պետ. ե. 8։

Հ. Հիմա անոնց բնաւորութիւնը ի՞նչպէս է։

Պ. Անճարին չար է։

Հ. Աստուած անոնց Փրկիչ մը տուա՞ւ ինչպէս որ մեզի տուաւ։

Պ. Չէ՛։ Եբր. բ. 16։

Հ. Անոնք կրնա՞ն փրկուիլ։

Պ. Չէ՛. անոնք յաւիտեան կորսուած են։ բ Պետ. բ. 4։ Յուդ. 6։ Մատթ. իե. 41։ Յայտ. ի. 10։

Հ. Հիմա անոնք ո՞ւրկէց կը վախնան։

Պ. Աստուծմէ ու գալու դատաստանէն։ Յակ. բ. 19։ Մատթ. ը. 29։

Հ. Բնաւ անոնք աս աշխարհքը կու գա՞ն։

Պ. Հրամերես։

Հ. Ի՞նչ դիտաւորութեան համար։

Պ. Մեզի չար ընելու համար։

Հ. Երբոր Տէր Յիսուս աս աշխարհիս մէջն էր, մարդոցմէ դեւերը չհանե՞ց։

Պ. Հրամերես։ Մատթ. դ. 24։ Ղուկ. դ. 36։ ժա. 20։ ժդ. 16։ Մարկ. ե. 8։ Գործ. ժ. 38։

Հ. Սատանան ի՞նչ անունով կը կոչուի, որն որ աս աշխարհիս մէջ իր ունեցած գործքերը կը ցուցընէ մեզի։

Պ. «Փորձող»։ Մատթ. դ. 3։ ա Թեսս. գ. 5։

Հ. Ուրիշ անուններ ունի՞։

Պ. Հրամերես, շատ անուններ։ Մատթ. գ. 3։



ժբ. 24։ Յոհ. ժբ. 31։ ժդ. 30։ բ Կորնթ. դ. 4։ Յայտ. ի. 2։

Հ. Սատանան կրնա՞յ փորձել մեզ ու մեղք գործել տալ թէ որ մենք մեղանչել չուզենք։

Պ. Չէ՛։

Հ. Ի՞նչ կ'ըսուի սատանային առիւծի մը պէս պռռացող ըլլալուն վրայով։

Պ. «Սատանան մռնչող առիւծի պէս կը պտըտի, ու կը փնտռէ թէ ո՛վ կլլէ»։ ա Պետ. ե. 8։ Ղուկ. իբ. 31։ Յոբ. ա. 6, 7։ բ. 1, 2

Հ. Ի՞նչ պիտի ընէ ան, թէ որ մենք իրեն հակառակ կենանք։

Պ. Մեզմէ պիտի փախչի։ Յակ. դ. 7։

Հ. Սատանան ի՞նչ իշխանութիւն ունի չարերուն վրայ։

Պ. Սատանան մեծ իշխանութիւն ունի չարերուն սիրտերը փորձելու ու անոնց վրայ իշխելու։ Եփես. բ. 2։ զ. 10–16։ բ Կորնթ. դ. 4։ բ Տիմ. բ. 26։ Մարկ. դ. 15։

Հ. Սատանան մեր Փրկիչն ալ փորձե՞ց երբոր անիկայ երկրի վրայ էր։

Պ. Հրամերես։ Մատթ. դ. 1–11։ Ղուկ. դ. 1–13։

Հ. Ո՞վ կարող է և ո՞վ աշխարհ եկաւ սատանան ու անոր գործքերը կորսընցունելու համար։

Պ. Տէր Յիսուսը։

Ուստի որովհետեւ տղաքները մարմինին ու արիւնին հաղորդ եղան, ինքն ալ նմանապէս անոնց բաժանորդ եղաւ որ իր մահովը փճացունէ անիկայ՝ որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն է՝ սատանան։ Եբր. բ. 14։ Եւ ան որ մեղք կը գործէ՝ սատանայէն է. ինչու որ սա-

տանան սկիզբէն 'ի վեր կը մեղանչէ . ասոր համար Աստուծոյ Որդին յայտնուեցաւ , որ սատանային գործքերը քակէ ։ Ա Յօհ . Գ . 8 ։

Հ . Դատաստանին օրը մեր Փրկիչը չարերուն ծուր գացէ՛ք պիտի ըսէ ։

Պ . ՙՙ Մեկդի՛ գացէք ինծմէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը , որ պատրաստուած է սատանային՝ ու իր հրեշտակներուն ՚՚ ։ Մատթ . ԻԵ . 41 ։

Հրեշտակները առաջ երբոր ստեղծուեցան սուրբ էին , բայց ազատութիւն ունէին կայնելու ալ կամ իյնալու ալ ։ Շատերը չիյնկան ու հիմա անոնք սուրբ հրեշտակներ են ։ Շատերն ալ ինկան , ու հիմա անոնք ինկած կամ չար հրեշտակներ են . ասոնցմէ սատանան գլուխնին է ։ Անիկայ էր առաջին մեղանչողը և մեղքի առաջնորդողը ։ Ե՞րբ մեղանչեցին , և ի՞նչ էր անոնց մասնաւոր մեղքը , Աստուած չըսաւ մեզի ։ Բայց անոնց մեղանչելէն ետքը Աստուած անոնք երկինքէն վար դժոխքը ձգեց . անոնց համար Փրկիչ մը չխրկեց . անոնք բնաւ չպիտի կըրնան փրկուիլ , հապա կորսուած են յաւիտեան ։

Անոնց բնաւորութիւնը այնչափ գէշ է՝ որչափ որ կրնայ ըլլալ , անոնք Աստուծոյ ու մարդոց դէմ կը պատերազմին ։ Անոնք աս աշխարհը կու գան մեզ փորձելու ու մեղքի առաջնորդելու , և աս պատճառաւ կը կորսնցունեն մեր հոգիները յաւիտեան ։ Սատանան՝ որ Տէր Յիսուսը փորձեց , կ'երևայ թէ կ'ուզէր կորսնցընել Աստուծոյ մեր փրկութեան համար ունեցած գաղափարը , և երկինքին վրայ մեր ունեցած բոլոր յոյսերը ։ Իր անօրէնութեանը մէջ ինքն համարձակ է . բայց բոլոր իր մեղքերը և իր հրեշտակներուն մեղքերը իրենց գլխուն վրայ պիտի իյնան . յաւիտենական կրակ պատրաստուած է իրենց համար , և կը դողան երբոր կը խորհին գալու դատաստանին վրայով ։

Ա . Բարի հրեշտակներուն իյնալէն սորվեցէ՛ք որ բարի անձ մը սուրբ վիճակի մէջ անգամ կրնայ մեղք գործել ,



թէ որ անիկայ շատ զգուշութիւն չընէ , ու Աստուած ալ չպահպանէ զինքը ։ Սատանան և իր հրեշտակները մեղանչեցին երկինքին մէջը . Ադամ ու Եւան ալ դրախտին մէջը ։

Բ . Դարձեալ սորվեցէ՛ք թէ՝ մեղաւոր մը կրնայ ապականել շատ բարի մարդիկներ ու շատերը մեղքի մէջ ձգել ։ Սատանան մեղանչեց և շատերն ալ իրեն հետևեցան . զգո՛յշ կեցիր չար ընկերներէն՝ որ ինքզինքդ չկորսնցունես , և զգո՛յշ կեցէ՛ք ուրիշները չարութեան մէջ ձգելէն՝ որ դուք չկորսնցունէք անոնք ։

Գ . Մեղաւոր մը չպիտի թողուի երկինքին մէջը մինչև անգամ թէ որ հրեշտակ մըն ալ ըլլայ ։

Սատանան երկինքէն դուրս ձգուեցաւ և իր հրեշտակներն ալ ։

Դ . Յիշեցէ՛ք որ դուք մեծ թշնամի մը ունիք՝ սատանան , որ խորամանկ ու զօրաւոր է փորձութեան մէջ ։ Չար մարդոց սիրտերուն ինքը կը տիրէ . համարձակ կը փորձէ ամէն մարդ , բնաւ մէկն ազատ չէ իր փորձութենէն ։ Ինքը մեր բարձրացեալ և սուրբ Փրկիչն ալ փորձեց ։

Ե . Բայց իրմէն աւելի մեծ մէկը կայ՝ մեր Տէր Յիսուսը , որ կրնայ կորսնցունել սատանան և անոր ամէն գործքերը . անիկայ աս դիտաւորութեանս համար աշխարհ եկաւ . և աս դիտաւորութիւնը բուն իր ատենը պիտի կատարէ և բոլոր աշխարհ Յիսուսին իշխանութեանը տակը պիտի ըլլան ։

Զ . Օրհնենք Աստուած իր մեր վրայ ունեցած սիրոյն ու մեզի պէս մեղաւորներուն տուած Փրկչին համար , որ մեղանչող հրեշտակներուն չտուաւ ։ Անոնք փրկուելու պատեհութիւն չունին , բայց մենք ունինք . ձեռք ձգենք անիկայ սիրով . ապաշխարենք և հաւատանք Տէր Յիսուսին , ու ինքը պիտի տայ մեզի զօրութիւն ու շնորհք՝ ատել և դէմ կենալ սատանային և անոր ամէն գործերուն . և ան ատենը անիկայ պիտի փախչի մեզմէ , և ան թշուառ բազմութեան մէջը չպիտի ըլլանք որոնց պիտի ըսէ վերջին օրը , ՙՙ Մեկդի՛ գացէք ինծմէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը , որ պատրաստուած է սատանային ու իր հրեշտակներուն ՚՚ ։

## ՄԱՍՆ Գ

## ՄԱՐԴՈՒՆ ՎՐԱՅ

---

### Ա. ԱՍՏՈՒԾՈՅ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆԸ ՎՐԱՅ։

Ծննդ. Ա. 24–31։ Ա. 1–7, 18–25։

Հ. Քանի՞ օրուան մէջ ստեղծեց Աստուած երկինքն ու երկիրը։

Պ. Վեց օրուան մէջ։ Ծննդ. Ա. 26–31։

Հ. Ո՞ր օրը ստեղծեց մարդը։

Պ. Վեցերորդ օրը։ Ծննդ. Ա. 26–31։

Հ. Ո՞վ էր առաջին մարդը։

Պ. Ադամ։ Ծննդ. Բ. 18։ Ա Կորնթ. ԺԵ. 45–47։

Հ. Ո՞վ էր առաջին կնիկը։

Պ. Եւա։ Ծննդ. Գ. 20։

Հ. Ինչէ՞ն ստեղծեց Աստուած մարդը։

Պ. Երկրի հողէն։ Ծննդ. Բ. 7։ Ա Կորնթ. ԺԵ. 47։

Հ. Ինչէ՞ն ստեղծեց Աստուած կնիկը։

Պ. Ադամին կողէն։ Ծննդ. Բ. 21, 22։

Հ. Երբոր Ադամ ու Եւան ստեղծուեցան, չափահաս մարդի՞կ էին։

Պ. Այո՛, կատարեալ մարդիկ էին։

Հ. Տէրը անոնց բանական ու անմահ հոգի տուաւ։

Պ. Հրամերես։

Ու Տէր Աստուած գետնի հողէն շինեց մարդը, և անոր քիթին ծակերուն կենդանութեան շունչ փչեց, մարդը կենդանի հոգի եղաւ: Ծննդ. բ. 7: Ան ատենը հողը երկիրը պիտի դառնայ՝ առջի եղածին պէս, ու հոգին Աստուծոյ պիտի դառնայ, որ անիկայ տուաւ: Ժող. ժբ. 7:

Հ. Ադամ ու Եւան որո՞ւն պատկերին նմանութեանը ստեղծուեցան:

Պ. Աստուծոյ պատկերին նմանութեանը: Ծննդ. ա. 26, 27: Կող. գ. 9, 10:

Հ. Աստուած ի՞նչպէս ստեղծեց մարդը:

Պ. Ուղիղ: Ժող. է. 29:

Հ. Կինը ինչո՞ւ համար ստեղծեց Աստուած:

Պ. Մարդուն օգնելու ու անոր ընկեր ըլլալու համար: Ծննդ. բ. 18: ա Կորնթ. ժա. 7–12: Եփես. ե. 23–25: Կող. գ. 18, 19:

Հ. Աստուած եօթներորդ օրը ի՞նչ ըրաւ:

Պ. Հանգստացաւ: Ծննդ. բ. 2, 3:

Հ. Աստուած որո՞ւն տուաւ աշխարհը:

Պ. Աստուած բոլոր աշխարհը մարդուն տուաւ, ու զինքն անոր վրայ տէր ըրաւ: Ծննդ. ա. 26–28: Թ. 2: Սաղմ. ը. 5–8:

Հ. Ադամին առաջին անցուցած օրը ո՞րն էր:

Պ. Շաբաթ օրը:

---

Վեց օրուան մէջ Տէրը երկինքն ու երկիրը ստեղծեց. վեցերորդ օրը իր ուրիշ գործքերը լմնցունելէն ետքը մարդն ստեղծեց արու և էգ: Առաջին մարդուն անունն Ադամ էր, և առաջին կնկան անունը Եւա էր: Ադամ երկրի հողէն ստեղծուեցաւ, և Եւան Ադամին մէկ կողէն: Տէրն անոնք կատարեալ մարդիկ ստեղծեց, բանական ու անմահ



հոգիներով, և իր պատկերին նմանութիւնովը: Անոնք արդար ու սուրբ էին, բոլոր բարիին հակամիտելով: Աղէկ չէր մարդուն որ մինակ ըլլար, և կինը ստեղծուեցաւ իրեն օգնական ըլլալու համար, և Աստուած անիկայ Ադամին կնիկ ըլլալու տուաւ, ու ետքը Աստուած պատուիրեց անոնց որ աճին ու բազմանան և երկիրը լեցունեն, ու երկիրն անոնց ձեռքը յանձնեց ժառանգութեան համար որ իշխեն անոր: Հետևեալ եօթներորդ օրը, սուրբ հանգստութեան օրն էր, և Աստուած իր գործքերէն հանգստացաւ ու մարդն ալ իրեն հետ հանգստացաւ:

Ա. Աստուծոյ վերջին և ազնիւ գործն է մարդը՝ որ կանգուն անձ ունի՝ և դաշտերուն անասուններէն աւելի գեղեցիկ է, և բանական ու անմահ հոգի ալ ունի, որ անիկայ անասունները չունին:

Բ. Աստուած մարդն իր պատկերին նմանութեանը ստեղծեց գիտութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով և երկրի իշխողութիւն ունենալով: Աստուած մարդն արդար ստեղծեց. անիկայ մաքուր գլուխ ու ուղիղ սիրտ մը ունէր. անիկայ կատարեալ էր: Աստուած նայեցաւ իր գործքերուն ու ըսաւ որ բարի է: Փառաւորեալ ու սուրբ էակ մըն էր մարդը, երբոր Աստուած ստեղծեց անիկայ:

Գ. Մարդն ստեղծուեցաւ արու և էգ. ամուսնութեան վիճակի մէջ: Կ[illegible] մարդուն համար եղաւ: Անոր համար էրիկը կնկանը գլուխն է. և աս առաջին ամուսնութիւնը որ մեր նախնիքներուն մէջ եղաւ, բոլոր իրենց տղաքներուն վայելուչ հարսանեաց օրինակն է:

Դ. Աստուած աշխարհքը մարդուն տուաւ իր ժառանգութեանը պէս. անոր համար մենք բոլոր կենդանիներուն վրայ կ'իշխենք: Անոնք մեզմէ կը վախնան՝ բայց մենք ողորմութիւնով տիրելու ենք անոնց վրայ, և աշխարհ ու անոր մէջ եղած բաներն անանկ կերպով մը գործածելու ենք, ինչպէս որ Աստուծոյ հաճելի է:

Ե. Ադամին երկրի վրայ անցուցած առաջին օրը Շաբաթն էր. անիկայ ան օրը Աստուծոյ հետ անցուց. աստի Աստուած Ադամին կը սորվեցունէ թէ մարդուս առաջին և բարձրագոյն և ամենաբարի պաշտօնը Աստուծոյ սէր ունենալ և իրեն ծառայութիւն ընելն է:

Ասանկ մենք երկրպագութիւն ընելու ենք Տէրոջը մեր Ստեղծողին, և մեր առաջին և բարձրագոյն ու լաւագոյն գործն է զինքը սիրել ու պաշտել:

---

## Բ. ԴՐԱԽՏԻՆ ԿԵԱՆՔ:

Ծննդ. Բ. 8–15:

Հ. Աստուած մարդը ստեղծելէն ետքը ի՞նչ ըրաւ անոր համար:

Պ. Հաճելի պարտէզ մը տնկեց անոր համար՝ դրախտը՝ որ հոն բնակի: Ծննդ. Բ. 8:

Հ. Ադամին ու Եւային համար ուտելու ի՞նչ բուսաւ պարտէզին մէջը:

Պ. Ամէն պատուական պտուղները: Ծննդ. Բ. 9:

Հ. Աս զուարճալի պարտէզը ի՞նչպէս կը ջրուէր:

Պ. Գետով մը: Ծննդ. Բ. 10:

Հ. Տէրը անոնց ի՞նչ գործ տուաւ որ պարտէզին մէջ գործեն:

Պ. «Գործել ու պահել անիկայ»: Ծննդ. Բ. 15:

Հ. Տէրը վար իջա՞ւ ու խօսեցաւ Ադամին հետ՝ դէմ առ դէմ:

Պ. Հրամերես: Ծննդ. Գ. 8:

Հ. Ադամ ու Եւան ի՞նչ վիճակի մէջ էին:

Պ. Սուրբ ու երջանիկ վիճակի մէջ էին, ու ինչ որ կ'ուզէին՝ ունեցան: Ծննդ. Ա. 31:

---

Մարդը ստեղծուելէն ետքը Աստուած ինքիրմէն պարտէզ մը տնկեց, և աճեցուց հոն ամէն ծառ որ հաճելի էր տեսնելու՝ և բարի ուտելու. և առատօրէն կը ջրուէր գետով մը. և հոն դրաւ իր ստեղծած մարդը որ վայելէ ատ գեղեցիկ և առատ պարտէզը. մարդուն գործը պարտէզը գործել ու պահելն էր. և Տէրն ինք վար կ'իջնէր ու անոնց հետ կը խօսէր:



Ա. Մարդուն առաջին վիճակը սուրբ ու երջանիկ էր. Ադամ ու Եւան Աստուծոյ հետ էին. և տեսան ու սիրեցին և պատուեցին զինքն ամէն բաներէն աւելի: Անոնք Աստուծոյ տնկած պարտէզին մէջը բնակեցան. անոնք անօթութիւն չէին գիտեր. ոչ ալ ծարաւութիւն, ոչ հիւանդութիւն, ոչ ալ ցաւ, ոչ մեղք, ոչ ալ մահ: Անոնք երկնքի հրեշտակներուն պէս սուրբ ու երջանիկ էին: Աս էր մարդուն առաջին և խիստ լաւ վիճակը. սրբութիւնն ու երջանկութիւնը միշտ մէկ տեղ կ'երթան:

Բ. Աստուծոյ մեծ բարութիւնն էր որ Ադամն ու Եւան այնչափ առատութեամբ լեցուց. և անոնք պարտաւոր էին զինքը սիրել ու շնորհակալ ըլլալ իրմէն՝ իր անթիւ բարերարութիւններուն համար: Աստուծոյ մեծ բարութիւնը չպակսիր Ադամին տղաքներուն. ինքն է որ մեզ կը նախախնամէ, ու կու տայ կեանք և կերակուր ու հանդերձ և ան ամէնը որ կը վայելենք երկրի վրայ, և պարտաւոր ենք սիրելու զինքն ու շնորհակալ ըլլալ իրմէն՝ իր բարութիւններուն համար:

Գ. Թէ որ ուզենք երջանիկ ըլլալ և Աստուծոյ բարութիւնն ու սէրը և իր տեսութիւնը վայելել, պարտինք սուրբ ըլլալու ջանալ: Աստուած պիտի չձգէ մեզ երկրի վրայ պարտէզի մը մէջ, հապա երկինքն եղած պարտէզը պիտի տանի մեզ յաւիտեան իր հետը բնակելու համար: «Բարութիւն մը պիտի չպակսեցունէ ուղղութեամբ քալողներէն»: Սաղմ. ՁԳ. 11:

Դ. Մարդը ստեղծուեցաւ ժիր և գործունեայ ըլլալու համար՝ գործելով ու պահելով պարտէզը: Ան պարտէզին գեղեցկութիւնը և առատութիւնը բուն իր հոգ տանելէն կախում ունէր. ասանկ ալ՝ մենք ժրաջան ու ճարտարամիտ ըլլալու ենք, և կրնանք ըսել թէ ան որ շատ աշխատասէր է՝ ուրիշներէն աւելի յաջողութիւն կը գտնէ: Դատարկակեաց կեանքի մէջ յաջողութիւն ու երջանկութիւն չկրնար ըլլալ. դատարկութիւնը դէպի մեղքը՝ և

թշուառութեան կը տանի մարդը. Թէ որ մարդս ընելու բան մը չունենար, հազար անգամ աւելի գէշ պիտի ըլլար։

---

## Է. ՄԱՐԴՈՒՆ ՓՈՐՁՈՒԹԵԱՆԸ ՎՐԱՅ։

Ծննդ. Բ. 15–17։

Հ. Ի՞նչ էին այն երկու մասնաւոր ծառերուն անունները, որոնք դրաւ Աստուած պարտէզին մէջը։

Պ. Ծառ կենաց, ու ծառ գիտութեան բարւոյ և չարի։

Հ. Տէրը այս ծառերուն որմէ՞ն չուտել հրամայեց մարդուն։

Պ. Բարիի ու չարի գիտութեան ծառէն։ Ծննդ. Բ. 16, 17։ Գ. 2, 3։

Հ. Ինչո՞ւ Տէրը այս ծառը պարտէզին մէջը տնկեց ու հրամայեց մարդուն որ չուտէ անկէց։

Պ. Անիկայ փորձելու համար որ նայի թէ իր պատուիրանքները պիտի պահէ՞։

Հ. Թէ որ մարդը սիրէր Աստուած և անոր պատուիրանքները պահէր, ու այն ծառէն չուտէր, ի՞նչ շահ պիտի ունենար Աստուծմէ։

Պ. Աստուծոյ բարեկամութիւնը։

Հ. Իսկ թէ որ Աստուած չսիրէր և անոր պատուիրանքները չպահէր, հապա այս ծառէն ուտէր, ի՞նչ պիտի շահէր։

Պ. «Մահը». քանզի Տէրն ըսաւ, «Անկէ կերած օրդ անշուշտ պիտի մեռնիս»։ Հռովմ. Ե. 12։ Զ. 23։ Յոհ. Գ. 14–36։ Ե. 24։ Ա Կորնթ. Զ. 9։ Յայտ. Ա. 15։



Հ. Ադամ ու Եւան կարո՞ղ էին Աստուած սիրել և այս պատուիրանքը կատարելապէս պահել։

Պ. Հրամերես։ Ժող. Է. 29։

Հ. Տէրը մեր առաջին ծնողքը միայն իրենց համա՞ր փորձութեան մէջ ձգեց, թէ իրենցմէ ետքը եղած տղաքներուն համար ալ։

Պ. Իրենց տղաքներուն համար ալ։ Ծննդ. Ե. 1, 2։ Հռովմ. Ե. 12–19։ Ա Կորնթ. ԺԵ. 15, 21։ Գործ. ԺԷ. 29։

Հ. Թէ որ մեր առաջին ծնողքը իրենց փորձութեանը մէջ սուրբ ու երջանիկ մնային, անոնց տղաքները ի՞նչ պիտի ըլլային։

Պ. Անոնք ալ սուրբ ու երջանիկ պիտի ըլլային

Հ. Բայց թէ որ անոնք մեղաց ու թշուառութեան մէջ իյնային, մենք ալ ի՞նչ պիտի ըլլայինք։

Պ. Մենք ալ անշուշտ մեղքի՝ ու թշուառութեան մէջ իյնալու էինք. ինչպէս որ եղաւ։

Հ. Աստուած բարի ծնողքներուն որդւոցը ողորմութիւն կը ցուցընէ՞։

Պ. Հրամերես, մինչև անոնց հազար ազգը։ Ելից Ի. 6։

Հ. Իսկ չար ծնողքներու չարութիւնը անոնց տղոցը կը հատուցանէ՞։

Պ. Այո. մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը։ Ելից Ի. 5։

---

Ադամին ու Եւային պաշտօնն էր Աստուած սիրել ու իրեն հնազանդիլ կատարելապէս՝ որ ստեղծեց անոնք ու բոլոր ունեցածնին ինքը տուաւ անոնց։ Իսկ Աստուած փորձեց անոնք Դրախտին մէջը, գիտնալու համար թէ

արդեօք պիտի սիրե՞ն ու հնազանդի՞ն իրեն՝ թէ չէ ։ Անոնց մէկ պարզ ու դիւրին պատուէր մը տուաւ որ պահեն . և Աստուծոյ կամացը սահմանադրութիւնն էր փորձել անոնք՝ չէ՛ թէ միայն իրենց համար , հապա իրենցմէ ետքը եղած իրենց տղաքներուն համար ալ ։ Աստուած ծնողքները իրենց տղոցը տեղը դրաւ . աս յայտնի կը տեսնենք , ինչու որ երբոր ծնողքներն ինկան , բոլոր տղաքներն ալ ինկան . որպէս թէ Տէրն ասանկ ըսած էր Ադամին ու Եւային . " Ես կը հաստատեմ աս բարւոյ ու չարի գիտութեան ծառը պարտէզին մէջ , որ փորձեմ ձեզ թէ արդեօք պիտի սիրէ՞ք ու հնազանդի՞ք ինծի ։ Թէ որ աս ծառէն չուտէք՝ հապա զիս սիրէք ու ինծի հնազանդիք , անատենը ձեզի ու ձեզմէ ետքը ձեր տղաքներուն ալ Աստուած ես պիտի ըլլամ ։ Ոչ դուք՝ ոչ ալ անոնք բնաւ չար բան մը պիտի գիտնան , հապա բարի ու միայն բարի ։ Բայց թէ որ աս ծառէն ուտէք և անանկ ինծի չհնազանդիք , ու իս ձեր Աստուածը մէկ դի ձգելու ըլլաք , ես ոչ ձեզի՝ ոչ ալ ձեզմէ ետքը եղած ձեր տղաքներուն Աստուած պիտի ըլլամ ։ Իմ շնորհքս պիտի հեռանայ ձեզմէ . դուք և անոնք պիտի կորսընցունէք բոլոր ձեր բարութիւնները և երջանկութիւնները , ու շարունակ չարը պիտի գիտնաք ։ Ձեր բոլոր սերունդը մեղք , աշխատութիւն , տրտմութիւն , ցաւ , մահ պիտի ունենան թէ՛ աս աշխարհիս մէջ ու թէ գալու աշխարհին մէջ . ես ձեր առջևը կը դնեմ կեանքն ու մահը ձեզի ու նաև ձեր տղաքներուն համար " ։

Աս էր մեր առաջին ծնողացը փորձութիւնը , և անոնք բոլորովին կարող էին անոր համբերել ։ Անոնք կարող էին կայնելու , բայց թէ որ ուզէին՝ կրնային իյնալ . ուստի անոնք որ ինկան՝ իրենց յանցանքովն էր ։

Ա . Ադամն ու Եւան փորձուեցան , և չէ թէ միայն իրենց համար , հապա իրենց տղայոց համար ալ , այսինքն՝ մարդոց ցեղին ամենուն համար ։ Թէ որ անոնք կայնէին , մենք ալ անշուշտ պիտի կայնէինք . թէ որ անոնք իյնային , մենք ալ անշուշտ պիտի իյնայինք , ինչպէս որ եղաւ ։ Այսպէս մեր առաջին ծնողքներուն հետ մենք ալ փորձուեցանք ։ Եւ անոնք փորձուեցան բոլորովին բաց ու յայտնի



դիւրին փորձութիւնով մը՝ որ մեծ ու երևելի փորձ մըն էր ան . ինչու որ չէ թէ միայն իրենց երջանկութիւնը երկինքին մէջ կամ թշուառութիւնը դժոխքին մէջ անկէց կախում ունէր , հապա իրենցմէ ետքը եղած իրենց միլիոնաւոր տղաքներուն ալ երջանկութիւնը երկինքին մէջ՝ ու թշուառութիւնը դժոխքին մէջ ։

Բ . Աստուած ասանկ հաճեցաւ որ անոնք փորձուին իրենց համար՝ ու մեզի իրենց տղաքներուն համար . ինքը մեզի չհարցուց . անատենը մենք ծնած չէինք . բայց թէ որ ծնած ըլլայինք , անշուշտ պիտի ընդունէինք աս բանը . ուրեմն զգանք որ Աստուծոյ կամքը անչափ իմաստուն ու արդար է , և թէ ամէն բաները շիտակ ըրած է ։

Գ . Աստուած ան ատենէն մինչև հիմա միշտ այնպէս կ'ընէ , այսինքն ծնողքները իրենց զաւկըներուն տեղը բռնել կու տայ աւելի կամ նուազ աստիճանով մը . ինչպէս որ ծնողքներն են , անանկ ալ ընդհանրապէս տղաքները պիտի ըլլան . թէ որ ծնողք ենք՝ բարի ըլլանք , որ մեր տղաքներուն ալ բարի ըլլայ . թէ որ բարի ծնողաց զաւկըներ ենք՝ աշխատինք անոնց նմանիլ . և թէ որ չար ծնողաց զաւկըներ ենք , լանք Աստուծոյ առջևը անոնց չարութեանը համար , և աղօթենք իրեն որ մեզ արդարացունէ ու յաւիտենական կենաց արժանի ընէ .

Դ . Տէրը փորձեց Ադամ ու Եւան Դրախտին մէջ . անոնք Աստուծոյ ստեղծուածներն էին , և պարտաւոր էին սիրել Աստուած ու անոր հնազանդիլ . մենք ալ անոնց տղաքները՝ Աստուծոյ կը վերաբերինք և պարտինք զինքը սիրել ու իրեն հնազանդիլ . մենք ալ փորձութեան մէջ ենք , բայց մեր փորձը տարբեր է անոնց առաջին փորձութենէն ։ Աս է մեր փորձութիւնը . Աստուած կը սպասէ մեզի ամէն օր տեսնելու թէ պիտի դառնա՞նք իրեն ապաշխարելով ու հաւատալով իր Որդւոյն Յիսուսի Քրիստոսի ։ Ուստի լաւ գործածենք աս փրկութեան պատեհութիւնը որ ունինք ։

## Գ. ՄԱՐԴՈՒՆ ԱՌԱՋԻՆ ՄԵՂՔՆ ՈՒ ԻՋՆԱԼԸ։

Ծննդ. Գ. 1–13։

Հ. Տէրը փորձեց Ադամ ու Եւան Դրախտին մէջը. անոնք ինկա՞ն թէ չէ՛։

Պ. Ինկան։

Հ. Անոնք ո՞րչափ ատեն կեցան պարտէզին մէջ իրենց մեղանչելէն ու իյնալէն առաջ։

Պ. Չենք գիտեր ճշդիւ, բայց կ'երեւայ թէ քիչ ատեն։

Հ. Ի՞նչ էր անոնց մեղքը։

Պ. Արգիլեալ պտուղէն ուտելնին էր։

Հ. Անոնց ո՞րն առաջ կերաւ։

Պ. Եւան։

Հ. Եւան ի՞նչպէս կերաւ ան։

Պ. Սատանայէն փորձուելով։ Յոհ. Ը. 44։

Հ. Սատանան ի՞նչ կերպարանքով ցուցուց ինքզինքը Եւային՝ երբոր փորձեց անիկայ։

Պ. Օձի կերպարանքով։ Ծննդ. Գ. 1–5.

Հ. Ադամ ի՞նչպէս մեղանչեց։

Պ. Եւայէն փորձուելով։ Ծննդ. Գ. 6։

Հ. Անոնք արգիլեալ պտուղն ուտելէն ետքը շուտով գիտցա՞ն որ մեղանչեցին։

Պ. Հրամմերես. և ամչցան ու վախցան։ Ծննդ. Գ. 7։

Հ. Երբոր Տէրոջը գալը լսեցին, ի՞նչ ըրին։

Պ. Ինքզինքնին պահեցին։ Ծննդ. Գ. 8։ Երեմ. ԻԳ. 24։

Հ. Տէրն ի՞նչ ըսաւ Ադամին։



Պ. «Ո՞ւր ես»։

Հ. Ադամ ի՞նչ պատճառ բերաւ Տէրոջը անկէց պահուըտելուն համար։

Պ. «Վախցայ, ինչու որ մերկ էի»։ Ա Յոհ. Գ. 20։ Դ. 18։

Հ. Երբոր Տէրն անոնց մեղք գործելնուն վրայով հարցուց, խոստովանեցա՞ն եթէ ինքզինքնին արդարացուցին։

Պ. Ինքզինքնին արդարացունել ուզեցին։ Ծննդ. Գ. 11–13։

Հ. Ադամ որո՞ւն վրայ ձգեց յանցանքը։

Պ. Եւային վրայ։ Ծննդ. Գ. 12։

Հ. Եւան որո՞ւն վրայ ձգեց յանցանքը։

Պ. Օձին վրայ։ Ծննդ. Գ. 13։ Ա Տիմ. Բ. 14։ Բ Կորն. ԺԱ. 3։

Հ. Անոնց ինքզինքնին արդարացունելը Տէրը ընդունե՞ց։

Պ. Չէ՛, չընդունեց։

Հ. Ի՞նչ պէտք էր որ ընէին։

Պ. Մեղքերնին խոստովանելու էին։ Ղուկ. ԺԸ. 13։ Ա Յոհ. Ա. 9։

Հ. Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը անոր վրայով որ իր մեղքերը կը ծածկէ։

Պ. «Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չգըտներ. բայց զանոնք խոստովանողն ու մէկդի ձգողը ողորմութիւն կը գտնէ։ Առակ. ԻԸ. 13։

---

Մէկը չկրնար ճշդիւ հաստատել թէ Ադամ ու Եւան Դրախտին մէջը դրուելէն ո՛րչափ ատեն ետքը արգիլեալ պտուղէն կերան, և սրբութեան ու երջանկութեան վի-

ձակէն՝ մեղքի ու թշուառութեան վիճակի մէջ ինկան․ բայց կը կարծուի թէ շատ երկար ատեն պիտի չըլլայ։

Աս իյնալուն առաջին դրդողը Սատանան էր, որ պատեհութիւն գտնելով՝ ինքզինքը օձի կերպարանքով ծածկեց և փորձեց կնիկը երբոր մինակ էր։ Եւան անոր փորձութեանը մտիկ ըրաւ․ ծառին վրայ նայեցաւ՝ որ պտուղը գեղեցիկ էր տեսնելու, և ուտելու բարի կը թուէր․ կը փափաքէր անիկայ ուտելու, և մանաւանդ անիկայ ուտելով կը կարծէր որ իմաստուն պիտի ըլլար, իր աչքերը պիտի բացուէին, և Աստուծոյ պէս պիտի ըլլար և բարին ու չարը պիտի գիտնար։ Առաւ պտուղէն՝ ինք կերաւ և իր էրկանն ալ տուաւ, և ան ալ կերաւ։ Ադամ կերաւ անիկայ գիտութեամբ, խորհրդածութեամբ, կամաւ, ինչու որ "խաբուած չէր"։ Ինք իր կնկանը խօսքին աւելի մտիկ ըրաւ, քան թէ Աստուծոյ պատուիրանքին․ մեղք գործածնուն պէս աչքերնին բացուեցան․ գիտցան յանցանքնին։ Խիղճերնին տանջեց իրենք, ամչցան․ և չէ թէ միայն ամըչցան, հապա վախցան ալ․ անոնք Աստուծոյ ներկայութենէն սոսկացին, և իրմէն փախան․ բայց անօգուտ էր անոնց փախչիլը։ Աստուած կանչեց անոնք իր առջևը․ անոնք ինքզինքնին արդարացնելու ջանք ընելով՝ աւելի շատցուցին իրենց մեղքերը։ Անոնց պարտաւորութիւնը իրենց ըրած մեղքը խոնարհաբար խոստովանիլն ու ինքզինքնին Աստուածային ողորմութեանը յանձնելն էր․ Աստուած չընդունեց անոնց ինքզինքնին արդարացնելը, ինչու որ մեղքը չկրնար արդարանալ։

Ա․ Դուք հիմա հասկըցաք թէ ինչպէս մեղքը աս աշխարհքը մտաւ մեր բոլոր տառապանքներովը․ մեղքը սատանային ձեռքովը բերուեցաւ՝ որ անիկայ ամէն արդարութիւններուն թշնամին է։ Ինքն աշխարհի սկիզբէն մարդասպան է․ երկնից ու երկրի մէջ մեղքին հայրն ինքն է․ և ինկած հրեշտակներուն ու մարդոց չարութիւններուն համար՝ որ ինքն ըրաւ և կ'ընէ, պատասխան պիտի տայ դատաստանին օրը։ Ինչպէս որ մեծագոյն մեղաւորը ինքն է, անանկ ալ բոլոր տիեզերքի մէջ ամենաթշուառ էակն ինքը պիտի ըլլայ։

Բ․ Զգուշ կեցէք որ մէկու մը մտիկ չընէք երբոր կը



փորձէ ձեզ դէշութիւն ընել տալու։ Եւան մտիկ ըրաւ ու ինկաւ․ թէ որ դուք ալ փորձութեան հետևելու ըլլաք, դուք ալ պիտի իյնաք։ Մէկ դի՛ ձգեցէք չար փորձիչը, ով որ ըլլայ թող ըլլայ, ձեզմէ հեռու թող կենայ, կամ դուք ինքզինքնիդ հեռացուցէք անկէց․ մեր Փրկչին օրինակին հետևեցէք։ Մատթ․ Դ․ 1–11։ Ժղ․ 21, 33։

Գ․ Դուք բուն ձեր զօրութեանը մի՛ ապաւինիք․ եթէ Ադամ ու Եւան սուրբ վիճակին մէջն ըլլալով ինկան, մենք որչափ դիւրութեամբ պիտի իյնանք մեղանչական վիճակի մէջ ըլլալով․ աղօթեցէք Աստուծոյ ըսելով, թէ "Տէ՛ր, մեզ փորձութեան մէջ մի՛ ձգեր, հապա չարէն փրկէ մեզ"։

Դ․ Եւային՝ Ադամը մեղք գործելու փորձելը կը ցուցնէ թէ ինչպէս մեծ ազդեցութիւն կրնայ ունենալ մէկը մէկալին վրայ։ Էրիկներն ու իրենց կնիկները մեծ ազդեցութիւն ունին իրարու վրայ՝ բարիի կամ չարի։ Մեր շատ մօտ ու սիրելի բարեկամները և ազգականները շատ անգամ մեր ամենայաջող փորձիչները կ'ըլլան․ աղօթենք Աստուծոյ որ ոչ մէկը փորձէ մեզ, ոչ ալ մենք մէկէ մը փորձուինք․ այլ ջանանք որ մենք ամէն մարդիկ դէպ'ի Աստուած առաջնորդենք և չէ թէ Աստուծմէ հեռացնենք։ Գ Թագ․ ԻԱ․ 25։ Յոբ․ Բ․ 9։

Ե․ Աստուծոյ դէմ մեղանչող մարդ մը չկրնար երջանիկ ու բարեյաջող ըլլալ։ Սատանան և իր հրեշտակները երկինքին մէջ մեղանչելնուն պէս՝ շուտ մը ամօթով ու վախով լեցուեցան Աստուծոյ առջևը, և յաւիտենական դատապարտութեան տակ ինկան։ Անանկ ալ մենք մեղքին համար կ'ամչնանք ու կը վախնանք, և թէ որ չապաշխարենք՝ միտքերնիս հանդարտութեան մէջ պիտի չըլլայ, և խորունկ տրտմութեան մէջ պիտի թաղուինք յաւիտեան։

Զ․ Մեղք մը չկրնար ծածկուիլ․ զուր տեղը պիտի փախչինք Աստուծմէ, կամ մեղքերնիս իրմէն պահենք։ Ինքն ամէն տեղ ներկայ է, և ամէն բաները գիտէ ու կրնայ կանչել մեզ իր առջևը ամէն րոպէ։

Է․ Մեղքը չկրնար անդատապարտ մնալ․ մէկ մեղքը

մէկալէն մեծ կրնայ ըլլալ, բայց մեղքը թէ՛ մեծ կամ թէ պզտիկ՝ չկրնար անպատիժ մնալ:

Ը. Եւ մեր պարտաւորութիւնն ու ապահովութիւնը մեղքերնիս խոստովանելէն ու մէկ դի ձգելէն կախում ունի: Թէ որ մենք խոնարհաբար խոստովանինք մեր մեղքերը և աղաչենք Աստուած որ Քրիստոսի համար թողութիւն շնորհէ մեզի, ինքը պիտի շնորհէ: Յոյս չկայ անոնց համար՝ որ չեն ուզեր խոստովանիլ ու մէկ դի ձգել իրենց մեղքերը:

---

## Է. ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԾՆՈՂԱՑՆ ԻՅՆԱԼՈՒՆ ՎՐԱՅ:

1. Անոնք անիծուեցան ու Դրախտէն դուրս ձգուեցան:

Ծննդ. Գ. 1–24:

Հ. Տէր Աստուած բարկացա՞ւ Ադամին ու Եւային իրենց մեղանչելուն համար:

Պ. Հրամերես:

Քանզի Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը յայտնուի մարդոց բոլոր ամբարշտութեանը և անիրաւութեանը վրայ, որոնք ճշմարտութիւնը անիրաւութեամբ բռներ են: Հռովմ. Ա. 18: Աստուած արդար դատաւոր է. ու Աստուած ձղտաւորին ամէն օր բարկացած է: Սաղմ. Է. 11: Ելից ԼԴ. 6, 7:

Հ. Առաջ որո՞ւ ցուցուց Աստուած իր բարկութիւնը, սատանայի՞ն՝ Եւայի՞ն՝ թէ Ադամին:

Պ. Ամենէն առաջ մեղանչող սատանային:

Հ. Տէրը ի՞նչպէս անիծեց անիկայ:

Պ. “Ամէն անասուններէն և դաշտին ամէն գազաններէն անիծեալ ըլլաս”: Ծննդ. Գ. 14, 15:



Հ. Տէրը միայն օձն անիծեց թէ օձի կերպարանք մտած սատանան ալ:

Պ. Երկուքն ալ:

Հ. Եւ ի՞նչ ըսաւ Աստուած կնկանը:

Պ. “Քու յղութեանդ ցաւերը խիստ պիտի շատցունեմ”: Ծննդ. Գ. 16:

Հ. Եւ ի՞նչ ըսաւ մարդուն:

Պ. “Երկիրը քու պատճառովդ անիծեալ ըլլայ”: Ծննդ. Գ. 17–19:

Հ. Երկիրն ի՞նչ պիտի բուսցունէր:

Պ. “Փուշ ու տատասկ”:

Հ. Ադամ ի՞նչպէս պիտի ստանար իր հացը:

Պ. “Երեսին քրտինքովը”

Հ. Եւ ի՞նչ բանի պիտի դառնար:

Պ. Հողի. “Հող էիր դուն ու հող պիտի դառնաս”:

Հ. Տէրը անատենը ի՞նչ խոստմունք ըրաւ:

Պ. Տէրը անատենը ողորմութեամբ Փրկիչ մը խոստացաւ Ադամին ու Եւային և բոլոր իրենց կորսուա տղաքներուն:

Եւ քուկին ու կնկանը մէջ տեղը, և քու սերունդիդ ու անոր սերունդին մէջ տեղը՝ թշնամութիւն պիտի դնեմ. ան քու գլուխդ պիտի ջախջախէ, և դուն անոր գարշապարը պիտի խայթես: Ծննդ. Գ. 15: Հապա Քրիստոսի պատուական արիւնովը՝ որպէս թէ անբիծ ու անարատ գառի մը. որ առաջուց ճանչցուած էր աշխարհիս սկիզբէն առաջ: Ա Պետ. Ա. 19, 20: Անոր երկրպագութիւն պիտի ընեն երկրի վրայ բոլոր բնակողները, որոնց անունները աշխարհիս սկիզբէն 'ի վեր մորթուած Գառնուկին կենաց գրքին մէջը գրուած չեն: Յայտ. ԺԳ. 8:

Հ. Տէրը ի՞նչ տեսակ հանդերձ շինեց Ադամին ու Եւային հագցունելու համար։

Պ. “Կաշիէ հանդերձ”։ Ծննդ. Գ. 21։

Հ. Տէրը Ադամն ու Եւան Դրախտին մէջը կենալու թողո՞ւց, ուր որ կենաց ծառէն պիտի ուտէին ու յաւիտեան ապրէին։

Պ. Չէ՛. այլ դուրս վռնտեց անոնք։ Ծննդ. Գ. 22–24։

Հ. Եւ Ադամ ապրելու համար ի՞նչ պիտի ընէր։

Պ. “Երկիրը պիտի գործէր”։

Հ. Դրախտին մէջ ի՞նչ դրաւ Աստուած կենաց ծառէն անոնք հեռու պահելու համար։

Պ. “Քերովբէներն ու բոցեղէն սուր”

---

Տէրը բարկացաւ Ադամին ու Եւային և իր բարկութիւնը ցուցուց անոնց. բայց կարգաւ սկսեց. առաջ խիստ հին ու չար մեղաւորին. և ամէն մէկը անիծելէն ետքը, Ադամին ու Եւային կաշիէ հանդերձներ հագցուց, և ետքը անոնք Դրախտէն դուրս վռնտեց Կենաց Ծառէն չուտելու համար. անոնք կորսնցուցին Աստուծոյ շնորհքը և Կենաց Ծառին համար ունեցած իշխանութիւննին, և բնաւ չկրցան նորէն հոն դառնալ հրեղէն սուրով պաշտպանող քերոբէին համար, որ Կենաց Ծառը պահելու կեցեր էր։ Մարդը հիմա երկիրը գործելու վրայ էր իր ապրուստը ճարելու համար, և Աստուած ալ հեռացուց Ադամէն իր բարեկամութիւնը։

Ա. Մեղանչելէն ետքը միշտ գիտցէք որ Աստուած պիտի բարկանայ ձեզի, և անշուշտ պիտի պատժէ ձեզ, թէ որ չապաշխարէք։

Բ. Եւ նախկին ու մեծ մեղաւորները թող խիստ վախնան, ինչու որ Աստուած ընդհանրապէս առաջ անոնք պատժել կը սկսի. ու շատ սաստիկ կը պատժէ։

Գ. Երբոր կը տեսնէք օձին երկրի վրայ սողալը, որ



ատելի է մարդուն ու անասուններուն, որ ամէն մէկը անոր գլուխը ջախջախել կուզէ մեռցունելու համար, և անիկայ ալ կը ջանայ անոնք խայթել, անատենը յիշեցէք որ Աստուած անիծեց սատանան օձով. անէծքը մնաց օձին՝ անոր մէջէն սատանային անցնելով։

Դ. Սատանան անիծուեցաւ բոլոր էակներէն ցած ու անարգ՝ խիստ անգոսնելի և ատելի ըլլալու, և վերջապէս իր գլուխը ջախջախուելու ու ոտքի տակ կոխուելու համար։ Բոլոր տիեզերքը պիտի տեսնէ անէծքին կատարումը. սանկ՝ սատանան և բոլոր իր չար գործքերը սոսկալի վախճան մը պիտի ունենան. ուստի հրաժարինք իրմէն ու իր բոլոր գործքերէն. թէ որ իր կողմը դառնալու ըլլանք, մենք ալ իր հետը պիտի իյնանք։

Ե. Մարդը իյնալէն ետքը շուտով Աստուծոյ ողորմութիւնովը Փրկիչ մը պատրաստուեցաւ, որ Յիսուս Քրիստոս է. անիկայ կարող եղաւ սատանային գլուխը ջախջախել և անոր գործքերը փճացնել. մենք պարտինք նայիլ իրեն մեր Ազատիչին պէս, և իր զօրութիւնովն ու օգնութիւնովը մեղքն ալ, սատանան ալ պիտի յաղթենք։ Կը կարծուի որ մեր առաջին ծնողքը ապաշխարեցին ու հաւատացին աս խոստացեալ Փրկչին, և սանկ մեռան ու երկինք գացին։

Զ. Բոլոր հիւանդութեան, տրտմութեան, ցաւերու, աշխատութեան, ու մահին պատճառը աս աշխարհին մէջ՝ մեղքն է. բոլոր թշուառութեան աղբիւրը մեղքն է։

Է. Երբոր Տէրը վռնտեց Ադամն իր ներկայութենէն և շնորհքէն, բոլոր անոր սերունդն ալ կրնանք ըսել թէ վռնտուեցան նոյն ատենը։

Ը. Աստուծոյ ներկայութիւնը և շնորհքը՝ որն որ Ադամ կորսնցուց ու իրմով մենք ալ կորսնցուցինք, նորէն կ՚ընդունինք Յիսուս Քրիստոսով։ Մենք միայն Քրիստոսով կրնանք Աստուծոյ գալ. Անիկայ է ճանապարհը, ճշմարտութիւնն ու կեանքը։

Թ. Բայց Աստուած իր ներկայութիւնը և իր շնորհքը Յիսուս Քրիստոսով նորէն կու տայ միայն անոնց՝ որոնք որ բուն ինքը կ՚ընտրէ։ Յոհ. Զ. 37–44. և այլն։

Քանզի մարդ մը չգար Քրիստոսին՝ թէ որ Հայրը չառաջնորդէ անոր . ասանկ բոլոր մարդկային ցեղն Աստուծոյ գերագոյն ողորմութենէն կախում ունի :

---

2 . Մեր Առաջին Ծնողաց բոլոր սերունդը կորսուեցաւ իրենց մէկ մեղքովը :

Հռովմ . Ե . 12–19 :

Հ . Ադամ ու Եւան Դրախտէն վռնտուելնէն ետքը ի՞նչ եղան :

Պ . Աստուծոյ դէմ մեղանչելնուն համար իրենց արդարութիւնը կորսընցուցին ու Տէրոջը առջեւը մեղաւոր եղան :

Հ . Իրենց սիրտը ի՞նչպէս եղաւ :

Պ . Մեղանչելէն առաջ անոնք կատարելապէս սուրբ էին , անոնց սիրտերը բարի էին . բայց մեղանչելէն ետքը անոնց սիրտերը չար եղան :

Հ . Տէրը աս փոփոխութեանը համար ի՞նչպէս վարուեցաւ անոնց հետ :

Պ . Տէրը ետ քաշուեցաւ անոնցմէ իր ներկայութեանը և սիրոյն անարժան սեպելով անոնք :

Հ . Յանցանքն ո՞րն էր որ անոնք իրենց սրբութիւնն ու երջանկութիւնը և իրենց Աստուածը կորսընցուցին :

Պ . Բուն իրենցն էր յանցանքը :

Հ . Աս իրենց յանցանքովը միայն իրե՞նք ինկան :

Պ . Ոչ , երբոր իրենք ինկան , բոլոր իրենց տղաքներն ալ ինկան :

Ադամով ամէնը կը մեռնին : Ա Կորնթ . ԺԵ . 22 : Մէկուն յանցանքովը շատերը մեռան : Հռովմ . Ե . 15 :



Հ . Բարի սիրտերո՞վ աշխարհ կու գանք , ինչպէս որ մեր Ադամ նախահայրը մեղանչելէն առաջ ունէր :

Պ . Ոչ . գէշ սիրտերով , ինչպէս որ ինքը մեղանչելէն ետքն ունէր

Հ . Որո՞ւն նմանութեամբը զաւակ ունեցաւ կ'ըսէ Աստուածաշունչը :

Պ . Իր նմանութեամբը : Ծննդ . Ե . 3 :

Հ . Մեր Փրկիչն ի՞նչ կ'ըսէ անոր վրայով՝ որ մարմինէն ծնած է .

Պ . "Մարմինէն ծնածը մարմին է" : Յօհ . Գ . 6 : Յօբ . ԺԴ . 4

Հ . Ադամին աս մէկ մեղքը ի՞նչ հետեւանք ունեցաւ մեր վրայ :

Պ . Ադամին աս մէկ մեղքին համար է որ մենք գէշ սիրտ և խանգարեալ բնութիւն կ'ունենանք ու ասանկ մեղքի տակ կ'իյնանք , և Աստուծոյ բարկութիւնը վրանիս կու գայ , ու հիւանդութիւն , տրտմութիւն , աշխատութիւն ; ցաւ ու մահ կ'ունենանք : Հռովմ . Ե . 12–19 : Ա Կորնթ . ԺԵ . 21 , 22

Հ . Երբոր մենք կը ծնանինք՝ թէ որ Աստուած մեր սիրտերը չփոխէ , մեր ներսի դին բարութիւն կա՞յ :

Պ . Ոչ :

Գիտեմ որ իմ ներսիդիս՝ այսինքն իմ մարմնիս մէջ բարի բան մը չբնակիր , ինչու որ կամեցողութիւն կայ քովս , բայց բարին 'ի գործ դնելը չեմ գտներ : Հռովմ . Է . 18 : Ա Կորնթ . Բ . 14 :

Հ . Ասանց աս խանգարեալ բնութեան բնաւ մարդ մը ծնա՞ւ աշխարհիս մէջ :

Պ . Մի միայն մարդն Յիսուս Քրիստոս : Ղուկ . Ա . 35 :

Հ . Ադամէն մինչև աս օրս մեղաւո՞ր էին բոլոր մարդիկ :

Պ. Հրամմերես :

Հ. Ի՞նչպէս կը նայի Աստուած աշխարհի վրայ :

Պ. Մեղքով լեցուած ու կորսուած աշխարհի պէս :

Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն վրայ որ տեսնէ թէ՝ կա՞յ արդեօք իմաստուն մէկը որ զԱստուած փնտռէ : Ամէնքը խոտորեցան մէկ տեղ , անպիտան եղան . աղէկութիւն ընող մը չկայ , մէկ մըն ալ չկայ : Սաղմ. ժդ. 2 , 3 :

Հ. Ամէն մարդ իր մեղաւոր ըլլալը կը զգա՞յ :

Պ. Հրամմերես . մեր խղճմտանքը ինչպէս և Աստուածաշունչը միշտ կը զրուցէ մարդոց՝ իրենց մեղաւոր ըլլալը :

Հ. Ուրեմն բոլոր աշխարհի վիճակը ի՞նչպէս է :

Պ. "Յանցաւոր՝ Աստուծոյ առջևը" : Հռոմ. ա. բ. գ : Եփես. բ. 3 :

Հ. Թէ որ առանց սրտի փոփոխութեան իրենց մեղքերուն մէջը մեռնին , ի՞նչպէս պիտի պատժուին :

Պ. Անոնք պիտի պատժուին յաւիտենական կրակին մէջ : Մատթ. իե. 41–46 . և այլն :

---

Ադամ ու Եւան կորսնցուցին իրենց արդարութիւնը և ճշմարիտ սրբութիւնը՝ իրենց մեղք գործած րոպէին . անոնք ապականեալ ու չար եղան սիրտով ու կեանքով . Աստուած երեսէ ձգեց անոնք , ու իրենց ամէն քաշած նեղութիւններուն պատճառը բուն իրենց մեղքն էր : Երբոր անոնք ինկան , իրենց տղաքներն ալ ինկան . ինչու որ մեր Առաջին Ծնողքը փորձուեցան նաև իրենց տղաքներուն այսինքն մեզի համար :

Ուստի Ադամին՝ խանգարեալ ու մեղաւոր Ադամին զաւակ ծնաւ բուն իր խանգարեալ ու մեղսալից օրինակովը : Չար հայրը չար զաւակ ունեցաւ . մարմինէն ծնածը մարմին էր . քանզի միշտ նմանն զնմանը կը ծնանի . մենք աշխարհ կու գանք գէշ սիրտերով , հակառակ



Աստուծոյ , ու չարին հակամիտեալ . մարդկային ցեղէ ընաւ մէկը սուրբ չծնաւ աս աշխարհը , բայց միայն մարդն Յիսուս Քրիստոս . ու ան ալ յատուկ Աստուծոյ զօրութիւնովը էր : Եւ Ադամէն մինչև հիմա բոլոր մարդիկ մեղանչեցին , ինչպէս որ ամէն մարդ կը զգայ ու գիտէ իր մեղաւոր ըլլալը : Աստուած բոլոր աշխարհի վրայ՝ մեղսալից ու կորսուածի պէս կը նայի , ու աշխարհ իր առջևը յանցաւոր կ'երևնայ իր բարկութեանը տակն ինկած : Բոլոր աս մեղքն ու թշուառութիւնը մեր Առաջին Ծնողացը մեղքին հետևութիւնն է . աս մեղքը կործանեց մարդկային սերունդը . Աստուած անանկ կը վարուի մարդոց հետ , որպէս թէ անոնք բուն Ադամին մեղքը գործած էին . քանզի ճիշտ ան որ Ադամին վրայ եկաւ , իր իյնալէն ետքը՝ ճշդիւ իր տղաքներուն վրայ ալ կու գայ : Անոր գործին հետևանքները իրենց վրայ կ'ընդունին , ճիշտ որպէս թէ անոնք գործած էին ան . անոնք արդարութենէ ու Աստուծոյ շնորհքէն զրկուած են . ապականեալ են ու տգէտ , ցաւի ու փորձութեան տակ ինկած են , ու ենթակայ անցաւոր և յաւիտենական մահին :

Ա. Մեր Առաջին Ծնողացը մեղանչելնուն ետքը իրենց վարքը և վիճակը որչափ փոխուած էին . անոնք կորսնցուցին իրենց սրբութիւնն ու իրենց երջանկութիւնը : Աստուծոյ տղաքներն ու Երկնից ժառանգներն ըլլալնուն տեղը՝ սատանայի տղաքներ ու Դժոխքի ժառանգներ եղան : Ի՜նչպէս հիանալի , ի՜նչպէս խորունկ , և ի՜նչպէս սոսկալի է անոնց իյնալը :

Բ. Իրենց զաւկըներուն վարքն ու վիճակը ի՛նչպէս փոխուեցան . երբոր անոնց Առաջին Ծնողքն ինկան , իրենք ալ ինկան . բոլոր մարդկային ցեղը սուրբ ու երջանիկ կրնային ըլլալ . ու բոլոր Երկիր օրհնութեան ու կենաց Դրախտ մը ըլլալ : Բայց հիմա բոլոր մարդկային ցեղը մեղաւոր ու թշուառական են , և երկիրը անիծեալ է , ու մթութիւնով և վայով ու մահով ծածկուած :

Գ. Բայց մեր Առաջին Ծնողացն ու մեզի իրենց տղայոցը համար փրկութիւն եղաւ : Աստուած Փրկիչ մը պատրաստեց . արդարն Յիսուս Քրիստոս . Աստուած ամէնքը մեղքի տակ դրաւ որ ողորմի ամենուն վրայ :

"Ահա Աստուծոյ Գառնուկը, որ աշխարհի մեղքը կը վերցունէ": Անանկ է նէ չտրտնջանք. ահա պատրաստ դեղը, և անանկ մէկ դեղ մը՝ որ ամենուն բաւական է: Քրիստոս ետ կը դարձունէ մեզի ինչ որ Ադամ կորսնցուց: Պէտք է մեզի ուրախութեամբ Զինքը և Իր փրկութիւնը ընդունիլ, ու շնորհակալ ըլլալ Աստուծմէ իր մեզի ցուցուած սիրոյն համար: Ասոր պատուէ՛նք մեզի տրուելու շնորհաց մեր ամէն միջոցները, այսինքն՝ Աւետարան կարդալը, աղօթք ընելը, եւայլն:

Գ. Պէտք է մեզի որ մէ՛կ մեղք մըն ալ գործելէն վախնանք, որչափ չնչին որ երևայ ան: Երբոր մենք մեղքի մէջ քայլ մը ընելու ըլլանք, չենք գիտեր թէ ուրիշ ինչ քայլեր պիտի հետևին, կամ թէ ինչ թշուառութիւններ մեր վրայ ու մեր ընկերներուն վրայ պիտի բերենք: Միայն սրբութիւնն է խաղաղութիւն ու ապահովութիւն:

Դ. Նաև չմոռնանք որ մենք չար սիրտերով ապականեալ ծնած ենք, որ բնականաբար սէր չունինք Աստուծոյ ու սուրբ բաներուն: Մենք մեղքին հակամիտեալ ենք. մենք 'ի մանկութենէ մեղքին կը հետևինք. Ի՛նչ սոսկալի չարութիւններու հասնելու էինք՝ (որովհետև մեր մէջը ամենևին բարի բան մը չունինք մենք մեզմէ առ Աստուած) թէ որ Տէրը ո՛և իցէ ճամբով մը մեզ ետ չդարձունէր: Բնականաբար մեր ընթացքը մանկութեան օրորոցէն մինչև գերեզման՝ դէպ'ի վար դժոխքը կ'իջնէ. մենք մեզմէ ոչ զօրութիւն ոչ կարողութիւն ունինք, և ոչ ալ կամք ետ դառնալու առ Աստուած. ուրեմն բնականաբար մարդիկ սաստկապէս չար ու կորսուած վիճակի մէջ են:

Ե. Աս ապականեալ բնութիւնը պարտի փոխուիլ, ու Սուրբ Հոգիին զօրութիւնովը փոխուիլ, թէ չէ՛ չենք կրնար Աստուած տեսնել:

Զ. Ասոր պարտինք լալ Աստուծոյ առջևը մեր առաջին ծնողաց իյնալը, մեր սոսկալի ապականութիւնը բնութեամբ ու կրթութեամբ. և պարտինք խոստովանիլ Իրեն որ մենք անմաքուր ենք. և Սուրբ Հոգիին զօրութիւնովը նոր սիրտ մը ունենալու՝ ու Տէր Յիսուս Քրիստոսով մեր մեղքերուն համար թողութիւն գտնելու պարտինք խնդրել Իրմէն:



Է. Բոլոր աշխարհը մեղքի մէջ ու Աստուծոյ բարկութեանը տակ ինկած է: Մենք որչափ ջանալու ենք որ անիկայ փրկութեան ճամբուն գիտութեանը բերենք. որչափ աղօթելու ենք Աստուծոյ՝ որ իր Աւետարանը տարածէ բոլոր աշխարհի մէջ, ու Ադամին բոլոր կորսուած տղաքները փրկելու հասցունէ:

Ը. Յատկապէս թո՛ղ ծնողքները զգան թէ "մարմինէն ծնածը մարմին է". և թէ շնորհքը բնութենէն չգար, հապա Աստուծոյ պարգևն է ան. ու բնաւ չդադրին աղօթելէն որ իրենց տղայոց ապականութիւնը վերցուի՝ ու Յիսուս Քրիստոսով նոր արարածներ ըլլան: Նաև ամէն Քարոզիչներն ու Վարժապետներն ալ նոյնպէս զգալով, իրենց ունկնդիրներուն ու աշակերտներուն ալ նոյնն ընեն: Փրկութիւնը Տէրոջմէն է, մեր բաւականութիւնը Աստուծմէ է (ա):

---

## Է. ՓՐԿՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ:

1. Աստուած կը պատրաստէ մեզի համար կատարեալ փրկութիւն:

Ելից. ԺԲ. 1–22:

Հ. Ադամ ու Եւան մեղանչելէն ետքը Տէրն անոնք ու անոնց տղաքները յաւիտեան մեղքի ու թշուառութեան մէջ կորսուելու թողո՞ւց:

Պ. Ոչ:

---

ա. Ուրեմն ո՞վ է Պօղոսը՝ կամ ո՞վ է Ապողոսը. պաշտօնեաներ են, որոնցմով հաւատացիք. և ինտոր որ Տէրը տուաւ անոնց ամէն մէկուն: Ես տնկեցի, Ապողոսը ջուր տուաւ, բայց Աստուած աճեցուց: Ասոր ոչ տնկողը բան մըն է, ոչ ջուր տուողը, հապա Աստուած՝ որ աճեցուց: ա Կորնթ. Գ. 5–7:

Հ. Ի՞նչ կ՚ըսէ Տէրն ասոր վրայով :

Պ. "Ինչպէս ես կենդանի եմ, կ՚ըսէ Տէրը, չեմ ուզեր մեղաւորին մահը, հապա չարը դառնայ իր ճանապարհէն ու ապրի. դարձի՛ եկէք, դարձէ՛ք ձեր չար ճանապարհէն. ինչո՞ւ մեռնիք, ով Իսրայէլի տունը" : Եզեկ. ժը. 23-32 : ա Տիմ. բ. 4 : բ Պետ. գ. 9 :

Հ. Մեր առաջին ծնողքը մեղանչելէն ետքը, ե՞րբ Տէրը Փրկիչ մը խոստացաւ անոնց :

Պ. Նոյն օրը : Ծննդ. գ. 1-15 :

Հ. Ո՞վ էր խոստացեալ Փրկիչը :

Պ. Աստուած իր մեծ ու մանաւանդ անհուն սիրովը մեզի փրկիչ ըլլալու տուաւ իր որդին Յիսուս Քրիստոսը : Յովհ. ժե. 13 : Հռովմ. ե. 6-8 : ը. 92 : Եփես. բ. 7 : Տիտ. գ. 4, 5 :

Հ. Ի՞նչ կ՚ըսէ Տէրն մեր ասոր վրայով :

Պ. "Ինչու որ Աստուած անանկ սիրեց աշխարհը մինչև որ իր միածին Որդին տուաւ. որ ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի. հապա յաւիտենական կեանք ունենայ" : Յովհ. գ. 16 :

Հ. Աստուած ո՞վ կը խրկէ մեր սիրտերը նորոգելու, և մեզ դէպ՚ի Քրիստոս մեր Փրկիչն առաջնորդելու, ու մեզ Երկինքին համար պատրաստելու :

Պ. Սուրբ Հոգին : Յովհ. ա. 13 : գ. 3-6 : ա Կորնթ. բ. 7-16 :

Հ. Իրաւունքով Աստուած մեզի պարտաւո՞ր էր իր Որդին տալու՝ որ մեզ պատիժէն փրկէ, և Սուրբ Հոգին տալու՝ որ մեր սիրտերը փոխէ, ու մեզ երկինքին համար պատրաստէ :

Պ. Ոչ, մեր փրկութիւնը Աստուծոյ կողմանէ ձրի շնորհքով եղաւ :

Բայց հիմա առանց օրէնքի Աստուծոյ արդարութիւնը



յայտնուած է, օրէնքէն և մարգարէներէն վկայուած ըլլալով. այսինքն Աստուծոյ արդարութիւնը՝ որ Յիսուս Քրիստոսի հաւատքէն է, ամենուն յայտնուած է, ու ամենուն վրայ կ՚ըլլայ. և տարբերութիւն չկայ : Ինչու որ ամէնքը մեղք գործեցին, և Աստուծոյ փառքէն պակաս են : Եւ անոր շնորհքովը ձրի կ՚արդարանան Յիսուս Քրիստոսով եղած փրկութեամբը. և այլն : Հռովմ. գ. 21-28 : Որ մեզ փրկեց, ու սուրբ կոչումով կանչեց՝ ոչ թէ մեր գործքերուն նայելով, հապա իր դիտաւորութեանն ու շնորհքին նայելով, որ Քրիստոս Յիսուսով մեզի տրուեցաւ յաւիտենական դարերէն առաջ : բ Տիմ. ա. 9 :

Հ. Ուրեմն որմէ՞ն շնորհակալ պարտինք ըլլալ և զինքը օրհնել մեր փրկութեանը համար :

Պ. Մեր Տէր Աստուծմէն : Յայտ. ե. 9-14 :

Եւ անոր՝ որ կարող է ձեզ անբիծ պահել, և իր փառքին առջեւը անարատ կայնեցունել ցնծութիւնով, մի միայն Աստուծոյ մեր Փրկչին մեր Տէր Յիսուս Քրիստոսին ձեռքովը փառք ու մեծութիւն, զօրութիւն ու իշխանութիւն բոլոր դարերէն առաջ, և հիմա ու բոլոր դարերու մէջ, Ամէն : Յուդ. 24, 25 :

---

Նոյն օրը՝ որ մեր առաջին ծնողքներն ինկան, Աստուած գերագոյն ողորմութիւնով կատարեալ Փրկութիւն պատրաստեց անոնց՝ ու անոնց ինկած զաւկըներուն համար : Փրկիչ ալ պատրաստեց, Սրբարար ալ :

Ա. Փրկութիւնը Տէրոջն է, ոչ ուրիշ էակ մը, հապա միայն Աստուած՝ ամենուն ինքնիշխան Տէրն իր իմաստութիւնովը ու զօրութիւնովը փրկութեան ճանապարհ մը սահմանեց ու բացաւ կորսուած մարդուն համար : Մարդը մեղանչելէն ետքը՝ բանը միայն Աստուծոյ մնաց,

որ եթէ մարդն ապրելու ըլլայ՝ կամ թէ մեռնելու , Աստուած ինքը որոշէ , որ մարդը պատեհութիւն ունենայ փրկուելու , կամ կորսուի յաւիտեան :

Բ . Իր գերազանց սէրը զինքը շարժեց փրկութեան ճամբայ մը բանալ : Ինքը մեր կործանեալ ու թշուառ վիճակին մէջ մեզի գթացաւ , չուզելով մեղաւորին մահը :

Գ . Նա ինքը մեր փրկութեանը համար պատրաստութիւն ըրաւ , առանց ծախքին նայելու : Որովհետեւ պէտք էր որ բուն Իր միածին Որդին մեռնի մեր տեղը . վասն որոյ Աստուած իր Որդին չխնայեց : Հռովմ . ը . 32 : Նա որովհետեւ մենք բուն իր Սուրբ Հոգիին կը կարօտինք , որ մեր սիրտերը փոխէ ու մեզ Քրիստոսին առաջնորդէ , վասն որոյ Աստուած չխնայեց իր Սուրբ Հոգին . ուստի հիմայ բան մը պակաս չէ , այլ ամէն բան պատրաստ է : Յայտ . իբ . 17 :

Դ . Ուրեմն երբոր մենք մեր մտքին մէջը կը դնենք մեր մեղքերը եւ անկէց հետեւած կործանումը՝ փրկութեան համար Աստուծոյ նայինք ու միայն Աստուծոյ : Փրկութեան համար իր ցուցուցած ճամբան շիտակ է , ու միայն ան է ճամբան : Ան անանկ ապահով ու անսխալ է , որչափ որ անհուն իմաստութիւնը եւ զօրութիւնն ու սէրը եւ ողորմութիւնը կրնայ ընել անիկայ : «Ան որ հաւատայ՝ պիտի փրկուի» : Մարկ . ժզ . 16 : Յօհ . ժ . 27–29 : Ասկէ թող չվախնայ Աստուծոյ փրկութեանը ճամբան դիմելէն , բոլոր ուրիշ ճամբաները սուտ են եւ կործանման պատճառ :

Ե . Մենք պաշտելով յարգելու ենք Աստուծոյ աս սէրը , որ առանց անոր՝ Դեւերուն պէս Դժոխքին մէջը կատարեալ թշուառութիւնով ու յուսահատութիւնով միշտ զրկուած մնալու էինք : Աստուծոյ մեր վրայ ունեցած սէրը մաշեցունելու է դէպ'ի իրեն մեր ունեցած թշնամութիւնը . աս սիրոյն զօրութիւնը կոտրելու է մեր քարացեալ սիրտերը : Զ . Ջանք ընենք աս մեծ փրկութիւնն ընդունելու . քանզի թէ որ մէկ դի ձգենք անիկայ , կործանման մէջ պիտի ընկղմինք՝ անիկայ չառնողներէն աւելի խորունկ :



Է . «Նա թէ որ Աստուած մեզ այնչափ սիրեց , մենք ալ պարտինք մէկզմէկ սիրել» . մենք չարերուն ու ապերախտներուն ալ գթած ըլլալու ու ներելու ենք , ինչպէս որ մենք թողութիւն գտնել կը յուսանք . թող մեր կեանքը՝ սիրոյ կեանք մը ըլլայ առ Աստուած եւ առ մարդիկ :

---

2 . Յիսուս Քրիստոսի մեր Փրկչին ով ըլլալը :

Ա . ԻՆՔՆ ԱՍՏՈՒԱԾ Է :

Յօհ . ա . 1–18 :

Հ . Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոս մեր Փրկիչը ո՞վ է . Աստուա՞ծ է , թէ մարդ :

Պ . Աստուած ալ է՝ մարդ ալ է :

Հ . Ի՞նչպէս գիտէք թէ ինքն Աստուած է :

Պ . Աստուածաշունչը մեզի անանկ կ՛ըսէ :

Հ . Աստուածաշունչն անիկայ Աստուած կը կոչէ՞ :

Պ . Հրամմէրես , Քրիստոս է ամենուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս : Հռովմ . թ . 5 : Եսայ . զ . 1–3 բաղդատէ Յօհ . ժբ . 41 ին հետ : Եբր . ա . 10–12 Սաղմ . ճբ . 22–27 ին հետ : Յօհ . ա . 1 : ա Յօհ . ե . 20 :

Հ . Աստուած յաւիտենական է . Քրիստոս ալ յաւիտենակա՞ն է :

Պ . Հրամմէրես . ինչու որ Քրիստոսին վրայ Դաւիթ կ՛ըսէ . «Դուն նոյնինքն ես , ու քու տարիներդ պիտի չպակսին» : Եբր . ա . 12 : Սաղմ . ճբ . 27 : Եսայ . թ . 6 : խդ . 6 : Յայտ . ա . 8 : իբ . 13 : Յօհ . ա . 1 , 2 :

Հ. Աստուած ամէն տեղ ներկայ է. Քրիստոս ալ ամէն տեղ ներկա՞յ է:

Պ. Հրամմերես, ինտոր որ ինքը կ'ըսէ. "Ուր որ երկու կամ երեք հոգի ժողվուած ըլլան իմ անունովս, հոն եմ ես անոնց մէջը": Մատթ. ժը. 20: իը. 18-20:

Հ. Աստուած ամէն բան գիտէ. Քրիստոս ալ ամէն բան գիտէ՞:

Պ. Հրամմերես:

Հ. Արկնէ նայիմ, Պետրոս Յիսուսին ի՞նչ ըսաւ, երբոր Յիսուս հարցուց անոր, թէ "Զիս կը սիրե՞ս":

Պ. "Տէր՝ դուն ամէն բան գիտես, դուն գիտես որ ես քեզ կը սիրեմ": Յովհ. իա. 17: ժզ. 30: Գործ. ա. 24:

Հ. Աստուած ամէն բանի ստեղծիչն է. Քրիստոսն ալ անա՞նկ է:

Պ. Հրամմերես, Սուրբ Գիրքը կ'ըսէ, "Անով ամէն բան ստեղծուեցաւ, ինչ որ երկինքն ու ինչ որ երկրի վրայ, անոնք որ կ'երեւնան՝ և անոնք որ չեն երեւնար": Կող. ա. 15-17: Յովհ. ա. 1-3: Եբր. ա. 3, 10-12:

Հ. Աստուած միայն մեղաց թողութիւն կրնայ տալ. Քրիստոս ալ կրնա՞յ մեղաց թողութիւն տալ:

Պ. Հրամմերես, "Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու": Մատթ. թ. 1-6: Մարկ. բ. 5, 7-12:

Հ. Միայն Աստուած կարող է աշխարհը դատելու. Քրիստոս ալ վերջին օրը ամենուն դատաւո՞րն է:

Պ. Հրամմերես: "Վասն զի պէտք է որ ամէնքս ալ Քրիստոսի ատեանին առջեւը ներկայանանք": Բ Կորնթ. ե. 10: Հռովմ. ժդ. 10-12: Յովհ. ե. 22: Գործ. ժ. 42:

Հ. Միայն Աստուած սիրուելու ու պաշտուելու է



Աստուծոյ պէս. Քրիստոս ալ Աստուծոյ պէս սիրուելու ու պաշտուելո՞ւ է:

Պ. Հրամմերես, քանզի սուրբ Գիրքը կ'ըսէ, թէ "Ամէնը պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն": Յովհ. ե. 23: Գործ. ա. 24: է. 50, 59: Ու նաև կ'ըսէ. "Աստուծոյ բոլոր հրեշտակներն ալ անոր երկրպագութիւն թող ընեն": Եբր. ա. 6: Փիլիպ. բ. 9-12:

Հ. Երկինքին մէջը բոլոր արարածները իրեն երկրպագութիւն կ'ընե՞ն:

Պ. Հրամմերես: Յայտ. ե. 8-14 բաղդատէ Փիլիպ. բ. 9-11ին հետ:

Հ. Մարդիկ իրաւունք ունի՞ն Քրիստոսի Աստուածութիւնն ուրանալու:

Պ. Ոչ՝, շատ մեծ մեղք է: Յովհ. ե. 23: ա Յովհ. ե. 20, 21:

---

Յիսուս Քրիստոս մեր փրկիչն Աստուած է. ամենուն վրայ մեծ ու ճշմարիտ Աստուած՝ և Զօրութեանց Եհովան՝ Անմահ, Անփոփոխ, ամէն տեղ Ներկայ, ամէն բաները Գիտցող, բոլոր տիեզերքին Ստեղծողն ու Պահպանողը. մեղքերու թողութիւն Տուող. Վերջին օրուան Դատաւորը. երկնից ու երկրի մէջ եղած ամէն արարածներն իրմէն վախնալու ու զինքը յարգելու են, իրեն երկրպագութիւն ընելու և զինքը պաշտելու են յաւիտեանս յաւիտենից:

Ա. Մեծ գործ մը կատարուելու էր մարդոց փրկութեանը համար, և այս գործը կատարելն ալ Գերագոյն Էակի մը կը կարօտէր. մենք կը կարօտէինք Աստուծոյ հետ հաւասար Փրկչի մը, անանկ Փրկչի մը՝ որ զԱստուած կատարելապէս իմանայ, որ Աստուծոյ փառքն ու պատիւը՝ մեր փրկութեանը համար ինչ ընել որ կը պահանջէր, ան ալ աղէկ գիտնայ, և որ իրաւունք ու կա-

րողութիւն ունենայ ան ընելու ։ Մենք անանկ Փրկչի մը կը կարօտինք որ կարենայ ազատել մեզ մեղքին՝ մահէն ու Դժոխքին զօրութենէն ․ կարենայ հաշտեցունել մեզ Աստուծոյ հետ և պսակել մեզ Երկինքին մէջը յաւիտենական փառքով ։ Ահա Յիսուս Քրիստոսն է ան Փրկիչը , որ Մեծ Աստուած է ․ թէ որ ինքն Աստուած չըլլար , մեր Փրկչին կողմանէ պահանջուած գործը չէր կրնար ընել ։

Բ ․ Ուրեմն մեր Փրկիչը բոլորովին կարող է փրկելու ան ամէնը՝ որ իրմով Աստուծոյ կու գան ։

Մենք մեղաւո՞ր ենք , ինքն Աստուած է և կրնայ ջնջել մեր մեղքերը ու մեզ սուրբ ընել ։ Մենք տկա՞ր ենք , ինքն Աստուած է ու յաւիտենական զօրութիւնը իրն է , և կրնայ մեզ զօրացունել ։ Մենք տգէ՞տ ենք , ինքն ամենիմաստ է , և կրնայ մեզի իմաստութիւն սորվեցունել ։ Աղքա՞տ ենք , ինքն է ամէն բաներուն Տէրը , կրնայ մեզ հարստացունել ։ Մենք մահկանացո՞ւ ենք , ինքը կենաց և մահուան վրայ զօրութիւն ունի , և կրնայ մեզ նորէն ապրեցունել ։ Մենք դատաստանի առջև ելլելո՞ւ ենք , ինքն է ամենուն արդար Դատաւորը , ու մեր Փրկիչը , և իր միջնորդութիւնովը մենք կրնանք արդարանալ ։ Մենք թէ աս կեանքիս [illegible] ներկայ ժամանակինս՝ և թէ յաւիտենականութեան համար վստահութեամբ և ուրախութեամբ աս Փրկչին կրնանք ապաւինիլ որ անհուն է զօրութեամբ ու փառքով ։

Գ ․ Եւ որչափ որ կարող է՝ նոյնչափ ալ կամեցող ։

Կրնա՞նք տարակուսիլ իր կամեցողութենէն , որ ինքը մեզի համար մեռաւ ։ Կը վախնա՞նք իրեն մօտենալու , որ ինքը մարդասիրութեամբ կը հրաւիրէ մեզ , և կը հաստատէ մեզի որ ինքը դուրս պիտի չձգէ ան՝ որ իրեն կու գայ ։ Մատթ ․ ժա ․ 28–30 ։ Յովհ ․ զ ․ 37 ։ Եւ թէ որ անգամ՝ մը միաւորուելու ըլլանք իրեն հետ , ընաւ ալ չենք կրնար զատուիլ իրմէն ։ Հռովմ ․ ը ․ 28–39 ։ Յովհ ․ ժ ․ 27–30 ։

Դ ․ Ուրեմն հաւատացողին հոգին ապահով է ․ ուրեմն Աստուծոյ Եկեղեցին երկրի վրայ ապահով է Քրիստոսի ձեռքին մէջը , որ է ամենուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս ։ Սաղմ ․ բ ․ 1–12 ։ ԱՅ ․ 1 ։



Ե ․ Անոնք որ չեն հաւատար Տէր Յիսուս Քրիստոսին ու թշնամի են իրեն ու իր փրկութեանը , իրաւունքով դողալու են իր առջևը ։

Անոնք Աստուծոյ դէմ կը հակառակին , անոր դէմ՝ որ իր թշնամիներն իր ոտքին կոխելիքը պիտի ընէ ․ անոր դէմ՝ որ կարող է հոգին ալ մարմինն ալ յաւիտեան դժոխքին մէջը ձգելու ։ Ի՞նչպէս սոսկալի պիտի ըլլայ յատկապէս ան թշնամիներուն դատապարտութիւնը , որոնք Աստուծոյ պարզ խօսքերն իրենց ձեռքերնուն մէջն ունենալով՝ կ'ուրանան Քրիստոսի Աստուածութիւնը , և ասանկ ընելով իբր թէ կը վերցունեն զինքն իր տիեզերակալ Աթոռէն , և կորսուած մարդուն փրկուելուն մի միայն յոյսը և լոյսը կը կորսնցունեն ։

---

## Է ․ ԻՆՔԸ ՄԱՐԴ Է ։

Ղուկ ․ բ ․ 1–52 ։

Հ ․ Յիսուս Քրիստոս մեր Փրկիչն Աստուած ու մարդ է ․ մենք Աստուածաշունչէն հասկցանք որ ինքն Աստուած է ․ դուք ի՞նչպէս գիտէք որ մարդ ալ է ։

Պ ․ Աստուածաշունչէն կը սորվինք՝ թէ աստուածորդին Երկինքէն վար իջաւ ու ինքզինքը մարդկութեան հետ միաւորեց , անանկ որ ինքն Աստուած և մարդ ալ է մէկ տեղ ։

Հ ․ Աւետարանն ի՞նչ կ'ըսէ ասոր վրայով ։

Պ ․ “ Եւ Բանը մարմին եղաւ , ու մեր մէջը բնակեցաւ ” ։ Յովհ ․ ա ․ 14 ։ Փիլիպ ․ բ ․ 5–8 ։

Հ ․ Ո՞ւր ծնաւ Յիսուս ։

Պ ․ Բեթղեհէմին մէջ ։ Միք ․ ե ․ 2 ։ Յովհ ․ է ․ 42 ։ Մատթ ․ բ ․ 1–6 ։ Ղուկ ․ բ ․ 1–12 ։

Հ ․ Ո՞վ էր իր մայրը ։

Պ. Կոյս Մարիամ ։ Եսայ. է. 14 ։ Ծննդ. գ. 15 ։ Մատթ. ա. 18–25 ։ Ղուկ. ա. 26–38 ։

Հ. Իր կարծուած հայրն ո՞վ էր ։

Պ. Յովսէփ ։ Ղուկ. գ. 23 ։

Հ. Տէրոջը Հրեշտակն անոր անունը ի՞նչ դնել պատուիրեց՝ երբոր անիկայ ծնանելու ըլլայ ։

Պ ։ Յիսուս , որ կը նշանակէ Փրկիչ ։

Անոր անունը Յիսուս դնես , քանզի անիկայ իր ժողովուրդն իրենց մեղքերէն պիտի փրկէ ։ Մատթ. ա. 21 ։

Հ. Մեր Փրկչին ծնած օրէն մինչեւ հիմա քանի՞ տարի եղաւ ։

Պ. Հազար ութը հարիւր յիսուն ու վեց տարի ։

Հ. Իր քարոզելէն առաջ իր ծնողացը հետ քանի՞ տարի բնակեցաւ ։

Պ. " Երեսուն տարիի չափ " ։ Ղուկ. գ. 23 ։

Հ. Իր ծնողացը հետ ո՞ր տեղ բնակեցաւ ։

Պ. Նազարէթ քաղաքը ։ Մատթ. բ. 23 ։ Ղուկ. բ. 4 , 51 ։

Հ. Քարոզելու սկսելէն ետքը շուտով ձգեց Նազարէթը , և անատենը ո՞ր քաղաքը բնակեցաւ ։

Պ. Կափառնայում քաղաքը ։ Ղուկ. դ. 16–31 ։ Մատթ. դ. 13 ։

Հ. Երբոր Յիսուսի քարոզելու ու սորվեցունելու ժամանակը մօտեցաւ , Աստուած անոր առջեւէն ո՞վ ղրկեց ճամբան պատրաստելու ։

Պ. Յովհաննէս Մկրտիչը ։

Հ. Մեր Փրկիչը խաչուելէն առաջ , քանի՞ տարի քարոզեց ու սորվեցուց ։

Պ. Իրեք կամ չորս տարիի չափ ։

Հ. Բայց ինքը մարդու պէս երեւցաւ , քնացաւ , կերաւ , պտըտեցաւ , քարոզեց , աղօթեց . ուրեմն ժո–



ղովուրդը ինչպէս ճանչցուց ու հաւատացուց թէ ինքն Աստուածային էր . Աստուած ու մարդ՝ մէկ տեղ ։

Պ. Իր շատ սքանչելի գործքերովը . քանզի ըրած գործքերը անանկ գործքեր էին՝ որ միայն Աստուած կրնայ ընել ։ Յովհ. գ. 1 , 2 ։ ե. 36 ։ ժ. 37 , 38 ։ ժա. 45 ։

Հ. Իր սքանչելի գործքերուն մէկ քանիներն ի՞նչ էին ։

Պ. Մեռելները յարուց , հիւանդները բժշկեց , դեւերը հանեց , ու կոյրերուն աչքերը բացաւ ։ Մատթ. դ. 23 , 24 ։ ը. 13–34 ։ թ. 20–35 ։ ժդ. 25 ։

Հ. Ուրիշ պատճառ ունի՞ս ցուցընելու թէ ինքն Աստուծոյ հետ հաւասար է ։

Պ. Հրամերես . զորօրինակ իր շատ անգամ և զանազան կերպերով զրուցելը , թէ ասանկ էր ։ Մատթ. ժա. 27–30 ։ ժբ. 6–8 ։ ժը. 20 ։ իե. 31–46 ։ իը. 20 ։ Մարկ. բ. 1–12 ։ Յովհ. ե. 17–29 ։

Հ. Ի՞նչ կերպով մեռաւ մեր Փրկիչը ։

Պ. Մեր Տէրը մեծ ամօթ կրելով ու սաստիկ չարչարուելով , խաչին վրայ՝ մեռաւ մեզի համար ։

Հ. Իր մարդ ըլլալովն և չարչարուելովն ու մեռնելովը մեզի համար ի՞նչ կը ցուցընէ ։

Պ. Մեր վրայ ունեցած իր սիրոյն մեծութիւնը ։ Յովհ. ժգ. 34 ։ ժե. 12 , 13 ։

---

Մեր Փրկիչը Յիսուս Քրիստոս մարդ է , ինքը Կոյս Մարիամէն ծնաւ՝ Յուդային Բեթղեհէմին մէջը . երեսուն տարիի չափ իր ծնողացը հետ Գալիլեայի Նազարէթ քաղաքը բնակեցաւ , իրեք կամ չորս տարի քարոզեց , և շատ սքանչելի գործքերով յայտնեց որ ինք Աստուծոյ Որդին էր ու աշխարհի Փրկիչը ։ Բայց իր քաղաքակից Հրեաները

նախանձով լեցուեցան՝ ու իրեն դէմ ելան, և երբ խաչուեցաւ Հռովմայեցի կառավարիչ Պոնտացի Պիղատոսին ատենը, թաղուեցաւ, և իրեք օրէն ետքը նորէն յարութիւն առաւ։ Ծնաւ, ապրեցաւ, ու մեռաւ։ Կը տեսնէք որ մարդու պէս ծնաւ, մարդու պէս ապրեցաւ և մարդու պէս մեռաւ։

Ա. Յիսուս Քրիստոս մեր Փրկիչը լոկ մարդ չէ, հապա Աստուած ալ և մարդ ալ է մէկ տեղ. երկինքին կամ երկրի մէջ իրեն նման մէկը չկայ. իր անունը Էմմանուէլ է, որ ըսել է "Աստուած մեզի հետ"։ "Աստուած մարմնով յայտնուած"։ Մատթ. Ա. 23։ Ա Տիմ. Գ. 16։

Ասոր համեմատ մենք կը տեսնենք Սուրբ Գիրքին մէջ որ Աստուծոյ վերաբերեալ ամէն բաները Քրիստոսի ալ կը վերաբերին. և մարդու վերաբերեալ ամէն բաները՝ Քրիստոսի ալ կը վերաբերին, մեղքէն 'ի զատ։

Բ. Իր անձը մեր գիտութենէն վեր է. իր անունը "Անքննելի" պիտի կոչուի։ Եսայ. Թ. 6։ "Մէկը չճանչնար Որդին՝ բայց Հայրը"։ Մատթ. ԺԱ. 27։ Հոս կը տեսնենք խորհուրդ մը որ Աստուած ու մարդ մէկ են։ Յիսուս Քրիստոս բարձր է երկինքին պէս ու խոնարհ երկրի պէս։ Ի՜նչ բարձրութիւն և ի՜նչ խորութիւն, ի՜նչպէս հեռու՝ և տակաւին ի՜նչպէս մօտ. եկէք իր առջին իյնանք, և պաշտենք ու երկրպագութիւն ընենք իրեն։

Գ. Իր մարդ ըլլալը կը յայտնէ մեզի իր հիանալի խոնարհութիւնը, իր անպատմելի սէրը, և մեր փրկութեանը համար իր ունեցած փափաքը։ Ինքն իր փառքը մէկ դի թողուց, ինքն իր պատիւը չուզեց. ինքը մահին հնազանդեցաւ, ու ան ալ խաչին մահուանը. Փիլիպ. Բ. 5–8. Յօհ. ԺԵ. 13։ Ինքն իր թշնամիներուն համար մեռաւ։ Հռովմ. Ե. 5–8։ Իր ողորմութիւնը և սէրն անչափ են։

Դ. Մենք ուրախութիւնով, և երախտագիտութիւնով, սիրով և անկեղծ հնազանդութիւնով ընդունելու ենք զինքը մեր Աստուածոյն ու մեր Փրկչին պէս։ Պինտ են անոնց սիրտերը և սոսկալի պիտի ըլլայ անոնց վախճանը, որ ուրախութեամբ չեն ընդունիր Փրկիչը։ Բ Կորնթ. Ե. 14, 15։ Բ Թեսաղ. Ա. 7–10։



Ե. Մենք օրինակ առնելու ենք մեզի Քրիստոսի վարքն ու կեանքը՝ որ ամենաբարի ու անզուգական էր երկրիս վրայ։ Փիլիպ. Բ. 4, 5։ Մենք իրեն պէս Աստուծոյ փառքին համար և ուրիշներուն աղէկութիւն ընելու համար ապրելու ենք։ Այսպէս ապրելու համար կը կարօտինք ունենալ Փրկչին ունեցած ներողութիւնը, խոնարհութիւնը, բարի նախանձը, սէրը, հաւատքը, աղօթքը, համբերութիւնը և իր անձնուրացութիւնը։ Սակայն միայն Հոգին Սուրբ Աստուած կրնայ աս շնորհքները մեզի պարգևել ու աւելցունել։

---

## 3. Ինչու Քրիստոս մարդ եղաւ։

Եբր. Բ. 1–18

Հ. Ինչու Յիսուս Քրիստոս մարդ եղաւ

Պ. Որ կարենայ մեռնիլ մեզի համար։ Յօհ. Գ. 16։ Ժ. 11։

Հ. Ինքը կրնա՞ր մեռնիլ մեզի համար, թէ որ մարդ չըլլար։

Պ. Ոչ. "Քանզի բնաւ հրեշտակներուն ձեռք չըռներ, հապա Աբրահամի սերունդին ձեռք կը բռնէ. անոր համար պէտք էր անոր բոլորովին եղբայրներուն նման ըլլալ"։ "Ու արիւն չթափուած թողութիւն չըլլար"։ Եբր. Բ. 16, 17։ Թ. 22։

Հ. Ո՞վ է Երկինքէն իջնող Մեծ վարդապետը՝ որ կատարեալ վարժութիւն կու տայ մեզի Աստուծոյ ու Երկինքին, Դժոխքին ու փրկութեան ճանապարհին վրայով։

Պ. Յիսուս Քրիստոս։

Բայց դուք Ռաբբի մի՛ կոչուիք. ինչու որ ձեր Ուսու-

ցիչը մէկ մըն է, այսինքն Քրիստոս, և դուք ամէնքդ եղբայր էք։ Ու երկրի վրայ մէկը ձեզի Հայր մի՛ կոչէք. ինչու որ ձեր Հայրը մէկ մըն է, որ երկինքն է։ Ու դուք ուսուցիչներ մի՛ կոչուիք՝ ինչու որ ձեր ուսուցիչը մէկ մըն է, այսինքն Քրիստոս։ Մատթ. իգ. 8–10։

Հ. Յիսուս ի՞նչ կ'ըսէ իր վրայովը։

Պ. "Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետևէս կու գայ. խաւարի մէջ պիտի չքալէ, հապա կենաց լոյսը պիտի ունենայ"։ Յովհ. ը. 12։ ժբ. 35, 36, 46։ Ղուկ. բ. 32։

Հ. Բնաւ մեր Փրկիչը մեղք գործե՞ց։

Պ. Ոչ, ինքը "սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ մեղաւորներէն զատուած" էր։ Եբր. դ. 15։ է. 26։ Ա Պետ. բ. 22։

Հ. Յիսուս երբոր աշխարհի մէջ էր, ի՞նչպէս կ'անցունէր իր ժամանակը։

Պ. "Բարիք ընելով"։ Գործ. գ. 38։ Յովհ. դ. 34։

Հ. Աս իր օրինակովը ի՞նչ կը սորվեցունէ մեզի։

Պ. Կը սորվեցունէ մեզի թէ ի՞նչպէս պիտի սիրենք ու պաշտենք Աստուած, ու բարի ընենք մեր ընկերներուն։ Յովհ. ժգ. 14, 15, 34։ ժե. 12, 13։

Հ. Ինքը որ մարդ եղաւ ու աս աշխարհիս մէջ ապրեցաւ, գիտե՞ թէ ի՞նչ է աս աշխարհը, և ի՞նչպէս են մեր նեղութիւններն ու փորձութիւնները։

Պ. Հրամերես։

Թէ որ աշխարհ ձեզ կ'ատէ, գիտցէք որ ձեզմէ առաջ զիս ատեց։ Թէ որ աշխարհէս եղած ըլլայիք, աշխարհ իրենները կը սիրէր. բայց որովհետև աշխարհէ չէք՝ հապա ես ձեզ աշխարհէն ընտրեցի, անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ։ Յովհ. ժե. 18–20։



Հ. Ու Յիսուս մեզի հետ վշտակից կ'ըլլա՞յ, և ի՞նչպէս մեզ մխիթարել ու փրկել պէտք է՝ գիտէ՞

Պ. Հրամերես։

Քանզի չէ թէ անանկ Քահանայապետ մը ունինք որ կարող չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալու. հապա ինքն ամէն կերպով փորձն առած է մեզի նման, բայց առանց մեղքի։ Ուստի ալ համարձակութիւնով մօտենանք շնորհաց աթոռին առջևը, որ ողորմութիւն ընդունինք՝ ու շնորհք գտնենք պէտք եղած ատենը մեզի օգնելու։ Եբր. դ. 15, 16։

Հ. Երբոր որ Ղազարոս բարեկամը մեռաւ՝ ու ինքը Մարթային և Մարիամին հետ անոր գերեզմանը գնաց, ի՞նչ կերպով ցուցուց իր տրտմալից զգացումները։

Պ. "Յիսուս լացաւ"։ Յովհ. ժա. 35։ Ղուկ. ժթ. 41։

---

Աստուածաշունչը կը սորվեցունէ մեզի թէ ինչու համար հարկաւոր էր՝ որ մեր երկրպագելի Փրկիչը Աստուծոյ Որդին մարդ ըլլայ։

Ա. Որ կարենայ չարչարուիլ ու մեռնիլ մեզի համար։ Անոր համար մարդ ըլլալ հարկաւոր էր իրեն՝ որ կարենայ մեռնիլ։

Բ. Որ կարենայ մեր մեծ Ուսուցիչն ըլլալ։ Ինքը միշտ "աշխարհի լոյսը" եղաւ ու միշտ պիտի ըլլայ։ Ինքը կը սորվեցունէ մեզի իր Հոգիովը և իր Խօսքովը՝ որն որ կը կարդանք ու քարոզուած ատենը կը լսենք։ Կը սորվեցունէ մեզի թէ ի՞նչպէս մեծ մեղաւորներ ենք. թէ ի՞նչպէս պատուական է իր փրկութիւնը. թէ ի՞նչպէս ունայն է աս աշխարհը. թէ ի՞նչպէս փառաւորեալ է երկինքը։ Քրիստոս մեզի Ուսուցիչ ունենալնուս համար, պարտինք զգալ որ առանց անոր տխմար ենք. պարտինք սորվելու կամեցող ըլլալ, և պարտինք ուրախութեամբ ու անկեղծ

մտօք ընդունիլ և կատարել այն ամէնը որն որ ինքը կը սորվեցունէ մեզի ։ Յօհ. է. 17 ։ Ինքն արդարութեան մեծ Արեգակն է, անոնք որ խաւարէն փախչիլ կ'ուզեն, պէտք է որ իր լոյսին գան ։

Գ. Որ կարենայ գիտնալ այն աշխարհը որուն մէջ մենք կը բնակինք, և մարդոց նեղութիւնները, փորձութիւնները ու տրտմութիւնները ։ Ուր որ մենք կը բնակինք՝ ինքն ալ բնակեցաւ. ի՛նչ որ մենք կը զգանք ինքն ալ զգաց, մեղքէն 'ի զատ ։ Ուրեմն կրնայ համակրութիւն ունենալ մեզի հետ, ու օգնել մեզի. և մենք իրմէն ողորմութիւն ու շնորհք պիտի գտնենք պէտք եղած ատենը ։ Փրկիչն իր եղբայրներուն նման ըլլալով եկաւ (Եբր. բ. 17) մեզի շատ մօտ, և որչափ որ մօտ է, այնչափ ալ պատուական է ։

Դ. Նա որ կարենայ բարի ու կատարեալ օրինակ մը ցուցընել մեզի՝ որ Աստուած ու մեր ընկերները սիրենք ։

Իր օրինակէն կը սորվինք, թէ ինչպէս ապրելու ու մեռնելու ենք ։ Իր օրինակը կատարեալ է. ու որչափ որ մենք իր օրինակին կը հետևինք, այնչափ կը մօտենանք կատարելութեան և այն ամէն հանգամանքներուն՝ որ ազնիւ ու առաքինի, սուրբ ու բարձրացեալ են Աստուծոյ ու բոլոր աշխարհի առջևը ։

Ե. Քրիստոս ինքն Աստուած էր ու մարդ ըլլալու հաճեցաւ, որ կարենայ չարչարուիլ ու մեռնիլ մեզի համար, մեր Ուսուցիչն ըլլալ, և մեր կարեկից բարեկամն ու Փրկիչը, մեր կատարեալ օրինակն ու առաջնորդը պատուոյ ու անմահութեան. բայց թէ որ զինքը սանկ չընդունինք, ի՞նչ օգուտ ունի մեզի ։ Թէ որ անարգենք Մեծ Աստուածն ու մեր Փրկիչը, ի՞նչ պիտի ըլլայ մեր վախճանը, ուրիշ բան չէ՝ բայց միայն կորուստ ։



4. Քրիստոս մեզ պատիժէն կ'ազատէ ։

Եսայ. ծգ. 1–12 ։

Հ. Մենք մեղաւոր ենք, Աստուած ալ մեզի բարկացեր է. ուրեմն ի՞նչ պիտի յուսանք իրմէն ։

Պ. Պատիժ ։ Յայտ. իբ. 12 ։

Աստուած արդար դատաւոր է. ու Աստուած մեղաւորէն ամէն օր բարկացած է ։ Սաղմ. է. 11 ։ Վասն զի դուն անօրէնութիւն ուզող Աստուած չես. չարը քու քովդ պիտի չբնակի ։ Հպարտները քու աչքերուդ առջին պիտի չկենան. բոլոր անօրէնութիւն գործողները կ'ատես ։ Սաղմ. ե. 4, 5 ։ Վասն զի Որդին մարդոյ իր Հօրը փառքովը պիտի գայ իր հրեշտակներուն հետ. և այն ատենը ամէն մէկուն իր գործքերուն համեմատ հատուցում պիտի ընէ ։ Մատթ. ժզ. 27 ։ Տէրը գիտէ բարեպաշտները փորձութենէ ազատելը, և անիրաւները տանջանքի համար դատաստանի օրուան պահելը ։ բ Պետ. բ. 9 ։

Հ. Մեղաւորներուն պատիժը գալու աշխարհին մէջ ո՞րչափ պիտի տևէ ։

Պ. Յաւիտենական յաւիտենից ։ Մատթ. իե. 46 ։ բ Թես. ա. 7–9 ։ Ղուկ. ժզ. 23–26 ։

Հ. Ո՞ւր տեղ.

Պ. Դժոխքին մէջ ։ Մարկ. թ. 43–48 ։ Մատթ. ժը. 8, 9 ։

Հ. Թէպէտև մեղաւոր ենք, բայց մենք մեզմէ արժանաւոր բան մը չե՞նք կրնար ընել՝ որ Աստուած հաճեցունենք ու իրմէն թողութիւն գտնենք ։

Պ. Չէ՛ ։

Աս գիտնալով՝ որ մարդ օրէնքին գործքերէն չկրնար արդարանալ, հապա Յիսուս Քրիստոսի հաւատքէն ։ Գաղ.

բ . 16 ։ Ոչ թէ արդարութեան գործքերէն՝ որ մենք ըրինք , հապա իր ողորմութեանը համեմատ մեզ փրկեց ։ Տիտ . գ . 5 ։

Հ . Մենք տանջանքներուն տեղը երթալէն ետքը նորէն դուրս պիտի ելլե՞նք ։

Պ . Ոչ՛ . մեղքին պատիժը յաւիտենական է ։

Ու անոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը , իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը ։ Մատթ . իե . 46 ։

Հ . Ուրեմն մենք յանցաւոր ու կորսուած ենք . բայց մէկը չկա՞յ որ անհուն սիրով աշխարհ եկաւ մեզ փրկելու համար ։

Պ . Հրամմերես ։

Հ . Ո՞վ է անիկայ ։

Պ . Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին ։ Յոհ . գ . 16 ։ դ . 42 ։ Ղուկ . բ . 11 ։ Գաղ . դ . 4 , 5 ։ ա Տիմ . բ . 5 ։ ա Յոհ . դ . 5 ։ դ . 10–14 ։

Հ . Մեր մեղքերուն պատիժէն Յիսուս ի՞նչ կերպով կը փրկէ մեզ ։

Պ . Ինքը մեր տեղը մեզի համար չարչարուեցաւ ու մեռաւ ։ Հռովմ . գ . 23–26 ։ ե . 6–8 ։ ա Պետ . գ . 18 ։ ա Կորնթ . ժե . 3 ։ “ Ինքը մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ , և մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ . մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ . և անոր վէրքերովը մենք բժշկուեցանք ” ։ Եսայ . ծգ . 1–12 ։ Մատթ . իզ . 31 ։ Յոհ . ա . 29 ։ Հռովմ . դ . 25 ։ Եբր . ժ . 5–10 ։

Հ . Մեր փրկուելուն ուրիշ ճամբայ մը կա՞յ Յիսուս Քրիստոսէն զատ ։

Պ . Ոչ՛ ։ Յոհ . ժ . 9 ։

Ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ . ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց մէջ



տրուած , որ անով կարող ըլլանք փրկուելու ։ Գործ . դ . 12 ։ Ան որ Որդիին կը հաւատայ , յաւիտենական կեանք ունի . և ան որ Որդիին չհնազանդիր , անիկայ կեանք պիտի չտեսնէ . հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ ։ Յոհ . գ . 36 Քանզի մէկ Աստուած մը կայ , ու մէկ միջնորդ մը Աստուծոյ ու մարդոց մէջը՝ Քրիստոս Յիսուս մարդը . որ իր անձը ամենուն տեղը փրկանք տուաւ իր ատենին վկայութիւն ըլլալու ։ ա Տիմ . բ . 5 , 6 ։

Հ . Ուրիշ Փրկչի մը կը կարօտի՞նք ։

Պ . Ոչ , մենք իրմով կատարեալ ենք ։

Քանզի գիրքը կ'ըսէ . “ Զգուշացէ՛ք՝ չըլլայ որ մէկը ձեզ կողոպտէ փիլիսոփայութիւնով ու փուճ խաբէութիւնով , որ մարդոց աւանդութեան պէս է՝ ու աշխարհիս սկզբունքներուն պէս , և ոչ թէ Քրիստոսի վարդապետութեանը պէս . ինչու որ անոր մէջը կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը՝ մարմնապէս ։ Կող . բ . 8 , 9 ։

Իսկ դուք անկէ էք Քրիստոս Յիսուսով , որ ան մեզի Աստուծմէ իմաստութիւն՝ արդարութիւն՝ սրբութիւն և փրկութիւն եղաւ . որ ինչպէս գրուած է , Ան որ կը պարծենայ՝ Տէրոջմով թող պարծենայ ։ ա Կորնթ . ա . 30 , 31 ։

---

“ Աստուծոյ բարկութիւնը պիտի յայտնուի երկինքէն մարդոց ամբարշտութեանն ու անօրէնութեանը դէմ ” ։ “ Մեղքին վարձքը մահ է ” ։

Ա . Թէ որ մենք Փրկիչ մը չունենանք , յաւիտեանս յաւիտենից կորսուած ենք . մենք ինքզինքնիս կրնա՞նք փրկել . ոչ՛ , չե՛նք կրնար . մենք ինքնիրեննուս Աստուծոյ առջեւ արժանաւոր բան մը չենք կրնար ընել , որ բոլոր մեր գործած չարութիւններուն փոխարէն մը ըլլայ , ու

ոյնպէս իր շնորհքը և ներելը ծախու առնենք. ինչու որ մեղանչեցինք. և թէպէտ ասկէ ետև մէյ մըն ալ մեղք չգործենք, բայց մեր գործած մեղքերուն համար պարտաւոր ենք պատիժ կրելու։ Չենք կրնար տանջանաց տեղը երթալ ու մեր մեղքերուն համար պատժուիլ, ու ետքը նորէն դուրս գալ ու փրկուիլ. ինչու որ մեղքին պատիժը անվախճան ու յաւիտենական է։ Մեղաւորը անգամ մը դժոխք երթալու որ ըլլայ, ընաւ մէյ մըն ալ ան ահագին տեղէն դուրս պիտի չելլէ։ Եւ դատարկ բան է մեզի յուսալ թէ մենք ինքզինքնիս թէ որ չկրնանք փրկել ալ՝ Աստուած մեր վրայ պիտի ողորմի ու մեզ պիտի չպատժէ։ Քանզի ինք իմացուց որ չարերը անպատիժ պիտի չմնան. ու ինքն ալ իր խօսքէն պիտի չանցնի։

Ուրեմն մենք Փրկիչ մը կը կարօտինք, անանկ մէկու մը՝ որ մեզի համար մեր մեղքերը կրէ, և Աստուծոյ թողութիւնն ու սէրը պարգևէ մեզի։

Բ. Յիսուս Քրիստոս է աս Փրկիչը։ Աս մեր ու Աստուծոյ մէջ տեղը կը մտնէ մեր խաղաղարարին պէս։ Աս կը հաճի անհուն սիրով մեր տեղը բռնել։ Աս կը յայտնուի մեր Ազատիչին պէս։ Աս կը կրէ մեր մեղքերը բուն իր անձին մէջ խաչին վրայ, ու Աստուած ալ հաճութեամբ զինքը կ'ընդունի մեր տեղը. ինքը մեզի համար կը չարչարուի. ինքը կը հատուցանէ մեր մեղքին պարտքը. կը մեռնի "Արդարը անարդարներուն համար"։

Գ. Եւ ինքն է կատարեալ ու միայն Փրկիչը։

Մեր փրկութեան գործը ինքը կատարեց. մենք բան մը չենք կրնար ընել. ինքը մեզի համար ինքզինքը պատարագ ու զոհ մատուց Աստուծոյ՝ բոլորովին հաճելի և ընդունելի ըլլալով։ Ուրիշով մը փրկութիւն չկայ. ուրիշի մը չենք կարօտիր, հապա Իրմով կատարեալ ենք (ա)։ Ալ որ

ա. Իսկ դուք անկէ էք Յիսուս Քրիստոսով, որ ան մեզի Աստուծմէ իմաստութիւն՝ արդարութիւն՝ սրբութիւն և փրկութիւն եղաւ. որ ինչպէս գրուած է, Ան որ կը պարծենայ՝ Տէրոջմով թող պարծենայ։ Ա Կորնթ. Ա. 30, 31։ Եւ դուք ալ անով լցուած էք. որ ինքը գլուխ է բոլոր իշխանութեան ու պետութեան։ Կող. Բ. 10։



Յիսուս Քրիստոսէն աւելի ուրիշ ճամբայ մը կը փնտռէ, չկրնար փրկուիլ (ա)։

Դ. Թէ՛ մեզի և թէ բոլոր աշխարհքի ամենէն մեծ ուրախարար աւետիս ան է, որ Աստուած իր նախատես խնամքովը մեզի Փրկիչ մը պատրաստեց մեզ մեղքէն ու Դժոխքէն ազատելու համար։

Ուստի խոնարհաբար խոստովանելով մեր մեղքերն ու մեր իրաւապէս դատապարտուած ըլլալը, խնդրենք Աստուծմէ թողութիւն ու իրեն հետ հաշտութիւն՝ միայն Քրիստոսով, միշտ անոր միջնորդութիւնովը երթանք Աստուծոյ և մեր աղօթքներն ու շնորհակալութիւնները մատուցանենք անով, և անոր վրայ հաւատք ունենալով ապրինք. և երբոր պարծինք՝ անով պարծինք. կորսուելու մարդոց փրկութիւնը միայն Քրիստոսով է. քանզի ինքն է ամէնը՝ ամէն բանի մէջ։

---

## 5. Յիսուս Քրիստոս չարչարուեցաւ ու մեռաւ մեզի համար խաչին վրայ։

Մատթ. ԻԷ. 1–36։

Հ. Ո՞ր քաղաքը խաչուեցաւ մեր Փրկիչը.

Պ. Երուսաղէմ քաղաքը։

Հ. Ի՞նչ էր ան տեղին անունը ուր որ ինքը խաչուեցաւ։

Պ. Գողգոթա՝ ու Գագաթն։ Մատթ. ԻԷ. 33։ Յովհ. ԺԹ. 17։

Հ. Որո՞նք զինքը խաչելու դատապարտեցին։

ա. Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ. ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց մէջ տրուած, որ անով կարող ըլլանք փրկուելու։ Գործ. Դ. 12։

Պ. Հրէաները բուն իրեն ազգը: Յօհ. ա. 11: Եսայ. ծգ. 1-3:

Հ. Ո՞վ մատնեց իր Տէրը:

Պ. Յուդան: Մատթ. ժ. 4: Յօհ. ժգ. 21-27:

Հ. Քահանայապետները քանի՞ կտոր արծաթ տուին Յուդային՝ որ Յիսուսն իրենց մատնէ:

Պ. Երեսուն կտոր: Մատթ. իզ. 14-16: Յօհ. ժը. 1-16:

Հ. Ի՞նչ էր ան պարտէզին անունը՝ ուրուն մէջն էր Յիսուս, երբոր Յուդան զինքը մատնեց:

Պ. Գեթսեմանի: Յօհ. ժը. 1, 2:

Հ. Յուդան ի՞նչպէս մատնեց Յիսուսը

Պ. Համբուրելով: Մատթ. իզ. 48-50:

Հ. Յիսուսին դէմ ի՞նչ վկայութիւն ըրին Հրէաները:

Պ. Սուտ վկայութիւն: Մատթ. իզ. 57-61:

Հ. Ինչո՞ւ Հրէաները Յիսուսը մեռցունել ուզեցին:

Պ. Քանզի նախանձեցան անոր վրայ ու ատեցին զինքը: Մատթ. իէ. 18:

Հ. Ո՞վ էր ան Հռովմայեցի կառավարը որն որ Հրէաները համոզեցին որ Յիսուսը խաչը հանէ:

Պ. Պոնտացի Պիղատոս: Մատթ. իէ. 2:

Հ. Ի՞նչ յանցանք ձգեցին անոր վրայ Պիղատոսին առջևը:

Պ. Թագաւոր ըլլալ կ'ուզէ, ըսին: Ղուկ. իգ. 1-3:

Հ. Պիղատոս հաւատա՞ց որ Յիսուս յանցաւոր է ու խաչուելու արժանի:

Պ. Ոչ՛: Ղուկ. իգ. 4-15:

Հ. Պիղատոս Յիսուսը թող տալ ուզե՞ց:

Պ. Այո՛: Յօհ. ժթ. 4-12:



Հ. Երբոր Պիղատոս անոնց ձեռքը տուաւ Յիսուսը որ խաչուի, ի՞նչ ըրաւ ժողովուրդին առջևը:

Պ. Ջուր առաւ ու իր ձեռքերը լուաց: Մատթ. իէ. 24, 25:

Հ. Պիղատոս՝ Հերովդէսը և Քահանայապետներն ու զինուորները ի՞նչ ըրին Յիսուսը խաչ հանելու տանելէն առաջ:

Պ. Ծեծեցին ու ծաղր ըրին զինքը: Ղուկ. իգ. 11:

Հ. Յիսուս ի՞նքը կը վերցունէր իր խաչափայտը:

Պ. Հրամերես, բայց ետքը մէկը բռնեցին Սիմոն Կիւրենացին, որ Յիսուսի խաչը տանելուն օգնէ: Ղուկ. իգ. 26:

Հ. Ո՞վ էին ան երկու մարդիկը՝ որ Յիսուսի հետ խաչուեցան:

Պ. Երկու գողերը: Յօհ. ժթ. 18:

Հ. Խաչելութիւնով եղած մահը ի՞նչպէս մահ էր:

Պ. Շատ ցաւալի ու նախատալից:

Հ. Որո՞նց համար կրեց Յիսուս աս նախատինքը:

Պ. Մեզի համար: Եսայ. ծգ. 10: բ Կորնթ. ե. 21:

Հ. Իր թշնամիները որ զինքը խաչեցին, ի՞նչպէս նախատեցին զինքը:

Պ. Կը նախատէին զինքը իրենց գլուխը շարժելով: Մատթ. իէ. 39-44:

Հ. Ինք ի՞նչպէս աղօթեց անոնց համար:

Պ. "Հայր՝ թողութիւն տուր ատոնց, ինչու որ չեն գիտեր ինչ կ'ընեն": Ղուկ. իգ. 34:

Հ. Որչափ ատեն խաւար եղաւ բոլոր երկրի վրայ:

Պ. Երեք ժամ: Մատթ. իէ. 45: Մարկ. ժե. 33:

Հ. Իններորդ ժամուն Յիսուս բարձր ձայնով ի՞նչ կանչեց:

Պ. "Աստուած իմ՝ Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր": Մատթ. ԻԷ. 46: Մարկ. ԺԵ. 34:

Հ. Երբոր Յիսուս մեռնելու վրայ էր, ի՞նչ ըսաւ:

Պ. "Ամէն բան կատարուեցաւ": "Հայր, քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս": Ղուկ. ԻԳ. 46:

Հ. Երբոր Յիսուս մեռաւ, ի՞նչ պատահեցաւ:

Պ. "Երկիրը շարժեցաւ, և քարերը պատռեցան. ու գերեզմանները բացուեցան": Մատթ. ԻԷ. 50-53:

Հ. Ի՞նչ էր ան հարուստ աշակերտին անունը՝ որ Քրիստոսի մարմինը խաչին վրայէն վար առաւ, ու իր գերեզմանին մէջը դրաւ:

Պ. Յովսէփ: Ղուկ. ԻԳ. 50-53:

Հ. Քրիստոս ո՞ր օրը մեռելներէն յարութիւն առաւ:

Պ. Թաղուելուն երրորդ օրը՝ որ շաբաթին առջի օրն էր. այսինքն Կիրակի օր: Մատթ. ԻԷ. 62-66:

Հ. Քրիստոս Երկինք համբառնալէն առաջ իր աշակերտներուն քանի՞ օր երևցաւ զանազան ատեն ու զանազան տեղեր:

Պ. Քառսուն օր: Գործ. Ա. 1-3: Ա Կորնթ. ԺԵ. 1-8: Ղուկ. ԻԴ: Յովհ. Ի և ԻԱ:

Հ. Քրիստոս ո՞ր լեռնէն համբարձաւ:

Պ. Ձիթենեաց Լեռնէն: Մարկ. ԺԶ. 19:

Հ. Յիսուս հիմա ո՞ւր կը նստի:

Պ. "Աստուծոյ աջ կողմը": Մարկ. ԺԶ 19: Ա Պետ. Գ. 22:

---

Պէտք էր որ Աստուծոյ Որդին մեռնի մեզ փրկելու համար. և իր մահուան ժամանակն ու կերպը առաջուց սահմանուած էր Աստուծոյ անհուն իմաստութիւնովը:

Ա. Ինքը խաչին վրայ մեռաւ խիստ անարգ ու ան ողորմ մահով մը: Ինքը խաչելութեան ցաւերը և տաղ-



նապները իրեն անօրէն մարդոց ձեռքովը: Բայց աս ամենէն զատ՝ իր Հօրը երեսը ծածկուեցաւ իրմէն, ու անոր բարկութիւնը իր վրան ինկաւ: Մեղքի համար կրած իր չարչարանքներուն մեծութիւնը Աստուած միայն գիտէ. Նայեցէք իրեն՝ որ իր քաշելու չարչարանքներն առաջուց տեսնելով, ինչպէս մեծ ահով ու դողով արիւնի մեծ կաթիլներ գետինը վազցուց Գեթսեմանի պարտէզին մէջը: Լսեցէք նաև ան ցաւագին կանչելը, որն որ մարդ չկրնար զգալ ու իմանալ, "Աստուած իմ՝ Աստուած իմ, իս ինչո՞ւ թողուցիր":

Բ. Ու հարկաւո՞ր էր որ Աստուծոյ Որդին մեռնէր մեր փրկութեանը համար: Այո: Որովհետև մենք կորսուած էինք: Ու իր արիւնէն զատ ուրիշ արիւն մը չէ՞ր կրնար մեղքի քաւութիւն ընել: Ո՛չ ամենևին: Որովհետև մեղքը իրաւցունէ չար ու լեղի բան մըն է: Աստուած անշուշտ կ'ատէ մեղքը և անշուշտ պիտի պատժէ, որովհետև բուն իր սիրելի Որդին չխնայեց որ անիկայ չէ թէ ինքիրմէն մեղաւոր էր, հապա մեղաւորներուն տեղն անցնելուն, անոնց մեղքերն իր վրան առնելուն համար տանջուեցաւ, մինչև անգամ ինքզինքը 'ի մահ մատնելով: Ուստի մեղքը չատե՞նք, և չտրտմի՞նք անոր վրայ, ու չփախչի՞նք անկէց՝ բոլոր չարիքներուն ամենէն սոսկալին սեպելով անիկայ:

Գ. Ու Յիսուս ազատաբար յանձնառու եղա՞ւ. ու Հայրն ալ կամաւ թողո՞ւց իր Որդին որ ասանկ մահով մը մեզի համար մեռնի: Որովհետև Հայրն ու Որդին կը սիրեն մեզ անհուն սիրով. (Յովհ. ԺԵ. 13: Հռովմ. Ե. 6-8.) ասանկ սիրով մը՝ որ արժան է մեր քարացեալ ու ապստամբ սիրտերը կոտրել ու բռնադատել որ մենք բոլորովին Աստուծոյ համար ապրինք (Ա):

Դ. Քրիստոս չարչարուեցաւ չար մարդոց ձեռքերէն,

---

Ա. Ու ամենուն համար մեռաւ, որ կենդանի եղողները՝ ալ իրենց անձերուն կենդանի չըլլան, հապա անոր՝ որ իրենց համար մեռաւ ու յարութիւն առաւ: Բ Կորնթ. Ե. 15: Բայց ես՝ քաւ լիցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը, որ անով աշխարհ ինծի խաչը ելած է, ես ալ աշխարհի: Գաղ. Զ. 14:

նախատինք ու թուք, և ծեծ ու մահ ընդունելով մեզի համար։ Թէ որ պէտք ըլլայ, մենք ալ նոյնպէս թող չարչարուինք իրեն համար. և ինչպէս որ ինքն աղօթեց իր թշնամիներուն համար ու ներեց անոնց, մենք ալ նոյնն ընենք։ Գործ. է. 59։

Ե. Ինքը մեռելներէն յարութիւն առաւ յաղթանակաւ իրեք օրէն ետքը։ Իր յարութիւնը փորձով ցուցուց որ ինքն իրաւցունէ Աստուծոյ Որդին էր ու աշխարհի Փրկիչը. որ մեռնելէն ետքը հոգին կ'ապրի. և որ բոլոր մեր մարմիններն ալ յարութիւն պիտի առնեն Աստուծոյ սահմանած օրը։ Կեանքն ու անմահութիւնը լոյսին դէմը կը բերուին Աւետարանով՝ չէ թէ ուրիշ բանով։

Զ. Ինքը երկինք համբարձաւ ու Աստուծոյ աջ կողմը կը նստի։ Բարձրացեալ Տէր ու Փրկիչ է ինքը՝ որ կարող է փրկել ան ամէնը որ Աստուծոյ կու գան իրմով։ Միշտ հոն կը բնակի թագաւորելով, տիրելով, յաղթելով իր թշնամիները, և պահպանելով իր եկեղեցին ամէն ատեն։ Մատթ. իը. 20։ Եփես. ա. 12–23։ Երջանիկ են անոնք՝ որ իր պատուական արիւնին քաւութենէն բաժին ունին։

---

6. Տէր Յիսուս մեռաւ ամենուն համար։

Եսայ. ծգ. 1–13։

Հ. Տէր Յիսուս բոլո՞ր աշխարհի համար մեռաւ՝ թէ միայն մէկ մասին համար։

Պ. Բոլոր աշխարհի համար։

Հ. Յիսուս իր աշխարհ խրկուելուն վրայով ի՞նչ կ'ըսէ։

Պ. “Հայրը իր Որդին խրկեց աշխարհի Փրկիչ ըլլալու”։ ա Յովհ. դ. 14։

Հ. Յօհաննէս Մկրտիչ ի՞նչ ըսաւ Քրիստոսի վրայով։



Պ. “Ահա Աստուծոյ Գառն՝ որ աշխարհի մեղքը կը վերցունէ”։ Յովհ. ա. 29։

Հ. Տէր Յիսուս իր Առաքեալներուն հրամայե՞ց որ Աւետարանը բոլոր աշխարհի քարոզեն՝ թէ մէկ մասին միայն։

Պ. Բոլոր աշխարհի

Հ. Իր վերջին պատուիրանքն անոնց ի՞նչ էր։

Պ. “Գացէք բոլոր աշխարհ, ու Աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն”։ Մարկ. ժզ. 15, 16։

Հ. Ուրեմն Առաքեալները գացին ու քարոզեցի՞ն Աւետարանը բոլոր աշխարհի։

Պ. Հրամերես։ Մարկ. ժզ. 20։ Գործ. բ. 1–21։

Հ. Տէր Յիսուս կը հրաւիրէ՞ ամէն մեղաւորներն իրեն գալու ու փրկուելու, թէ միայն անոնց մէկ մասը։

Պ. Ամէն մեղաւորները։

Հ. Ըսէ նայիմ, ի՞նչպէս կը հրաւիրէ։

Պ. “Եկէք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեզ պիտի հանգչեցունեմ։ Իմ լուծս ձեր վրայ առէք. և ինծմէ սորվեցէք որ հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք։ Ինչու որ իմ լուծս քաղցր է, և իմ բեռս թեթև”։ Մատթ. ժա. 28–30։

---

“Հայրը իր Որդին խրկեց աշխարհի Փրկիչ ըլլալու”. Յիսուս երեցաւ և յայտնեց թէ ինքն է Փրկիչը. և յարմար ատենին ինքզինքը զոհ մատուց “բոլոր աշխարհի մեղքերուն համար”։ Ինքը մարդասիրութեամբ հրաւիրեց ամէնը՝ որ իրեն գան, և պատուիրեց իր Առաքեալներուն, “Գացէք բոլոր աշխարհ, և Աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն”։

Ա. Յիսուս Քրիստոս աշխարհի Փրկիչն է. իր պատուական արիւնը բաւական է բոլոր աշխարհի մեղքերը լուալու։ Թող բոլոր աշխարհը գայ, և իր ըրած հաշտութիւնը ամենուն համար բաւական պիտի ըլլայ։ Ինքը կարող է փրկելու որչափ որ ըլլան փրկութեան փափաքողները, ամէն տեղի մէջ, ամէն վիճակի մէջ, աշխարհի սկիզբէն մինչև վերջը։ "Յիսուս Քրիստոս նոյն է երէկ և այսօր և յաւիտեան"։

Բ. Ուստի իրմով եղած փրկութիւնը ձրի է ամէն ուզողներուն համար։ Հոգ չէ՛ աշխարհիս ո՛ր կողմը որ ըլլանք, թէ Արևելք ըլլանք, թէ Արևմուտք, թէ Հիւսիս, թէ Հարաւ։ Հոգ չէ՛ ի՛նչ վիճակի մէջ որ ըլլանք, թէ հարուստ, թէ աղքատ, թէ իմաստուն, թէ յիմար, բարձր կամ ցած. հոգ չէ՛ ոչ ալ ինչ հասակի մէջ որ ըլլանք, թէ ծեր կամ պատանի, արու կամ էգ. ամէնքս ալ մեղաւոր ենք, ու Քրիստոս է Փրկիչ ամէն մեղաւորներուս համար։

Գ. Աւետարանը՝ որ անով միայն կը գտնուի փրկութիւնը, ամենուն ալ խօսուելու է։ Անոնք որ Աւետարանը ունին՝ պարտաւոր են խրկել անիկայ անոնց ալ՝ որ չունին, մեր Փրկչին վերջին պատուիրանքին համեմատ։ Ամէն մարդոց պէտք է քարոզել՝ թէ Փրկիչ մը կայ, ու թէ կրնան փրկուիլ։ Թէ որ մենք՝ որ Աւետարանը ունինք՝ զանց կ՚ընենք կամ չենք հաճիր անիկայ անոնց ալ տալ որ չունին, կամ խաբանելու կարողութիւնն ունենալով չենք թողուր անոնց որ իրենք ալ ստանան ու կարդան, մեծապէս պատիժի արժանի ենք Աստուծոյ առջին։ Ինչ մեծ արտօնութիւն է մարդուս որ Քրիստոսի գիտութիւնը տարածէ ու հոգիներուն փրկութեանը օգնութիւն ընէ. և անոնք որ չեն կրնար անձամբ երթալ ու Քրիստոս քարոզել, կրնան օգնել իրենց աղօթքովը, ու իրենց ողորմութիւնովը ուրիշները խրկել որ քարոզեն, ու անոնց հետ ալ Սուրբ Գիրքը խրկել։ Անիկայ արտօնութիւն ու պարտաւորութիւն է մեզի։

Դ. Իր փրկութիւնը անանկ ձրի, անանկ առատ է, որ ուրախութեամբ ու սրտանց ամենուն ընդունելի ըլլալու արժան է։



Յիսուս իր բոլոր սրտովը կը հրաւիրէ մեզ իրեն գալ։ Մենք իրեն հրաւէրքը ընդունելու ենք, որ ասանկ մեր փրկութիւնը կատարուի։ Կենաց հացը ձրի ու առատապէս պատրաստուեցաւ առաջուց, "Ձեր ականջը խոնարհեցուցէք, ու ինծի եկէք, մտի՛կ ըրէք՝ ու ձեր հոգիները ապրին պիտի"։ Եսայ. ԾԵ. 3։

---

## 7. Անոնք միայն կը փրկուին՝ որ Յիսուսի կը հաւատան։

Յովհ. Գ. 14–36։

Հ. Տէր Յիսուսի ամենուն համար մեռնելովը ամէնն ալ պիտի փրկուի՞ն։

Պ. Ոչ. միայն անոնք պիտի փրկուին՝ որ կը հաւատան իրեն։ Յովհ. Գ. 15–36։

Հ. Ի՞նչ կը պատուիրէ Աստուած մեզի՝ իր Որդիին հաւատալուն վրայով։

Պ. "Ու անիկայ է անոր պատուիրանքը որ իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի անունին հաւատանք, ու մէկզմէկ սիրենք"։ Ա Յովհ. Գ. 23։ Մատթ. ԺԷ. 5։

Հ. Ի՞նչ կ՚ըսէ մեր Տէրը, իրեն հաւատալու ու մկրտուելու վրայով։

Պ. "Ան որ հաւատայ ու մկրտուի, պիտի փրկուի, և ան որ չհաւատայ, պիտի դատապարտուի"։ Մարկ. ԺԶ. 16։ Յովհ. Զ. 47։

Հ. Երբոր բանտապետը հարցուց Պօղոսին ու Շիղային, թէ "Տէրեր՝ ինծի ի՞նչ պէտք է ընել, որ փրկուիմ". անոնք ի՞նչ պատասխան տուին անոր։

Պ. "Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին ու պիտի փրկուիս դուն՝ և քու տունդ"։ Գործ. ԺԶ. 31։

Հ. Ինչպէ՞ս Աստուծոյ որդիքը կ՚ըլլանք։

Պ. “Յիսուս Քրիստոսի հաւատալով” Գաղ. գ. 26։

Հ. Ինչո՞ւ Քրիստոսը լսողներուն ամէնը չեն հաւատար իրեն որ յաւիտենական կեանք ունենան։

Պ. Ինչու որ չեն ուզեր. Յովհ. ե. 40։ գ. 19, 20։ Մատթ. իբ. 1–14։

Հ. Աստուած կ'ուզէ՞ որ մէկը կորսուի։

Պ. Ոչ։

Տէրը երկայնամիտ կ'ըլլայ. չուզեր որ մէկը կորսուի, հապա որ ամէնքը ապաշխարանքի գան։ Բ Պետ. գ. 9։ Ինչու որ ես կենդանի եմ՝ կ'ըսէ Տէր Եհովան, որ ամբարշտին մեռնիլը չեմ ուզեր. հապա որ ամբարիշտը իր ճամբայէն դառնայ ու ապրի. դարձէ՛ք՝ դարձէք ձեր չար ճամբաներէն. վասն զի ինչո՞ւ մեռնիք՝ ով Իսրայէլի տունը։ Եզեկ. լգ. 11։

Հ. Մեղաւոր մը՝ որ իրեն կու գայ, Յիսուս ալ անիկայ փրկելէն պիտի հրաժարի՞։

Պ. Ոչ. քանզի Տէրը կ'ըսէ. “Ան ամէնը որ Հայրը ինծի կու տայ, ինծի պիտի գայ. և ան որ ինծի կու գայ, բնաւ դուրս պիտի չհանեմ”։ Յովհ. զ. 37։ Ղուկ. իգ. 42, 43

Հ. Ուրեմն թէ որ մենք կորսուինք, յանցանքը որո՞ւնն է։

Պ. Բուն մերն է յանցանքը։ Առակ. ա. 24–33։ Հռովմ. գ. 6–11։

---

Թէև Տէր Յիսուս մեռաւ ամենուն համար, և իր պատուական արիւնը բաւական է բոլոր աշխարհի մեղքերը լուալու,

Ա. Բայց թող մէկը չկարծէ որ ամէնքն ալ պիտի փրկուին, ան ամէնը որ Քրիստոսի կը լսեն՝ մէկ բան մը



ունկին ընելու. և ամէն մէկը պարտին նոյն բանն ընել. այսինքն մենք պարտինք իրեն հաւատալ. թէ որ չհաւատանք, չենք կրնար փրկուիլ։

Բ. Մարդոց կորսուելուն պատճառն ան չէ որ Աստուած կ'ուզէ անոնց կորուստը. հապա բուն իրենք չեն ուզեր որ փրկուին. Աստուած չհաճիր մեղաւորներուն մահուանը կամ պատիժին. բայց մեղաւորն իր մեղքերն ու ներկայ աշխարհը աւելի սիրելով՝ իր կամքովը կը մերժէ Քրիստոսը. և Աստուած արդար ըլլալով՝ մեղաւորը պարտի կորսուիլ։

Գ. Ուրեմն կորսուած մեղաւորը՝ իր կորսուելուն համար, բուն ինքը յանցաւոր պիտի սեպուի յաւիտեանս յաւիտենից։

Դ. Այնչափ մեծ է մեր բնական կուրութիւնը և չարութիւնը որ Սուրբ Հոգիին կը կարօտինք որ մեզի ցուցունէ մեր մեղաւոր ու կորսուած ըլլալը, ու մեզ դարձունէ Քրիստոսի։ Առանց անոր շնորհքին օգնութեանը մենք բնաւ Քրիստոսի չենք կրնար գալ։

---

## 8. Ի՞նչ է Յիսուս Քրիստոսի հաւատալը։

Ղուկ. ժե. 1–24։

Հ. Երբոր տղաքը յանցանք մը գործեն, այսինքն՝ իրենց հօրը կամ մօրը չհնազանդին, ի՞նչ պէտք է որ զգան։

Պ. Տրտմութիւն։

Հ. Եւ ի՞նչ պարտին ընել։

Պ. Թողութիւն խնդրել ու մէկ մըն ալ անանկ չընել։

Հ. Աստուած ներող և ողորմա՞ծ է։

Պ. Հրամմերես։ Եսայ. ծե. 6, 7։

Սակայն ամէն բան Աստուծմէ է, որ մեզ իրեն հետ

հաշտեցուց Յիսուս Քրիստոսի ձեռքովը, ու տուաւ մեզի հաշտութեան պաշտօնը։ Այսինքն Աստուած էր, որ Քրիստոսով աշխարհս իրեն հետ հաշտեցուց, և անոնց յանցանքները իրենց չսեպեց, ու հաշտութեան խօսքը մեր մէջը դրաւ։ Ուրեմն Քրիստոսի կողմանէ դեսպանութիւն կ'ընենք, իբրև թէ Աստուած կը բարեխօսէր մեզմով․ կ'աղաչենք ձեզ Քրիստոսի կողմանէ, հաշտուեցէք Աստուծոյ հետ։ Վասն զի Աստուած անիկայ՝ որ մեղք չէր գիտեր, մեզի համար մեղաւոր սեպեց, որ մենք անոր միջոցովը Աստուծոյ արդարները ըլլանք։ Բ Կորն. Ե. 18–21։

Հ. Ուստի՝ երբոր մենք Աստուծոյ դէմ մեղանչենք, երբոր մեր Երկնաւոր Հայրը չհնազանդինք, ի՞նչ պէտք է որ զգանք։

Պ. Խորունկ տրտմութիւն։

Հ. Եւ ուրիշ ի՞նչ ընելու ենք։

Պ. Թողութիւն խնդրելու ու մէյմըն ալ անանկ ընելու չենք։

Հ. Ասոր վրայով ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը։

Պ. «Թէ որ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է անիկայ մեր մեղքերուն թողութիւն տալու, և մեզ բոլոր անիրաւութենէ սրբելու»։ Ա Յովհ. Ա. 9։ Հռովմ. Ժ. 9, 10։

Հ. Պենտեկոստէին օրը ժողովուրդները խորունկ մը զգացին թէ մեղաւոր էին, և ըսին Պետրոսին ու բոլոր Առաքեալներուն թէ՝ «Մարդիկ եղբայրներ, ի՞նչ ընենք», Պետրոս ալ ի՞նչ պատասխան տուաւ անոնց։

Պ. «Ապաշխարեցէք, ու ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղաց թողութեան համար»։ Գործ. Բ. 38։

Հ. Ի՞նչ է մեր մեղքերուն վրայ ապաշխարելը։



Պ. Անոնց վրայ տրտմիլ, և անոնք խոստովանիլ ու անոնցմէ հեռանալ։ Գործ. ԺԹ. 18։ Բ Կորն. Է. 9–11։

Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չգտներ․ բայց զանոնք խոստովանողն ու մէկդի ձգողը ողորմութիւն կը գտնէ։ Առակ. ԻԸ. 13։

Հ. Բայց մեր մեղքերուն համար տրտմելէն և անոնք Աստուծոյ խոստովանելէն ետև, որո՞ւն արժանաւորութիւնովը Աստուած պիտի ներէ մեզի։

Պ. Միայն Քրիստոսի արժանաւորութեանը համար։

Հ. Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը ներողամիտ ըլլալու վրայով։

Պ. «Եւ իրարու հետ քաղցր եղէք, գթած, ներելով իրարու, ինչպէս որ Աստուած՝ Քրիստոսով ներեց ձեզի»։ Եփես. Դ. 32։ Կող. Գ. 13։

Հ. Աստուած մեր աղէ՞կ ըլլալուն կամ մեր բարեգործութեա՞նը համար կը ներէ մեզի թէ բոլորովին Քրիստոսի համար։

Պ. Բոլորովին Քրիստոսի համար։ Եփես. Բ. 5–8։

Որդի մը պիտի ծնանի, ու անոր անունը Յիսուս դնես․ քանզի անիկայ իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ։ Մատթ. Ա. 21։ Ինչու որ Որդին մարդոյ եկաւ՝ կորսուածը փրկելու։ Մատթ. ԺԸ. 11։ Անոր կը վկայեն բոլոր մարգարէները թէ ամէն իրեն հաւատացողները իր անունովը մեղաց թողութիւն կ'առնեն։ Գործ. Ժ. 43։ Ինչու որ ամէնքը մեղք գործեցին, և Աստուծոյ փառքէն պակսած են։ Եւ անոր շնորհքովը ձրի կ'արդարանան։ Հռովմ. Գ. 23, 24։ Որ երբ որ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ․ ուրեմն հիմա որ իր արիւնովը արդարացանք, որչափ աւելի իրմով պիտի ազատինք բարկութենէն։ Վասն զի թէ որ թշնամի եղած ատեննիս Աստուծոյ հետ հաշտուեցանք իր Որդւոյն

մահովը , որչափ աւելի մեր հաշտուած ատենը պիտի ապրինք անոր կեանքովը : Հռովմ . Ե . 8–10 :

Հ . Յիսուս իր կենաց ճանապարհ ըլլալուն վրայով ի՞նչ կ'ըսէ :

Պ . "Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնն ու կեանքը . մէկը Հօրը քով չգար , եթէ ոչ ինծմով" : Յովհ . ԺԴ . 6 :

Հ . Ուրիշ ի՞նչ կ'ըսուի ասոր վրայով :

Պ . "Ու ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ . ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց մէջ տրուած , որ անով կարող ըլլանք փրկուելու" : Գործ . Դ . 12 :

Հ . Յիսուս Քրիստոսի հաւատալը ի՞նչ կը պատճառէ մեղաւորին սրտին :

Պ . Խաղաղութիւն և ուրախութիւն :

Ու զանոնք իր տունը տանելով անոնց առջևը սեղան դրաւ , և բոլոր տունովը ուրախ եղաւ՝ Աստուծոյ հաւատալով : Գործ . ԺԶ . 34 : Ը . 8 , 39 : Հռովմ . ԺԵ . 13 : Ա Թես . Ա . 6 :

Հ . Երկինքին մէջ յաւիտեանս յաւիտենից ո՞վ պիտի օրհնենք՝ մեզ իր արիւնովը փրկելուն համար :

Պ . Տէր Յիսուսը : Յայտ . Ա . 5 , 6 : Ե . 9–14 :

---

Քրիստոսով փրկութիւն ստանալու համար , պէտք է՝

Ա . Ապաշխարութիւն . ինչու որ առանց ապաշխարութեան անկարելի է որ մէկը Քրիստոսի գայ : Մենք պարտինք փորունկ ու սրտով տրտմիլ մեր Աստուծոյ դէմ գործած մեղքերնուս համար . պարտինք բան մը չծածկել ու չպահել , հապա խոստովանիլ Աստուծոյ առջևը բոլոր մեր մեղքերը , և յայտնել թէ ինչպէս սաստիկ ցաւ և զղջում կը զգանք անոնց համար . ինչպէս կ'ատենք անոնք .



նաև պարտինք խօսք տալ Աստուծոյ որ իր շնորհքին մեզի օգնելովը մէկդի պիտի ձգենք անոնք , ու սուրբ կեանք մը պիտի վարենք , ճիշդ ինչպէս որ ինքը կ'ուզէ ու կը պահանջէ :

Բ . Փրկուելու համար մեր բոլոր յոյսերը Քրիստոսի վրայ , ու միայն Քրիստոսով պիտի ըլլան : Մենք պարտինք աղաչել Աստուած՝ որ մեզ ընդունի շնորհքով . չէ թէ մենք մեզմէ բարի ենք ու կրնանք անանկ բարի գործքեր ընել՝ որով արժանի ըլլանք իրմէն թողութիւն ու շնորհք ընդունելու . ինչու որ մենք մեզմէ անարժան ենք , արժանի ըլլալով միայն բարկութեան , ու չենք կրնար բան մը ընել Աստուծոյ շնորհքին արժանաւոր ըլլալու համար . մէկ խօսքով կորսուած ենք , ու պարտինք Աստուծմէ թողութիւն ու շնորհք խնդրել միայն Քրիստոսի համար : Մենք չենք կրնար փրկել ինքզինքնիս , Քրիստոս կը փրկէ մեզ : Ուստի պարտինք Քրիստոսը մեզի Փրկիչ առնել և իրեն միայն ապաւինիլ փրկութեան համար : Ինքը քաւութիւն ըրաւ մեր մեղքերուն համար և ինքը բարեխօսութիւն կ'ընէ մեզի համար Աստուծոյ առջևը . Աստուած ալ զինքը մեղաւորներուն միջնորդ կ'ընդունի , և անոր ամէն ըրածներուն ու չարչարանքներուն համար կը ներէ ու կը փրկէ մեզ : Ա Կորն . Զ . 11 : Հռովմ . Գ . 22–25 :

Գ . Երբոր մենք ապաշխարենք ու Յիսուսին հաւատանք , և թողութիւն գտնելու յոյս ունենանք ու զգանք որ Աստուծոյ սէրը մեր սրտին մէջը ունինք , շատ աղէկ իրաւունք պիտի ունենանք ուրախանալու , և իրաւ պիտի ուրախանանք : Հռովմ . Ե . 1–11 : Ը . 1–39 : Յովհ . Ժ . 27–30 :

Դ . Մեր արդարութեանն ու մեր փրկութեանը բոլոր փառքը և պատիւը Յիսուս Քրիստոսի տրուելու են յաւիտեան : Ան որ մեզ կը փրկէ , մեր փրկութեան փառքն ու պատիւը անշուշտ պէտք է որ ինք ունենայ : Մենք կ'աղաղակենք՝ "Ոչ՛ թէ մեզի , ո՛վ Տէր՝ չէ՛ թէ մեզի , հապա քու անուանդ փառք տուր" : Սաղմ . ՃԺԵ . 1 : Ա Կորն . Ա . 30 , 31 : Որչափ որ Սուրբ Հոգիին զօրութիւնովը մեր մեղքերը կը զգանք և Տէր Յիսուսը սիրով կ'ընդու-

նինք մեր Փրկչին պէս , այնչափ աւելի կը խոնարհինք ․ ու կը փափաքինք որ բոլոր փառքը Ինքն ունենայ ։ Փիլիպ․ Գ․ 7–9 ։ Գաղ․ Զ․ 14 ։

Ե․ Վտանգաւոր վիճակի մէջ են ու պիտի կորսուին յաւիտեան ամէն անոնք՝ որ Յիսուս Քրիստոսի հաւատքովը եղած արդարութիւնն ու փրկութիւնը կը մերժեն , և արդարութեան ու փրկութեան համար բուն իրենց բարի գործքերուն՝ կամ իրենց արդարութեանը վրայ կը հաստատեն յոյսերնին ։ Անոնք չունեցած բաներնուն կը յուսան ։ Մարդիկ՝ բուն իրենք ըլլալ կ'ուզեն իրենց Փրկիչը , բայց անիկայ անկարելի բան է ( ա ) ։

---

ա․ Ան որ Որդիին կը հաւատայ , յաւիտենական կեանք ունի ․ և ան որ Որդիին չհնազանդիր , անիկայ կեանք պիտի չտեսնէ ․ հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ ։ Յօհ․ Գ․ 36 ։ Ինչու որ ես կը վկայեմ անոնց համար , թէ Աստուծոյ նախանձաւորութիւնը ունին , բայց ոչ թէ գիտութեամբ ։ Վասն զի անոնք Աստուծոյ արդարութիւնը չգիտնալով , ու իրենց արդարութիւնը հաստատել ուզելով , Աստուծոյ արդարութեանը չհնազանդեցան ։ Քանզի օրէնքին վախճանը Քրիստոս է՝ ամէն հաւատացելին արդարութեան համար ։ Ինչու որ Մովսէս օրէնքէն եղած արդարութիւնը կը ստորագրէ , Թէ զանոնք կատարող մարդը անոնցմով պիտի ապրի ։ Բայց հաւատքէն եղած արդարութիւնը սանկ կ'ըսէ ․ Մի՛ ըսեր քու սրտիդ մէջը , Ո՞վ պիտի ելլէ երկինքը , ( այսինքն Քրիստոսը իջեցունելու ․ ) Կամ թէ Ո՞վ պիտի իջնէ անդունդը , ( այսինքն՝ Քրիստոսը մեռելներէն հանելու ։ ) Հապա ի՞նչ կ'ըսէ ․ Խօսքը մօտ է , քու բերնիդ մէջը , և քու սրտիդ մէջն է , այսինքն հաւատքին խօսքը որ մենք կը քարոզենք ։ Ինչու որ՝ եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս , ու քու սրտիդ մէջը հաւատաս թէ Աստուած անիկա մեռելներէն յարուց , պիտի փրկուիս ․ ( Վասն զի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու , ու բերնով կը խոստովանի փրկուելու ։ ) Քանզի գիրքը կ'ըսէ ․ Ամէն ով որ անոր հաւատայ՝ պիտի չամչնայ ։ Հռոմ․ Ժ․ 2–11 ։



## Է․ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՈՒՆ ՈՒ ԵՐԿԻՆՔԻՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԵԼՈՒՆ ՎՐԱՅՈՎ ։

1․ Մենք կամք չունինք Քրիստոսի գալու մեր փրկութեանը համար ․ հապա Աստուած է որ կը փոխէ մեր սիրտերը ու իր Հոգիովը Քրիստոսի կ'առաջնորդէ մեզ ։

Հ․ Աստուած իր Որդին մեզի համար մեռնելու խրկած ըլլալը գիտնալովնիս՝ կամք ունի՞նք զինքը սիրելու ու իբրև մեր Փրկիչ ընդունելու անիկայ ։

Պ․ Ոչ․ քանզի մեր սիրտերը խիստ չար են ։

Սիրտը ամէն բանէն աւելի խաբեբայ ու խիստ չար է ։ Երեմ․ ԺԷ․ 9 ։

Ինչու որ մարմնաւոր եղողները մարմնին բաները կը մտածեն , ու հոգևոր եղողները հոգիին բաները ։ Վասն զի մարմնաւոր խորհուրդը մահ է , և հոգևոր խորհուրդը՝ կեանք ու խաղաղութիւն ։ Քանզի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է ․ ինչու որ Աստուծոյ օրէնքին չհնազանդիր , մանաւանդ չկրնար ալ ։ Վասն զի մարմնով եղողները , չեն կրնար Աստուծոյ հաճոյ ըլլալ ։ Հռոմ․ Ը․ 5–8 ։

Արդ՝ մարմնին գործքերը յայտնի են , որ ասոնք են ․ շնութիւն , պոռնկութիւն , պղծութիւն , գիճութիւն , կռապաշտութիւն , կախարդութիւն , թշնամութիւններ , կռիւներ , նախանձներ , բարկութիւններ , հակառակութիւններ , երկպառակութիւններ , բաժանումներ , չար նայուածքներ , մարդասպանութիւններ , գինովութիւններ , անառակութիւններ , ու ինչ որ ասոնց նման են ․ որ հիմակուց ես ձեզի կը զրուցեմ , ինչպէս առաջուց ալ

կը զրուցէի , որ ասանկ բաներ գործողները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն ։ Գաղ. Ե. 19–21 ։

Հ. Երբոր Յիսուս մեզ իրեն գալու ու փրկուելու կը հրաւիրէ , մենք ան ատենը ի՞նչ ընել կը սկսինք ։

Պ. “Ամէնքս ալ ետ քաշուելու կը սկսինք ։” Ղուկ. ԺԴ. 16–20 ։

Հ. Մենք երբեմն չե՞նք բարկանար անոնց՝ որ մեզ կը յանդիմանեն մեր մեղքերուն համար և կը ստիպեն որ մեր մեղքերը մէկ դի ձգենք ու Աստուծոյ ծառայենք ։

Պ. Հրամերես ։

Աշխարհը ձեզ չկրնար ատել , բայց զիս կ՚ատէ , ինչու որ ես անոր վրայով կը վկայեմ թէ իր գործքերը չար են ։ Յովհ. Է. 7 ։ Բայց հիմա կը փնտռէք սպաննել զիս , անանկ մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւն խօսեցայ , որն որ Աստուծմէ լսեցի . Աբրահամ ատ բանը չըրաւ ։ Յովհ. Ը. 40 ։

Հ. Ուրեմն ի՞նչ տեսակ սիրտերու կը կարօտինք ։

Պ. Նոր սիրտերու ։

Ո՛վ Աստուած , իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ , և իմ ներսիդիս ուղիղ հոգի նորոգէ՛ ։ Սաղմ. ԾԱ. 10 ։

Հ. Մենք ինքնիրեննուս կրնա՞նք մեզի նոր սիրտ նորոգել ։

Պ. Ոչ՛ ամենևին ։

Բայց որոնք որ զինքը ընդունեցին , անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու , որոնք կը հաւատան իր անուանը , որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմնի կամքէ՝ ոչ ալ մարդու կամքէ , հապա Աստուծմէ ծնան ։ Յովհ. Ա. 12 , 13 ։ Իսկ՝ շնչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունիր . ինչու որ անոնք իրեն յիմարութիւն են , ու չկրնար ալ գիտնալ , ինչու որ հոգևոր կերպով կը քննուին ։ Ա Կորնթ. Բ. 14 ։



Հ. Յիսուս ի՞նչ կ՚ըսէ ատոր վրայով ։

Պ. “Դուք չէք ուզեր ինծի գալ , որ կեանք ունենաք” ։ Յովհ. Ե. 40 ։

Հ. Ի՞նչ է կ՚ըսէ մարդոց դատապարտութիւնը ։

Պ. “Ու աս է դատապարտութիւնը՝ որ լոյսը աշխարհ եկաւ , ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին . ինչու որ իրենց գործքերը չար էին ։ Վասն զի ամէն ով որ չար կը գործէ , անիկայ լոյսը կ՚ատէ , և լոյսին քովը չգար՝ որ իր գործքերը չյանդիմանուին ։ Յովհ. Գ. 19 , 20 ։

Հ. Մարդիկ կամ հրեշտակները կրնա՞ն փոխել մեր սիրտերը բուն իրենց զօրութիւնովը ։

Պ. Ոչ՛ ։ Ա Կորնթ. Գ. 5–7 ։

Հ. Ուրեմն որո՞վ կը փոխուին մեր սիրտերը ։

Պ. Միայն Սուրբ Հոգիով ։ Յովհ. Գ. 3–8 ։

Հ. Ի՞նչ կ՚ըսէ մեր Փրկիչն ատոր վրայով ։

Պ. “Մէ՛կը չկրնար ինծի գալ , թէ որ զիս ղրկող Հայրը չքաշէ” ։ Յովհ. Զ. 44 , 45 ։

Հ. Հայրը մեզ ի՞նչպէս դէպ՚ի Քրիստոս կը քաշէ ։

Պ. Սուրբ Հոգիով ։

Հ. Ուրեմն ի՞նչ պիտի ըլլանք՝ թէ որ Աստուած մեր սիրտերը փոխելու ու մեզ դէպ՚ի Քրիստոս քաշելու համար Սուրբ Հոգին չղրկէ ։

Պ. Պիտի կորսուինք յաւիտեան ։

Հ. Երբոր բանտապետին նոր սիրտ տրուեցաւ ու դէպ՚ի Քրիստոս քաշուեցաւ , ի՞նչ ըսաւ իր կորսուած մեղաւոր մը ըլլալը զգալէն ետքը ։

Պ. “Ինծի ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ” ։ Գործ. ԺԶ. 30 ։

Հ. Ո՞վ ազդեց բանտապետին թէ Աստուած բարկացեր էր իրեն , և թէ ինքը կորսուած մեղաւոր մըն էր ։

Պ. Սուրբ Հոգին ։

Եւ ինքը երբ որ գայ՝ աշխարհը պիտի յանդիմանէ մեղքի համար, և արդարութեան համար, ու դատաստանի համար: Մեղքի համար՝ որ ինծի չեն հաւատար. արդարութեան համար՝ որ ես իմ Հօրս քով կ'երթամ, և ալ զիս չէք տեսներ. և դատաստանի համար՝ որ աս աշխարհիս իշխանը դատապարտուած է: Յօհ. ժզ. 8–11:

Հ. Եւ Պօղոս ու Շիղա ի՞նչ ըսին բանտապետին:

Պ. ‘‘Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին, ու պիտի փրկուիս դուն՝ և քու տունդ’’:

Հ. Ո՞վ բանտապետին նոր սիրտ մը տուաւ ու զինքը Տէր Յիսուսի հաւատալու առաջնորդեց:

Պ. Սուրբ Հոգին:

Հ. Աստուած իրմէն խնդրողներուն Սուրբ Հոգին կու տա՞յ:

Պ. Հրամերես:

Ուստի եթէ դուք՝ որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք, որչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որ իրմէ կը խնդրեն: Ղուկ. ժա. 13:

---

Ի՜նչպէս հիանալի է որ Աստուած ‘‘Բուն իր Որդին չխնայեց, հապա մեր ամենուս համար մատնեց’’. բայց տակաւին չենք երթար իրեն որ փրկուինք:

Ա. Ահա յայտնապէս կը տեսնենք մարդկային սրտին կատարեալ՝ խորունկ՝ կամակոր և անփոփոխ վատթարութիւնն ու չարութիւնը: Ասիկայ ամենևին մէկ կերպով մը չփոխուիր, բայց միայն Աստուած կրնայ փոխել. քանզի թէ որ մէկը զգուշացընէ ու խրատէ մեզ, թէ որ վախցունէ մեզ Աստուծոյ սպառնալիքն ու մեզի տալու տանջանքներն իմացունելով, ասոնց բոլորը անօգուտ են ու չեն կրնար փոխել սիրտը. և երբոր Աստուած խանդակաթ սիրով կը հրաւիրէ ու կը համոզէ մեզ, մենք ամէնքս միաբանութեամբ կը սկսինք ետ քաշուիլ: Մէկը կ'ըսէ, ‘‘Ես շատ պզտիկ եմ’’: Մէկալը՝ ‘‘Ես ալ շատ ծեր եմ’’: Երրորդը՝ ‘‘Ես գործ ունենալուս համար՝ ժամանակ չունիմ’’: Չորրորդը՝ ‘‘Ես տակաւին շատ ժամանակ ունիմ, երբոր ուզեմ կրնամ’’: Հինգերորդը՝ ‘‘Ես տակաւին աշխարհը չվայելեցի, ետքը կ'ապաշխարեմ’’: Եւ ասանկ ամէն մէկը հրաժարելու բան մը կը գտնէ մէկ դի ձգելով իր խիստ հարկաւոր գործը՝ այսինքն հոգիին փրկութիւնը: Ճշմարիտն աս է որ մարդիկ բնականաբար սէր չունին առ Աստուած, ու իրենց սրտերնուն մէջը կ'ըսեն Աստուծոյ, Քրիստոսի, Սուրբ Հոգիին, ու Աստուածաշունչին, ‘‘Մէկ դի՛ գացէք մեզմէ’’: Անոնք թշնամի են Աստուծոյ, լոյսը կ'ատեն ու չեն ուզեր անոր գալ:



Բ. Թէ որ իրենց մնայ, մարդիկ բոլորովին պիտի կորսուին իրենց ապականութեան մէջը:

Գ. Անոնց սրտին փոփոխութիւնը Հոգին Սուրբ Աստուծոյ գործն է միայն. միայն ինքը՝ որ երկինքն ու երկիրը ստեղծեց, կրնայ մաքուր սիրտ մը ստեղծել մարդուս սրտին մէջ (ա):

Դ. Փրկութիւնը բոլորովին ձրի շնորհքէ է. Աստուծոյ շնորհքն է որ իր Որդին մեզի համար մեռնելու կու տայ. Աստուծոյ շնորհքն է որ իր Սուրբ Հոգին մեր սրտերը փոխելու համար կու տայ. և Աստուծոյ շնորհքն է որ իր Սուրբ Հոգին որու որ ինք ուզէ կու տայ: ‘‘Մէկը Քրիստոսի չկրնար գալ, թէ որ Հայրը անիկայ չքաշէ’’. ու որուն որ Հայրը հաճի, անիկայ կը քաշէ. այնչափ՝ որչափ որ ինք ընտրեց (բ):

---

ա. Վասն զի Աստուած՝ որ հրաման ըրաւ խաւարէն լոյս ծագել, ինքը մեր սրտերուն մէջ ծագեց՝ Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիստոսի անձովը: բ Կորնթ. դ. 6:

բ. Իր ուզելովը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքովը՝ որ մենք իր ստեղծածներուն երախայրի մը ըլլանք: Յակ. ա. 18:

Ն. Թո՛ղ մեղաւորները ծեր ու պատանի սորվին իրենց սիրտերուն չբժշկուելու դժուարութիւնը: Անոնք չեն կրնար ինքզինքնին աւելի աղէկ ընել, ոչ ալ ինքնիրեննուն կրնան փոխել ինքզինքնին. անոնք ասանկ բան մը ընելու յոյս թող չունենան. և թո՛ղ ինքզինքնին Յիսուս Քրիստոսով Աստուծոյ ողորմութեանը յանձնեն, ու աղօթեն Սուրբ Հոգւին ընդունելու համար՝ որով կարենան նորոգուիլ ու փրկուիլ:

---

2. Մենք պարտինք սրտի փոփոխութիւն ունենալ. աս սրտի փոփոխութիւնն ի՞նչ է, և ի՞նչպէս Սուրբ Հոգին իր գործը կը կատարէ ու Երկինքին համար կը պատրաստէ մեզ:

Յոհ. Գ. 1–21:

Հ. Փարիսեցիներէն, ու Հրէից իշխաններէն ո՞վ եկաւ Յիսուսին գիշերով:

Պ. Նիկոդեմոս: Յոհ. Գ. 1–9:

Հ. Յիսուս ի՞նչ ըսաւ անոր:

Պ. "Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ քեզի. թէ որ մէկ մարդ մը նորէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել": Յոհ. Գ. 3:

Հ. Ի՞նչ է ան բանը, որ առանց անոր մէկը Տէրը չպիտի տեսնէ:

Պ. Սրբութիւն: Եբր. ԺԲ. 14:

Հ. Ուրեմն անկարելի՞ է մեզի Երկինք երթալ առանց սրտի փոփոխութեան:

Պ. Այո՛, անկարելի է:

Հ. Երբոր մարդ մը Սուրբ Հոգիով նորոգուի, մեծ փոփոխութի՜ւն է:



Պ. Հրամերես. քանզի անով կը դառնայ ապաշխարելու, Յիսուսի հաւատալու, Աստուած սիրելու, և բարի կեանք մը վարելու:

Անոնց աչքերը բանալու, փաւարէն՝ լոյսի, ու Սատանայի իշխանութենէն՝ Աստուծոյ դարձընելու, որ անոնք մեղաց թողութիւն առնեն, և սուրբերուն հետ մասնակից ըլլան՝ ինծի հաւատալով: Գործ. ԻԶ. 18: Վասն զի Աստուած՝ որ հրաման ըրաւ խաւարէն լոյս ծագել, ինքը մեր սրտերուն մէջ ծագեց՝ Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիստոսի անձովը: Բ Կորնթ. Դ. 6:

Հ. Նորոգուած մարդը ի՞նչ տեսակ սիրտ ունի:

Պ. Նոր սիրտ:

Եւ ձեզի նոր սիրտ պիտի տամ, ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ, և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ, ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ: Եզեկ. ԼԶ. 26: ԺԱ. 19:

Հ. Անիկայ ի՞նչ տեսակ արարած մըն է:

Պ. Նոր արարած:

Ուրեմն թէ որ մէկը Քրիստոսի մէջ է, անիկայ նոր ստեղծուած մըն է. հիները անցան, և ահա ամէն բան նոր եղաւ: Բ Կորնթ. Ե. 17: Ինչու որ Քրիստոս Յիսուսով ոչ թլփատութիւնը բան մըն է, ոչ ալ անթլփատութիւնը, հապա նոր ստեղծուած ըլլալն է բանը: Գաղ. Զ. 15: Եփես. Դ. 23, 24: Կող. Գ. 10:

Հ. Անանկ մէկը ի՞նչպէս ծնած կ՚ըսուի Սուրբ Գրքին մէջը:

Պ. "Նորէն ծնած". "Հոգիէն ծնած". "Աստուծմէ ծնած": Յոհ. Ա. 13: Գ. 1–9: Ա Պետ. Ա. 23: Ա Յոհ. Գ. 9:

Հ. Հիմա անիկայ որո՞ն որդին է:

Պ. Աստուծոյ որդին։ Հռովմ. Ը. 14–17։

Հ. Ու ո՞ւր պիտի երթայ։

Պ. Երկինք։ Հռովմ. Ե. 1, 2։

Հ. Ի՞նչպէս կրնաս հասկընալ թէ մէկը Սուրբ Հոգիով իսկապէս նորոգուած է, թէ չէ։

Պ. Իր բռնած ճամբայէն, ու ամէն օրուան վարքէն։

Ամէն ով որ Աստուծմէ ծնած է, մեղք չգործեր, ինչու որ անոր սերմը իր մէջը կը մնայ, ու չկրնար մեղք գործել, քանզի Աստուծմէ ծնած է։ Ասով յայտնի են Աստուծոյ որդիքը ու սատանայի որդիքը։ Ա Յովհ. Գ. 9, 10։ Մատթ. Է. 16–27։

Հ. Նոր սիրտ ունենալէն առաջ ի՞նչպէս կեանք մը կը վարէր։

Պ. Չար կեանք։

Արդ՝ մարմնին գործքերը յայտնի են, որ ասոնք են՝ շնութիւն, պոռնկութիւն . . . . բարկութիւններ, հակառակութիւններ, երկպառակութիւններ, բաժանումներ, չար նայուածքներ, մարդասպանութիւններ, գինովութիւններ, անառակութիւններ, ու ինչ որ ասոնց նման են։ Գաղ. Ե. 19–21։

Հ. Նոր սիրտ մը ունենալէն ետքը ի՞նչպէս կեանք մը պիտի վարէ։

Պ. Բարի կեանք մը։

Դուք էք աշխարհի լոյսը. քաղաք մը՝ որ լեռան վրայ կեցած է, չկրնար պահուիլ։ Ու ճրագը չեն վառեր և դներ գրուանի տակ, հապա աշտանակի վրայ, և լոյս կուտայ բոլոր տանը մէջ եղողներուն։ Անանկ թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջին, որ տեսնեն ձեր բարի գործքերը ու փառաւորեն ձեր Հայրը՝ որ երկինքն է։ Մատթ. Ե. 14–16։ ԺԳ. 23։

Հ. Երբոր Հոգին փոխէ մեր սիրտերը, ան ատենը



մեզ կատարելապէս սուրբ կ՚ընէ՞, անանկ որ մենք բնաւ մէյմըն ալ չմեղանչենք որչափ որ ապրելու ըլլանք։

Պ. Չէ՛. հապա միայն կը սկսի ան ատենը մեզ սուրբ ընելու։

Ինչու որ ամէնքս ալ շատ յանցանքներ կ՚ընենք. թէ որ մէկը խօսքով յանցանք չընէ, անիկայ կատարեալ մարդ է, որ կարող է բոլոր մարմինն ալ սանձելու։ Յակ. Գ. 2։ Թէ որ ըսենք՝ թէ մենք մեղք մը չունինք, ինքզինքնիս կը խաբենք, ու մեր մէջը ճշմարտութիւն չկայ։ Ա Յովհ. Ա. 8։ Ա Կորնթ. Թ. 24–27։ Աս մասին վստահ ըլլալով՝ թէ ան որ ձեր մէջը բարի գործ մը սկսեց, մինչև Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ։ Փիլիպ. Ա. 6։

Հ. Ուրեմն Հոգին ի՞նչ պէտք է որ մեզի ընէ։

Պ. Պէտք է որ մեզի հետ մնայ ու մեր մէջը իր սկսած բարի գործը լմնցունէ, մեզ բարեպաշտութեան մէջ յառաջացունէ քանի որ կ՚ապրինք, և այնպէս մեզ Երկինքին համար պատրաստէ։

Բայց արդարներուն ճամբան՝ ծագող լոյսին պէս է, որ երթալով կը լուսաւորուի, մինչև որ կատարեալ օր ըլլայ։ Առակ. Դ. 18։ Մատթ. ԺԳ. 31–33։ Հռովմ. Ը. 11։ Ա Կորնթ. Գ. 16։

Հ. Անանկ է նէ որի՞ն փառք տալու ենք Երկինքին համար մեր պատրաստութեանը վրայով։

Պ. Սուրբ Հոգիին։

---

Մեր Փրկիչը կ՚ըսէ. “Թէ որ մէկ մարդ մը նորէն չծնանի՝ չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել”. “Պէտք է ձեզի նորէն ծնանիլ”։

Ա. Առանց սրտի փոփոխութեան մենք բնաւ Երկինք չենք կրնար մտնել։ Աստուած՝ սրբութեան Աստուած է.

ուրեմն չարերը պիտի վռնտէ իր ներկայութենէն . ինքը ճշմարտութեան ու արդարութեան Աստուած է . ուրեմն պիտի պատժէ չարերը յաւիտեան Դժոխքին մէջ : Երկինքը սրբութեան՝ ու Աստուծոյ հետ հաղորդութեան տեղ է . ուրեմն հարկաւոր է սրբութիւնը ան ամենուն՝ որոնք որ հոն պիտի երթան : Մեղաւորը չկրնար Աստուծոյ հետ հաղորդութիւն ունենալ , ոչ ալ սուրբերուն ու հրեշտակներուն հետ . ու թէ որ Երկինքը գտնուելու ըլլայ , հոն ուրախ և հանգիստ պիտի չըլլայ , ինչու որ ան սուրբ տեղին համար սրտի պատրաստութիւն պիտի չունենայ . պիտի զգայ թէ Երկինքը բուն իր տեղը չէ : Շատերը առանց սրտի փոփոխութեան՝ կ'ուզեն որ մեռնելնէն ետքը Երկինք երթան , չէ թէ Երկինքը կը սիրեն ու անիկայ վայելելու յարմարութիւն ունին , հապա Դժոխքէն ազատելու կը փափաքին : Բայց թէ որ Երկինքը մտնելու վճռուած ըլլային ալ , թշուառական պիտի ըլլային հոն՝ իրենց մեղքով ու անհաւատութիւնով լեցուն հին սրտերուն պատճառաւը :

Բ . Թող աս աղէկ մտմտան անոնք որ տակաւին նորոգուած չեն . թէ որ ասանկ վիճակի մը մէջ մնալով մեռնին , պիտի իջնեն անոնք բուն իրենց տեղը , այսինքն Դժոխքը :

Յիշեցէք որ եթէ աս աշխարհիս մէջ չնորոգուիք , բնաւ ամենեւին ալ նորոգուելու չէք : Յայտ . իբ . 11 : Դուք չէք գիտեր թէ երկա՞ր ատեն ապրելու էք՝ թէ կարճ . ուրեմն իմաստուն եղէք ու շուտով սկսեցէք և ինքզինքնիդ անհոգ մի՛ թողուք , մինչև որ ան մեծ ու երջանիկ փոփոխութիւնը առնաք :

Գ . Աս փոփոխութիւնը ճշմարտապէս մեծ ու երջանիկ է : Քանզի մեղաւորին ունեցած խաւարը լոյսի կը փոխուի , անոր ատելութիւնը՝ սիրոյ , անոր մեղքը՝ սրբութեան : Եւ ինքը սատանայէն հեռանալով՝ կը մօտենայ Աստուծոյ , Դժոխքէն կը փրկուի՝ դէպ'ի Երկինքը կ'առաջնորդուի : Եւ արդարև շատ երանելի է ան մեղաւորը , ինչու որ Աստուծոյ որդին կ'ըլլայ անիկայ՝ Յիսուս Քրիստոսի հաւատքովը :

Դ . Աս սրտի ճշմարիտ նորոգութեան նշանը՝ վարքի



փոփոխութիւն մըն է : Նոր սիրտը նոր վարքի մը կ'առաջնորդէ . մեղաւորը՝ չէ՛ թէ ինչ որ առաջ էր , անանկ կը մնայ , հապա նոր արարած մը կ'ըլլայ . մեղքին ու յիմարութեան բոլոր հին ճամբաները մէկ դի կը ձգէ , և անոնց տեղը կը ստանայ աղօթքը՝ օրհնութիւնը՝ հաւատքը՝ և սէրը՝ ու սուրբ հնազանդութիւնը՝ որ նոր բաներ են : Եւ անիկայ որչափ որ փորձութիւններ քաշելու ըլլայ , Աստուծոյ Հոգիին օգնութիւնովը այնչափ աւելի աղէկ կերպով կը յառաջանայ . իր շաւիղին լոյսը քիչ քիչ աւելնալով պայծառ կը լուսափայլէ մինչև որ կատարեալ կ'ըլլայ կէս օրուան լոյսին պէս , երբոր պիտի տեսնէ Աստուած փառքով : Եւ ով որ աս կերպով չյառաջանար առաքինութեան ճամբուն մէջ՝ անոր նորոգութիւնը ճշմարիտ չէ :

Ե . Քրիստոնեաները բնաւ մոռնալու չեն որ միայն Սուրբ Հոգիին շնորհքովը և օգնութեամբը կրնան յառաջանալ դէպ'ի երկինք երթալու ճամբուն մէջ . նոյն շնորհքը տուող ու կարող Հոգին՝ որ բարի գործը կը սկսի յառաջ տանիլ մեր մէջը , պէտք է որ ինք յառաջ տանի ու կատարէ ան : Զգուշանանք ուրեմն Սուրբ Հոգիին դէմ հակառակելէն ու զինքը վշտացունելէն . քանզի թէ որ ինքը հեռանայ մեզմէ , ամէն բան կ'ըլլայ մեզի խաւար ու մեղք , թշուառութիւն ու մահ :

---

### 3 . Սուրբ Հոգին կը խօսի մեզի Աստուածաշունչով :

Սաղ . ժթ . 1–14 :

Հ . Ո՞ր գիրքին մէջ Սուրբ Հոգին կը խօսի մեզի :

Պ . Սուրբ Աստուածաշունչին մէջ :

Հ . Գլխաւորապէս Սուրբ Հոգին ի՞նչ կ'ըսէ մեզի աս Գրքին մէջ :

Պ . Գլխաւորապէս մեզի կը ծանուցանէ թէ մենք մեղաւոր ենք , և թէ Երկինք ու դժոխք կայ , և թէ Քրիս-

տոս մեռաւ մեզ փրկելու համար , և թէ մենք պարտինք նոր սիրտ ունենալ , թէ չէ՝ Երկինքը չենք կրնար մտնել :

Հ . Ինչու կրնայի՞նք գիտնալ աս մեծ ճշմարտութիւններուն մէկը , թէ որ Աստուածաշունչը չունենայինք :

Պ . Չէ՛ :

Են նոյն ժամուն Յիսուս հոգւով ուրախացաւ ու ըսաւ . Շնորհակալ եմ քեզմէ , ով Հայր , Տէր երկնի և երկրի , որ աս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն և գիտուններէն , ու տղոց յայտնեցիր . այո , ով Հայր , ինչու որ քու առջիդ ասանկ հաճելի եղաւ : Ղուկ . Ժ . 21 : Քանզի որովհետև Աստուծոյ իմաստութեամբը աշխարհ չճանչցաւ զԱստուած իր իմաստութիւնովը , Աստուած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը հաւատացեալները ապրեցունելու : Ա Կորն . Ա . 21 :

Հ . Որի՞ն խօսքն է Սուրբ Գիրքը . մարդո՞յ թէ Աստուծոյ :

Պ . Աստուծոյ . "Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է , և օգտակար է սորվեցունելու , յանդիմանելու , և շտկելու , ու արդարութեան խրատելու համար" : Բ Տիմ . Գ . 16 :

Հ . Պօղոս ի՞նչ կ՚ըսէ Տիմոթէոսին՝ Սուրբ Գիրքին վրայով :

Պ . "Եւ ժու— մանկութենէդ 'ի վեր Սուրբ Գիրքերը գիտես , որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը" : Բ Տիմ . Գ . 15 :

Հ . Պետրոս ի՞նչ կ՚ըսէ Աստուածաշունչը գրողներուն վրայով :

Պ . "Ինչու որ մարգարէութիւն մը երբէք մարդոց կամքին պէս չտրուեցաւ . հապա Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան" : Բ Պետ . Ա . 21 :



Հ . Ի՞նչ կերպով խօսեցան :

Պ . Սուրբ Հոգին ըսաւ անոնց ինչ գրելնին ու ինչ խօսելնին , և միշտ անոնց հետ էր՝ անոնք սխալ ընելէն պահելու համար :

Ես ալ Հօրը պիտի աղաչեմ , և ուրիշ Մխիթարիչ մը պիտի տայ ձեզի , որ յաւիտեան ձեզի հետ բնակի . Ճշմարտութեան Հոգին , որ աս աշխարհս անիկայ չկրնար ընդունիլ . ինչու որ չտեսներ անիկայ , ու չճանչնար անիկայ . բայց դուք կը ճանչնաք անիկայ , ինչու որ ձեր քովը կը բնակի , և ձեր հետը պիտի ըլլայ : Յովհ . ԺԴ . 16 , 17 : Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին՝ որ Հայրը իմ անունովս պիտի խրկէ , անիկայ ձեզի բոլորը պիտի սորվեցունէ , և ինչ որ ձեզի ըսի՝ միտքերնիդ պիտի բերէ : Յովհ . ԺԴ . 26 :

Հ . Փրկուելու ուրիշ ճամբայ մը կա՞յ ան ճամբայէն զատ , որն որ Սուրբ Հոգին կ՚իմացունէ մեզի Աստուածաշունչին մէջը :

Պ . Չէ՛ :

Գիրքերը քննեցէ՛ք . ինչու որ դուք անոնցմով կը սեպէք յաւիտենական կեանքը ունենալ . և բուն անոնք են որ ինծի համար կը վկայեն : Յովհ . Ե . 39 : Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ . ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց մէջ տրուած , որ անով կարող ըլլանք փրկուելու : Գործ . Դ . 12 :

Հ . Աստուածաշունչը կարդալէն զատ ի՞նչ ուրիշ միջոց սահմանած է Աստուած , որ մարդիկ սորվին Սուրբ Գիրքին վարդապետութիւնները և փրկութեան ճամբան :

Պ . Աւետարանին քարոզութիւնը՝ որ յատուկ պաշտօն մըն է և Սուրբ Հոգիէն կանչուած մասնաւոր մարդոց կը յանձնուի

«Զգուշացէ՛ք ձեր անձերուն և բոլոր հօտին, որուն վրայ Հոգին Սուրբ ձեզ տեսուչ դրաւ՝ Աստուծոյ եկեղեցին հովուելու, որն որ իր արիւնովը ստացաւ։ Գործ. Ի. 28։ Աստուծոյ հօտը որ ձեր մէջն է՝ արածեցէ՛ք, վերակացու ըլլալով ոչ՛ թէ ակամայ՝ հապա կամաւ. ոչ՛ թէ անարգ շահախնդրութեամբ, հապա յօժարութեամբ. ոչ՛ թէ վիճակներուն վրայ տիրելով, հապա հօտին օրինակ ըլլալով. և Հովուապետին երեւցած ատենը փառաց անթառամ պսակը պիտի ընդունիք։ Ա Պետ. Ե. 2-4։ Խօսքը քարոզէ՛. մտադրութեամբ գործէ՛ պարապէ՛ ատենին ու ատենէ դուրս, յանդիմանէ՛, սաստէ՛, յորդորէ՛ ամէն երկայնմտութիւնով ու վարդապետութիւնով։ Բայց դուն ամէն բանի մէջ արթուն կեցիր, նեղութիւններու համբերէ՛, աւետարանիչի գործ գործէ՛, քու պաշտօնդ կատարէ՛։ Բ Տիմ. Դ. 2, 5։ Եւ ինքը պատուիրեց մեզի՝ որ ժողովուրդին քարոզենք ու վկայութիւն տանք, թէ՝ անիկա՛ է Աստուծմէ սահմանուած՝ կենդանիներուն ու մեռելներուն դատաւորը։ Գործ. Ժ. 42։ Մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը՝ Հրեաներուն գայթակղութիւն ու Յոյներուն յիմարութիւն. բայց անոնց՝ որ կանչուած են, թէ՛ Հրեաներուն ու թէ Յոյներուն, Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը, և Աստուծոյ իմաստութիւնը։ Ա Կորն. Ա. 23, 24։

Հ. Ուստի յատուկ քարոզիչներէն զատ՝ հասարակ մարդիկ չե՞ն կրնար աւետարանը քարոզել իրենց խօսակցութեանը մէջ։

Պ. Կրնան քարոզել. քանզի հիմա պէտք է որ ամէն մարդ սորվեցունէ իր քաղաքացիին ու իր եղբօրը՝ Տէրը ճանչնալու ճամբան։ Եբր. Ը. 11։

Եւ ան օրը մեծ հալածում եղաւ Երուսաղէմի մէջ եղող եկեղեցիին վրայ, և առաքեալներէն 'ի զատ՝ ամէնն ալ



ցիրուցան եղան Հրէաստանի ու Սամարիայի երկիրներուն մէջ։ Եւ ան ցիրուցան եղածները կը պտըտէին՝ ու խօսքը կը քարոզէին։ Գործ. Ը. 1, 4։ Եւ ան որ կը լսէ՝ թող ըսէ, Եկո՛ւր։ Յայտ. ԻԲ. 17։ Տես նաև Գործ. ԺԱ. 19-21։ Մատթ. Ե. 19։ Գործ. ԺԸ. 2, 3, 24-26։ Հռովմ. ԺԶ. 3, 12։

Հ. Մեր փրկուելուն համար յոյս մը կա՞յ թէ որ անարգենք Աստուածաշունչ կարդալն ու քարոզ լսելը։

Պ. Ոչ։

Եւ Աբրահամ ըսաւ անոր. Անոնք Մովսէսը ու Մարգարէները ունին, թող անոնց մտիկ ընեն։ Ան ալ ըսաւ. Ոչ՝ հա՛յր Աբրահամ, հապա թէ որ մեռելներէն մէկը անոնց երթայ, պիտի ապաշխարեն։ Եւ անիկայ ըսաւ անոր. Թէ որ Մովսէսին ու Մարգարէներուն մտիկ չեն ըներ, ո՛չ ալ թէ որ մեռելներէն մէկը յարութիւն առնելու ըլլայ, պիտի համոզուին։ Ղուկ. ԺԶ. 29-31։ Մէկը թէ որ Մովսէսին օրէնքը անարգէր, առանց ողորմութեան երկու կամ երեք վկաներով կը մեռնէր. ալ ո՞րչափ սաստիկ պատժոյ արժանի պիտի սեպուի անիկա՛; որ Աստուծոյ Որդին ոտքի տակ առաւ, և ուխտին արիւնը անմաքուր սեպեց, որ անով ինքը սրբուեցաւ, և շնորհաց Հոգին նախատեց։ Եբր. Ժ. 28, 29։

Հ. Երբոր մեր հոգիին փրկուելու ճամբան գիտենք, ի՞նչ պարտինք ընել։

Պ. Պէտք է որ ուրախութեամբ և մեր բոլոր ջանքովը անոր փրկութեանը ջանանք։

Հ. Երբոր գիտենք թէ Սուրբ Հոգի մը կայ՝ որ կրնայ առաջ տանիլ մեզ փրկութեան մեծ ու երևելի գործին մէջը, ի՞նչ պէտք է որ ընենք։

Պ. Պէտք է որ շնորհակալութեամբ ջանանք և աղաչենք Աստուած Սուրբ Հոգիին համար՝ որ մեր սիրտերը

փոխէ ու մեզ Քրիստոսի տանի, թէ չէ պիտի կորսունինք յաւիտեան: Եբր. ա. 24–27:

Հ. Երբոր մէկը քրիստոնեայ կ'ըլլայ Սուրբ Հոգիին նորոգելովը, անատենն ալ օգուտ ունի՞ իրեն Աստուածաշունչը:

Պ. Հրամմերես. քանզի Աստուածաշունչին միջոցովը Սուրբ Հոգին կը քաջալերէ անիկայ ու կը սորվեցունէ անոր բոլոր իր պարտաւորութիւնները:

Տէրոջը օրէնքը կատարեալ է. հոգին կը նորոգէ. Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է. տգէտը իմաստուն կ'ընէ: Տէրոջը կանոնները շիտակ են. սիրտը կ'ուրախացունեն. Տէրոջը պատուիրանքները պայծառ են, աչքերուն լոյս կու տան: Տէրոջը վախը սուրբ է, յաւիտեան կը մնայ. Տէրոջը դատաստանները ճշմարիտ ու բոլորովին արդար են: Ցանկալի են անոնք ոսկիէն, ու շատ փորձուած ոսկիէն. ու խորիսխէ կաթած մեղրէն անուշ են: Նաև քու ծառադ անոնցմով կը խրատուի, ու զանոնք պահելուն վարձքը շատ է: Սաղ. ժթ. 7–11:

Հ. Ուրեմն ի՞նչպէս պարտինք գործածել Աստուածաշունչը:

Պ. Մենք պարտինք սիրել անիկայ և սորվիլ, ու հընազանդիլ անոր՝ բոլոր մեր կենացը մէջ:

Աս օրինաց գիրքը քու բերնէդ չզատուի, հապա գիշեր ցորեկ անոր վրայ մտածես, որ բոլոր անոր մէջի գրուածները պահես ու կատարես. քանզի ան ատենը քու գործքերդ առաջ կը տանիս, և ան ատենը յաջողութիւն կը գտնես: Յես. ա. 8: Երանելի է ան մարդը՝ որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չքալեր, ու մեղաւորներուն ճամբուն մէջ չկենար, և ծաղր ընողներուն նստած տեղը չնստիր: Հապա անոր կամքը Աստուծոյ օրէնքին մէջն է, և ցորեկ ու գիշեր անոր օրէնքին վրայ կը մտածէ:



Ու անիկայ ջուրի ճամբաները տնկուած ծառի մը պէս պիտի ըլլայ, որ իր ժամանակին իր պտուղը կու տայ. ու անոր տերևը պիտի չթափի, և ինչ բան որ ընէ՝ պիտի յաջողի: Սաղ. ա. 1–3:

Հ. Ու մեր բոլոր կենացը մէջ ո՞ր Հոգիին կը կարօտինք՝ որ մեզի սիրել տայ Աստուածաշունչն ու սորվեցունէ, և հնազանդեցունէ անոր:

Պ. Սուրբ Հոգիին:

Իսկ մենք չէ թէ աս աշխարհիս հոգին առինք, հապա ան Հոգին՝ որ Աստուածմէ է. որ մենք ճանչնանք ան բաները որ Աստուծմէ տրուեցան մեզի. որոնք նաև կը խօսինք, չէ թէ մարդկային իմաստութեան սորվեցուցած խօսքերովը, հապա Հոգիին սորվեցուցածներովը. և հոգևոր բաները հոգևորի հետ կը յարմարցունենք: Իսկ շնչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունիր. ինչու որ անոնք իրեն յիմարութիւն են, ու չկրնար ալ գիտնալ, ինչու որ հոգևոր կերպով կը քննուին: Բայց ան որ հոգևոր է՝ ամէն բան կը քննէ, ու ինքը մէկէ մը չքննուիր: Քանզի ո՞վ գիտցաւ Տէրոջը միտքը, որ անոր խրատ տուող ալ ըլլայ. բայց մենք Քրիստոսի միտքը ունինք: ա Կորն. բ. 12–16:

---

Սուրբ Հոգին մեզի հետ կը խօսի Աստուածաշունչով, որն որ Իրմէն ընտրուած սուրբ մարդիկներէն գրուեցաւ. ու անոնք իրմէն այնչափ սորված և օգնութիւն ընդունած էին ան գրելու համար՝ որ Աստուածաշունչը Սուրբ Հոգիին ճիշտ ուզածին պէս եղաւ: Ան կատարեալ է. ան է միայն ու ամենաբաւական կանոնը հաւատքին. ան՝ հաւատալու և ընելու բաները մեզի կը սորվեցունէ. ան Աստուծոյ խօսքն է:

Ա. Մենք ամենէն աւելի պատուելու ենք Աստուածաշունչը. որ ամենագերազանց գիրք մըն է. ամէն ուրիշ

գիրքերը՝ մարդոցմէ եղած գիրքեր են, բայց աս գիրքը Աստուծմէ եղած է. որն որ Աստուած ու Յաւիտենականութիւնը աչքի առջև կը բերէ: Ան կը սորվեցունէ մեզի բուն մեր անմահութիւնը և մեր փրկուելու ճամբան. ան է կենաց գիրքը: Ուր որ Աստուածաշունչը ճանչցուած է և կը կարդացուի ու կը քարոզուի, և կը հաւատան ու կը հնազանդին անոր, հոն կայ գիտութիւն ու սրբութիւն, խաղաղութիւն ու յաջողութիւն: Իսկ ուր որ չկայ, հոն կայ տգիտութիւն ու մոլութիւն, խռովութիւն ու կործանումն: Ուստի Աստուածաշունչը շատ հարկաւոր է մեզի:

Բ. Մենք պարտինք ընդունել Աստուածաշունչը մեր մի միայն ու ամենաբաւական հաւատոյ ու վարքի կանոնին պէս. ամէն ինչ որ Սուրբ Հոգին աս գիրքին մէջը մեզի կը հրամայէ հաւատալ՝ մենք պարտինք հաւատալ. ամէն ինչ որ աս գիրքին մէջը մեզի կը պատուիրէ ընել՝ մենք պարտինք ընել անիկայ: Թէ որ մէկը Աստուածաշունչին հակառակ հաւատք ունենայ կամ սորվեցունէ կամ քարոզէ կամ գործէ, անիկայ սխալ կը հաւատայ և կը սորվեցունէ ու կը քարոզէ և կը գործէ: Իսկ ամէն մէկ զգացումներուն և գործքերուն ուղիղ կամ սխալ ըլլալը Աստուածաշունչով պիտի քննուի:

Գ. Բայց ի՞նչ օգուտ պիտի ընէ մեզի աս Գիրքը, թէ որ մենք զգուշութեամբ անոր չհետեւինք ու անկից ընդունելու խրատներուն պատեհութիւնները անհոգութեամբ կորսնցունենք: "Գիրքերը քննեցէք" կը պատուիրէ մեզի Փրկիչը: Փրկութեան ճամբան թէպէտև այնչափ դիւրին ու պայծառ է Աստուածաշունչին մէջը՝ ու պզտիկ տղաքներն ալ կրնան սորվիլ, բայց Աստուածաշունչը իր բարձրութիւնովն ու խորունկութիւնովը բոլոր գիտութիւններէն գերազանց է: Թէ որ մարդիկ բոլոր իրենց կեանքերնուն մէջ անոր հետեւին, թէ որ մինչև վերջին կէտը անոր պարապին, տակաւին անոր մէջը սորվելու բաներ կը մնան: Ան գիրքը Աստուծոյ Գիրքն է:

Բայց աս Սուրբ Գիրքը կարդալու ժամանակնիս՝ պէտք է որ խոնարհութեամբ և հեզութեամբ ընդունինք ինչ որ մեզի կը սորվեցունէ, թէ չէ՝ անօգուտ կ՚ըլլայ մեր կարդալը:



Դ. Ճշմարիտ քրիստոնեաները որչափ որ կ՚ապրին՝ այնչափ ալ իրենց սէրը կ՚աւելնայ Աստուածաշունչին վրայ: Սաղմ. ճժթ. 97–104 եայլն: Իսկ որչափ երկար որ ապրին, այնչափ աւելի կը զգան իրենց ունեցած Սուրբ Հոգիին կարօտութիւնը որ կարող ըլլան Սուրբ Գիրքը իմանալու ու անոր հնազանդելու:

Ե. Իսկ գիտնալով հիմա՝ որ կորսուած մարդիկը միայն Աստուածաշունչով փրկութիւն կը գտնեն, կը փափաքին որ ամէն մարդիկ ան Կենաց Գիրքը ունենան, ու կը ջանան որ անիկայ ամէն ազգաց մէջ տարածեն:

Անոնք՝ որ իրենց պէս եղբայրները Աստուածաշունչ կարդալէն կը զրկեն; Աստուծոյ ու մարդոց թշնամիներն են. քանզի Աստուածաշունչը իրաւունքով ամէն մարդու կը վերաբերի. ու բոլոր աշխարհի համար գրուեցաւ:

Զ. Անոնք որ Աստուածաշունչը Աստուծոյ խօսքը ըլլալ չեն ընդունիր, հապա ծաղր կ՚ընեն անիկայ, և չեն պաշտպանիր անոր ընթերցմանը, չեն հաւատար, չեն հնազանդիր անոր, ամէն ասոնք՝ թէ որ աս ըրածներնուն վրայ չապաշխարեն՝ պիտի կորսուին յաւիտեան:

---

### 4. Սուրբ Հոգիին ով ըլլալը:

Յօհ. ժզ. 15–31:

Հ. Ո՞վ է Սուրբ Հոգին:

Պ. Անիկայ Աստուած է. ինչպէս որ կը խոստովանինք Ամենասուրբ Երրորդութիւնը, Հայր՝ Որդի՝ և Սուրբ Հոգի, երեք անձն ու մէկ Աստուած:

Հ. Ի՞նչպէս գիտէք թէ ինք Աստուած է

Պ. Աստուածաշունչին մէջ անիկայ Աստուած կը կոչուի: Գործ. Ե. 3, 4: Ա Կոր. Գ. 16:

Հ. Քրիստոնէական մկրտութիւնը որո՞ւ անունով կը կատարուի:

գիրքերը՝ մարդոցմէ եղած գիրքեր են, բայց աս գիրքը Աստուծմէ եղած է. որն որ Աստուած ու Յաւիտենականութիւնը աչքի առջև կը բերէ: Ան կը սորվեցունէ մեզի բուն մեր անմահութիւնը և մեր փրկուելու ճամբան. ան է կենաց գիրքը: Ուր որ Աստուածաշունչը ճանչցուած է և կը կարդացուի ու կը քարոզուի, և կը հաւատան ու կը հնազանդին անոր, հոն կայ գիտութիւն ու սրբութիւն, խաղաղութիւն ու յաջողութիւն: Իսկ ուր որ չկայ, հոն կայ տգիտութիւն ու մոլութիւն, խռովութիւն ու կործանումն: Ուստի Աստուածաշունչը շատ հարկաւոր է մեզի:

Բ. Մենք պարտինք ընդունել Աստուածաշունչը մեր մի միայն ու ամենաբաւական հաւատոյ ու վարքի կանոնին պէս. ամէն ինչ որ Սուրբ Հոգին աս գիրքին մէջը մեզի կը հրամայէ հաւատալ՝ մենք պարտինք հաւատալ. ամէն ինչ որ աս գիրքին մէջը մեզի կը պատուիրէ ընել՝ մենք պարտինք ընել անիկայ: Թէ որ մէկը Աստուածաշունչին հակառակ հաւատք ունենայ կամ սորվեցունէ կամ քարոզէ կամ գործէ, անիկայ սխալ կը հաւատայ և կը սորվեցունէ ու կը քարոզէ և կը գործէ: Իսկ ամէն մէկ զգացումներուն և գործքերուն ուղիղ կամ սխալ ըլլալը Աստուածաշունչով պիտի քննուի:

Գ. Բայց ի՞նչ օգուտ պիտի ընէ մեզի աս Գիրքը, թէ որ մենք զգուշութեամբ անոր չհետեւինք ու անկից ընդունելու խրատներուն պատեհութիւնները անհոգութեամբ կորսնցունենք: “Գիրքերը քննեցէք” կը պատուիրէ մեզի Փրկիչը: Փրկութեան ճամբան թէպէտև այնչափ դիւրին ու պայծառ է Աստուածաշունչին մէջը՝ ու պզտիկ տղաքներն ալ կրնան սորվիլ, բայց Աստուածաշունչը իր բարձրութիւնովն ու խորունկութիւնովը բոլոր գիտութիւններէն գերազանց է: Թէ որ մարդիկ բոլոր իրենց կեանքերնուն մէջ անոր հետեւին, թէ որ մինչև վերջին կէտը անոր պարապին, տակաւին անոր մէջը սորվելու բաներ կը մնան: Ան գիրքը Աստուծոյ Գիրքն է:

Բայց աս Սուրբ Գիրքը կարդալու ժամանակնիս՝ պէտք է որ խոնարհութեամբ և հեզութեամբ ընդունինք ինչ որ մեզի կը սորվեցունէ, թէ չէ՝ անօգուտ կ'ըլլայ մեր կարդալը:



Դ. Ճշմարիտ քրիստոնեաները որչափ որ կ'ապրին՝ այնչափ ալ իրենց սէրը կ'աւելնայ Աստուածաշունչին վրայ: Սաղմ. ճժթ. 97–104 ևայլն: Իսկ որչափ երկար որ ապրին, այնչափ աւելի կը զգան իրենց ունեցած Սուրբ Հոգիին կարօտութիւնը որ կարող ըլլան Սուրբ Գիրքը իմանալու ու անոր հնազանդելու:

Ե. Իսկ գիտնալով հիմա՝ որ կորսուած մարդիկը միայն Աստուածաշունչով փրկութիւն կը գտնեն, կը փափաքին որ ամէն մարդիկ ան Կենաց Գիրքը ունենան, ու կը ջանան որ անիկայ ամէն ազգաց մէջ տարածեն:

Անոնք՝ որ իրենց պէս եղբայրները Աստուածաշունչ կարդալէն կը զրկեն, Աստուծոյ ու մարդոց թշնամիներն են. քանզի Աստուածաշունչը իրաւունքով ամէն մարդու կը վերաբերի. ու բոլոր աշխարհի համար գրուեցաւ:

Զ. Անոնք որ Աստուածաշունչը Աստուծոյ խօսքը ըլլալ չեն ընդունիր, հապա ծաղր կ'ընեն անիկայ, և չեն պարապիր անոր ընթերցմանը, չեն հաւատար, չեն հնազանդիր անոր, ամէն անոնք՝ թէ որ աս ըրածներնուն վրայ չապաշխարեն՝ պիտի կորսուին յաւիտեան:

---

## 4. Սուրբ Հոգիին ով ըլլալը:

Յովհ. ժդ. 15–31:

Հ. Ո՞վ է Սուրբ Հոգին:

Պ. Անիկայ Աստուած է. ինչպէս որ կը խոստովանինք Ամենասուրբ Երրորդութիւնը, Հայր՝ Որդի՝ և Սուրբ Հոգի, իրեք անձն ու մէկ Աստուած:

Հ. Ի՞նչպէս գիտէք թէ ինք Աստուած է

Պ. Աստուածաշունչին մէջ անիկայ Աստուած կը կոչուի: Գործ. ե. 3, 4: Ա Կոր. գ. 16:

Հ. Քրիստոնէական մկրտութիւնը որո՞ւ անունով կը կատարուի:

Պ. Ինչպէս Հօրը ու Որդիին անունովը՝ նմանն ալ Սուրբ Հոգիին անունովը։ Մատթ. իը. 19։

Հ. Ժողովուրդը եկեղեցիէն արձակուելուն ի՞նչ կ'ըսուի իրենց։

Պ. “Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը՝ և Աստուծոյ սէրը՝ ու Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը ձեր ամենուն հետը ըլլայ. Ամէն”։ Բ Կորնթ. ժգ. 13։

Հ. Աստուած միայն գիտէ ամէն բաները. Սուրբ Հոգին ալ գիտէ՞ ամէն բաները։

Պ. Հրամմէրես. “Հոգին ամէն բան կը քննէ, Աստուծոյ խորունկ բաներն ալ”։ Ա Կորնթ. բ. 10։

Հ. Աստուած միայն գիտէ գալու բաները. Սուրբ Հոգին ալ գիտէ՞.

Պ. Հրամմէրես։

Երբոր ինքը՝ ճշմարտութեան Հոգին գայ, ամէն ճըշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզ. ինչու որ չէ թէ ինքիրմէն պիտի խօսի, հապա ինչ որ լսէ՝ պիտի խօսի, ու գալիքները ձեզի պիտի պատմէ։ Յովհ. ժզ. 13։ Եսայ. խզ. 9, 10։

Հ. Աստուած միայն ներկայ է ամէն տեղ. Սուրբ Հոգին ալ ամէն տեղ ներկա՞յ է։

Պ. Հրամմէրես։

Ո՞ւր երթամ քու Հոգիէդ, և քու երեսէդ ո՞ւր փախչիմ։ Թէ որ երկինքը ելլեմ, դուն հոն ես, թէ որ դժոխքը անկողինս ընեմ, ահա դուն հոն ես։ Թէ որ արշալոյսին թեւերը առնեմ, և ծովուն վերջի ծայրերը բնակիմ, հոն ալ քու ձեռքդ ինծի պիտի առաջնորդէ, և քու աջ ձեռքդ զիս պիտի բռնէ։ Սաղմ. ճլթ. 7–10։

Հ. Աստուած միայն Ամենակարող զօրութիւն ունի. Սուրբ Հոգին ալ Ամենակարող զօրութիւն ունի՞։

Պ. Հրամմէրես. քանզի Առաքեալները անոր զօրութիւնովը ամէն տեսակ հրաշագործութիւններն ըրին։ Ա Կորնթ. ժբ. 8–11։ Եբր. բ. 4։ Գործ. բ. 4, և-այլն։



Հ. Ո՞րն է այն մեղքը որն որ Աստուած բնաւ պիտի չներէ ոչ աս աշխարհիս մէջ և ոչ գալու աշխարհին մէջը։

Պ. Սուրբ Հոգիին դէմ եղած հայհոյութիւնը։ Մատթ. ժբ. 24–32։ Ղուկ. ժբ. 10։ Մարկ. գ. 22–30։

---

Սուրբ Հոգին՝ որ կը փոխէ մեր սիրտերը՝ մեզ Քրիստոսին կը քաշէ, ու Երկինքին համար կը պատրաստէ՝ ճշմարիտ Աստուած է, երկրպագելի Երրորդութեան երրորդ անձը։

Ա. Ուստի մենք վախնալու՝ սիրելու՝ երկրպագութիւն ընելու ու ծառայելու ենք իրեն Աստուծոյ պէս։ Ինքն է Աստուծոյ Գիրքին հեղինակը, ու ինք աս գիրքին մէջը մեզի յայտնեց ամէն եղածներն ու գալիքները մինչև աս աշխարհիս վերջը, այն ամէն բաները՝ որ մենք պարտինք հաւատալ ու ընել մեր փրկութեանը համար։ Ինքն է որ Մարգարէներուն ու Առաքեալներուն ձեռքովը զօրաւոր հրաշքներ գործեց։ Ինքն է որ աշխարհի ամէն կողմերը ներկայ է մի և նոյն րոպէին՝ մարդոց մեղքերը յանդիմանելով, անոնց սիրտերը փոխելով, անոնք դէպ'ի Քրիստոս առաջնորդելով, Քրիստոնեաներուն սրտին մէջ բնակելով ու անոնք սրբելով, Պաշտօնեաներ որոշելով ու անոնց խօսելու տալով, և եկեղեցիներուն հոգ տանելով։

Բ. Իր սեպհական գործն է մարդոց սիրտերը փոխել ու սրբել։ Մենք չենք կրնար փոխել բուն մեր սիրտերը, ինչու որ բոլորովին մենք չար ենք, ու մեր սիրտերը միշտ չարութիւն ընելու պատրաստ են։ Մենք զգալով մեր տկարութիւնն ու չարութիւնը՝ պարտինք Իրեն երթալ ճիշդ աս դիտաւորութեամբ։ Աշխարհիս դէպ'ի Քրիստոս դառնալու բոլոր յոյսերը՝ Աստուծոյ Հոգիին շնորհքէն կախում ունին։

Պ. Մենք ամէն պէտք եղածն ընելու ենք Սուրբ Հոգին հրաւիրելու, որ գայ մեր սիրտը բնակի, միանգամայն հեռու կենալով ան ամէն բաներէն՝ որ զինքը մեզմէ կը հեռացունեն։ Կարելի է որ Ինքն իր սրբազան ներգործութիւնը մեր սիրտերէն դադրեցունէ, կարելի է որ Ինքը վշտանայ ու մեզմէ մէկ դի քաշուի յաւիտեան։ Ուրեմն չուրանանք իր Աստուածութիւնն ու իր ամենակարող զօրութիւնը. երդում չընե՛նք իր Սրբազնասուրբ անունովը, չանարգե՛նք իր սուրբ Խօսքը՝ իր պաշտօնեաները և իր ժողովուրդը։ Իր կամքին դէմ եղածը չընենք, ինչու որ չկրնար բնաւ մէկ կերպով մը մեղքին հետ հաղորդութիւն ունենալ։

Պ. Ինքը բարեգութ ու երկայնամիտ է դէպ'ի ամէն մարդիկ։ Թէ որ Ինքը մարդասէր ու երկայնամիտ չըլլար, բնաւ չէր բնակեր աս դէշ աշխարհիս մէջը, բնաւ չէր բնակեր մարդոց սրտին պէս ապականեալ տեղ մը։ Եւ երբոր Ինքը շնորհաց գործ մը սկսի մեր մէջը՝ թէպէտև մենք շատ անգամ անոր կամքին դէմ կը կենանք, այսու ամենայնիւ կը համբերէ և իր սկսած գործը չդադրեցունելով՝ շարունակ յառաջ կը տանի մինչև վերջին կէտը։ Ինքը Շնորհաց Հոգի է. ճիշդ անանկ Հոգի՝ որուն մեղաւորները կը կարօտին։

Ե. Ճշմարիտ Քրիստոնեան ի՛նչպէս զօրաւոր և ի՛նչպէս երջանիկ է։ Անոր Հայրը՝ Աստուած է. անոր Փրկիչը՝ Աստուած է. և անոր Սրբարարն ալ՝ Աստուած է. ''Թէ որ Աստուած մեր կողմն ըլլայ, ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ''։

Զ. Բայց չարերն ու անզեղջները՝ անզօր ու թշուառական են. անոնք ո՛չ Երկնաւոր Հայր ունին, ո՛չ պատուական Փրկիչ, ո՛չ ալ բարեգութ Սրբարար։ Անոնք՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ հակառակ են. և Հայրը՝ Որդին՝ և Սուրբ Հոգին ալ անոնց հակառակ է։ Աստուծմէ մեզի համար նախապատրաստուած մեծ փրկութենէն անոնք մասն ու բաժին չունին։



## Է. ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅ։

### 1. Մարմինին մեռնելուն վրայ։

Յոհ. ԺԱ. 1–44։

Հ. Ի՞նչ է պատճառը՝ որ մենք ամէնքս կը մեռնինք։

Պ. Վասնզի մենք ամէնքս ալ մեղաւոր ենք։ Ծնունդ. Բ. 17։ Սաղմ. ՁԹ. 48։ Հռովմ. Ե. 12։

Հ. Թէ որ բնաւ մեղք մը չըլլար աշխարհի մէջ, մահ պիտի ըլլա՞ր։

Պ. Ոչ։

Վասնզի մեղաց վարձքը մահ է. բայց Աստուծոյ շնորհ պարգևը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը։ Հռովմ. Զ. 23։

Հ. Գիտէ՞ք ո՛ր ատեն պիտի մեռնիք։

Պ. Ոչ. միայն Աստուած գիտէ ան ատենը

Մեռցունողը ու ողջացունողը, գերեզմանը իջեցունողը ու վեր հանողը՝ Տէրն է։ Ա Թագ. Բ. 6, 7։ Որ ամէն ապրողին անձը՝ ու բոլոր մարդկային մարմնոյ հոգին անոր ձեռքն է։ Յոբ. ԺԲ. 10։ Երբոր քու երեսդ կը ծածկես, կը խռովին։ Երբոր անոնց հոգին կ'առնես, կը մեռնին, և իրենց հողը կը դառնան։ Սաղմ. ՃԳ. 29։

Հ. Գիտէ՞ք արդեօք թէ ինչ տեսակ մահուամբ պիտի մեռնիք։

Պ. Ոչ, միայն Աստուած գիտէ ան։

Հ. Մենք ընդհանրապէս աս աշխարհիս մէջ շա՞տ կապրինք՝ թէ քիչ։

Պ. Քիչ ժամանակ։

Ի՞նչ է ձեր կեանքը. շոգի մըն է, որ քիչ մը

տուն կ'երևնայ, ու ետքը կ'ոչնչանայ: Յակ. Դ. 14, 15: Վասն զի ամէն մարմին խոտի պէս է, և մարդուն բոլոր փառաւորութիւնը խոտի ծաղկի պէս. խոտը կը չորնայ, ու անոր ծաղիկը կը թափթփի: Ա Պետ. Ա. 24: Յոբ. ԺԴ. 1, 2: Սաղմ. Ղ. 5. ԼԹ. 5:

Հ. Մեր տեսած ամենէն ծեր անձինքը քանի՞ տարեկանի չափ կան:

Պ. Եօթանասուն կամ ութսուն տարեկանի չափ:

Մեր տարիներուն օրերը եօթանասուն տարի են. ու թէ որ զօրութիւնով ութսուն տարի ըլլան, տակաւին անոնց փառքը աշխատանք ու ցաւ է. ինչու որ անոնք շուտով կ'անցնին, ու մենք կը թռչինք: Սաղմ. Ղ. 10:

Հ. Ջրհեղեղէն առաջ մարդիկ քանի՞ տարի կ'ապրէին:

Պ. Ութը կամ ինը հարիւր տարի:

Հ. Աստուածաշունչին մէջ ըսուած ամենէն ծեր մարդը ո՞վ էր:

Պ. Մաթուսաղա: Ծննդ. Ե. 1–32:

Հ. Ինչո՞ւ Աստուած կարճեցուց մարդկային կեանքը:

Պ. Մարդոց մեղքին համար:

Հ. Երկու բարի մարդիկ կային, որոնք բնաւ չմեռան. Աստուած անոնք աշխարհքէն դուրս հանեց և երկինք տարաւ: Ի՞նչ էին անոնց անունները:

Պ. Ենովք և Եղիա: Ծննդ. Ե. 24: Եբր. ԺԱ. 5: Դ Թագ. Բ. 11:

Հ. Երբոր մարդ մը մեռնի, ի՞նչ կ'ընենք անոր մարմինը:

Պ. Հողին մէջը կը թաղենք անիկայ:

Հ. Ետքը ի՞նչ կ'ըլլայ ան մարմինը:

Պ. Հող կը դառնայ:

Հ. Ադամ մեղանչելէն ետև՝ Աստուած ի՞նչ ըսաւ:



Պ. “Հող էիր դուն և հող պիտի դառնաս”: Ծննդ. Գ. 19:

Հ. Սոսկալի բան մըն է մեռնիլը, ո՞վ կրնայ մխիթարել մեզ խաղաղութեամբ մեռնելու:

Պ. Աստուած:

Ո՞ւր է, ո՛վ մահ՝ քու խայթոցդ, ո՞ւր է, ո՛վ գերեզման, քու յաղթութիւնդ: Բայց գոհութիւն Աստուծոյ, որ մեզի յաղթութիւն կու տայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը: Ա Կորնթ. ԺԵ. 55, 57: Ծնկան վրայ գալով՝ բարձրաձայն աղաղակեց, Տէ՛ր՝ աս մեղքը մի՛ սեպեր ատոնց. և աս ըսելով՝ ննջեց: Գործ. Է. 59: Ու թէ որ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կու գամ՝ և ձեզ քովս կ'առնեմ. որպէս զի ուր որ ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք: Յովհ. ԺԴ. 3:

Հ. Ի՞նչ կերպ մահուվ մեռնելու պարտինք փափաքիլ:

Պ. “Յակոբին փոշին ո՞վ կրնայ համրել, և Իսրայէլին քառորդը ո՞վ կրնայ հաշուել. թո՛ղ իմ անձս արդարներուն մահուվը մեռնի, ու իմ վախճանս անոնց վախճանին պէս ըլլայ”: Թուոց ԻԳ. 10:

Հ. Որովհետև մեր մեռնելուն ժամանակը կամ ինչ մահուվ մեռնելնիս չենք գիտեր, միշտ ի՞նչպէս ապրիլ պարտինք:

Պ. Միշտ մահուան պատրաստ ըլլալով:

Հ. Ի՞նչ կ'ըսէ Յիսուս Փրկիչը ասոր վրայով:

Պ. “Դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդոյ կու գայ անանկ ժամու մէջ՝ որ դուք չէք կարծեր”: Ղուկ. ԺԲ. 40:

---

Աս աշխարհին մէջի բոլոր կենդանիները մահուան ենթակայ են, և բուն աշխարհն ալ իր վախճանին կը մօտե-

նայ ։ Մահը թագաւորեց մարդոց վրայ Ադամէն մինչև աս օրս , և պիտի թագաւորէ մինչև վերջին օրն ալ ։

Ա . Աս բաներէն կը սորվինք թէ ինչ դէշ ու լեղի բան մըն է մեղքը . մահը և բոլոր վայերը անիկայ բերաւ մեր ամենուս վրայ . թէ որ մեղք չըլլար , մահ ալ պիտի չըլլար , մեղքն ու մահը իրարու հետ կապուած են ։

Բ . Դուք մեռնելու համար ծնած էք ։ "Հող էիր դուն , ու հող պիտի դառնաս" կ'ըսէ Ամենակարողը ։ Ուրեմն մի՛ հպարտանաք ձեր անձին գեղեցկութեանը կամ զօրութեանը կամ առողջութեանը վրայ ։ Մի՛ վստահիք աս մարմնին ցանկութիւններուն ։ Մարմինը ուրիշ բան չէ՝ բայց միայն հող . խոնարհ և խորհրդածու եղէք մահուան վրայ ։

Գ . Չէք գիտեր թէ ե՛րբ պիտի մեռնիք . կարելի է մահը ձեզ յափշտակէ տարիէ մը ետքը , կամ թէ ամիսէ մը ետքը , կամ թէ գալ շաբթու , կամ վաղը և կամ դուցէ այսօր ։ Կարելի է որ մեծութեան հասակնուդ հասնիք , և կամ տղայութեան ժամանակնիդ մեռնիք ։ Գնացէք գերեզմանատունը , ու հոն պիտի գտնէք պզտի տղայոց գերեզմաններ՝ ինտոր նաև պատանիներու՝ և մեծ մարդոց գերեզմաններ ։ Կեանքէն աւելի փոփոխական բան մը չկայ ։ Վաղուան վրայ դուք ձեզմէ մի՛ պարծիք , ըսելով թէ՝ վաղը աս կամ ան բանը ընենք . գալ տարի հոս կամ հոն պիտի երթանք ։ Յակ . Դ . 13 , 14 ։ Դուք միշտ զգալու և ըսելու էք "Թէ որ Տէրը կամենայ՝ ու ապրինք , աս կամ ան բան ընենք" ։

Դ . Չէք ալ գիտեր թէ ինչ մահով պիտի մեռնիք ։ Հազար կերպ ճամբաներ կան մեռնելու . մահը մեր բոլորտիքը և մեր մէջն է . միշտ միտքերնիդ բերէք որ ձեր կեանքը Աստուծոյ ձեռքն է , և ինքը կրնայ երկընցունել կամ կարճեցունել անիկայ , ո՛ր ատեն կամ ինչ կերպով որ ինքը հաճի ։

Ե . Ուրեմն թո՛ղ ձեր կեանքին մեծ գործը ըլլայ մահուան համար պատրաստ ըլլալը ։ Քանզի ձեր մահուան ատենը պիտի չսեպէք թէ ձեր ըրած պատրաստութիւնները շատ են ։ Եւ թէ որ առաջուց սկսած չէք , հիմա սկսեցէք պատրաստուիլ ։ Միտքերնիդ բերէք ան ժամե-



րը՝ որ արդէն կորսընցուցած էք . և ան վտանգը՝ որուն ձեր հոգիները մինչև հիմա ենթակայ եղած են ։ Մեծ զարմանք չէ՞ որ դուք մինչև հիմա մահուանէ ազատ մնացեր էք , ու յաւիտենական թշուառութեանը չէք խըրկուեր ։ Ուրեմն ձեր հոգիին փրկութիւնը մահուան օրին մի՛ թողուք , ինչու որ ասանկ ընելը մեծագոյն չարութիւն և յիմարութիւն է ։ Ձեր ամենէն աղէկ ժամանակը ամենալաւ բաներու հետևելով անցուցէ՛ք ։ Եւ թէ որ միամիտ սրտիւ ապաշխարէք ու Յիսուսին հաւատաք և իրեն ծառայելու համար ապրիք . դուք պիտի պատրաստ ըլլաք մահուան համար , և Աստուծոյ շնորհքովը մահը ձեզ պիտի չկրնայ վախցունել ։

---

2 . Հոգին ի՞նչ կ'ըլլայ երբոր մարմինը մեռնի ։

Ղուկ . ԺԶ . 19–31 ։

Հ . Երբոր մարմինը մեռնի՝ ի՞նչ կ'ըլլայ հոգին ։

Պ . Առ Աստուած կ'երթայ ։

Հ . Ինչո՞ւ առ Աստուած կ'երթայ ։

Պ . Որ Աստուած անոր գործքերուն համեմատ դատէ անիկայ , կամ Երկինք ընդունելով , և կամ Դժոխք խրկելով ։

Հ . Ուրեմն բարի մարդը մեռածին պէս Երջանիկ կ'ըլլա՞յ արդեօք Երկնից մէջ ։

Պ . Հրամերես ։

Հ . Դուք ի՞նչպէս գիտէք աս ։

Պ . Աստուածաշունչէն ։

Ու եղաւ որ ան աղքատը մեռաւ , ու հրեշտակները Աբրահամին գոգը տարին զանիկայ . հարուստն ալ մեռաւ ու թաղուեցաւ ։ Ղուկ . ԺԶ . 22 ։ Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան . ապա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի . հիմա կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ ։ Եւ թէ որ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ , նորէն

կու գամ՝ և ձեզ քովս կ՚առնեմ. որպէս զի ուր որ ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք: Յօհ. ժդ. 2, 3:

Հ. Մեր Փրկիչը խաչին վրայ ի՞նչ ըսաւ աւազակին:

Պ. "Դուն այսօր իմ հետս Դրախտին մէջը պիտի ըլլաս": Ղուկ. իգ. 43: Գործ. է. 58:

Հ. Գէշ մարդ մը մեռածին պէս ո՞ւր կ՚երթայ:

Պ. Դժոխք:

Հ. Մեծատունը մեռնելէն և թաղուելէն ետքը տանջանքի մէջ ըլլալով՝ ո՞ւր բացաւ իր աչքերը

Պ. Դժոխքին մէջը: Ղուկ. ժզ. 23:

Հ. Յուդան ինքզինքը կախելէն ետքը ո՞ւր գնաց:

Պ. "Իր տեղը": Գործ. ա. 25: Յօհ. ժէ. 12:

Հ. Ուրեմն մենք մեռածնուս պէս, մեր հոգիները ո՞ւր պիտի գտուին:

Պ. Կամ Երկինքը, կամ Դժոխքին մէջը:

---

Մահով՝ հոգին մարմինէն բաժնուած կը մնայ մինչև Յարութեան օրը: Մարմինը երկրի մէջ կը թաղուի և հող կը դառնայ. և հոգին առ Աստուած կ՚երթայ ու կը դատուի. և անոր վարքին համեմատ կամ Երկնից մէջ կ՚ընդունուի, կամ Դժոխք կը խրկուի:

Ա. Աս ներկայ կեանքն է միայն Շնորհաց օրը: Թէ որ չապաշխարենք և Յիսուս Քրիստոսի չհաւատանք քանի՛ որ աս աշխարհիս վրայ ենք, մենք յաւիտեան կորսուած ենք: Հոգին փրկելու համար պատեհութիւն չկայ մէկալ աշխարհին մէջ: Մահէն ետև դատաստան կու գայ: "Այսօր թէ որ անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի՛ խստացունէք": Ահով ու դողով աղէկ մտմտացէ՛ք մահին վրայ՝ ու անոր համար պէտք եղած պատրաստութիւնը տեսէք: Արդ՝ ո՜րչափ պատուական է աս ժամանակաւոր կեանքս, որ անոր աղէկ գործածուելէն կախուած ունի մեր յաւիտենական երջանկութիւնը:

Բ. Արդարները շատ մօտ են Երկինքին և բոլոր անոր



երջանկութիւններուն մէջը մտնելու: Ինչու որ իսկոյն իրենք մեռած կէտին՝ Քրիստոսի հետը կ՚ըլլան երկինքը: Ո՛հ, անոնք ի՜նչ մեծ իրաւունք ունին ուրախանալու: Քանզի մա՛հ է ճշմարիտ հաւատացեալներուն մեծ շահը: Փիլիպ. ա. 21: Պէտք է որ անոնք հաւատարմութեամբ բարի ընեն բոլոր մարդոց՝ ինչպէս որ պատեհութիւն ունին. և որ յօժարութեամբ համբերեն աս կեանքին նեղութիւններուն, փորձութիւններուն, վիշտերուն և աշխատութիւններուն՝ գիտնալով թէ իրենց ժամանակը կարճ է, և թէ մահը շատ չանցած իրենց վարձքին և իրենց հանգստութեանը պիտի հասցունէ: Ղուկ. ժբ. 35–40:

Գ. Չարերը շատ մօտ են Դժոխքին և բոլոր անոր տանջանքներուն մէջը մտնելու: Թէ որ անոնք այսօր մեռնելու ըլլային, այսօր անոնք իրենց աչքերը տանջանքներուն մէջը պիտի բանային: Ո՛հ, ի՜նչ մեծ իրաւունք ունին չարերը իրենց վիճակին մէջը դողալու, իրենց մեղքերը և յիմարութիւնները մէկ դի ձգելու և ինքզինքնին ապաշխարութեան և աղօթքի տալու, որ գուցէ Աստուած ների անոնց Յիսուսի համար. քանզի ուչ այլ ինչ, բայց միայն Աստուծոյ ողորմութիւնը կրնայ պահել անոնք կորըստեան անդունդէն:

---

## Թ. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ:

ա Կորնթ. ժե. 1–58:

Հ. Մեր մարմինները՝ որ իրենց գերեզմաններուն մէջը հող կը դառնան, հոն մնալո՞ւ են. և ընաւ մէյմըն ալ տեսնելու կամ լսելու չե՞ն:

Պ. Չէ՛. անոնք նորէն ապրելու համար յարութիւն պիտի առնեն:

Հ. Ի՞նչպէս գիտենք աս բանը:

Պ. Քանզի այսպէս կը կարդանք Աստուածաշունչին մէջը. զորօրինակ՝ ա Կորնթ. ժե. և ա Թեսա. դ գլուխ:

Հ․ Մեր մարմինները ե՞րբ յարութիւն պիտի առնեն ։

Պ․ Դատաստանին օրը ։

Հ․ Ո՞վ պիտի յարուցանէ անոնք ։

Պ․ Տէր Յիսուս Քրիստոս ։ Յովհ․ ժա․ 25 ։

Հ․ Ի՞նչ կ՚ըսէ Սուրբ Գիրքը յարութեան վրայով ։

Պ․ “ Ինչու որ ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն , ու դուրս պիտի գան․ անոնք որ բարի գործեր են , կենաց յարութեան համար , և անոնք որ չար գործեր են , դատապարտութեան յարութեան համար ” ։ Յովհ․ ե , 28 , 29 ։

Հ․ Ո՞վ ամենէն առաջ մեռելներէն յարութիւն առաւ ու նորէն չմեռաւ ։

Պ․ Տէր Յիսուս Քրիստոս ։

Հ․ Անոր մեռելներէն յարութիւն առնելը մեզի ալ վկայութիւն կու տա՞յ արդեօք՝ թէ մենք ալ յարութիւն պիտի առնենք ։

Պ․ Այո՛․ քանզի Սուրբ Գիրքը կ՚ըսէ ։

Ու թէ որ Քրիստոս յարութիւն առած չէ , ուրեմն մեր քարոզութիւնը պարապ է , ու ձեր հաւատքն ալ պարապ է․ և մենք ալ Աստուծոյ սուտ վկաները գտնուած կ՚ըլլանք․ որովհետև Աստուծոյ համար վկայութիւն տուինք , թէ Ինքը մեռելներէն յարուց Քրիստոսը․ որ իրաւ չյարուց անիկայ , թէ որ մեռելները յարութիւն չեն առներ․ քանզի թէ որ մեռելները յարութիւն չեն առներ , Քրիստոս ալ յարութիւն առած չէ ։ Ու թէ որ Քրիստոս յարութիւն առած չէ , ձեր հաւատքը պարապ է , դեռ տակաւին ձեր մեղքերուն մէջն էք ։ Ա Կորնթ․ ժե․ 14–17 ։

Հ․ Բայց մեր մարմինները ճիշդ մեր հիմակուան միս ու արիւն ունեցող մարմիններուն պէ՞ս պիտի ըլլան , որ



ուտելու և խմելու և հանդերձի կը կարօտին , և որ կը հիւանդանան և կը չարչարուին ու կը մեռնին ։

Պ․ Ոչ՛․ անոնք պիտի փոխուին փառաւոր ու սքանչելի կերպով մը ։

Քանզի երբոր մեռելներէն յարութիւն առնեն , ոչ կնիկ կ՚առնեն , և ոչ էրկան կը տրուին․ հապա երկինքի հրեշտակներուն պէս են ։ Մարկ․ ժբ․ 25 ։ Որովհետև ալ չեն կրնար մեռնիլ․ քանզի հրեշտակներուն հաւասար են , ու Աստուծոյ որդիք են․ ինչու որ յարութեան որդիք են ։ Ղուկ․ ի․ 36 ։ Այսանկ ալ է մեռելոց յարութիւնը․ մարմինը ապականութիւնով կը սերմանուի , ու անապականութիւնով յարութիւն կ՚առնէ․ անարգութիւնով կը սերմանուի , ու փառքով յարութիւն կ՚առնէ․ տկարութիւնով կը սերմանուի , ու զօրութիւնով յարութիւն կ՚առնէ․ կը սերմանուի շնչաւոր մարմին , և յարութիւն կ՚առնէ հոգևոր մարմին․ շնչաւոր մարմին կայ , հոգևոր մարմին ալ կայ ։ Վասն զի պէտք է որ աս ապականացու մարմինը անապականութիւն հագնի , ու աս մահկանացուս անմահութիւն հագնի ։ Ա Կորնթ․ ժե․ 42–44 , 53 ։

Հ․ Մեր յարութիւն առած մարմինները որո՞ւն մարմինին պիտի նմանին ։

Պ․ Քրիստոսի փառաւորեալ մարմինին ։

Առջի մարդը երկրէն է՝ հողեղէն․ բայց երկրորդ մարդը՝ Տէր է՝ երկինքէն ։ Ու ինտոր որ հողեղէնին կերպարանքը հագեր ենք , երկնաւորին կերպարանքն ալ պիտի հագնինք ։ Ա Կորնթ․ ժե․ 47 , 49 ։ Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու , այն զօրութիւնովը՝ որ կարող է ամենը իր տակը հնազանդեցնելու ։ Փիլիպ․ գ․ 21 ։ Տես նաև Սաղմ․ ժէ․ 1 , 2 ։ Յայտ․ ա․ 12–16 ։

Հ. Սուրբ Հոգւոյն ազդեցութեամբը ինչպէս կը պատմէ Պօղոս կենդանիներուն փոխուիլը և մեռելներուն յարութիւն առնելը :

Պ. "Ահա ձեզի խորհուրդ մը կը զրուցեմ. Ամէնքս պիտի չննջենք, բայց ամէնքս ալ պիտի փոխուինք, յանկարծակի աչք գոցել բանալու մէջ՝ վերջին փողին հնչուելու ատենը. որովհետև փողը պիտի հնչուի, ու մեռելները յարութիւն պիտի առնեն առանց ապականութեան. և մենք ալ պիտի փոխուինք: Վասն զի պէտք է որ աս ապականացու մարմինը անապականութիւն հագնի, ու աս մահկանացուս անմահութիւն հագնի": Ա Կորնթ. ԺԵ. 51–53:

Հ. Ի՞նչ կ՚ըսէ նաև Թեսաղոնիկեցւոց թղթոյն մէջ:

Պ. "Թէ որ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ ու յարութիւն առաւ, անանկ ալ Աստուած ննջեցեալները Յիսուսով պիտի բերէ անոր հետ: Վասն զի աս կը զրուցենք ձեզի Տէրոջը խօսքովը, թէ մենք որ մինչև Տէրոջը գալուստը ողջ կը մնանք, բնաւ ննջեցեալներէն առաջ պիտի չանցնինք: Ինչու որ ինքը Տէրը ազդարարութեան հրամանով՝ հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ, և Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն: Ետքը մենք ալ որ ողջ մնացած ենք՝ անոնցմով մէկ տեղ պիտի յափշտակուինք ամպերով Տէրոջը առջևը ելլելու օդին մէջը. և անանկ յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք: Ուստի մէկզմէկ մխիթարեցէք աս խօսքերով": Ա Թես. Դ. 13–17

---

Թէպէտ և մեր մարմինները կը մեռնին և հող կը դառնան, բայց վերջին մեծ օրը նորէն յարութիւն պիտի առնեն Տէր Յիսուս Քրիստոս մեր Ամենակարող Փրկիչով:



Եւ ինչպէս որ ինքը մեռելներէն յարութիւն առաւ, այնպէս ալ մենք պիտի առնենք:

Ա. Աս վարդապետութիւնը կը սորվեցնէ մեզի, որ մեր մարմինները Տէրոջն են. և թէ անոնք թանկագին են. մենք անոնք սուրբ պահելու ենք իրեն ծառայելու համար: Մեր պարտքն է անոնց առողջութեանն ու զօրութեանը և մաքրութեանը համար հոգ տանիլ. և միշտ մեր հանդերձն ալ մաքուր պահել որչափ որ կրնանք: Մեր պարտքն է մեր անձը միշտ մաքուր պահել պոռնկութենէն, շնութենէն, որկրամոլութենէն, գինովութենէն և ամէն մեղքերէն: Ա Կորնթ. Զ. 9–20: Ա Թես. Դ. 7: "Քանզի գնով ծախու առնուեցաք. ուստի փառաւորեցէք զԱստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջը, որ Աստուծոյ են": Ա Կորնթ. Զ. 20:

Բ. Աս վարդապետութիւնը կը վերցունէ մահուան երկիւղը և տրտմութիւնը: Թէպէտ մենք կը մեռնինք, բայց պիտի ապրինք. թէպէտ մեր մարմիններէն կը հրաժարինք, բայց ոչ յաւիտեան: Յովհ. ԺԱ. 25, 26: Անոնք որ ապականութեամբ սերմանուած են, անապականութեամբ յարութիւն պիտի առնեն. անպատուութեամբ սերմանուած են, փառքի մէջ յարութիւն պիտի առնեն. տկարութեամբ սերմանուած են, զօրութեամբ յարութիւն պիտի առնեն: Անոնք շնչաւոր մարմիններով սերմանուած են, յարութիւն պիտի առնեն հոգևոր մարմիններով: Քրիստոսի փառաւոր մարմնին նմանած պիտի փոխուին:

Գ. Աս վարդապետութիւնը կը մխիթարէ մեզ մեր քրիստոնեայ ազգականներուն ու բարեկամներուն մահուանը վրայով: Մեր հօրը կամ մօրը, մեր էրկանը կամ մեր կնկանը, մեր տղուն կամ մեր աղջկանը, մեր եղբօրը կամ մեր քրոջը թաղման ատենը՝ անոնց ետևէն մինչև գերեզմանը երթալով՝ կրնանք մտմտալ ու ըսել, հիմա ասիկայ որ Քրիստոսի կը հաւատար՝ ուրեմն յաւիտեան երկինքին մէջը պիտի տեսնենք և սիրով պիտի գրկենք անիկայ նոյն մարմնով՝ աւելի գեղեցիկ ու փառաւոր եղած, որն որ այնքան շատ կը սիրէինք երբոր երկրի վրայ էր. թէպէտ հիմա կը բաժնուինք անկէ, բայց նորէն պիտի միաւորինք. անանկ միաւորութեամբ՝ որ յաւիտեան անբաժանելի է:

Դ. Աս վարդապետութիւնը կը սորվեցունէ մեզի թէ չարերուն մարմինները յարութիւն պիտի առնեն, միայն ասոր համար որ հոգիով ու մարմնով Դժոխքը ձգուին յաւիտեան։ Անոնց մէկզմէկ տեսնելը տրտմութեան աշխարհին մէջ պիտի ըլլայ ու ոչ թէ ուրախութեան։ Անոնք հոգիով ու մարմնով աս երկրիս մէջը մեղքին ծառայեցին, Աստուծոյ դէմ ապստամբելով։ Ուրեմն ասկից ետքը անոնք հոգիով ու մարմնով իրենց մեղքին ու ապստամբութեան պատիժը պիտի քաշեն. ինտոր ան հարուստը որ առաջ իր կեանքը բազմածախ հանդէսով կ'անցունէր ամէն օր՝ ետքը իր պապակեալ լեզուն զովացունելու համար կաթիլ մը ջուր կը խնդրէր։

Ե. Աս վարդապետութիւնը կը սորվեցունէ մեզի որ Յիսուս Քրիստոս մեր Տէրը ամենուն բաւական ամենակարող Փրկիչ մըն է։ Ի՜նչ սոսկալի, և ի՜նչ սարսափելի կերպով իր հրամանովը ծովն ու ցամաքը իրենց խորունկութիւնովը դողալով՝ իսկոյն իրենց մէջը եղած մեռելները դուրս կու տան։ Ի՜նչ հիանալի տեսարան՝ ուր երկիրը անթիւ բազմութիւնով ծածկուած՝ ամէն մարդիկ աչքերնին շիտակ դէպ'ի ան մեծ լուսափայլ Աթոռին կը վերցունեն՝ ուր որ Յիսուս փառաց Թագաւորը մեծ յաղթութիւնով կը նստի։ Ան ատենը ո՞վ պիտի տարակուսի իր Աստուած ըլլալուն վրայ։ Մարդուն վերջին թշնամին որ պիտի խափանի՝ մահն է։ Հոգին ու մարմինը երկուքն ալ Քրիստոս ինքը կը փրկէ։ Մենք իր մէջը բովանդակեալ ենք. Ինքը կը յաղթէ մեղքին, մահուան և Դժոխքին. երանի անոնց՝ որ իրենց յոյսը Անոր վրայ կը դնեն։



## Ճ. ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ՎՐԱՅ։

Մատթ. իե. 31–46

Հ. Դատաստանի համար սահմանուած յատուկ օր կա՞յ։

Պ. Հրամերես։

Ինչու որ ինքը (Աստուած) մէկ օր մը սահմանեց, որուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ՝ ան մարդուն (Քրիստոսի) ձեռքովը։ Գործ. ժէ. 31։

Հ. Ո՞վ Քրիստոսի ատեանը պիտի ելլայ։

Պ. “Վասն զի ամէնս ալ Քրիստոսի ատեանին առջեւը պիտի կայնինք”։ Հռոմ. ժդ. 10։

Հ. Դատաստանի օրուան երբ գալը ո՞վ գիտէ։

Պ. Միայն Աստուած գիտէ։

Իսկ ան օրուան և ան ժամուն համար՝ մէկը չգիտեր ոչ ալ երկնից հրեշտակները, հապա միայն իմ Հայրս։ Մատթ. իդ. 36։

Հ. Ան օրուան գալուն վրայ Սուրբ Գիրքը ի՞նչպէս կ'ըսէ։

Պ. “Գողի պէս պիտի գայ”։ Բ Պետ. գ. 10։ Գործ. ա. 11։

Հ. Երբոր աս օրը գայ, աշխարհը որո՞ւն գալը պիտի տեսնէ ամպերուն մէջ մեծ զօրութիւնով ու փառքով և Սուրբ Հրեշտակները իրեն հետ։

Պ. Տէր Յիսուս Քրիստոսի գալը։ Մատթ. իե. 31։ Մարկ. ը. 38։ Բ Թեսս. ա. 7։ Յուդ. 14։

Հ. Տէրը ի՞նչպէս պիտի իջնէ Երկինքէն։

Պ. “Ինչու որ ինքը Տէրը ազդարարութեան հրամանով՝ հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնայ”։ Ա Թեսս. դ. 15։

Հ. Երբոր փողը հնչուի՝ մեռեալներն ու կենդանիները ի՞նչ պիտի ըլլան։

Պ. Մեռեալները յարութիւն պիտի առնեն և կենդանիները պիտի փոխուին։ Յոհ. ե. 27–29։ ա Կորնթ. ժե. 51, 52։

Հ. Յարութեան օրը ի՞նչ պիտի ըլլայ աս երկրիս։

Պ. “Տարերքները բռնկած պիտի լուծուին, երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ անոր մէջը կը գտնուին”։ բ Պետ. գ. 10։ Յայտ. ի. 11։

Հ. Նորէն բսէ՛ նայիմ, թէ Տէրոջը գալը ի՞նչպէս պիտի ըլլայ։

Պ. “Սակայն Տէրոջը օրը գողի պէս պիտի գայ, որ ան ատենը երկինքը սաստիկ շառաչիւնով պիտի անցնի, ու տարերքները բռնկած պիտի լուծուին, երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ անոր մէջը կը գտնուին”։ բ Պետ. գ. 10։

Հ. Քրիստոս ի՞նչ տեսակ աթոռի վրայ պիտի նստի աշխարհը դատելու համար։

Պ. Մեծ ճերմակ աթոռի մը վրայ։ Յայտ. ի. 11։ Մատթ. իե. 31։

Հ. Ո՞վ պիտի ժողվուի իր առջևը։

Պ. “Բոլոր ազգերը”։ Մատթ. իե. 32։ Յայտ. ի. 12։

Հ. Ան ատենը ի՞նչ պիտի բացուի։

Պ. “Գիրքերը”։

Հ. Ու ամէն մարդիկ ի՞նչպէս պիտի դատուին։

Պ. Ամէն մէկը իրենց գործքերուն համեմատ։ Հռոմ. բ. 16։ ա Կորնթ. դ. 5։ բ Կորնթ. ե. 10։ Յայտ. ի. 12։

Հ. Քրիստոս Արդարները ո՞ր կողմը պիտի նստեցունէ։



Պ. Իր աջ կողմը։ Մատթ. իե. 32, 33։

Հ. Ու չարերը ո՞ր կողմը պիտի նստեցունէ։

Պ. Ձախ կողմը։

Հ. Դեւերն ալ հո՞ն պիտի ըլլա՞ն, և պիտի դատուի՞ն։

Պ. Հրամերես։

Վասն զի թէ որ Աստուած մեղք գործող հրեշտակներուն չխնայեց, հապա խաւարի կապերով տարտարոսը ձգած՝ դատաստանի պահել տուաւ, և այլն։ բ Պետ. բ. 4։

Հ. Յիսուս ի՞նչ պիտի ըսէ Արդարներուն։

Պ. “Եկէ՛ք իմ Հօրս օրհնածները, աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած թագաւորութիւնը ժառանգեցէք”։ Մատթ. իե. 34։

Հ. Ու ի՞նչ պիտի ըսէ չարերուն։

Պ. “Մէկ դի՛ գացէք ինծմէ, անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը, որ պատրաստուած է սատանային՝ ու իր հրեշտակներուն”։ Մատթ. իե. 41։

Հ. Երբոր դատաստանը լմննայ, բոլոր աշխարհ ի՞նչ պիտի ընէ։

Պ. Փառք պիտի տայ իմաստուն՝ սուրբ՝ արդար և բարի Աստուծոյն։ Յայտ. է. 9–12։

---

Աստուած օր հաստատեց՝ որն որ մէկը չգիտեր, բայց միայն ինքը, որ ան օրը արդարութեամբ Յիսուս Քրիստոսի ձեռքով պիտի դատէ աշխարհը. ինչու որ ինքը բոլոր դատաստանը Որդիին յանձնեց։

Ա. Դատաստանին օրը Աստուծոյ սահմանած օրն է, երբոր ինքը բոլոր տիեզերքին առջևը յայտնի պիտի դատէ մարդկային սեռը արդարութեամբ, իր փառքին օրհնութեանը համար։

Միլիոնաւոր մարդիկ արդէն դատուած են՝ Երկինք կամ Դժոխք երթալու, դատաստանին օրը չեկած. և միլիոնաւոր մարդիկ ալ դատաստանին օրը պիտի դատուին Երկինք կամ Դժոխք երթալու։ Ամէնքն ալ հոն պիտի ներկայանան, և Աստուած պիտի ցուցնէ՝ թէ իր դատաստանը ամէն մարդու վրայ արդար եղաւ, և արդար է։ Դատաստանին օրը հանդիսաւոր օր մը պիտի ըլլայ (Հռոմ. Բ. 5.), բոլոր աշխարհի բանաւոր արարածներուն ցուցունելու համար որ աս աշխարհիս վերաբերեալ՝ Աստուծոյ ըրած բոլոր բաները, և իր բոլոր դատաստանները, իր բոլոր վարձքերը, ու իր պատիժները կատարելապէս արդար ու իրաւունքով են։ Ինք իր բոլոր ճամբաներուն մէջ փառաւորեալ պիտի յայտնուի իբրև Արարիչ՝ Պահպանիչ՝ Փրկիչ և Դատաւոր։ Այն ատենը միաբան պիտի ըսեն բոլոր ներկայ գտնուողները, "Շնորհակալ ենք քեզմէ, ով Տէր Աստուած Ամենակալ, որ դուն ես՝ և էիր՝ ու պիտի գաս. ինչու որ մեծ զօրութիւնը դուն ունիս և դուն թագաւորեցիր". բարձրացի՛ր, ով Աստուած, յաւիտեանս յաւիտենից. Ալէլուիա Տէր Աստուած ամենակալ թագաւորին։

Բ. Դատաստանին օրը՝ Քրիստոսի բարձրութեան ու փառքին օրը պիտի ըլլայ. ամէն աչքերը պիտի տեսնեն զինքը. ամէն ծունկ պիտի խոնարհի. և ամէն լեզու զինքը պիտի խոստովանի։ Այն օրը մեր Փրկիչը պիտի երևնայ թէ ինքը մեծն Աստուած է անբաւ զօրութիւնով՝ բարութիւնով և ճշմարտութիւնով. իր բարեկամներուն զարմանք, վստահութիւն և փառք պիտի ըլլայ, և իր թշնամիներուն՝ սոսկում, խռովութիւն և կործանում։

Գ. Դատաստանը՝ աշխարհի և անոր մէջը եղած բոլոր բաներուն վախճանը պիտի ըլլայ։ Ուրեմն ինչու սիրենք աշխարհը և անոր ամէն բաները, քանզի շուտով պիտի մեռնինք. և մեր բոլոր սիրած բաները ետևնիս պիտի ձգենք, որ անոնք վերջապէս պիտի այրին։ Աշխարհիս ամէն բանը ունայնութիւն է. ուրեմն եկէք պատրաստուինք ան խիստ լուսապայծառ և յաւիտենական աշխարհին համար, ուր որ Քրիստոս գնաց և ուր որ զինքը սիրողներուն ամէնքն ալ երջանիկ պիտի ըլլան յաւիտեան։



Դ. Դատաստանին օրը՝ վերջին վարձատրութեան օրը պիտի ըլլայ ամէն մարդուն իր գործքին համեմատ։ Բոլոր սիրտերուն գաղտնիքները, բոլոր անձանց գործքերը պիտի յայտնուին։ Աստուած մէկու մը աչառութիւն պիտի չընէ, հապա ամէն մէկը իր արդար վարձքը պիտի ընդունի իր ըրածին պէս՝ թէ՛ բարի ըլլայ՝ և թէ՛ չար։

Ե. Յոյսէն զրկուելու և բաժնուելու, ողբի ու վայերու սոսկալի օր մը պիտի ըլլայ դատաստանին օրը։ Անոնք որ իրենց յոյսը միայն Քրիստոսի վրայ դրած չեն, պիտի ողբան ան օրը։ Կեղծաւորները պիտի ըսեն, "Տէր Տէր". բայց Ինքը պիտի պատասխանէ թէ՝ "Ես բնաւ ձեզ չէի ճանչնար. մէկ դի՛ գացէք քովէս դուք որ անօրէնութիւն կը գործէիք"։ Նոյը ան օրը Քահանաներն ու Ժողովուրդը, Վարժապետներն ու Աշակերտները, Էրիկներն ու Կնիկները, Ծնողքներն ու Տղաքները, Եղբայրներն ու Քոյրերը, Բարեկամները ու Ծանօթները պիտի բաժնուին՝ ու մէյ մըն ալ իրարու պիտի չհանդիպին։

Երբոր չարերը Աստուծմէ և Քրիստոսէն բաժնուին, ու սատանային և իր հրեշտակներուն հետ դուրս յաւիտենական թշուառութեան և յուսահատութեան մէջ ձգուին, հոն պիտի ըլլայ լալ ու ակռայ կճրտցունել։

Զ. Ամէն մէկին պարտքն է ապաշխարութիւնով ու Տէր Յիսուս Քրիստոսի հաւատալով, բարի ընթացքով, պարկեշտութիւնով, զգաստութիւնով և աղօթքով՝ դատաստանի համար պատրաստ ըլլալ. "Որ ան ձեզ անբիծ և անարատ գտնէ (կ'ըսէ) խաղաղութիւնով"։ Բ Պետ. Գ. 11–14։ Ո՜վ կարդացող, այսպէս պատրաստ ես Աստուծոյ դէմը ելլելու։

## ԺԱ. ԵՐԿԻՆՔԻ ՎՐԱՅ ։

Յայտ. իա, իբ ։

Հ. Դատաստանը լմննալէն ետքը՝ Արդարները ո՞ւր կ'երթան ։

Պ. Երկինքը ։

Հ. Ի՞նչպէս տեղ է Երկինքը ։

Պ. Ամենափառաւոր ու երջանիկ տեղ մը ։ Սաղմ. ժզ. 11 ։ Մատթ. իե. 21 ։ Յուդ. 24 ։ Յայտ. իա. իբ ։

Հ. Ո՞վ կը բնակի Երկինքին մէջը ։

Պ. Աստուած ու բարի Հրեշտակները ։

Հ. Հոս մենք դէմ առ դէմ Աստուած պիտի տեսնե՞նք ։

Պ. Հրամմերես ։

Երանի՜ անոնց որ սրտով մաքուր են , ինչու որ անոնք պիտի տեսնեն զԱստուած ։ Մատթ. ե. 8 ։ Գիտենք որ երբ անիկայ յայտնուի , անոր պէս պիտի ըլլանք . վասն զի անիկայ պիտի տեսնանք՝ ինչպէս որ է ։ ա Յովհ. գ. 2 ։

Հ. Երկինքին մէջը մեր ժամանակը ի՞նչպէս պիտի անցունենք ։

Պ. Աստուած օրհնելով և իր կամքը կատարելով ։

Ահա ետքը տեսայ , և ահա մեծ բազմութիւն՝ որն որ մէկը չէր կրնար համրել , բոլոր ազգերէն՝ ու ցեղերէն և ժողովուրդներէն , որոնք աթոռին առջևը ու Գառնուկին առջևը կեցեր էին՝ ճերմակ հանդերձներ հագած , և ձեռքերնին արմաւենիներ բռնած ։ Եւ մեծաձայն կ'աղաղակէին ըսելով . Փրկութիւնը մեր Աստուծոյ՝ որ աթոռին վրայ կը նստի , ու Գառնուկին ։ Եւ բոլոր հրեշտակները աթոռին ու երէցներուն և չորս կենդանիներուն բոլորտիքը կեցեր էին , ու իրենց երեսներուն վրայ աթոռին



առջևը ինկան՝ ու Աստուծոյ երկրպագութիւն ըրին , ըսելով . Ամէն . օրհնութիւն ու փառք և իմաստութիւն ու գոհութիւն և պատիւ ու զօրութիւն և կարողութիւն մեր Աստուծոյն՝ յաւիտեանս յաւիտենից . Ամէն ։ Յայտ. է. 9–12 ։ ժե. 3 ։ իբ. 3 ։

Հ. Յիսուս մեր Փրկիչը պիտի տեսնե՞նք Երկինքը ։

Պ. Հրամմերես , պիտի տեսնենք անիկայ , և գոհութիւն պիտի տանք անոր , և պիտի օրհնենք զինքը բոլոր Իր սիրոյն և փրկութեանը համար ։ Յովհ. ժէ. 4 ։ Կող. գ. 3 , 4 ։ Յայտ. գ. 4 , 5 ։ ե. 9–14 ։

Հ. Ի՞նչ պիտի դրուի մեր գլխուն վրայ ։

Պ. Կենաց պսակը ։

Երանելի է այն մարդը որ փորձութեան կը համբերէ , ինչու որ եթէ փորձուելով ընտիր գտնուի , կենաց պսակը պիտի առնէ , որն որ Տէրը զինքը սիրողներուն խոստացաւ ։ Յակ. ա. 12 ։ Եւ Հովուապետին երևցած ատենը փառաց անթառամ պսակը պիտի ընդունիք ։ Պետ. ե. 4 ։ բ Տիմ. դ. 8 ։ Յայտ. բ. 10 ։ դ. 4–11 ։

Հ. Ի՞նչպէս պիտի զգեստաւորուինք ։

Պ. Արդարութեան ճերմակ հանդերձներովը ։ Յայտ. է. 2–14 ։ ժթ. 8 ։

Հ. Ուրեմն ի՞նչպէս փառաւորեալ պիտի ըլլանք , և մեր Հօրը թագաւորութեանը մէջ լուսաւորուինք ։

Պ. "Արևի պէս" ։ Մատթ. ժգ. 43 ։ ա Կորն. ժե. 49 ։

Հ. Երկինքին մէջ արդարները մէյմըն ալ նեղութիւն պիտի քաշե՞ն ։

Պ. Ոչ . "Ոչ պիտի անօթենան՝ ու ոչ ծարաւին . ոչ ալ արևը՝ կամ մէկ տաքութիւն մը անոնց վրայ պիտի իյնայ . վասն զի գառնուկը որ աթոռին մէջն է , պիտի հովուէ զանոնք , ու կենդանի ջուրերու աղբիւրները պիտի

առաջնորդէ զանոնք . և Աստուած բոլոր արցունքները պիտի սրբէ անոնց աչքերէն '' : Յայտ . է . 16 , 17 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը իրենց արցունքներուն վրայով :

Պ . '' Եւ ինքը անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ , ու ալ մահ պիտի չըլլայ , ոչ սուգ՝ և ոչ աղաղակ , և ոչ ցաւ պիտի ըլլայ ասկէ ետև . ինչու որ առջի բաները անցան '' : Յայտ . իա . 4 :

Հ . Արդարները գիտութիւնով , և սրբութիւնով ու երջանկութիւնով պիտի աճի՞ն յաւիտեանս յաւիտենից :

Պ . Հրամերես . քանզի Երկինքն իրենց յաւիտենական բնակարանը պիտի ըլլայ և միշտ պիտի աճին ամէն բարիքներով : Մատթ . իե . 46 : Յովհ . ժդ . 2 , 3 :

Հ . Բոլոր ուրիշ տեղերէն աւելի՝ ո՞ր տեղը երթալու պարտինք փափաքիլ ու ջանալ :

Պ . Երկինք : Մատթ . զ . 33 :

Հ . Ո՞վ ստացաւ Երկինքը մեզի համար , և պիտի ցուցընէ մեզի հոն երթալու ճամբան :

Պ . Տէր Յիսուսը :

Ուրեմն ե՛ղբայրներ՝ համարձակութիւն ունենալով սուրբ տեղը մտնելու Յիսուսի արիւնովը , ան նոր ու կենդանի ճամբովը՝ որ բացաւ մեզի վարագուրին մէջէն՝ որ է իր մարմինը : Եբր . ժ . 19 , 20 : Յովհ . ժդ . 1-6 : Ժ . 27 , 30 : ժէ . 2 :

Հ . Ո՞ր մարդիկները յաւիտեան Աստուծոյ Թագաւորութիւնը պիտի չժառանգեն :

Պ . '' Ոչ պոռնիկները՝ ո՛չ կռապաշտները՝ ո՛չ շնացողները , ո՛չ իգացեալները՝ ո՛չ արուագէտները՝ ո՛չ գողերը՝ ո՛չ ագահները՝ ո՛չ գինովները՝ ո՛չ նախատողները – ո՛չ յափշտակողները՝ Աստուծոյ Թագաւորութիւնը պիտի չըժառանգեն : ա Կորնթ . զ . 9 :



Դատաստանէն ետքը՝ Արդարները Երկինքը կը մտնեն :

Ա . Այն Թագաւորութիւնը՝ որն որ Աստուած աշխարհիս սկիզբէն պատրաստեց անոնց համար , Երկինքն է . որ հոն հաստատեց իր Աթոռը : Այն է այն մեծ ու գեղեցիկ Քաղաքը , նոր Երուսաղէմը , որուն շինողը և ստեղծողն Աստուած է , և որ յաւիտենական հիմեր ունի : Հո՛ն Որդւոյն Աստուծոյ Հօրը տանը մէջը հանգստութեան շատ բնակարաններ կան , որոնք որ Յիսուս ինքը պատրաստեց անոնց համար՝ որ զինքը կը սիրեն : '' Այն Քաղաքը արևի ու լուսնի պէտք չունի , որ զանիկայ լուսաւորեն . ինչու որ Աստուծոյ փառքը կը լուսաւորէ զանիկայ . ու անոր ճրագը Գառնուկն է '' : Աստուծոյ խիստ փափկութեան դրախտը Երկինքն է , ուր որ ինքը կը բնակի և իր փառքը կը յայտնէ , և կը հաղորդակցի դէմ առ դէմ օրհնեալ բնակիչներուն հետ . իր '' Երեսին առջին լեցուն ուրախութիւն կայ . իր աջ կողմը միշտ հաճութիւններ կան '' : Աչք չտեսաւ , ականջ չլսեց , ոչ ալ մարդու սիրտ ինկաւ աս տեղին յաւիտենական փառքերը :

Բ . Աստուծոյ ժողովուրդին համար մնայուն հանգստութիւն մը կայ Երկինքին մէջը : Պէտք չէ որ աշխարհը սիրենք : Պէտք չէ որ միշտ հոս բնակելու փափաքինք . ինչու որ ասանկ շատ աշխարհներ կ'արժէ Երկինքը : Հոն դիզենք մեր գանձերը . հոն հաստատենք մեր յօժարութիւնները (ա) :

Մեր աչքերը աս աշխարհիս վրայ հաստատելնուս համար , Երկինքը կը կորսնցունենք : Պէտք չէ որ մեր ճամբուն վրայէն մինչև հոն մեր քաշած նախատինքը , հա-

---

ա . Մի՛ սիրէք աշխարհս , ոչ ալ ինչ որ աշխարհիս մէջ է : Թէ որ մէկը աշխարհը կը սիրէ , անոր ներսիդին Հօրը սէրը չկայ . քանզի ամէն բան որ աշխարհի մէջ է , մարմնոյ ցանկութիւնը , ու աչաց ցանկութիւնը և կենաքիս ամբարտաւանութիւնը , Հօրմէն չէ՛ , հապա աշխարհէս է : ա Յովհ . բ . 15 , 16 : Հապա ձեզի գանձեր դիզեցէք երկինքը , ուր որ ո՛չ ցեցը և ո՛չ ժանկը կ'ապականէ , ու ո՛չ գողերը պատ կը ծակեն և կը գողնան : Մատթ . զ . 20 :

լածանքը և տառապանքը մեծ բան մը սեպէնք : "Վասն զի ես այսպէս կը դատեմ՝ որ աս ժամանակիս չարչարանքները բան մը չեն գալու փառքին քովը, որ մեզի պիտի յայտնուի" : Հռովմ. Ը. 17, 18 : Մատթ. Ե. 10–12 : Բ Կորնթ. Դ. 16–18 : Եբր. ԺԱ. 24–27 :

Պէտք չէ որ տրտմինք աս աշխարհիս մէջ աշխատութիւն, յուսահատութիւն, նեղութիւն, լաց ու մահ ունենալնուս համար. ինչու որ բոլոր աշխատութիւնները պիտի դադարին ան լուսապայծառ աշխարհքին մէջ՝ ուր որ մենք կ'երթանք. մահը չկրնար մտնել հոն. տրտմութիւնը և հառաչանքը հեռու պիտի մնան անկից, և յաւիտենական ուրախութիւնը պիտի ըլլայ մեր բաժինը : Յայտ. Է. 14–17 : ԻԱ. 3, 4 : Հոգ չէ թէ որ քիչ մը ատեն կը հառաչենք կերպ կերպ փորձութիւններով. ինչու որ մենք պիտի պտըտինք պայծառութեան մէջ Աստուծոյ Գառին հետ, և սուրբ պիտի ըլլանք ինչպէս որ ինքը սուրբ է. և անոնք միայն պիտի մտնեն քաղաքին դռներէն՝ որոնք որ իր պատուիրանքները կը կատարեն : Ուրեմն աշխատինք հանգստութեան մէջ մտնելու. մեր բոլոր ցաւերուն և նեղութիւններուն արժէքը Երկինքն է : Երկինքին յոյսը մեր ուրախութիւնը և մխիթարութիւնն է ասկէ ետև. հոն պիտի զարդանանք մենք յաւիտենական սրբութեան ու երջանկութեան մէջ :

Գ. Յիսուս Քրիստոս ստացաւ Երկինքը մեզի համար. մենք Երկինքը կը մտնենք իր արժանաւորութեանը պատճառաւ, որուն ըլլայ բոլոր փառքերը : Յայտ. Գ. 5, 12, 21 : Ե. 9–14 : ԻԱ. 27 :

Դ. Թէ որ պատրաստ ենք երկինքին համար, պէտք չէ որ մեռնելէն վախնանք. և երբոր արդարները մեռնին՝ թէ՛ ծեր ըլլան անոնք՝ թէ՛ պատանի, մենք պէտք չէ որ լանք այնպէս՝ իբր թէ մահը վնաս մը եղաւ անոնց. վասն զի մահը՝ իրենց մէկ մեծ ստացուած մըն է : Ո՛չ ալ անոնց վրայ տրտմելով ըսենք, երանի՜ թէ չմեռնէին. անոնք մեծապէս երջանիկ են. ինչու որ Քրիստոսի հետ երկինքին մէջն են :

Ե. Երկինքը սուրբ տեղ մըն է, և Աստուծոյ բնակարանը. անոր համար մէկը չկրնար վայելել երկինքը բաց 'ի



անոնցմէ՝ որոնք որ սուրբ են՝ ու Աստուծով կ'ուրախանան (ա) : Չարերը յաւիտեան դուրս ձգուած են : Սաղմ. Ե. 4, 5 : Թող ամէն մէկը քննէ ինքզինքը թէ արդեօք Երկինքին համար պատրաստ է, թէ չէ (բ) :

---

## ԺԲ. ԴԺՈԽՔԻՆ ՎՐԱՅ

Ղուկ. ԺԶ. 19–21 :

Հ. Չարերը ո՞ւր պիտի ձգուին :

Պ. Դժոխքը :

Ամբարիշտները Դժոխքը պիտի դառնան, և ամէն ազգերը՝ որ զԱստուած կը մոռնան : Սաղմ. Թ. 17 : Յայտ. ԻԱ. 8 :

Հ. Ի՞նչպէս տեղ մըն է Դժոխքը :

Պ. Ահագին տանջանքներու տեղ մըն է : Մարկ. Թ. 43–48 : Մատթ. ԺԳ. 40–42 :

Հ. Ինչո՞վ պիտի վառի :

Պ. Յաւիտենական կրակով : Մատթ. ԻԵ. 41 : Մարկ. Թ. 43–48 : Ղուկ. Գ. 17 : Յուդ. 7 :

Հ. Չարերէն զատ որո՞նք Դժոխքը պիտի ձգուին :

Պ. Սատանան և իր հրեշտակները :

Մէկ դի գացէ՛ք ինծմէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը, որ պատրաստուած է սատանային՝ և իր

---

ա. Խաղաղութեան ետևէ եղի՛ք ամենուն հետ՝ և սրբութեան, որ առանց ատոր՝ մէկը պիտի չտեսնէ Տէրը : Եբր. ԺԲ. 14 :

բ. Փորձեցէ՛ք ձեր անձերը՝ թէ հաւատքին մէ՞ջն էք. քննեցէ՛ք ձեր անձերը. չէ՞ք գիտեր ինքզինքնիդ, որ Յիսուս Քրիստոս ձեր մէջն է. միայն թէ որ խոտելի չըլլաք : Բ Կորնթ. ԺԳ. 5 :

հրեշտակներուն ։ Մատթ. ԻԵ. 41 ։ Վասն զի թէ որ Աստուած մեղք գործող հրեշտակներուն չխնայեց, հապա խաւարի կապերով տարտարոսը ձգած դատաստանի պահել տուաւ, և այլն ։ Բ Պետ. Բ. 4 ։

Հ. Դժոխքին տանջանքները ի՞նչ ընել պիտի տան չարերուն ։

Պ. Լալ ու հեծել և իրենց ակռաները կրճտացունել ։ Մատթ. Ը. 12 ։ ԺԳ. 40–42 ։ ԻԲ. 13 ։

Հ. Ի՞նչ խնդրեց մեծատունը երբոր տանջանքներուն բոցովը կը տանջուէր ։

Պ. Իր լեզուն զովացունելու համար կաթիլ մը ջուր ։ Ղուկ. ԺԶ. 24 ։

Հ. Չարերը Դժոխքին մէջը օգնութիւն կամ մխիթարութիւն պիտի ունենա՞ն ։

Պ. Ոչ՛ ։

Նաև ասոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը ։ Մատթ. ԻԵ. 46 ։ Մարկ. Թ. 43–48 ։

Հ. Բնաւ անոնք Դժոխքէն դուրս պիտի ելլե՞ն ։

Պ. Ամենևին պիտի չելլեն, հապա Աստուծոյ բարկութիւնը անոնց վրայ պիտի մնայ ։ Յովհ. Գ. 36 ։

Հ. Մէկը կրնա՞յ Երկինքէն Դժոխք երթալ կամ Դժոխքէն Երկինք ։

Պ. Ոչ՛, քանզի Երկինքին ու Դժոխքին մէջ տեղը մեծ անդունդ մը հաստատուած կայ ։ Ղուկ. ԺԶ. 26 ։

Հ. Դժոխքին մէջը չարերուն քաշած պատիժը ի՞նչ կը կոչուի ։

Պ. Յաւիտենական պատիժ ։

Հ. Աս պատիժը զղջալ ու ապաշխարել կու տա՞յ անոնց ։

Պ. Ոչ՛ ։



Ան որ անիրաւութիւն կ'ընէ՝ ալ անիրաւութիւն թող ընէ. ու ա՛ն որ աղտոտ է՝ ալ աղտոտ ըլլայ ։ Յայտ. ԻԲ. 11 ։

Հ. Պօղոս Առաքեալ ի՞նչ կ'ըսէ ասոր վրայով ։

Պ. “Սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը” ։ Եբր. Ժ. 31 ։

Հ. Աստուած չարերուն ի՞նչ պիտի ըլլայ ։

Պ. “Մաշող կրակ” ։ Եբր. ԺԲ. 29 ։

Հ. Ամէն ուրիշ բաներէն աւելի՝ ո՞ւրկից վախնալու ենք՝ և փախչելու ջանալու ենք ։

Պ. Դժոխքէն ։ Մատթ. Ժ. 28 ։

Հ. Աստուած կ'ուզէ՞ որ մեզմէ մէկը թշուառաբար կորսուի յաւիտեան Դժոխքին մէջը ։

Պ. Ոչ՛ ։

Իս կենդանի եմ՝ կ'ըսէ Տէր Եհովան, որ ամբարշտին մեռնիլը չեմ ուզեր. հապա որ ամբարիշտը իր ճամբայէն դառնայ ու ապրի ։ Եզեկ. ԼԳ. 11 ։ Տէրը չուշացուներ իր խոստմունքը, ինչպէս ոմանք ուշացուցած կը սեպեն, հապա մեզի երկայնամիտ կ'ըլլայ. ինչու որ չուզեր որ մէկը կորսուի, հապա որ ամէնքը ապաշխարանքի գան ։ Բ Պետ. Գ. 9 ։

Հ. Թէ որ անանկ է, ինչո՞ւ հոն կը խրկուին շատերը ։

Պ. Քանզի կը մեղանչեն իրեն դէմ և կ'արհամարհեն Տէր Յիսուսը ։ Մարկ. ԺԶ. 16 ։ Հռովմ. Բ. 4–10 ։ Բ Թես. Ա. 6–9 ։

---

Դատաստանէն ետքը չարերը Դժոխքը պիտի երթան ։

Ա. Դժոխքը երկինքին խիստ հակառակ տեղ մըն է. անոր ու երկինքին մէջ տեղը մեծ անդունդ մը կայ հաստատուած, որուն վրայէն մէկը չկրնար անցնիլ ։ Դժոխքը

անդնդային փոսն է, ուր մթութիւնը և խաւարն ու սոսկումը կը թագաւորէ։ Կրակի ու ծծումբի լիճ մըն է յաւիտեան վառած. հոն ձգուած են ամէն կերպ չարերը, և հոն յաւիտենական անարգանքով ծածկուած կը մաշին. հոն բարկութեան տակ ինկած պիտի կորսուին և պիտի անիծուին Աստուծմէ, և պիտի լան ու հեծեն և կճրտցունեն իրենց ակռաները տանջանքով յաւիտեանս յաւիտենից՝ բնաւ մխիթարութիւն մը չգտնելով։

Բ. Աստուած իր անհուն արդարութիւնովը պատրաստեց այն տեղը, մինչև վերջը անզեղջ մնացողներուն համար, թէ՛ ծեր ըլլան անոնք՝ թէ՛ պատանի։ Ինչպէս որ ինքն արդարները կը վարձատրէ, նմանկ ալ չարերը կը պատժէ։ Մէկին վարձքը և միւսին պատիժը՝ երկուքն ալ յաւիտենական պիտի ըլլան։ Մարդոց լեզուն չկրնար պատմել յաւիտենական կորուստին վայերը և տագնապները. Աստուած հուր ծախիչ է իր թշնամիներուն։

Գ. Այս սոսկալի տանջանքներուն տեղը կը ցուցնէ Աստուծոյ մեղքին դէմ բարկանալը, և մեղքին Աստուծմէ ինչ պատիժի արժանաւոր ըլլալը։ Մեղքը Աստուծոյ անհուն կարողութեանը և մեծութեանը դէմ յանցանք մըն է։ Ինքը կ՚ատէ մեղքը. մեղքը խաղալիկ չէ՛։ Անիկայ՝ որ կը բարկացունէ Աստուած՝ մեծապէս անարգ ու անպիտան է։ Մեղաւորները թէև հիմա թեթևութեամբ մեղք կը գործեն, բայց աս պատճառով՝ ետքը պիտի վառին լիճին մէջը և պիտի լան ու հեծեն յաւիտեան, թէ որ չապաշխարեն։

Դ. Թէ որ Դժոխքը պիտի ըլլայ վայերուն տեղը և չարերուն բաժինը, ուրեմն ձեր մեղքին մէջ մնալով ու այնպէս մեռնելով՝ մեծ անիրաւութիւն ու մեծ չարութիւն կ՚ընէք ձեր անձին. ինչու որ ձեր հոգին կը կորսուի և կորուստն ալ յաւիտենական է։

Ե. Ուրեմն ի՜նչ յիմարութիւն ու անխելքութիւն կայ մեղքին մէջը։ Ի՞նչու մեղքի մէջ շարունակենք, որ բարի անունը կ՚ապականէ և հոգին կը կորսնցունէ, և վերջապէս անոր թոշակը մահ է։ Ի՜նչպէս անցաւոր են անոր հեշտութիւնները և ի՜նչպէս անանցանելի են անոր վիշտերը։ Մատթ. ժը. 8։



Զ. Աստուած ողորմածութեամբ զգուշացուց չարերը իրենց սոսկալի վախճանէն։ Ինքը չուզեր որ անոնք կորսուին, հապա որ ապաշխարեն և իր Որդիին հաւատան ու ապրին։ Անոր համար ինքը շատ երկայնամիտ կ՚ըլլայ անոնց։ Ուստի թող չարերը դառնան իրենց չար ճամբէն ու ապրին։ Թէ որ անոնք կորսուին, յանցանքը միայն իրենցն է։

Է. Որովհետև չարերը ասանկ յաւիտենական կործանման վտանգին մէջն են, բոլոր քահանաներուն, վարժապետներուն և ծնողքներուն կ՚իյնայ իրենց ժողովուրդը, աշակերտները և տղաքները ստիպել, և անոնց թախանձել, որ փնտռեն Տէրը քանի՛ որ կրնան գտնել անիկայ։ Պէտք է որ աս վախճանին համար իրենց բոլոր զօրութիւնովն աշխատին, և աղօթեն Սուրբ Հոգիին որ յաջողէ իրենց աշխատանքը։

Ը. Պէտք է որ միշտ գթութեամբ յիշենք աս աշխարհի մէջ մեր մոլինաւոր ընկերները, որոնք փրկութեան ճամբուն վրայով տեղեկութիւն չունին, ու անհոգ ըլլալով աս բանին վրայ՝ կը մեռնին ամէն օր ու Դժոխքը կ՚իյնեն։ Խրկենք անոնց սուրբ Աւետարանը, և աղօթենք Տէրոջը որ իր հաւատարիմ պաշտօնեաները խրկէ աս Աւետարանը անոնց քարոզելու, որ փրկուին։

## ՄԱՍՆ Դ

## ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ ՎՐԱՅ

---

### ա. ՕՐԷՆՔԸ ՏՐՈՒԵԼՈՒՆ ՎՐԱՅ :

Ելից ԺԹ. և Ի Գլուխ :

Հ. Աստուած ի՞նչ յատուկ Օրէնքներ կամ Պատուիրանքներ տուաւ՝ մեր պարտաւորութիւնը մեզի սորվեցնելու համար :

Պ. Տասը Պատուիրանքները :

Ու տախտակներուն վրայ՝ առջի գրուածքին պէս՝ ան տասը խօսքերը գրեց, որոնք Տէրը ձեզի լեռան վրայ կրակին մէջէն խօսեցաւ ժողովքին օրը : Բ Օրէն. Ժ. 4 :

Հ. Ո՞վ էր ան երեւելի ու բարի մարդը որ ընդունեց աս Տասը Պատուիրանքներն Աստուծոյ ձեռքէն :

Պ. Մովսէս :

Հ. Աստուած ի՞նչ բանի վրայ գրեց անոնք :

Պ. "Երկու քարէ Տախտակներու վրայ" : Ելից ԼԱ. 18 :

Հ. Ան Տախտակները ինչի՞ մէջ պահել պատուիրեց Աստուած Մովսէսին :

Պ. Տապանակի այսինքն Սնտուկի մէջ : Ելից ԻԵ. 10–22 :

Հ. Տէրը ի՞ր ժողովուրդին տուաւ աս Պատուիրանք-

ները, որ իրենց ու մեզի՝ և ամէն մարդոց համար պահուին ։

Պ. Հրէաներուն ։

Հ. Երբոր Աստուած՝ աս Պատուիրանքները գրեց ու Մովսէսին տուաւ, Ինքը լեռան վրայ որ իջաւ, ի՞նչ էր ան լեռանն անունը ։

Պ. Սինայ ։ Ելք ժԹ. 9–20 ։

Հ. Հրէից ժողովուրդը ո՞ւր կայնեցաւ ։

Պ. Լեռանը տակը ։ Ելք ժԹ. 17 ։

Հ. Երբոր Տէրը Սինայ լեռանը գագաթն իջաւ՝ ի՞նչ եղաւ ։

Պ. “Որոտումներ ու կայծակներ կ՚ըլլային, Թանձր ամպ մը կար լեռանը վրայ, ու խիստ սաստիկ փողի ձայն մը. լեռը բոլորովին կը մխար, ու անոր մուխը՝ հնոցի մուխի պէս կ՚ելլէր, և բոլոր լեռը սաստիկ կը դողար ։ Ելք ժԹ. 16, 18 ։ ի. 18 ։

Հ. Երբոր Մովսէս տեսաւ աս սոսկալի տեսարանը՝ ի՞նչ ըսաւ ։

Պ. Ըսաւ թէ՝ “Սաստիկ կը վախնամ ու կը դողամ” ։ Եբր. ժբ. 21 ։

Հ. Ու ժողովուրդը ո՞ւր գնաց ։

Պ. Անոնք հեռու տեղ մը գացին կայնեցան ։

Հ. Մովսէս դէպ՚ի Թանձր խաւարին մէջը գնաց, ուր որ Աստուած էր ։

Պ. Հրամերես ։ Ելք ի. 21 ։

Հ. Ո՞րչափ ատեն լեռը սպասեց որ Տէրոջմէն Տասը Պատուիրանքները և ուրիշ պատուէրներ ընդունի ։

Պ. “Քառասուն օր ու քառասուն գիշեր” ։ Ելք իդ. 18 ։

Հ. Այսչափ ատենին մէջ բնաւ բան մը կերաւ կամ խմե՞ց ։



Պ. Չէ. Բ Օրին. Թ. 6 ։

Հ. Ո՞վ ողջ առողջ պահեց անիկայ ։

Պ. Աստուած ։

Գրուած է թէ, ոչ միայն հացով կ՚ապրի մարդ, հապա ան ամէն խօսքով՝ որ Աստուծոյ բերնէն կ՚ելլէ ։ Բ Օրին. Ը. 3 ։ Մատթ. Դ. 4 ։

Հ. Երբոր անիկայ լեռնէն վար իջաւ, ի՞նչպէս էր իր երեսը ։

Պ. Կը լուսափայլէր ։ Ելք լԴ. 29–35 ։

Հ. Մովսէս ի՞նչ կը ձգէր իր երեսին վրայ ան լոյսին պատճառովը ։

Պ. Ծածկոց մը ։ Բ Կորնթ. Գ. 13 ։

Հ. Քանի՞ տարի առաջ աս Պատուիրանքները Մովսէսին տրուեցան ։

Պ. Փրկչին Թուականէն հազար հինգ հարիւր տարիի չափ առաջ ։

---

Աստուած իր ողորմութիւնովը չթողուց մեզ որ ինքիրեննիս քննելով սորվինք մեր պարտաւորութիւնը. քանզի մարդս իր տգիտութեանը և մեղքին մէջը՝ չկրնար և չուզեր ընել աս բանը ։ Ուստի Աստուած մեզի յայտնեց իր կամքը՝ տալով մեզի Տասը Պատուիրանքը որ շատ կարճ են, անանկ որ՝ մենք կարենանք դիւրութեամբ միտքերնիս բերել անոնք. և բոլորովին կատարեալ են. որ եթէ մենք զգուշութեամբ հետևինք և ուղղութեամբ հասկընանք անոնք՝ պիտի գիտնանք մեր բոլոր պարտաւորութիւնները թէ՛ Աստուծոյ և թէ՛ մարդոց վերաբերեալ ։

Ա. Բոլոր աշխարհի Ստեղծիչը և Տէրը՝ Աստուած է ։ Ինքը գերագոյն իշխանութիւն ունի իր բոլոր իմաստուն արարածներուն վրայ ։ Ինքն է օրէնսդիրը, և մենք պարտաւոր ենք միշտ զինքը սիրելու և իրեն հնազանդելու ։

Բ. Իր Պատուիրանքները տուաւ ան երևելի ու ահա-

գին կերպովը, որ ամէնքն ալ վախնան ու միտ դնեն և հնազանդին անոնց :

Դ. Թէ որ Օրէնքը տալու համար՝ իր վար իջնելուն միայն տեսնելը և լսելը այսչափ ահագին էր և ասանկ վախով լեցուց ժողովուրդը, ուրեմն ի՞նչ պիտի ըլլայ մեզի թէ որ ատ Օրէնքը չպահենք, ու Աստուած իջնէ մեզ պատժելու :

Դ. Մարդոյս պարտաւորութեան միայն կատարեալ կանոնը՝ Աստուծոյ օրէնքն է : Երկրի վրայ եղած ամէն մարդ և ամէն ազգ՝ Աստուծոյ Օրէնքին կը կարօտին, որ գիտնան թէ ո՛րն է շիտակ և ո՛րն է սխալ : Իր Օրէնքը սուրբ է՝ արդար ու ճշմարիտ . բռնենք անիկայ մեր պարտաւորութեան կանոնին պէս և աղօթենք շնորհք ընդունելու համար, որով կարենանք սիրել ու հնազանդիլ անոր : Աշխարհիս վրայ ամենէն երևելի ու փառաւոր մարդը անիկայ է, որ աւելի կը մօտենայ կատարելապէս Օրէնքին հնազանդելու սրտով ու վարքով :

---

## Ը. ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՔՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ :

### Առաջին պատուիրանքը :

Գ Թագ. ԺԸ. 1–40 :

Հ. Ո՞րն է Առաջին Պատուիրանքը :

Պ. “Իմ առջևս ուրիշ աստուածներ չունենաս” :

Հ. Քանի՞ Աստուած կայ :

Պ. Կենդանի ու ճշմարիտ միայն մէկ Աստուած մը կայ :

Հ. Ի՞նչ ըսել կ'ուզէ մեր Տէր Աստուածը, երբոր կ'ըսէ մեզի, որ “Իմ առջևս ուրիշ աստուածներ չունենաս” :

Պ. Ըսել կ'ուզէ որ մեզի Աստուած՝ զինքը ու միայն զինքը պիտի ընդունինք :



Հ. Զինքը ի՞նչպէս սիրել կը պահանջէ մեզմէ :

Պ. “Քու Տէր Աստուածդ՝ բոլոր սրտովդ, բոլոր հոգիովդ ու բոլոր զօրութիւնովդ սիրես” : Բ Օրին. Զ. 4, 5 : Մատթ. ԻԲ. 35–38 :

Հ. Ի՞նչ կ'ըսէ ասոր վրայով Սուրբ Գիրքը :

Պ. “Քու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես, ու միայն Անիկայ պաշտես” : Բ Օրին. Զ. 13 : Մատթ. Դ. 10 :

Հ. Որո՞ւ յուսալու ենք :

Պ. “Քու բոլոր սրտովդ Տէրոջը ապաւինէ” : Առակ. Գ. 5 : Սաղմ. ԼԱ. 19 :

Հ. Դիցուք թէ մենք Աստուծմէ աւելի ինքզինքնիս սիրենք ու ինքզինքնուս ապաւինինք, կամ ուրիշ մարդու մը, կամ հարստութեան, կամ մարմնաւոր զուարճութեան կամ ինչ և իցէ բանի մը . աս պատուիրանքը չե՞նք անարգեր :

Պ. Հրամմերես :

Լաւ է Տէրոջը յուսալ, քան թէ մարդոց ապաւինիլ : Լաւ է Տէրոջը յուսալ, քան թէ իշխաններուն ապաւինիլ : Սաղմ. ՃԺԸ. 8, 9 : Աս աշխարհիս մէջ հարուստ եղողներուն պատուէր տուր՝ որ չհպարտանան, և անստոյգ հարստութեան վրայ յոյսերնին չդնեն, հապա կենդանի Աստուծոյ վրայ՝ որ ամէն բանը մեզի առատօրէն կու տայ վայելելու : Ա Տիմ. Զ. 17 : Տէրը այսպէս կ'ըսէ . Անիծեալ ըլլայ ան մարդը՝ որ մարդու կ'ապաւինի, ու մարմինը իրեն բազուկ կ'ընէ, և իր սիրտը Տէրոջմէ կը խոտորի : Երեմ. ԺԷ. 5 :

Հ. Ի՞նչ կ'ըսէ Քրիստոս, Աստուծոյ ու մամոնայի ծառայութիւն ընելու վրայով :

Պ. “Մարդ մը չկրնար երկու տէրոջ ծառայութիւն ընել . ինչու որ կամ մէկը պիտի ատէ և միւսը սիրէ,

կամ մէկը պիտի մեծարէ և միւսը արհամարհէ . չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնայի» : Մատթ. Զ. 24 : Ժ. 27–39 :

Հ. Ի՞նչ կերպով ծառայութիւն ընելու է Աստուծոյ :

Պ. «Արդ՝ թէ ուտէք՝ թէ խմէք՝ և թէ ի՛նչ գործ որ ընէք, ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք» : Ա Կորնթ. Ժ. 31 : Կող. Գ. 17 : Ա Պետ. Դ. 11 :

Հ. Աստուծոյ ծառայութիւն ընելու վրայով ի՞նչ հաստատուն միտք ունէր Յեսու :

Պ. «Բայց ես ու իմ տունս Եհովան պիտի պաշտենք» : Յես. ԻԴ. 15 :

Հ. Ի՞նչ ըսաւ Դաւիթ իր Սողոմոն որդւոյն Տէրը խնդրելուն վրայով :

Պ. «Թէ որ զանիկայ փնտռես, պիտի գտնես, և թէ որ զանիկայ թողուս, ան ալ քեզ յաւիտեան պիտի մերժէ» : Ա Մնաց. ԻԸ. 9 :

---

Առաջին Պատուիրանքը կ'իմացունէ մեզի՝ թէ միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Աստուած կայ . և կը պահանջէ մեզմէ՝ որ զինքը ճանչնանք, և միայն զինքը մեզի Աստուած ընդունինք : Աս պատուիրանքէն կը կախուի բոլոր մէկալներուն հաստատութիւնը :

Ա. Անոր համար աս պատուիրանքը կը պահանջէ մեզմէ գիտնալ թէ ի՛նչ՝ և ո՛վ է Աստուած, և ի՛նչ ըրաւ մեզի համար : Աս գիտութիւնը մենք յատկապէս Սուրբ Գիրքէն կը ստանանք . նաև կը պահանջէ մեզմէ զինքը սիրել բոլոր սրտով և մտքով և զօրութիւնով, և հնազանդիլ իրեն խօսքով ալ՝ ու գործքով ալ, առանց կեղծաւորութեան կամ ամչնալու, ամէն բանի մէջ, ամէն տեղ, և ամէն ժամանակ, և ամէն պարագաներու մէջ : Մենք պարտինք զինքը ընտրել մեզի՝ և մեր տանը համար Աստուած, ինչպէս որ Յեսու ըրաւ : Մեր գլխաւոր երջան-



կութիւնը իրեն երկրպագութեան և իր պաշտօնին մէջ պարտինք գտնել : Աստուած պիտի ըլլայ մեզի մեր ամէնը, և մեր հոգիներուն բաժինը հիմա՝ և յաւիտեանս յաւիտենից :

Բ. Աս Պատուիրանքը չեն պահեր նախ անոնք՝ որ կ'ըսեն թէ Աստուած չկայ : Երկրորդ՝ որ անհոգ են ու Աստուծոյ վրայով չեն ուզեր տեղեկանալ : Երրորդ՝ որ կը ճանչնան Աստուած, բայց չեն սիրեր զինքը, ոչ ալ իրեն Աստուծոյ պէս կը ծառայեն : Աս կերպով է որ քրիստոնէից մէջը շատ մարդիկ թէ՛ ծեր՝ ու թէ՛ պատանի՝ կ'անարգեն աս Պատուիրանքը և ինքզինքնին յաւիտենական բարկութեան տակը կը ձգեն : Չորրորդ՝ որ ուրիշ Աստուած մը իրենց կը ձևացընեն թէ՛ հեթանոսներուն պէս կուռք մը շինելով, և թէ՛ իրենց մտքին մէջը անանկ գաղափար ունենալով Աստուծոյ վրայ՝ որն որ Սուրբ Գիրքը չսորվեցուներ : Հինգերորդ՝ որ հրեշտակներուն, սուրբերուն կամ դևերուն կ'ապաւինին ու կ'աղօթեն : Վեցերորդ՝ մահկանացու մարդիկներուն, ինչպէս մոգերուն՝ կախարդներուն՝ երազ մեկնողներուն ու բաղդ նայողներուն կը հաւատան ու կ'ապաւինին՝ Աստուծոյ գիտութիւնը և զօրութիւնը ունեցողներու պէս . և կ'երթան անոնց՝ որ գալու բաները իրենց իմացունեն, կամ դեղատուութիւն ընեն իրենց՝ չարի կամ բարիի համար, և ուրիշ ասոր նման բաներ : Եւ վերջապէս՝ որ կը սիրեն ինչ և իցէ բան մը, և կը ծառայեն ո և իցէ բանի մը Աստուծմէ աւելի : Եզեկ. ԻԱ. 18 : Ղևտ. Ի. 27 : Ա Թագ. ԻԸ գլուխ :

Գ. Թող ամէն մէկերնիս իր սիրտը քննէ ու հարցունէ թէ Եհովայ ճշմարիտ Աստուծմէ ՚ի զատ ուրիշ Աստուածներ ունի՞ . իր բոլոր սրտովը, մտքովը եւ զօրութիւնովն անիկայ կը սիրէ՞ . ճշմարտապէս կը փափաքի՞ ու ժրութեամբ կ'աշխատի՞ անոր փառքին համար ապրելու և անիկայ վայելելու՝ թէ՛ աս աշխարհիս մէջ և թէ՛ հանդերձեալին : Բ Մնաց. ԺԵ. 2 :

Երկրորդ պատուիրանքը ։

Դանիէլ. Գ . 1–30 ։

Հ . Ո՞րն է Երկրորդ Պատուիրանքը ։

Պ . "Դուն քեզի կուռք չշինես , ո՛չ ալ վերը երկինքի մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրէն տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը ։ Անոնց երկրպագութիւն չընես , ու զանոնք չպաշտես . քանզի ես քու Տէր Աստուածդ՝ նախանձոտ Աստուած եմ որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչեւ անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ զիս կ'ատեն . Եւ կ'ողորմիմ անոնց մինչեւ հազար ազգը՝ որ զիս կը սիրեն ու իմ պատուիրանքներս կը պահեն ։

Հ . Բնաւ մէկը Աստուած տեսա՞ծ է ։

Պ . Ո՛չ ։

Եւ Տէրը կրակին մէջէն ձեզի խօսեցաւ . դուք անոր խօսքերուն ձայնը լսեցիք . ու նմանութիւն մը չտեսաք բայց միայն ձայն լսեցիք ։ Ուրեմն ձեր հոգիներուն աղէկ զգուշութիւն ըրէք . որովհետեւ այն օրը որ Տէրը Քորեբ լեռը կրակին մէջէն ձեզի խօսեցաւ , բնաւ նմանութիւն մը չտեսաք ։ Բ Օրէն . Դ . 12 , 15 ։ Մէկը երբեք զԱստուած տեսած չէ , բայց միածին Որդին՝ որ Հօրը ծոցն է , անիկայ պատմեց ։ Յովհ . Ա . 18 ։

Հ . Ուրեմն կրնա՞նք գիտնալ թէ Աստուած ինչ կերպարանք ունի , կամ կրնա՞նք փայտէն՝ քարէն՝ ոսկիէն և արծաթէն բան մը շինել իրեն նմանութեամբը ։

Պ . Ո՛չ ։

Ուստի՝ որովհետեւ Աստուծոյ ցեղէն ենք՝ պէտք չէ որ անանկ սեպենք թէ Աստուածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի կամ քարի , որ մարդուս վարպետութիւ-



նովն ու խելքովը քանդակուած է ։ Գործ . ԺԷ . 29 ։ Եսայ . Խ . 1–31 ։

Հ . Ուրեմն աս Պատուիրանքով Աստուած ի՞նչ կ'արգիլէ ։

Պ . Բոլորովին մեզ կ'արգիլէ բան մը շինելէն՝ Աստուծոյ նմանութիւնով ։

Հ . Եւ անկէց զատ ի՞նչ բան կ'արգիլէ Աստուած երկրորդ Պատուիրանքին մէջ ։

Պ . Կ'արգիլէ երկինքին՝ կամ երկրի՝ և կամ ջուրի մէջ եղած արարածներուն մէկին նման բան շինելը , ու անոր առջին երկրպագութիւն ընելը՝ Աստուծոյ երկրպագութիւն ընելու պէս ։

Հ . Ուստի պատկերներուն ու արձաններուն երկրպագութիւն ընելը՝ աս Պատուիրանքը կ'արգիլէ՞ ։

Պ . Հրամմերես , անշուշտ կ'արգիլէ ։

Հ . Աս Պատուիրանքն արդեօք մեզի չի՞ սորվեցըներ որ մենք Աստուծոյ երկրպագութիւն ընելու ենք , պարզ՝ անզարդ ու հոգևոր կերպով մը , ինչպէս որ կը վայլէ Հոգիի մը՝ որ մենք չենք տեսներ , և միայն աս գիտենք որ մեծ ու բարի է , ու ամէն տեղ ներկայ է ։

Պ . Հրամմերես , և միայն անանկ մէկ երկրպագութիւն մը կը վայլէ մեզի որ ընենք Աստուծոյ՝ ու անոր ալ կը վայլէ որ ընդունի մեզմէ ։

Հ . Ի՞նչ կը կոչուին այն մարդիկը՝ որ ճշմարիտ Աստուածը չեն ճանչնար , ու երկնից՝ երկրի՝ կամ ջուրին մէջ եղած բաներուն նմանութիւնը կը շինեն , ու անոնց երկրպագութիւն կ'ընեն և կը ծառայեն՝ իրենց Աստուածներուն պէս ։

Պ . Անոնք Հեթանոս կ'ըսուին ։ Հռովմ . Ա . 21–32 ։

Հ . Աշխարհիս մէջ շատ հեթանոս ազգեր կա՞ն ։

Պ. Այո՛, անոնց թիւը կը հասնի մինչեւ վեց հարիւր միլիոնի :

Հ. Սուրբ Գիրքը ի՞նչ անուն կու տայ՝ անոնց փայտեղէն ու քարեղէն չաստուածներուն :

Պ. Կուռք կ՚անուանէ :

Հ. Այս կուռքերուն պաշտօն մատուցանողին ի՞նչ անուն կու տայ :

Պ. Կռապաշտ :

Հ. Կռապաշտները կրնա՞ն Երկինք երթալ :

Պ. Ոչ :

Չէ՞ք գիտեր որ, . . . . ոչ կռապաշտները՝ ոչ շնացողները, ոչ իգացեալները՝ ոչ արուագէտները՝ ոչ գողերը՝ ոչ ագահները՝ ոչ գինովները՝ ոչ նախատողները՝ ու ոչ յափշտակողները՝ Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն : Ա Կորնթ. Զ. 9–10 : Բայց վախկոտներուն ու անհաւատներուն՝ պիղծերուն՝ ու մարդասպաններուն՝ ու պոռնիկներուն եւ կախարդներուն ու կռապաշտներուն՝ եւ բոլոր ստախօսներուն բաժինը կրակով ու ծծումբով վառած լիճին մէջը պիտի ըլլայ որ է երկրորդ մահը : Յայտ. ԻԱ. 8 :

Հ. Թէ որ մարդիկ աս Պատուիրանքը չպահեն, Աստուած որո՞ն վրայ պիտի հատուցանէ իրեն անօրէնութիւնը :

Պ. Իրենց վրայ եւ իրենց որդւոցը վրայ մինչեւ անոնց երրորդ ու չորրորդ ազգը :

Հ. Իսկ ի՞նչ պիտի ցուցընէ Աստուած անոնց մինչեւ հազար ազգը, որ զինքը կը սիրեն եւ իր պատուիրանքները կը պահեն :

Պ. "Ողորմութիւն" :

Հ. Աս պատուիրանքին մէջ Տէրը ի՞նչ ըսել կ՚ուզէ, երբոր կ՚ըսէ թէ՝ "Ես քու Տէր Աստուածդ նախանձոտ Աստուած եմ" :



Պ. Ան ըսել կ՚ուզէ որ ինքը պիտի չթողու մեզ որ իրմէն զատ ուրիշ Աստուած մը ունենանք :

Ես Եհովայ եմ. իմ անունս աս է. ու իմ փառքս ուրիշի չեմ տար, ոչ ալ իմ պատիւս կուռքերուն : Եսայ. ԽԲ. 8 : ԽԸ. 11 :

---

Ա. Աս պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ ո՛րն է Աստուծոյ մեր ընելու ճշմարիտ երկրպագութիւնը, եւ ի՛նչ ձեւով կ՚ըլլայ աս երկրպագութիւնը : Մենք երկրպագութիւն ընելու ենք Աստուծոյ անկեղծութեամբ, յարգութեամբ եւ խոնարհութեամբ իբրեւ Հոգիի մը՝ որ մեր մարմնաւոր աչքին անտեսանելի է. բայց մեծ ու բարի է եւ ամէն տեղ ներկայ է :

Բ. Մենք կ՚անարգենք աս պատուիրանքը նախ՝ երբոր Աստուծոյ նմանութիւնը կը ձեւացընենք, կամ աներեւոյթ կերպով մեր երեւակայութեանը մէջ, եւ կամ արտաքին կերպով ձեռագործ բաներու մէջ : Երկրորդ՝ երբոր կը շինենք վերը երկինքին մէջ, կամ վարը երկրի մէջ, կամ երկրի տակը ջուրի մէջ եղող ո՛ եւ իցէ արարածի մը նմանութիւնը կամ պատկերը, կա՛մ անոր երկրպագութիւն ընելու համար եւ կամ անոր միջոցաւ Աստուծոյ երկրպագութիւն ընելու : Աստուած Հոգի ըլլալով՝ անոր պաշտօնին նուիրուած շէնքերը պէտք է որ աս տեսակ բաներէն բոլորովին ազատ ըլլան : Իսկ թէ՛ ներսի կողմը, եւ թէ՛ դուրսի կողմը՝ անոնց գեղեցկութիւնն ալ պէտք է որ պարզ ու անզարդ ըլլայ :

Գ. Սէրը եւ հնազանդութիւնն իրարու հետ կապուած են. թէ որ մենք Աստուած սիրենք, պիտի պահենք իր պատուիրանքները (ա) :

---

ա. Թէ որ զիս կը սիրէք՝ իմ պատուիրանքներս պա-

Դ. Անոնք կ'ատեն Աստուած, որ կուռքերու երկրպագութիւն կ'ընեն, և ճշմարիտ Աստուածը ճանչնալ չուզելով, սուտ աստուածներ կը շինեն իրենց։ Սրտի դէշութիւնը կռապաշտութեան մայրն է։ Տես Հռովմ. Ա. Գլուխը։

Ե. Մեր միլիոնաւոր ընկերներուն վիճակը, որոնք որ հեթանոս և կռապաշտ են՝ խիստ սաստիկ ու ողբալի վիճակ է։ Անոնք թաղուած են իրենց տգիտութեանը և մեղքին մէջ, ամենացած և զզուելի մեղքերուն մէջը թաթխուած են։ Անոնց կռատունները չարութեան տաճարներ են։ Անոնք տառապանքներու և թշուառութեան տակ են, ու սանկ ապականեալ և մէկզմէկ ապականող պիտի ապրին մինչև աշխարհիս վերջը՝ թէ որ Աստուածաշունչը՝ փրկութեան Աւետարանը անոնց չխրկուի։ Երանի՜ թէ Աստուած հաճէր կանչել մեզմէ մէկ քանիները՝ որ Աւետարանը տանէինք անոնց։ Բայց թէ որ աս արտօնութիւնը մեզի չտրուի՝ պէտք է որ գոնէ ամէն միջոցները գործածենք՝ մեր օգնութիւնովը Աւետարանն անոնց խրկելու համար. յատկապէս աղօթելով՝ որ Աստուած կամենայ ճամբան բանալ և յառաջ տանիլ իր ճշմարտութիւնը՝ մինչև որ բոլոր երկիրը լցուի իր գիտութիւնովը։ Յարգենք Աստուածաշունչը մեծ յարգութիւնով, ուսկից կ'ընդունինք ան մխիթարութիւնը և խաղաղութիւնը՝ որն որ հիմա կը վայելենք, ու նաև ան գալու երջանկութիւնը որուն կը յուսանք։ Եւ առատօրէն երախտագիտութիւն ու շնորհակալութիւն տանք Աստուծոյ՝ որ ինքը իր գերագոյն ողորմութիւնովը անոնցմէ աւելի լաւ վիճակի մէջ հաստատեց մեզ։

Զ. Աստուած՝ նախանձոտ Աստուած մըն է. Ինք իր պատիւն ու փառքը կուռքերուն չտար. Ինքը պիտի պատժէ անոնք՝ որ սանկ ունայնութիւնները կը պաշտեն, ու նաև իրենց անօրէնութիւնը որդիներնուն պիտի հատուցանէ մինչև անոնց իրեք և չորս ազգը. բայց ողորմութիւն պիտի ցուցընէ անոնց հազար ազգին՝ որոնք որ զինքը կը սիրեն և իր պատուիրանքները կը պահեն։

հեցէք։ Յովհ. ԺԴ. 15։ Դուք իմ բարեկամներս էք, թէ որ ընելու ըլլաք ինչ որ ես ձեզի կը պատուիրեմ։ Յովհ. ԺԵ. 14։



---

## Երրորդ Պատուիրանքը։

Ղեւտ. ԺԹ. 11–18։

Հ. Ո՞րն է Երրորդ Պատուիրանքը։

Պ. "Տէրոջը քու Աստուծոյդ անունը պարապ տեղը բերանդ չառնես. ինչու որ Տէրը՝ իր անունը պարապ տեղը բերան առնողը՝ անպարտ պիտի չսեպէ։

Հ. Ի՞նչպէս պարտինք գործածել Աստուծոյ անունը։

Պ. Ակնածու ու խոնարհ սրտով և միշտ պատուելով։

Հ. Ի՞նչ կը նշանակէ "Աստուծոյ անունը պարապ տեղը բերան առնելը"։

Պ. Կը նշանակէ Աստուծոյ անունը սուտ՝ անարգ՝ կամ թեթև կերպով մը գործածել։

Հ. Երբոր մենք երդում կ'ընենք, չէ՞ որ Աստուած վկայ կը կոչենք մեր խօսքին ճշմարիտ ըլլալը հաստատելու համար։

Պ. Հրամերես։

Հ. Ուրեմն երբոր մեր ըսածին սուտ ըլլալը գիտնանք՝ ու ան իրաւցունելու համար վկայ կոչենք Աստուած, աս պատուիրանքը չե՞նք անարգեր։

Պ. Հրամերես, սոսկալի կերպով մը կ'անարգենք։ Ղեւտ. Զ. 3։

Հ. Աս պատուիրանքը ի՞նչ կ'արգիլէ։

Պ. Կ'արգիլէ անիծելը և զուր տեղը երդում ընելը, և կեղծաւորեալ թեթև ու չնչին կերպով Աստուծոյ անունը գործածելը։ Բ Օրին. ԻԸ. 58. Մատթ. Ե. 34–37։

Հ. Ի՞նչ կը նշանակէ Աստուծոյ "անմեղ չսեպելը անիկայ, որ իր անունը պարապ տեղը բերանը կ'առնէ" :

Պ. Կը նշանակէ թէ Աստուած անիկայ պիտի պատժէ : Ղեւ. իդ. 16 :

---

Աս պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ ինչպէս գործածելու ենք Աստուծոյ մեծ ու բարի անունը :

Ա. Մենք Աստուծոյ վրայ խորհելու ու խօսելու, և աղօթելու ենք իրեն, անկեղծ՝ խոնարհ ու յարգական մտքով . յիշելով միշտ թէ ի՛նչպէս անչափ՝ սուրբ ու բարձրացեալ է Ինքը, և թէ մեզի պէս ասանկ նուաստ ու անարժան ստեղծուածներուն կը վայլէ որ վախնանք իր պատուական ու ահաւոր անունէն : Բ Օրին. իը. 58 : Մատթ. զ. 9 :

Բ. Մենք կ'անարգենք աս պատուիրանքը նախ՝ երբոր սուտ երդում կ'ընենք, երբոր մեր ստութիւնը իրաւցունելու համար Աստուած վկայ կը կոչենք . ասկէ աւելի մեծ նախատինք չկրնար ըլլալ ճշմարտութեան Աստուծոյ դէմ : Երկրորդ՝ երբոր Աստուծոյ անունը թեթև ու չնչին կերպով մը կը գործածենք մեր հասարակ խօսակցութեանը մէջ, զոր օրինակ՝ "Աւաղ Աստուած, Աստուծոյ յայտնի է, Աստուած վկայ, Աստուած գիտէ որ", ևայլն : Երրորդ՝ երբոր կ'անիծենք և երդում կ'ընենք ու կը հայհոյենք Աստուծոյ սուրբ անունովը, ինչպէս որ չարագործ հայհոյիչները կ'ընեն : Չորրորդ՝ երբոր երկրպագութիւն կ'ընենք Աստուծոյ՝ թեթև ու անհոգ կերպով մը, կամ կեղծաւորութեամբ :

Գ. Տէրը իր անունը պարապ տեղը բերանն առնողը անմեղ պիտի չսեպէ : Ինք՝ աս պատուիրանքին դէմ ամէն յանցանքները չմոռնար : Երբեմն հայհոյիչները՝ տակաւին իրենց հայհոյութիւնը չլմնցուցած՝ Աստուած յանկարծ պատժեց անոնք՝ ու իսկոյն մեռան : Ան մեծաշուք ու ահագին օրը հասնելու վրայ է, որ մենք հաշիւ պիտի տանք ամէն պարապ խօսքերնուս համար :



## Չորրորդ Պատուիրանքը :

Եսայ. ծը. 13, 14 :

Հ. Ի՞նչ է Չորրորդ Պատուիրանքը :

Պ. "Հանգստութեան օրը միտքդ բեր՝ անիկայ սուրբ պահելու համար : Վեց օր պիտի աշխատիս, ու բոլոր գործդ ընես . Բայց եօթներորդ օրը՝ Տէրոջը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է . ան օրը գործ մը պիտի չգործես, ոչ դուն՝ ոչ քու որդիդ՝ ոչ քու աղջիկդ՝ ոչ քու ծառադ ու աղախինդ՝ ոչ քու անասունդ՝ ոչ ալ դրանդ մէջ եղած օտարականդ . Քանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքն ու երկիրը, ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ . անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը ու սրբեց զանիկայ" :

Հ. Ի՞նչ նշանակել կ'ուզէ Աստուած, ըսելով թէ՝ մենք պարտինք Շաբաթ օրը "սուրբ պահել" :

Պ. Կ'ուզէ ըսել որ մենք բոլոր ան օրը պարտինք Իրեն նուիրել սրբազան պաշտօններով : Եսայ. ծզ. 2 :

Հ. Շաբաթը սուրբ պահելը արդեօք լոկ Հրէական օրէ՞նք մը համարուելու է :

Պ. Ամենևին չէ՛ . քանզի Աստուած ան օրէնքը Ադամին ալ տուաւ ( Ծննդ. բ. 2, 3 ) և անոր համար չորրորդ պատուիրանքին մէջ Հրէաներուն ալ կրկնելով աս օրէնքը, կ'ըսէ թէ "Հանգստութեան օրը միտքդ բեր" :

Հ. Աս բանիս համար ուրիշ վկայութիւն ունի՞ս :

Պ. Աս ալ ունինք որ, Շաբաթը պահելը թէ որ լոկ Հրէական արարողութիւն մը ըլլար, Աստուած պիտի չդրէր ան՝ բուն իր մատովը Տասնաբանեայ Օրէնքին մէջը, ուր որ ուրիշ բան չկայ, բայց միայն բարոյական՝ ընդհանուր և հոգևոր պատուիրանքներ : Ասոր աս Շաբա-

թուան օրէնքը որ աշխարհի սկիզբէն տրուեցաւ , պարտի հաստատ մնալ մինչև աշխարհի վերջը :

Հ . Ուրեմն ինչո՞ւ համար Շաբաթ օրը չենք պահեր , ու Կիրակի օրը կը պահենք :

Պ . Անոր համար որ մեր Տէրը Յիսուս՝ Կիրակի օրը յարութիւն առաւ :

Հ . Ի՞նչ վկայութիւն ունինք աս փոփոխութեանս իրաւունքով ըլլալուն համար :

Պ . Հետևեալ վկայութիւնները ունինք : Նախ՝ որ Տէրն մեր Շաբաթ օրը թաղուած մնալով՝ անպատիւ ըրաւ անիկայ , և Կիրակի օրը յարութիւն առնելով պատուեց ան օրը : Երկրորդ՝ որ Տէրն մեր իր յարութիւն առնելէն ետքը երկու անգամ Կիրակի օր իր աշակերտներուն երևցաւ՝ երբոր աղօթելու համար մէկ տեղ հաւաքուած էին անոնք . բայց Շաբաթ օր մը անոնց չերևցաւ : Յոհ . ի . 19 , 26 : Երրորդ՝ որ Տէրն մեր իր յարութենէն ետքը՝ ճիշդ եօթներորդ շաբաթ օրը անցնելուն պէս՝ հետևեալ օրը՝ որ Պենտէկոստէին կիրակի օրն էր՝ ան մեծ խոստմունքը , այսինքն իր Սուրբ Հոգին խրկեց իր աշակերտներուն վրայ : Գործ . ա . 4 , 5 : բ . 1 , 33 : Չորրորդ՝ որ Սուրբ Հոգւով լցուած Առաքեալները սկըսեցին Կիրակի օրը սուրբ պահել և աղօթքով անցունել , ինչպէս որ ան սովորութիւնը կը մնայ մինչև աս օր քրիստոնէից մէջ ալ : Գործ . ի . 76 : Ա Կորն . ժզ . 2 : Յայտ . ա . 10 :

Հ . Քանի՞ օր պիտի աշխատինք որ մեր բոլոր գործքերն ընենք :

Պ . Վեց օր պիտի աշխատինք , ու մէկ օր պիտի հանգստանանք մեր բոլոր գործքերէն : Ելք ժզ . 25–30 : լա . 12–17 : լե . 1–3 : Թուոց ժե . 32–36 : Նեեմ . Ժ . 31 : ժգ . 15–22 : Երեմ . ժէ . 21–27 :



Հ . Ուրեմն ամենևին գործ մը չե՞նք կրնար տեսնել ան օրը :

Պ . Կրնանք տեսնել երկու տեսակ գործ . այսինքն անոնք՝ որ հարկաւոր են , և անոնք՝ որ ողորմութեան կը վերաբերին : Մատթ . ժբ . 1–13 : Մարկ . գ . 4 , 5 : Ղուկ . ժգ . 10–17 : ժդ . 1–6 : Յոհ . ե . 1–14 :

Հ . Ուստի Աստուծմէ որոշուած ան մէկ հանգստութեան օրէն զատ , ուրիշ օր մը պարտակա՞ն են քրիստոնեաները սուրբ պահելու :

Պ . Ոչ . քանզի Աստուծոյ հրամանն է որ վեց օր աշխատինք ու մէկ օր հանգստանանք :

Ինտո՞ր նորէն կը դառնաք ան տկար ու չքաւոր աշխարհի սկզբունքներուն . որոնց նորէն կ՚ուզէք ծառայութիւն ընել : Օրերը կը զանազանէք , ու ամիսները , և ժամանակները ու տարիները : Կը վախնամ ձեզմէ , որ գուցէ պարապ տեղը ձեր վրայ աշխատած ըլլամ : Գաղ . դ . 9–11 :

Հ . Կիրակի օրը մենք որ չենք գործեր , ուրիշ մէկու մը կրնա՞նք գործել տալ :

Պ . Ոչ , ո՛չ մեր տղան՝ ո՛չ մեր աղջիկը՝ ո՛չ մեր ծառան՝ ո՛չ մեր աղախինը՝ ո՛չ մեր անասունը և ո՛չ մեր քովը եղած օտարականը աշխատեցունելու ենք :

Հ . Թէ որ անոնք գործել ուզեն , մենք ի՞նչ պիտի ընենք :

Պ . Պիտի թող չտանք :

Հ . Յատուկ գործ գործելէն զատ , ի՞նչ ուրիշ բան կայ արգիլուած՝ Կիրակի օրուան համար :

Պ . Արգիլուած է ինքզինքնիս զուարճացունելը . զոր օրինակ , ձի հեծնելով կամ որսի երթալով՝ կամ թուղթ խաղալով՝ կամ քնանալով՝ կամ ուտելով և խմելով՝ կամ իրարու հետ մարմնաւոր ու ոչինչ խօսակցութիւններ ընելով :

Թէ որ շաբաթը՝ իմ սուրբ օրս՝ քու ցանկութիւնդ կատարելէն ոտքդ դարձունես , ու շաբաթը քու զուարճութիւնդ , և Տէրոջը նուիրուած օրը՝ պատուական անուանես , ու զանիկայ պատուես քու ճամբաներուդ չհետեւելով , քու ցանկութիւնդ չկատարելով , ու պարապ խօսք չխօսելով , ան ատենը Տէրոջմով պիտի ուրախանաս ու քեզ երկրիս բարձր տեղուանքը պիտի հանեմ , ու քու հօրդ Յակոբին ժառանգութիւնը քեզի պիտի կերցունեմ , քանզի Տէրոջը բերանը խօսեցաւ ։ Եսայ . ԾԸ . 13 , 14 ։

Հ . Կիրակի օրուան մեր պարտաւորութիւնն ի՞նչ է ։

Պ . Առանձին աղօթք և մտածմունք ընելէն զատ՝ պարտինք մէկ տեղ հաւաքուիլ Աստուծոյ երկրպագութիւն ընելու , աղօթելու , Սուրբ Գիրքը կարդալու ու Սուրբ Աւետարանին քարոզութիւնը մտիկ ընելու ։

Ու եկաւ Նազարէթ , ուր որ ինքը մեծցած էր . և իր սովորութեանը պէս շաբաթ օրը մտաւ ժողովարանը , ու ելաւ որ կարդայ ։ Եւ տուին անոր Եսայի մարգարէին գիրքը ։ Ղուկ . Դ . 16 , 17 ։ Եւ ինքը ժողովարաններուն մէկուն մէջ շաբաթ օրը կը սորվեցունէր ։ Ղուկ . ԺԳ . 10 ։ Շաբաթ օրը քաղաքէն դուրս ելանք՝ գետեզերքին քովը՝ ուր որ սովորութիւն ունէին աղօթք ընելու . ու նստելով՝ ժողվուած կնիկներուն կը խօսէինք ։ Գործ . ԺԶ . 43 ։ Եւ մէկշաբթի օրը՝ երբոր ժողվուեր էինք հաց կոտրելու , Պօղոս անոնց կը քարոզէր , ինչու որ հետեւեալ օրը ճամբայ պիտի ելլէր . և խօսքը երկնցուց մինչև կէս գիշեր ։ Գործ . Ի . 7 ։ ԺԳ . 14 ։ ԺԷ . 2 ։ Ա Կորնթ . ԺԶ . 2 ։ Եբր . Ժ . 25 ։

---

Չորրորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ մեր ժամանակին ո՞ր մասը յատկապէս Աստուծոյ երկրպագութեանն ու իրեն ծառայութեանը նուիրելու ենք . այսինքն



է եօթը օրին մէկը , կամ թէ մեր ժամանակին եօթներորդ մասը ։ Հրէաները պահեցին եօթներորդ օրը աշխարհին ստեղծագործութեան սկիզբէն հաշուելով՝ որ ատ օրը Աստուած հանգստացաւ իր գործէն ։ Բայց քրիստոնեաներուն յատուկ բռնած օրը շաբաթին առջի օրն է . ինչու որ մեր Տէր Յիսուսը ան օրը յարութիւն առաւ մեռելներէն . և մեր փրկութեան գործը լմնցուց , ու անկէ հանգստացաւ ։ Գործ . Ի . 7 ։ Ա Կորնթ . ԺԶ . 1 , 2 ։ Յայտ . Ա . 10 ։

Ա . Ան օրը սուրբ պահուելու է ։ Մենք հանգստանալու ենք մեր բոլոր գործքերէն հարկաւոր եղած ու ողորմութեան վերաբերեալ գործքերէն 'ի զատ ։ Ան օրը աղօթելու ենք , Աստուծոյ խօսքերը ու բարի գիրքերը կարդալու ենք . մեր սիրտերն ու մեր վարքը քննելու ենք , բարեպաշտ խօսակցութիւն ունենալու ենք . Աստուծոյ մեծութիւնը և Յիսուս Քրիստոսի ձեռքովը անոր մեզի ըրած բարերարութիւնը՝ միտքերնիս բերելու ենք . երկինքին հանգստութեանն ու յաւիտենական օրհնութեանը վրայով մտածելու ենք ։ Ան օրը Աստուծոյ տունն երթալու ենք ու իր ժողովուրդին հետ մէկ տեղ իրեն երկրպագութիւն ընելու ենք ։ Մէկ խօսքով մեր բոլոր խորհուրդները՝ զգացումները՝ խօսքերը և գործքերը իրեն նուիրելու ենք ։

Բ . Մենք աս պատուիրանքը կ'անարգենք նախ՝ երբոր հասարակ ու անպիտան գործ մը ընենք կիրակի օրը ։ Երկրորդ՝ երբոր հեշտութիւններով՝ զուարճութիւնով և կամ մեղքով անցունենք ան օրը ։ Երրորդ՝ երբոր մեր խորհուրդները , խօսակցութիւնը , կարդացածները , ըսածներն ու մեր ընկերութիւնը աշխարհային ըլլան ։ Չորրորդ՝ երբոր զանց ընենք Աստուծոյ տունն երթալը . կամ երբոր հոն երթալով՝ անկեղծութեամբ և սրտի մօք Աստուծոյ չծառայենք , կամ կիրակին՝ նեղութիւն մը ու բեռ մը սեպենք ։

Գ . Կիրակին չպահելը շատ հասարակ բան մըն է , բայց շատ մեծ մեղք ալ է ։ Ան՝ որ կիրակին կ'անարգէ , կը զրկէ Աստուած իր յատուկ ստացուածքէն . ինչու որ ան օրը՝ Տէրոջը օրն է ։ Ինքզինքը կը զրկէ նաև հոգևոր օգուտներ քաղելէ՝ ան օրուան ընտիր պատեհութիւններ-

րէն. և իր օրինակին ազդու զօրութիւնովը որչափ որ կըրնայ՝ Աստուածպաշտութիւնը երկրիս վրայէն կ'աւրէ, կը խափանէ. քանզի կիրակին սուրբ պահելով՝ եկեղեցի երթալով՝ քարոզ մտիկ ընելով՝ աղօթք ընելով և բոլորովին հոգևոր բաներու վրայ մտմտալով՝ Քրիստոնէական օրէնքը կը հաստատուի, ու նմանապէս ասոնց հակառակն ընելով՝ օրէնքը և Աստուածպաշտութիւնը կ'աւրուի:

Դ. Կիրակին՝ մարդոց տրուած Աստուծոյ ամենամեծ օրհնութիւններուն մէկն է. եօթը օրերուն մէջի ամենէն աղէկ օրն է: Անոնք՝ որ կիրակին չպահելով հանգստութեան օր մը չունին ու միշտ կ'աշխատին, իրենց միտքերը և մարմինները շատ հոգնած՝ պիտի տկարանան. ինչպէս որ մեր ընտանի անասունները, թէ որ միշտ ամէն օր գործքով նեղացունենք, ու թող չտանք անոնց որ կիրակի օրը հանգստանան, անշուշտ պիտի նիհարանան ու իրենց ժամանակը չհասած՝ պիտի մեռնին: Կիրակիին հանգըստութիւնը հարկաւոր է մեզ զօրացունելու ու մխիթարելու համար, և թէ որ հաւատարմութեամբ պահենք անիկայ, Աստուծոյ օրհնութիւնը մեր աշխատութիւններուն ու մեր գործքերուն վրայ կը բերէ:

Ե. Կիրակի օրը հարկաւոր է աշխարհիս մէջ ճշմարիտ կրօնքը պահպանելու. քանզի առանց անոր՝ մարդիկ պիտի մոռնային Աստուած՝ և անոր գիտութիւնը բոլորովին պիտի կորսնցունէին: Ան օրն է որ՝ մարդիկ պարապ ըլլալով՝ կ'երթան Աւետարանին քարոզութիւնը մտիկ կ'ընեն, և ասանկ ճշմարտութիւնը սորվելով՝ կ'ապաշխարեն ու դարձի կու գան. ու աս ընթացքովս կ'աճին Քրիստոսի շնորհքովը՝ և պատրաստ կ'ըլլան երկինքի համար: Թէ որ քրիստոնեայ ազգ մը կիրակիէն զրկուած ըլլար, շուտով պիտի դառնար, թշուառ ու չար հեթանոսներուն պէս պիտի ըլլար:

Զ. Ուրախանանք և շնորհակալ ըլլանք Աստուծոյ՝ հանգստութեան օրուան համար, և սուրբ պահենք ու աղէկ կերպով գործածենք անիկայ, և անանկ պատրաստուինք ան գալու յաւիտենական կիրակիին համար՝ որ յաւիտեան պիտի չվերջանայ:

—— Աս չորս Պատուիրանքները՝ որոնք որ հիմա քննե-



ցինք մենք՝ Առաջին Տախտակ ալ կը կոչուին. ինտոր որ մէկալ վեցը՝ Երկրորդ Տախտակ կ'ըսուին: Երկրորդ տախտակի պատուիրանքները մեզի կը սորվեցունեն մեր դէպ'ի մարդիկ պարտաւորութիւնը. բայց առաջին տախտակինները՝ կը սորվեցունեն մեզի յատկապէս առ Աստուած եղած մեր պարտաւորութիւնը. այսինքն նախ՝ թէ մենք մի միայն կենդանի և ճշմարիտ Աստուածը ճանչնալու ու պաշտելու ենք, Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Երկրորդ՝ թէ մենք իրեն երկրպագութիւն ընելու ենք ան կերպով՝ ինչպէս որ կը վայլէ խիստ մեծ և փառաւորեալ ու բարի Հոգիի մը՝ որ թէպէտ մեզի անտեսանելի է, բայց ամէն տեղ ներկայ է: Երրորդ՝ թէ մեր երկրպագութեան մէջը մեր իր վրայ ունեցած բոլոր խորհուրդներուն՝ զգացումներուն և գործքերուն մէջը, խոնարհ՝ անկեղծ և երկիւղած ըլլալու ենք: Եւ չորրորդ՝ թէ զգուշութեամբ և հաւատարմութեամբ սուրբ պահելու ենք ժամանակին աս բաժինը՝ այսինքն Կիրակի օրը, որն որ Ինքը հաճեցաւ բոլորովին Իր պաշտօնին համար զատել ու սրբել:

---

Հինգերորդ Պատուիրանքը

ե̃ Թուղ. ժը̃. 1–33:

Հ. Ո՞րն է հինգերորդ Պատուիրանքը:

Պ. «Պատուէ՛ զՀայր քու ու զՄայր. որ քու օրերդ երկար ըլլան ան երկրին վրայ՝ որն որ քու Տէր Աստուածդ կու տայ քեզի»:

Հ. Մեր կեանքը որոնցմէ՞ կախում ունի աս աշխարհիս մէջ:

Պ. Նախ Աստուծմէ կախում ունի, և ապա մեր ծնողքներէն:

Հ. Ո՞վ են անոնք՝ որ երբոր մենք տակաւին պզտիկ տղաքներ ըլլալով՝ ու չկրնալով ինքնիրեննուս մեզի հոգ

տանիլ՝ մեզ կը հոգան՝ և մեր կանչուըռտելուն և յիմարութիւններուն ու չարութիւններուն ալ կը համբերեն ։

Պ . Մեր Հայրը և Մայրը ։

Հ . Եւ ո՞վ են անոնք՝ որ կը սիրեն մեզ խանդակաթ սիրով , կը դարմանեն մեզ՝ երբոր մենք հիւանդ ըլլանք , կը պահպանեն մեզ կորստեան վտանգէն , և կը պատրաստեն կերակուր ու հանդերձ մեզի համար , և բարի կերպով կը կրթեն մեզ՝ աղօթելով մեզի համար և կը ջանան իմաստուն ու բարի տղաքներ ընելու մեզ ։

Պ . Մեր Հայրն ու Մայրը ։

Հ . Ուրեմն ի՞նչ պէտք է որ ընենք մեր ծնողացը , իրենց մեզի ըրած մեծամեծ խնամքներուն փոխարէն ։

Պ . Պարտինք խիստ մեծ սէր ունենալ անոնց վրայ ։ Ղևտ . ԺԹ . 3 ։

Հ . Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը ասոր վրայով ։

Պ . ‘‘ Անիծեալ ըլլայ ան՝ որ իր հօրը կամ մօրը դէմ հայհոյութիւն կ'ընէ ’’ ։ Բ Օրէն . ԻԷ . 16 ։

Հ . Զաւակներն ամէն բանի մէջ պարտի՞ն իրենց ծնողացը հնազանդիլ ։

Պ . Այո , անոնց ամէն հրամանին պարտին հնազանդիլ՝ այն հրամաններէն 'ի զատ որոնք Աստուծոյ դէմ են ։

Որդիք՝ ձեր ծնողացը հնազանդ եղէք Տէրոջմով որ ան է արժանը ։ Եփես . Զ . 1 ։ Կող . Գ . 20 ։

Հ . Սողոմոն ի՞նչ կ'ըսէ ծնողաց հնազանդելու վրայով ։

Պ . ‘‘ Որդեակ իմ՝ քու հօրդ խրատը մտիկ ըրէ , ու քու մօրդ օրէնքը մի մերժեր ’’ ։ Առակ . Ա . 8 ։ ‘‘ Որդեակ իմ՝ քու հօրդ պատուիրանքը պահէ , և քու մօրդ օրէնքը մի՛ մերժեր ’’ ։ Առակ . Զ . 20 ։ ‘‘ Հնազանդութիւն ըրէ հօրդ՝ որ քեզ ծներ է , ու մի՛ անարգեր քու մայրդ՝ երբոր կը պառաւի ’’ ։ Առակ . ԻԳ . 22 ։



Հ . Բնաւ մեր ծնողացը հետ արհամարհանօք կամ խաբէութեամբ վարուելո՞ւ ենք ։

Պ . Չէ՛ , ո՛չ իրենց երեսին և ոչ իրենց ետևէն ։

Հ . Աստուած Հրէից ի՞նչ պատուիրեց ընել կամակոր ու ապստամբ զաւակի մը՝ որ իր հօրն ու մօրը չէր հնազանդեր ։

Պ . Պատուիրեց որ մինչև մեռնելը քարկոծեն ։ Ելից ԻԱ . 15-17 ։ Ղևտ . Ի . 9 ։ Բ Օրէն . ԻԱ . 18-21 ։ Առակ . Ի . 20 ։ ԻԸ . 24 ։

Հ . Եւ ի՞նչ պիտի ըլլայ անոր աչքը՝ որ ծաղր կ'ընէ իր հայրը , և իր մօրը հնազանդիլը կ'անարգէ ։

Պ . ‘‘ Ձորերուն ագռաւները պիտի փորեն , ու զանիկայ արծիւներուն ձագերը պիտի ուտեն ’’ ։ Առակ . Լ . 17 ։

Հ . Կրթութեան ու խրատի կարօտ եղած ատեննիս որո՞ւն երթալու ենք ։

Պ . Մեր Հօրը և Մօրը ։

Հ . Պէտք չէ՞ մեզի որ երախտագէտ ըլլանք մեր ծնողացը՝ մեզի համար բոլոր իրենց ըրածնուն ու քաշած նեղութիւններուն համար ։

Պ . Այո , ու երբոր անոնք ծերանան , կամ կոյր , կամ կաղ , կամ հիւանդ ըլլան , և չկրնան ինքզինքներնին հոգալ , կամ աղքատութեան և թշուառութեան մէջ ըլլան , պարտինք հոգ տանիլ անոնց՝ մեր բոլոր կարողութիւնովը ։ Ծննդ . ԽԷ . 12 ։ ԽԸ . 1 ։ Մատթ . ԺԵ . 4-6 ։

Հ . Ո՞ր տղան իր Հայրը և Մայրը մեծապէս կ'ուրախացունէ ։

Պ . Բարի տղան ։ Առակ . Ժ . 1 , 2 ։

Հ . Ո՞ր տղան Հայրը և Մայրը խիստ կը տրտմեցունէ ։

Պ . Չար տղան ։

Հ. Ո՞ր տղան ատելի է բոլոր բարի մարդիկներուն, ու կորսուելու ճամբուն մէջ է։

Պ. Չար տղան։

Հ. Երբոր դուք կը տեսնէք անանկ տղաքներ՝ որոնք ոչ կը սիրեն իրենց ծնողքը ոչ ալ կը հնազանդին անոնց, ի՞նչ պարտիք ընել։

Պ. Պարտինք անոնց ընկերութենէն ետ կենալ։

Իմաստուններուն հետ քալողը իմաստուն կ'ըլլայ. բայց անմիտներուն հետ ընկերացողը չար կ'ըլլայ։ Առակ. ԺԳ. 20։

Հ. Մեր Տէրը Յիսուս երբոր տղայ էր, իր ծնողքները սիրե՞ց ու անոնց հնազանդեցա՞ւ։

Պ. Հրամմերես։

Եւ իջաւ անոնց հետ՝ ու գնաց Նազարէթ, և անոնց հնազանդ էր։ Ղուկ. Բ. 51։

Հ. Աս հինգերորդ պատուիրանքին մէջը Աստուած ի՞նչ խոստացաւ բոլոր բարի տղաքներուն՝ որ կը պատուեն իրենց ծնողքը։

Պ. Երկար կեանք։

---

Հինգերորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի՝ մեր ծնողքներուն ունեցած պարտքերնիս, որ Աստուծմէ ետքը անոնցմէ կ'ընդունինք կեանք՝ կերակուր՝ հանդերձ՝ պահպանութիւն և կրթութիւն։

Ա. Ուրեմն պատուելու ենք մեր Հայրը և մեր Մայրը։ Նախ՝ մենք սիրելու ենք անոնք անկեղծ՝ հաստատուն ու ջերմեռանդ սիրով՝ ինչպէս որ արժան է։ Երկրորդ՝ հնազանդելու ենք անոնց ուրախութեամբ, կատարելով անոնց հրամաններուն բոլորը։ Երրորդ՝ յարգ՝ պատիւ ու մեծարանք ցուցունելու ենք անոնց թէ՛ առանձին՝ և թէ՛ հրապարակաւ։ Եւ այսպէս ամէն մարդ տեսնելով մեր անոնց տուած յարգը՝ գիտնան թէ անոնք մեր ծնողքն են։



Մենք անոնցմէ բան մը պահելու չենք, ոչ ալ ինքզինքնիս անոնցմէ իմաստուն կարծելու ենք. հապա անոնց երթալու ենք մեր ամենալաւ և բարերար բարեկամներուն պէս՝ խրատի ու խորհուրդի համար։ Չորրորդ՝ միշտ յիշելու ենք մեր անոնց երախտապարտ ըլլալն իրենց բոլոր բարերարութիւններուն և մեզի համար կրած նեղութիւններուն փոխարէն, և բնաւ ըսելու չենք որ բաւական հատուցում ըրած ենք անոնց։ Երբոր անոնք ծերանան, կամ հիւանդանան կամ տկարանան և անօգնական մնան, կամ աղքատութեան ու նեղութեան մէջ ըլլան, ան ատենը բնաւ անտես թողելու չենք անոնք, հապա աւելի ականջ դնելու ու հոգ տանելու ենք անոնց՝ որչափ որ կրնանք, պաշտպանելով անոնք ամէն նախատինքներէ ու անիրաւութիւններէ։

Բ։ Մենք կ'անարգենք աս պատուիրանքը՝ երբոր չենք կատարեր աս վերը յիշուած պարտաւորութիւններուն մէկը կամ ամէնը։

Ո՛վ տղաքներ՝ աս ձեր պարտաւորութիւնները կատարելու հոգ կը տանի՞ք, հնազանդ տղաքնե՞ր էք։ Ինչու որ անհնազանդ տղայ մը բնաւ բարեյաջողութիւն պիտի չգտնէ. ինք ամօթ ու սրտի ցաւ է իր ծնողացը. ինքը բուն իր համբաւոյն վրայ նախատինք կը բերէ, իր բարի անունը կը կորսնցունէ աշխարհի մէջ, Աստուծոյ օրհնութենէն կը զրկուի, և գուցէ իր ունեցած օրերուն կէսին չափ պիտի չապրի. բայց հնազանդ տղայ մը՝ որ կը պատուէ իր Հայրն ու Մայրը, միշտ սիրելի է։ Ինք օրհնեալ Փրկչին օրինակին կը հետևի, որ անիկայ երբոր երկրի վրայ էր՝ պատուեց իր Հայրն ու Մայրը։ Անանկ տղայ մը կատարեալ յաջողութիւն պիտի գտնէ. մենք կրնանք յուսալ որ ինք երջանիկ պիտի ըլլայ թէ՛ աս աշխարհիս մէջ, և թէ՛ գալու աշխարհին մէջ։

Գ. Հինգերորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի որ մենք պատուելու ենք մեր մեծերը, նաև ան ամէնն ալ՝ որ կ'իշխեն մեր վրայ։ Աս պատուիրանքը միայն ծնողաց համար կը խօսի, ինչու որ յարգութեան՝ պատուոյ՝ հնազանդութեան և քաղաքավարութեան հիմը՝ ընտանեաց մէջէն կը սկսի։ Թէ որ տղայ մը իր ծնողացը հնազանդի՝ և իրենց

հետ յարգութեամբ ու քաղաքավարութեամբ վարուի՝ ան տղան բոլոր մարդոց հետ ալ պարկեշտ ու քաղաքավար կ'ըլլայ. բայց թէ որ իր ծնողաց տունը չսկսի հնազանդութիւն ու պարկեշտութիւն սորվիլ, դուցէ բնաւ ուրիշ տեղ մը պիտի չսորվի անոնք գործածելը. և այսպէս ան տղան երբոր մեծնայ, անօրէն մարդ մը պիտի ըլլայ։ Ուստի ծնողքները և վարժապետները՝ պէտք չէ որ մոռնան աս բանը։

---

Վեցերորդ Պատուիրանքը։

Ծննդ. Դ. 1–16։

Հ. Ո՞րն է վեցերորդ Պատուիրանքը։

Պ. “Սպանութիւն մ'ըներ”։

Հ. Աս պատուիրանքովը ի՞նչ կը հասկընանք։

Պ. Կը հասկընանք թէ բնաւ մարդ մը սպաննելու չենք։

Հ. Կրնա՞նք սպաննել անասուններն ու թռչունները։

Պ. Հրամերես, Աստուած մեզի հրաման տուաւ անոնք սպաննելու։ Ծննդ. Թ. 1–4։ Ա Տիմ. Դ. 3–5, Եայլն։

Հ. Բայց ինչո՞ւ համար մեռցունելու ենք անոնք, մեր զբօսանքի՞ն համար՝ թէ մեր օգուտին համար։

Պ. Միայն մեր օգուտին համար։

Հ. Հոգիին փրկութենէն ետքը ի՞նչ է մարդուս խիստ պատուական բանը։

Պ. Իր կեանքը։ Յոբ. Բ. 4։

Հ. Մենք որ չենք կրնար կեանք տալ, իրաւունք ունի՞նք առնել անիկայ։

Պ. Ոչ՛, ան որ չենք կրնար տալ, չենք կրնար վերցունել անիկայ։ Ծննդ. Բ. 2։ Դ Թագ. Ե. 7։



Հ. Բնաւ իրաւունք ունի՞ մէկը իր կեանքը կորսնցունելու։

Պ. Ոչ՛, անձնասպանութիւնը մեծ մեղք է։ Ա Թագ. ԼԱ. 4։ Մատթ. ԻԷ. 3–5։ Գործ. Ա. 16–25։

Հ. Ու ո՞վ միայն իրաւունք ունի կեանքը վերցունելու։

Պ. Միայն Աստուած՝ որ ինքն է կեանք տուողը։ Ծննդ. Բ. 7։ Թ. 5, 6։ Թուոց ԺԶ. 22։

Հ. Թէ որ մարդ մը դիպուածով ուրիշ մը մեռցունէ, երբոր ինքը բնաւ ամենեւին չէր ուզեր ընել ան մեղքը, աս պատուիրանքին տակը ինկած յանցաւո՞ր է։

Պ. Ոչ՛. միայն ան որ դիտաւորութեամբ թշնամութեան՝ կամ նախանձու՝ կամ ուրիշ դէշ կիրքի մը գրգռելովը՝ կը մեռցունէ իրեն դրացիը՝ յանցաւոր է աս պատուիրանքին։ Թուոց ԼԵ. 22–25։

Հ. Աստուած ի՞նչ օրէնք տուաւ Հրէից՝ մարդասպաններուն վրայով։

Պ. “Ան՝ որ մարդ մը կը սպաննէ, անշուշտ պիտի մեռցուի”։ Նա “Ով որ մարդու արիւն կը թափէ, իր արիւնն ալ մարդէ պիտի թափուի”։ Ղեւտ. ԻԴ. 17։ Ծննդ. Թ. 6։

Հ. Տէրը մեր դրացին սպաննելը կ'արգիլէ. բայց կրնա՞նք իրեն բարկանալ, կամ զինքը ատել, կամ ծեծել, կամ իրեն հետ չարաչար վարուիլ և կամ զինքը մեռցունելու սիրտ մը ունենալ։

Պ. Ոչ՛, բնաւ ամենեւին չենք կրնար։

“Քու դրացիդ անպատճառ պիտի յանդիմանես, որ անոր համար մեղք չկրես։ Վրէժ պիտի չառնես, և քու ժողովուրդիդ որդւոցը ոխ պիտի չպահես, հապա քու ընկերդ քու անձիդ պէս պիտի սիրես։ Ղեւտ. ԺԹ. 17, 18։ Լսեր էք որ ըսուեցաւ առաջիններուն. Սպանութիւն մի՛ ըներ, և ով որ սպանութիւն ընէ, դատաս-

տանի պարտաւոր պիտի ըլլայ ։ Բայց ես ձեզի կ'ըսեմ . Ով որ իր եղբօրը պարապ տեղը սրդողի , դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ . և ով որ իր եղբօրը յիմար ըսէ , ատեանի պարտաւոր պիտի ըլլայ . և ով որ իր եղբօրը անմիտ ըսէ , գեհեննի կրակին պարտաւոր պիտի ըլլայ ։ Մատթ . Ե . 21 , 22 ։

Հ . Սուրբ Գիրքին մէջը ի՞նչ կ'ըսուի այն մարդուն վրայով , որ իր եղբայրը կ'ատէ ։

Պ . “ Ով որ իր եղբայրը կ'ատէ , մարդասպան է ” ։ Ա Յովհ . Գ . 15 ։

Հ . Որո՞ւն ծոցը բարկութիւնը կը հանգչի ։

Պ . “ Յիմարներուն ծոցը ” ։ Ժող . Է . 9 ։ Յակ . Ա . 19 , 20 ։

Հ . Հրաման կա՞յ երկար ժամանակ մեր ընկերին հետ խռով կենալու ։

Պ . Չէ՛ , քանզի այսպէս կը կարդանք . “ Արեւը ձեր բարկութեանը վրայ մարը չմտնէ ” ։ Եփես . Դ . 26 ։

Հ . Բայց դիցուք թէ մեր դրացին թշնամի է մեզի և իր բոլոր զօրութիւնովը կ'աշխատի մեզ վնասելու ու մինչև անգամ կ'ուզէ մեր կեանքը վերցունել , անոր ի՞նչ պարտինք ընել ։

Պ . Պարտինք սիրել անիկայ , ու բարի ընել իրեն ։ Չարութեան փոխարէն մէկուն չարութիւն մի՛ հատուցանէք , ամէն մարդոյ առջեւը բարի բաներ ընելու հոգ տարէք ։ Հռովմ . ԺԲ . 17 ։ Ելից ԻԳ . 4 , 5 ։

Հ . Մեր Փրկիչը ի՞նչ կը պատուիրէ մեր թշնամիները սիրելու վրայով ։

Պ . “ Սիրեցէք ձեր թշնամիները , օրհնեցէք ձեզ անիծողները , բարի ըրէք անոնց՝ որ ձեզ կ'ատեն , և աղօթք ըրէք անոնց համար՝ որ ձեզ կը չարչըրկեն ու կը հալածեն ” ։ Մատթ . Ե . 44 ։ Հռովմ . ԺԲ . 14 ։



Հ . Ըսէ՛ նայիմ ի՞նչ կ'ըսէ Պօղոս Առաքեալ վրէժխնդրութիւն ընելու վրայով ։

Պ . “ Սիրելի՛ք՝ վրէժխնդրութիւն մի ընէք ձեր անձերուն համար , հապա բարկութեան տեղ տուէք . ինչու որ գրուած է . Վրէժխնդրութիւնը իմս է , ես պիտի հատուցանեմ ” , կ՚ըսէ Տէրը ։ Հռովմ . ԺԲ . 19 ։

Հ . Ըսէ՛ նայիմ աս խօսքէն ետքը ի՞նչ կը հետեւցունէ ։

Պ . “ Ուստի թէ որ քու թշնամիդ անօթեցեր է՝ հա՛ց տուր անոր , և թէ որ ծարաւի է՝ ջո՛ւր տուր անոր . քանզի աս ընելով՝ անոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի դիզես ։ Չարէն մի յաղթուիր , հապա բարիով յաղթէ՛ չարին ” ։ Հռովմ . ԺԲ . 20 , 21 ։

Հ . Ի՞նչ կ'ընէր Յիսուս երբոր կը նախատուէր ։

Պ . “ Ինքը փոխարէնը չէր նախատեր ” ։ Ա Պետ . Բ . 23 ։

Հ . Ինք որո՞նց համար մեռաւ , և որո՞նց համար աղօթեց խաչին վրայ ։

Պ . Իր թշնամիներուն համար ։ Ղուկ . ԻԳ . 34 ։ Գործ . Է . 59 ։ Հռովմ . Ե . 6–8 ։

Հ . Ի՞նչ կ'ըսուի ամենուն հետ խաղաղութիւն ընելու վրայով ։

Պ . “ Որչափ որ կարելի է ձեզի՝ ամէն մարդոյ հետ խաղաղութիւն ունեցէք ” ։ Հռովմ . ԺԲ . 18 ։ Սաղմ . ԼԴ . 14 .

Հ . Մեր ընկերը ամէն վնասներէն և մահէն ազատելը , և անոր ու ուրիշներուն մէջը խռովութիւն եղած ատենը խաղաղութիւն ընելը՝ մեր պարտքը չէ՞ ։

Պ . Հրամերես ։ Ղեւտ . ԺԹ . 18 ։ Ղուկ . Ժ . 36 , 37 ։

Հ. Ի՞նչ կ'ըսէ մեր Փրկիչը խաղաղութիւն ընողներուն համար :

Պ. «Երանի՜ խաղաղութիւն ընողներուն, ինչու որ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին» : Մատթ. Ե. 9 :

Հ. Ո՞վ էր առաջին մարդասպանը, որ իր եղբայրը մեռցուց :

Պ. Կայէն. Ծննդ. Դ. 1-8 :

Հ. Բարկացող, ոխակալ և մարդասպան մարդը երջանիկ կ'ըլլա՞յ արդեօք :

Պ. Ոչ՛ :

Հ. Մարդասպանութիւնը դիւրին կերպով կը ծածկուի՞ :

Պ. Ոչ՛ :

Տէրոջը աչքերը ամէն տեղ չարերը ու բարիները կը դիտեն : Առակ. ԺԵ. 3 : Ծննդ. Դ. 8-10 : Թուոց ԼԲ. 23 : Առակ. Ը. 21 :

Հ. Մարդասպանութիւնը խիստ սոսկալի յանցանք մը ըլլալով, անոնք՝ որ աս յանցանքը կը գործեն, ո՞ւր պիտի ունենան իրենց բաժինը, թէ որ չապաշխարեն :

Պ. Կրակի լիճին մէջը : Գաղ. Ե. 21 : Ա Յովհ. Գ. 15 : Յայտ. ԻԱ. 8 : ԻԲ. 15 :

Հ. Բնականաբար ատելութեամբ, բարկութեամբ, չարութեամբ և վրէժխնդրութեամբ լեցուն սիրտեր չունի՞նք մանաւանդ անոնց վրայ՝ որ կը վնասեն մեզի :

Պ. Հրամերես :

Ինչու որ՝ սրտէն կ'ելլեն չար խորհուրդներ՝ սպանութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ : Մատթ. ԺԵ. 18, 19 :



Հ. Ուրեմն աս պատուիրանքը պահելու համար ի՞նչ տեսակ սիրտերու կը կարօտինք :

Պ. Նոր սիրտերու : Յովհ. Գ. 3-6 :

---

Վեցերորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի մեր պարտաւորութիւնը թէ՛ ուրիշներուն կեանքին՝ և թէ՛ մեր կեանքին նայելով :

Ա. Մենք չէ՛ թէ միայն մեր ընկերը պիտի չմեռցունենք, և չէ՛ թէ բարկութեան՝ թշնամութեան՝ կամ ոխակալութեան զգացումներ պիտի չունենանք անոր վրայ, հապա նաև սիրելու ու պաշտպանելու ենք իր անձը և կեանքը բուն մերինին պէս : Մենք անոր հետ խաղաղութիւնով վարուելու ենք, և ջանալու ենք որ ուրիշներն ալ այնպէս վարուին իրեն հետ. մինչև անգամ ինքը մեզի թշնամի ըլլայ ալ : Աս մասին պէտք կ'ըլլայ որ Յիսուս Քրիստոսը մեզի օրինակ առնենք :

Բ. Մենք կ'անարգենք աս պատուիրանքը նախ՝ երբոր կ'ատենք մեր ընկերը ծածուկ մեր սրտին մէջը. քանզի սանկ ատելութիւնը՝ սրտի մէջ մարդասպանութիւն է : Երկրորդ՝ ալ աւելի կ'անարգենք աս պատուիրանքը, երբոր մեր բարկութիւնը և ատելութիւնը յայտնի ընենք իրեն հետ չխօսելով. կամ անէծքներով ու գէշ անուններով զինքը նախատենք, կամ իր պատույն ու իր օգտին վնաս ընենք, թէ՛ ծածուկ և թէ յայտնի կերպով : Երրորդ՝ աւելի մեծագոյն աստիճանով կ'անարգենք աս պատուիրանքը, երբոր այնպէս բարկանանք՝ որ անոր վրան վազելով՝ ծեծենք ջախջախենք և կամ մեռցունենք զինքը : Չորրորդ՝ երբոր մեր ընկերին բան մը տանք ուտելու կամ խմելու, որն որ մենք գիտենք թէ պիտի կորսնցունէ անոր առողջութիւնը և կեանքը, կամ թէ միայն վտանգի մէջ պիտի ձգէ զինքը : Հինգերորդ՝ երբոր զուր տեղը մեր հաճութեանը կամ մեր օգտին համար՝ մեր ընկերին կեանքը վտանգի մէջ ձգենք, կամ զօրութիւն ունենալով պահանջենք իրմէն անանկ բան մը ընել՝ որն որ իր կորստեան պատճառը պիտի ըլլայ : Վեցերորդ՝ երբոր մեր

զբօսանքին համար գործենք ուրիշներուն իրաւանց դէմ բար-կանալու և ծեծկուելու ։ Եօթներորդ՝ երբոր բուն մեր կեանքը կորսնցունենք , թէ՛ հրացանով՝ թէ՛ կախուելով՝ թէ խեղդուելով՝ թէ՛ անառակութեամբ ուտելով և խմե-լով և թէ՛ ուրիշ անժուժկալութեան գործերով ։

Գ . Այս պատուիրանքը պահելու համար պէտք է որ նախ՝ մեծ բան սեպենք մարդկային կեանքը որ Աստուծմէ մարդուս տրուած ամենապատուական պարգևն է , հոգիին փրկութենէն 'ի զատ ։ Երկրորդ՝ պէտք է որ սիրենք ամէն մարդ և դէմ կենանք ու յաղթենք մեր բարկութեանը՝ երբ-որ սկսի բորբոքիլ ։ Երրորդ՝ պէտք է որ փախչինք բար-կասիրտ ու ոխակալ մարդոց ընկերութենէն , որոնք մեծ ու պատուական բան մը կը սեպեն նախատինքի չհամբերելով՝ վրէժ առնելը ։ Չորրորդ՝ պէտք է որ խոնարհ ու հանդարտ հոգի մը ստանալու ջանանք . հպարտութիւնը , բարկու-թիւնը և ինքնահաւանութիւնը՝ իրենցմէ ետքը հակառա-կութիւն ու մահ կը բերեն ։ Հինգերորդ՝ պէտք է որ աղօթենք Աստուծոյ որ մեզի խաղաղասէր բնաւորութիւն մը տայ , քանզի անով կը նմանինք Քրիստոսի . և անանկ բնաւորութիւն մը խիստ ցանկալի ու քաղցր բան մըն է , որ նաև երջանկութիւն և հանդարտութիւն կը պատճառէ . բայց բարկութեան ու վրէժխնդրութեան հոգին՝ թշուա-ռութիւն է ինքիրմէն , որն որ Չարին հոգին է ։

Դ . Բարկացող ու վրէժխնդիր մարդիկ պարտին ա-պաշխարել և Աստուծմէ նոր սիրտ մը խնդրել . թէ չէ՝ բնաւ չեն կրնար պատրաստուիլ երկնից թագաւորութեա-նը համար , որն որ արդարութիւն և խաղաղութիւն է ։ Մեր Փրկիչը խաղաղութեան թագաւոր է ։



Եօթներորդ Պատուիրանքը ։

Ելից . Ի . 27 ։

Հ . Ո՞րն է եօթներորդ Պատուիրանքը ։

Պ . “ Շնութիւն մի՛ ընէր ” ։

Հ . Առաջին կարգուող մարդիկը ո՞վ էին ։

Պ . Ադամ ու Եւան ։

Հ . Որո՞ւն ձեռքովը կարգուեցան ։

Պ . Տէր Աստուծոյ ձեռքովը ։ Ծնունդ . Բ . 18–25 ։

Հ . Մարդիկ ի՞նչ կերպով պարտին կարգուիլ , յայտ-նի՞ թէ ծածուկ ։

Պ . Յայտնի կերպով ։

Հ . Աստուած իսկապէս ներկայ է ամուսնութեան ա-տենը՝ վկայ ըլլալու համար ։

Պ . Հրամերես ։

Հ . Կարգուելէն ետքը ո՛ր ատեն որ ուզեն , էրիկը կամ կնիկը կրնա՞ն իրարմէ զատուիլ ։

Պ . Չէ՛ ։ Մատթ . ԺԹ . 9 ։

Հ . Ուրիշ մէկը բնաւ զօրութիւն ունի՞ անոնք իրարմէ զատելու ։

Պ . Չէ՛ . “ Ուրեմն ան որ Աստուած միաւորեց՝ մարդ թող չզատէ ” ։ Մատթ . ԺԹ . 6 ։

Հ . Ուստի բնաւ չե՞ն կրնար իրարմէ զատուիլ ։

Պ . Միայն երկու կերպով կրնան զատուիլ ։

Հ . Ի՞նչ է առջինը ։

Պ . Երբոր անոնցմէ մէկը շնութիւն ընէ ։ Մատթ . Ե . 32 ։

Հ . Ի՞նչ է երկրորդը ։

Պ . Երբոր անոնցմէ մէկը մեռնի ։ Հռովմ . Է . 2 , 3 ։ ա Կորնթ . Է . 39 ։

Հ. Շնութիւնով բռնուած մարդիկը Աստուած ի՞նչպէս պատժելու հրաման տուաւ Հրէից :

Պ. Մահով :

Շնացողն ալ շնացեալն ալ մահու մեռցին : Ղևտ. Ի. 10 : Թէ որ մէկը էրիկ ունեցող կնկան մը հետ պառկած գտնուի, ան առենը երկուքն ալ մեռնին, թէ՛ ան կնկանը հետ պառկող մարդը՝ և թէ՛ ան կնիկը : Բ Օրին. ԻԲ. 22 :

Հ. Ո՞րուն կը վերաբերին մեր մարմինները, և որո՞ւն համար անարատ պահելու ենք զանոնք :

Պ. Աստուծոյ համար :

Չէ՞ք գիտեր որ Աստուծոյ տաճար էք դուք՝ և Աստուծոյ Հոգին ձեր մէջը բնակած է : Թէ որ մէկը Աստուծոյ տաճարը կ'ապականէ, Աստուած անիկայ պիտի ապականէ. ինչու որ Աստուծոյ տաճարը սուրբ է, որ դուք էք : Ա Կորնթ. Գ. 16, 17 : Զ. 13–20 : Ա Թեսս. Դ. 3–7 : Յայտն. ԻԹ. 9 :

Հ. Ի՞նչ կ'ըսուի շնացող կնկան տանը վրայով :

Պ. "Անոր տունը դժոխքին ճամբաներն է. անոնք մահուան շտեմարանները կ'իջնեն" : Առակ. Է. 27 : Ե. 5 :

Հ. Կրկնէ՛ նայիմ Սողոմոնին ըսածը :

Պ. "Անոր գացողները բնաւ չեն դառնար, և կենաց ճամբաներուն չեն հասնիր : Առակ. Բ. 19 : Ե. 20–23 :

Հ. Ուրեմն անկէց դառնալուն վրայով ի՞նչ պատուէր կայ :

Պ. "Ան կնիկէն ճամբադ հեռացուր, ու անոր տանը դրանը մի մօտենար" : Առակ. Ե. 8 :

Հ. Պարտի՞նք պատուել կամ ընկերութիւն ընել անոնց հետ՝ որ աս պատուիրանքը չեն պահեր :

Պ. Չէ :



Ամբարիշտներուն ճամբան մի՛ երթար, ու չարերուն ճամբուն մէջ մի՛ քալեր : Անկէ զգուշացիր. անոր քովէն մի անցնիր, անկէ խոտորէ, ու անցիր : Առակ. Դ. 14, 15 : Ա Կորնթ. Ե. 9–13 :

Հ. Աստուած կը պահանջէ՞ մեզմէ աս պատուիրանքը պահել մեր բոլոր սրտովը, և բուն մեր սրտին մէջ ալ :

Պ. Հրամերես :

Լսեր էք որ ըսուեցաւ. Շնութիւն մի ըներ. Բայց ես ձեզի կ'ըսեմ. Ո՛վ որ կնիկ մարդու կը նայի անոր ցանկանալու համար, ալ անիկայ իր սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ : Մատթ. Ե. 27, 28 : Առակ. Զ. 25 :

Հ. Նոյի ժամանակուան մարդիկը ո՞ր պատուիրանքն անարգեցին, և շարժեցին Աստուծոյ բարկութիւնը՝ որ ջրհեղեղով կորսնցուց անոնք :

Պ. Եօթներորդ պատուիրանքը : Ծննդ. Զ. 1, 2 : եայլն :

Հ. Նու Սոդոմացիք ու Գոմորացիք ո՞ր պատուիրանքն անարգեցին ու շարժեցին Աստուծոյ բարկութիւնը՝ որ այրեց անոնք կրակով ու ծծումբով :

Պ. Նմանապէս եօթներորդը : Ծննդ. ԺԹ. 4–28 : Յուդ. 7 :

Հ. Աստուած ո՞րչափ Իսրայէլացիներ կորսնցուց մէկ օրուան մէջ, աս պատուիրանքն անարգելնուն համար :

Պ. "Քսանուչորս հազար" : Թուոց ԻԵ. 1–9 : Ա Կորնթ. Ժ. 8 :

Հ. Աստուած գալու աշխարհին մէջ ի՞նչպէս պիտի պատժէ պոռնիկներն ու շնացողները :

Պ. Յաւիտենական կրակով :

Արդ՝ մարմնին գործքերը յայտնի են, որ ասոնք են, շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիճութիւն, .... որ ասանկ բաներ գործողները Աստուծոյ արքայու-

թիւնը պիտի չժառանգեն ։ Գաղ. Ե. 19–21 ։ Բայց պոռնկութեան և ամէն չէրպ պղծութեան՝ կամ ագահութեան անունը անգամ չյիշուի ձեր մէջը, (ինչպէս որ կը վայլէ սուրբերուն,) և գարշելի բաներ՝ կամ յիմարական խօսքեր՝ կամ խեղկատակութիւն, որ չվայլեր, այլ մանաւանդ գոհութիւն ։ Աս իմանալով գիտնաք, որ ամէն պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ագահ՝ որ կռապաշտ է, Քրիստոսի ու Աստուծոյ թագաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի ։ Եփես. Ե. 3–5 ։ Իսկ վախկոտներուն՝ ու անհաւատներուն՝ ու պոռնիկներուն՝ և կախարդներուն՝ ու կռապաշտներուն՝ և պիղծերուն՝ ու մարդասպաններուն և բոլոր ստախօսներուն բաժինը՝ կրակով ու ծծումբով վառած լիճին մէջը պիտի ըլլայ, որ է երկրորդ մահը ։ Յայտ. ԻԱ. 8 ։

---

Եօթներորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի մեր պարտաւորութիւնը՝ ուրիշներուն ողջախոհութեանը վրայով. ու նաև մեր մարմինները լնտոր գործածելն ու սրբելը ։

Ա. Ամուսնութիւնը Աստուծմէ հաստատուեցաւ. և երբոր երկու յարմար անձանց մէջ՝ յարմար կանոնով կ'ըլլայ, շատ աղէկ ու երջանիկ վիճակ մըն է. և Աստուծոյ դիտաւորութիւնն ան էր՝ որ ասանկ ըլլայ ։ Աստուած կատարեց առաջին ամուսնութիւնը մեր առաջին ծնողացը մէջ. և ան ամուսնութիւնը՝ բոլոր ետքը գալու ուրիշ ամուսնութիւններուն օրինակ էր ։ Օրինաւոր ամուսնութիւնը միայն մէկ էրիկ մարդու և մէկ կնկան մը մէջ տեղը կը կայանայ. ու հրապարակաւ կատարուելու է ան հանդէսը, անանկ մարդիկներով՝ որ օրինաւոր իշխանութիւն ունին ան բանին վրայ ։ Մօտ ազգականի հետ ամուսնութիւն ապօրինաւոր է ։ Ամուսնանալէն ետքը երկու կերպով միայն զատուիլ կրնայ ըլլալ. մէյ մը՝ երբոր էրիկը



կամ կնիկը շնութիւն ընելու ըլլայ, մէյ մըն ալ՝ երբոր երկուքին մէկը մեռնելու ըլլայ ։

Բ. Հրաժարելու ենք շնութիւն ու պոռնկութիւն ընելէն. և պիղծ խորհուրդներուն կամ խօսակցութիւններուն հաճելու չենք, որ պիղծ գործքերուն արմատներն են ։ Մենք մեր ընկերներուն կնկանը կատարեալ սրբութիւնով պիտի նայինք. և պիտի պաշտպանենք ամէն պղծութիւններէն, ինչպէս որ կ'ուզենք թէ բուն մերինը պաշտպանուի. Մեր մարմիններն ալ պատուոյ մէջ պահելու ենք Աստուծոյ պաշտօնին համար՝ իբրև Սուրբ Հոգիին բնակելու տաճար մը ։

Գ. Մենք աս պատուիրանքը կ'անարգենք նախ՝ երբոր շնութիւն կամ պոռնկութիւն կ'ընենք, կամ պիղծ խորհուրդներուն ու ցանկութիւններուն և անպարկեշտ վարքերուն կամ խօսակցութիւններուն հաճութիւն կը ցուցունենք ։ Երկրորդ՝ երբոր ուրիշներն ալ կը քաջալերենք որ աս մեղքերը գործեն, ու չենք աշխատիր անոնք արգիլելու ։

Դ. Շնութիւնն ու պոռնկութիւնը սոսկալի մեղքեր են, և Աստուծոյ բարկութիւնը կը բերեն բոլոր ան մարդիկներուն վրայ՝ որ աս մեղքերը կը գործեն ։

Ե. Անոնք անանկ մեղքեր են՝ որ չեն կրնար պահուիլ. քանզի պոռնիկներուն ու շնացողներուն մէջը՝ հաւատք չկայ. անոնք որ ինքզինքնին կը ստեն, ընաւ չեն կրնար հաւատարիմ ըլլալ ձեզի. ու թէպէտև անոնց մեղքերը գաղտուկ մնան մարդոցմէ, բայց չկրնար ծածկուիլ Աստուծմէ, որուն առջևը ամէնածածուկ մեղքերը ես յայտնի են ։ Ղեւտ. ԺԸ. 17 ։ Ի. 2–9 ։ Առակ. Ե. 20–21 ։

Զ. Անոնք անանկ մեղքեր են՝ որ գործողներուն վրայ՝ ուրիշ մեղքերէն աւելի շուտով ու աւելի շատ ախտ՝ թշուառութիւն և կորուստ կը բերեն ։ Անոնք՝ որ աս մեղքերը կը գործեն՝ կը կորսնցունեն բուն իրենց պատիւը և ուրիշներուն պատիւն ալ, Աստուծոյ իշխանութիւնն ու կարգադրութիւնը, մարդուս խիստ երջանիկ վիճակը, ընկերութեան ամենալու բարիքը, իրենց զաւկին բարի համբաւը. և բուն իրենց հոգիին փրկութեան յոյսը ։ Անոնք իրենց ցանկութիւններուն ծառայ են, անոնց սիրտը

պղինձ է , անոնց միտքը խաւար է , անոնց խիղճը Թմրած է , անոնց բարքը ապականած է , անոնց բնաւորութիւնն անողորմ է ։ Անոնք ենթակայ են խիստ զզուելի ու տառապեցուցիչ հիւանդութիւններու՝ յանկարծահաս իջուածքներու ու մահուան . և անոնց պատժապարտ հաճոյութիւններուն մէջ տեղը՝ շատ անգամ կորուստը շուտով կը հասնի ։ Անոնց ընթացքն անոնք դժոխք կը տանի ։

Է . Աս մեղքերը արգիլուելու համար նախ՝ Թող տղաք զգուշութեամբ կրթուին բոլոր մաքրութիւններով , պաշտպանուին գէշ ընկերներէն , փտանգաւոր տեղերէն և բարքերնին ապականող զբօսանքներէն ։ Երկրորդ՝ Թող ամէն մէկը բարեխառն ըլլայ իր կենացը մէջ , աղէկ մարդիկներ ընտրէ իր ընկերութեանը համար , հեռու կենայ Թատրոններէն , գինետուններէն ու անմաքուր գիրքերէն ։ Երրորդ՝ իր պառկելու ու ելլելու ատենը կանուխ ու կանոնաւոր ըլլայ ։ Չորրորդ՝ ամէն բանէն աւելի Աստուծմէ օգնութիւն խնդրենք և հսկենք ու աղօԹենք՝ որ փորձութեան մէջ չիյնանք ։

---

Ութերորդ Պատուիրանքը ։

Ելից . Ի . 1–26 ։

Հ . Ո՞րն է ութերորդ Պատուիրանքը ։

Պ . "Գողութիւն մի՛ ըներ" ։

Հ . Թէ որ բան մը առնեմ որ իմս չէ , ի՞նչ բրած կ՚ըլլամ ։

Պ . Գողութիւն ։

Քու դրացիիդ զրկանք մի՛ ըներ , և յափշտակութիւն մի՛ ըներ . քեզի վարձքով բանողին օրականի վարձքը՝ մէկ գիշեր մինչև առտու քու քովդ չմնայ ։ Ղեւտ . ԺԹ . 13 ։

Հ . Թէ որ բան մը գտնեմ ու տիրոջը չտամ , ի՞նչ բրած կ՚ըլլամ ։



Պ . Գողութիւն ։ Ղեւտ . Զ . 1–7 ։

Հ . Թէ որ բան մը առնեմ կամ ծախեմ՝ և չխտակ ու լման չափով ու գինով չընեմ իմ առուտուրս , ի՞նչ բրած կ՚ըլլամ ։

Պ . Գողութիւն ։

Դատաստանի մէջ անիրաւութիւն պիտի չընէք , կանգունի մէջ՝ կշիռքի մէջ ու չափի մէջ ալ ։ Ձեր կշիռքները լման՝ ձեր կշռի քարերը լման՝ ձեր արդուն լման ու հիմէնը լման պիտի ըլլայ , ևայլն ։ Ղեւտ . ԺԹ . 35 , 36 ։

Հ . Թէ որ իմ դրացիիս իրաւամբ պարտք ունենամ , և կարողութիւն ունենալով՝ չուզեմ հատուցանել , ի՞նչ բրած կ՚ըլլամ ։

Պ . Գողութիւն ։ Երեմ . ԻԲ . 13 ։ Հռովմ . ԺԳ . 7 , 8 ։ Ա Տիմ . Ա . 10 ։

Հ . Թէ որ բան մը փոխ առնեմ՝ որն որ բնաւ ետ տալու միտք չունենամ , կամ անոր ասոր պարտք ընեմ՝ որ անոնք հատուցանելու բնաւ դիտաւորութիւն մը չունենամ , կամ աղէկ գիտնամ թէ բնաւ պիտի չկրնամ հատուցանել , ի՞նչ բրած կ՚ըլլամ ։

Պ . Գողութիւն ։

Ամբարիշտը փոխ կ՚առնէ ու չվճարեր . սակայն արդարը կ՚ողորմի ու կու տայ ։ Սաղմ . ԼԷ . 21 ։ Դ Թագ . Զ . 1–7 ։

Հ . Թէ որ ինչ և իցէ կերպով իմ դրացիս խաբեմ և իր ունեցածը ձեռքէն առնեմ , ի՞նչ բրած կ՚ըլլամ ։

Պ . Գողութիւն ։ Բ Օրէն . ԻԷ . 17 ։ Առակ . ԻԲ . 8 ։

Հ . Թէ որ ես գիտնամ Թէ ուրիշները կ՚ուզեն իմ դրացիէս գողութիւն ընել , ու չիմացունեմ իրեն ան բանը , և կամ անոնց գողցածնուն բաժին առնելու համոզուիմ , գողութիւն բրած պիտի ըլլամ ։

Պ. Հրամմերես. Գողին հաղորդ եղողը գողին պէս գէշ է:

Ու թէ որ անձ մը մեղանչէ, ու երդումի ձայնը լսելով՝ վկայ ըլլայ, կամ բանը տեսած ըլլայ կամ գիտցած, թէ որ չիմացունէ, յանցանքը ինքը պիտի կրէ: Ղեւտ. Ե. 1: Գող տեսնելով՝ անոր հետ միաբանեցար, ու շնացողներուն հետ բաժին ունեցար: Սաղմ. Ծ. 18: Գողին ընկեր եղողը իր հոգին կ'ատէ. անիկայ երդումը կը լսէ, ու իր գիտցածը չյայտներ: Առակ. ԻԹ. 24:

Հ. Ի՞նչ էր Աքարի յանցանքն ու անոր պատիժը:

Պ. Աս էր որ ոսկի լեզու մը ու գեղեցիկ վերարկու մը ու երկու հարիւր սիկղ արծաթ գողցաւ Երիքովի մէջ, և քարկոծուեցաւ իր բոլոր ընտանիքովը: Յես. Է. 1-26:

Հ. Ի՞նչ էր Աքաաբի և Յեզաբէլի յանցանքը:

Պ. Աս էր որ Յեզաբէլ մեռցունել տուաւ Նաբովթը, ու ետքը Աքաաբ անիրաւութեամբ անոր այգին իրեն առաւ: Գ Թագ. ԻԱ. 1-21:

Հ. Ու ի՞նչ եղան Աքաաբ ու Յեզաբէլ:

Պ. Կորսուեցան: Գ Թագ. ԻԲ. 34, 35:

Հ. Ո՞ր ծառան էր որ գողութիւն ըրաւ ու պահեց իր գողցածը՝ սուտ խօսելով, և բորոտութիւնով պատժուեցաւ:

Պ. Գեհեզի, Եղիսէ մարգարէին ծառան: Դ Թագ. Ե. 20-27:

Հ. Ո՞վ էր ան գողը՝ որ իր Տէրը մատնեց ու ետքը ինքզինքը խեղդեց:

Պ. Յուդա Իսկարիովտացին: Մատթ. ԻԷ. 3-8: Յոհ. ԺԲ. 6: Գործ. Ա. 18-25:

Հ. Թէ որ մէկը բան մը գողնայ ու ետքը սուտ զրուցէ իր գողցածը պահելու համար, անիկայ մէկ օգուտ մը կ'ըլլա՞յ իրեն:



Պ. Ոչ, անով միայն իր մեղքը կը մեծցունէ:

Հ. Որո՞նք էին Առաքելոց ատենը գողութեան ու ստախօսութեան համար մեռնողները:

Պ. Անանիա ու իր կնիկը Սափիրա: Գործ. Ե. 1-10:

Հ. Ասոր վրայով ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը:

Պ. "Ան որ գողութիւն կ'ընէր, ալ թող չգողնայ, այլ մանաւանդ աղէկ գործի մը պարապելով իր ձեռքովը աշխատի, որ կարող ըլլայ տալ կարօտ եղողին": Եփես. Դ. 28:

Հ. Քրիստոնեաներն ի՞նչպէս քալելու են աշխարհիկ մարդոց առջեւը:

Պ. "Արդարութեամբ": Ա Թես. Դ. 11, 12:

Հ. Ի՞նչպէս պիտի պահենք ինքզինքնիս գողութիւն ընելէն:

Պ. Աստուծմէ վախնալով ու Իրեն ապաւինելով:

Հ. Գողերը և սուտզրուցները բնաւ Աստուծոյ արքայութիւնը կրնա՞ն մտնել:

Պ. Ոչ:

Ոչ գողերը՝ ոչ ագահները՝ ոչ գինովները՝ ոչ նախատողները՝ ու ոչ յափշտակողները՝ Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն: Կորնթ. Զ. 10: Յայտ. ԻԱ. 8, եայլն:

---

Ութերորդ պատուիրանը մեզի կը սորվեցունէ մեր պարտաւորութիւնը, թէ՛ մեր ստացուածքին, և թէ՛ մեր ընկերին ստացուածքին վրայ:

Ա. Աս աշխարհիս մէջ մենք ու մեր ընտանիքները՝ զանազան բաներու կը կարօտինք՝ մխիթարութեան ու հանգստութեան համար. զոր օրինակ՝ տունի, հանդերձի, կերակուրի, եայլն: Ուստի ամէն մարդ պարտի ժիր ըլլալ

որ կարող ըլլայ օրինաւոր ապրուստ գտնել իրեն՝ և իր ընտանիքին համար ։ Նաև կը պահանջուի մեզմէ՝ որ մեր ընկերը թողունք որ իր ունեցածը վայելէ ․ ոչ իրմէն գողութիւն ընենք , ոչ ալ զինքը զրկենք և ոչ ի՛ և իցէ կերպով մըն ալ անիրաւութիւն մը ընենք իրեն ․ հապա արդարութեամբ վարուինք իր հետը , միշտ պաշտպանենք իր ստացուածքը , և անոր առաջ երթալուն ու բարի վիճակին վրայ ուրախանանք , իբր թէ ան ամէնը ճիշդ մեր անձին եղած համարելով ։

Բ ․ Մենք կ'անարգենք աս պատուիրանքը նախ՝ երբ որ մեր ձեռքը գողութիւն ընելու երկնցունենք ։ Երկրորդ՝ երբոր ծածուկ կամ յայտնի խաբենք մեր ընկերը ինչ և իցէ կերպով ․ կամ երբոր ուրանանք կամ զանց ընենք պարտքերնիս հատուցանել ․ կամ երբոր փոխ առնենք՝ գիտնալով որ պիտի չկրնանք հատուցանել , կամ բնաւ հատուցանելու դիտաւորութիւն չունենանք ․ կամ երբոր պատահի որ բան մը գտնենք ու տէրոջը չտանք ։ Երրորդ՝ երբոր բան մը գողցած ըլլանք կամ մեր ընկերը զրկած ըլլանք , և ետ չդարձունենք ինչ որ իրմէն առեր ենք ։ Չորրորդ՝ երբոր մեր ընկերը զրկողներուն հետ բաժանորդ ըլլանք , կամ գիտնանք անոնց չարութիւնն ու չիմացունենք իրեն ան բանը ։ Հինգերորդ՝ երբոր խստութեամբ ու բռնութեամբ վարուինք անոնց հետ՝ որ մեզի համար կ'աշխատին ու մեզմէ կախում ունին ․ և անոնց պէտք եղածը առատապէս չհոգալէն զատ՝ իրենց արդար վարձքն ալ չհատուցանենք , և այնպէս գրեթէ անոնք գողութիւն ընելու ստիպենք ․ կամ երբոր տեսնենք աղքատը մէկէ մը չարչարուած ու զրկուած , և չօգնենք անոր ։ Վեցերորդ՝ երբոր մենք անհոգ ըլլանք մեր գործին , պարապ կեցող կամ ծոյլ ըլլալով , և չաշխատինք ինքզինքնիս և մեր ընտանիքը կերակրելու ։ Թէ որ սանկ ընենք՝ իրաւունք չունինք մեր դրացիներէն կերակուր կամ օգնութիւն մը խնդրելու ( ա ) ։

---

ա ․ Վասնզի երբոր մենք ձեր քովն էինք՝ աս ձեզի կը պատուիրէինք , թէ ան որ չուզեր գործ գործել , հաց ալ թող չուտէ ։ Բ Թես ․ Գ ․ 10 ։



Գ ․ Ամէն մարդու պարտքն է պահել աս պատուիրանքը՝ ինչ և իցէ վիճակի մէջ որ ըլլայ ։ Երբեմն կը խորհի ծառան՝ թէ մեղք չէ իր տիրոջմէն գողութիւն ընելը , աղքատն իր հարուստ դրացիէն , ազգին գլխաւորներն իրենց ազգէն , զաւակն իր ծնողքէն , ևայլն ։ Առևտուրի մէջ ալ կը խորհին մարդիկ՝ որ կրնան գողնալ իրենց հետ առուտուր ընողներէն ․ բայց ասոնց ամէնն ալ դէշ են , ու Մի՛ գողնար պատուիրանքին դէմ ։ Ուստի թէ որ բանի մը կարօտութիւն ունենանք՝ չգողնանք , հապա իր տիրոջմէն խնդրենք ինչ որ պէտք է մեզի ։ Թէ որ կ'ուզես յաջողութիւն գտնել , վարպետութիւն բանեցունելու տեղը՝ պէտք է որ կատարեալ արդարութիւն ընես ամենուն հետ ։

Դ ․ Գողութիւնը զզուելի՝ նախատալից ու հոգեկորուստ մեղք մըն է ։ Գողին խղճմտանքն իրեն դէմ է ․ ինքը շարունակ կը վախնայ թէ գուցէ իր ըրածն իմացուի , և գրեթէ միշտ այնպէս կ'ըլլայ , ու իր գողցած բաներէն քիչ բերկրութիւն կ'ունենայ ․ ամէն բարի մարդ անոր վրայ նախատինքով ու անարգութիւնով կը նայի , և ոչ ալ մէկը անոր վրայ վստահութիւն կ'ունենայ ․ Աստուած ալ կը զզուի անկէ ու իր երկնաւոր թագաւորութենէն դուրս կը վռնտէ ։

Ե ․ Աս մեղքն արգիլելու համար՝ պէտք է որ գողութեան առաջին անգամին՝ տղաքները պատժուին , և աս մեղքին անարգութիւնը , ամօթը և չարութիւնը յայտնի ցուցուի անոնց ։ Սորվեցուր անոնց՝ բարերար , ողորմամիտ ու ժիր ըլլալ ․ իրենց ունեցած բաներով բաւականանալ , Աստուծմէ վախնալ և Յիսուսի ոսկեղէն կանոնը յիշել , այսինքն՝ Ամէն ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն , դուք ալ անոնց անանկ ըրէք ։ Մատթ ․ Է ․ 12 ։

Իններորդ Պատուիրանքը ։ —

ա Կորն. ժգ. 1–13 ։

Հ. Ո՞րն է իններորդ Պատուիրանքը ։

Պ. «Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մ՚ըներ» ։

Հ. Թէ որ քու վրադ ձգեմ ան յանցանքը՝ որն որ ուրիշ մէկը ըրեր է, ի՞նչ ըրած կ՚ըլլամ ։

Պ. Սուտ վկայութիւն ։

Հ. Թէ որ քու վրայովդ գէշ բաներ ըսեմ սուտ տեղը, ու ջանամ ուրիշներն ալ գէշ խորհել տալ քու վրայովդ, և այնպէս կորսնցունեմ քու բարի անունդ ու պատիւդ, անատենը ի՞նչ ըրած կ՚ըլլամ ։

Պ. Սուտ վկայութիւն ։

Հ. Թէ որ Աստուած վկայ բռնեմ իմ սուտ խօսքերս հաստատելու համար, իմ մեղքս ալ աւելի մեծ չ՞ըլլար ։

Պ. Հրամերես ։

Հ. Թէ որ քու վրայովդ սուտ տեղը ուրիշներուն գէշ խօսիլն ու ամբաստանութիւն ընելը լսեմ, և գիտնամ թէ դուն անմեղ ես, և անոնց հետ մէկ ըլլալով՝ իրենք յօժարեցունեմ աս բանին մէջը յառաջանալու, անատենը ի՞նչ ըրած կ՚ըլլամ ։

Պ. Սուտ վկայութիւն ։

Հ. Թէ որ դատաւորին առջևը կամ ուրիշ ո՛ և իցէ տեղ մը կանչուելու ըլլանք մեր ընկերին համար կամ անոր դէմ վկայութիւն ընելու, ի՞նչ պարտինք խօսիլ ։

Պ. Ճշմարտութիւն ։

Սուտ լուր պիտի չտարածես. անօրէնի հետ ձեռքդ պիտի չդնես անիրաւ վկայ ըլլալով ։ Չարութիւն ընելու համար՝ բազմութեանը պիտի չհետևիս. ու դատաստանի մէջ



իրաւունքը ծռելու համար շատերուն ետևէն խոտորելով՝ խօսք պիտի չխօսիս ։ Ել. իգ. 1, 2 ։

Հ. Ուստի ի՞նչ կ՚արգիլէ աս պատուիրանքը ։

Պ. Կ՚արգիլէ ամէն տեսակ բանսարկութիւնը, զըրպարտութիւնը և բամբասանքը ։

Հ. Ասոր վրայով ի՞նչ կ՚ըսէ Սուրբ Գիրքը ։

Պ. «Քու ժողովուրդիդ մէջը չարախօսութիւն ընելու չպտըտիս» ։ Ղևտ. ժթ. 16 ։

Հ. Ի՞նչ տեսակ մարդիկ են բանսարկուները, զըրպարտիչները և բամբասողները ։

Պ. Խռովարար ու վնասակար անձինք են .

Հ. Մեր ընկերներուն ի՞նչ կերպով պարտինք խօսիլ ճշմարտութիւնը ։

Պ. «Սիրով» ։

Հ. Ի՞նչ կ՚ըսէ Սուրբ Գիրքն ասոր վրայով ։

Պ. «Ամէն դառնութիւն՝ և բարկութիւն՝ ու սրտմտութիւն՝ և աղաղակ՝ ու հայհոյութիւն վերցուի ձեզմէ ամէն չարութիւններով մէկտեղ» ։ Եփես. դ. 31 ։

Հ. Կրնա՞մ նայիմ, ուրիշ ի՞նչ կ՚ըսէ Սուրբ Գիրքը ։

Պ. «Թէ որ մէկը զինքը կրօնասէր կը սեպէ՝ ու իր լեզուին սանձ չդնէր, հապա իր սիրտը կը խաբէ, անանկին կրօնասիրութիւնը փուճ է» ։ Յակ. ա. 26 ։

Հ. Ի՞նչպէս վարուելու ենք սուտզրուցներուն հետը ։

Պ. Պարտինք ատել սուտզրուցներն ու սուտ վկաները, և անոնց հետ ընկերութիւն ընելէն հրաժարիլ ։

Իմաստուններուն հետ քալողը իմաստուն կ՚ըլլայ. բայց անմիտներուն հետ ընկերացողը չար կ՚ըլլայ ։ Առակ. ժգ. 20 ։

Հ. Հրէաներն ի՞նչ վկայութիւն ըրին մեր Փրկչին դէմ ։

Գ. Սուտ վկայութիւն ։ Մատթ. իզ. 59–61 ։

Պ. Շատ հարստութեններէն մանաւանդ կեանքէն ալ ի՞նչ թանկագին բան ունի մարդ ։

Գ. "Բարի անուն" ։ Առակ. իբ. 1 ։

Պ. Բարի անուն վաստըկելու համար ի՞նչպէս ջանալու ենք ։

Գ. Բարի ըլլալով ու աղէկութիւն ընելով ։

Պ. Մենք որ մեծ բան կը սեպենք մեր աղէկ անունը, չե՞նք պարտաւորիր պաշտպանել նաեւ մեր ընկերինն ալ ։

Գ. Հրամմէրես, կը պարտաւորինք ։

Պ. Սուտ խօսողներն ու սուտ վկայութիւն ընողները կրնա՞ն անպատիժ մնալ ։

Գ. Ոչ ։

Սուտ վկան անպատիժ պիտի չմնայ, ու ստութիւններ խօսողը պիտի չազատի ։ Առակ. ժթ. 5, 9 ։

---

Իններորդ պատուիրանը մեզի կը սորվեցունէ մեր պարտաւորութիւնը՝ մեր ընկերին բարի անունին ու մեր բարի անունին վրայով ։

Ա. Աշխարհիս մէջ մեր հանգստութիւնն ու երջանկութիւնը, մեր յաջողութիւնը և մեր օգուտը՝ մեր ունեցած անունէն ու համբաւէն շատ կախում ունի ։ Ուստի մեր պարտաւորութիւնն է բարի գործքերով աղէկ անուն վաստըկելու ջանալ, ու երբոր կը ստանանք՝ մեր պարտաւորութիւնն է պաշտպանել անիկայ ։ Նաեւ մեր ընկերին ալ աղէկ անունն ու պատիւը պաշտպանելու ենք՝ իր վրայ ճըշմարիտը խորհելով ու խօսելով, առանց շողոքորթելու, զըպարտելու, կամ անոր վրայ անիրաւ կասկած մը ունենալու. ողորմութեամբ ու գթութեամբ յանդիմանելով անոր յանցանքները, ու անոնք ծածկելով ուրիշներէն՝ որչափ որ պէտք է ծածկել. պաշտպանելով զինքը ան թշնամիներէն՝ որոնք անոր աղէկ անունն աւրել կ'ուզեն և վերջապէս թէ իրեն համար է եղեր և թէ իրեն դէմ՝ ճըշ-



մարիտ վկայութիւն ընելով՝ վկայութիւն տալու կանչուած ատեննիս ։

Բ. Մենք աս պատուիրանը կ'անարգենք նախ՝ երբոր բանսարկու, շատախօս, խռովարար կամ բամբասող ըլլանք մեր հասարակ խօսակցութեանը մէջ ։ Երկրորդ՝ երբոր ասոր հակառակ մեր ընկերին չունեցած աղէկութիւններն իրեն տալով՝ շողոքորթութիւն ընենք ։ Երրորդ՝ երբոր դատաւորին առջեւը մեր ընկերին համար սուտ վկայութիւն ընելով՝ զըպարտութիւն մը վրան դնենք, որով գուցէ իր պատիւը կորսնցունենք, կամ իր ընտանեացը, իր ստացուածքին և կամ իր կեանքին ալ վնաս մը հասցունենք ։

Գ. Մարդիկ չարին հակամիտեալ ըլլալով՝ ընդհանրապէս կը սիրեն իրենց ընկերին վրայով գէշ խօսիլը. նմանապէս անոնց համար բռնած գէշ խօսքերը լսելը ։ Անկէց է որ կը ծագի վիճաբանութիւն, հակառակութիւն, նախանձ, ատելութիւն, վրէժխնդրութիւն ու կռիւ ։ Կարդա Յակ. գ. 1–18 ։

Դ. Թող ամէն մէկը Աստուծմէ շնորհք ու զօրութիւն խնդրէ՝ աս պատուիրանքը պահելու համար ։ Ըսէ դուն միշտ քու տկարութիւնդ յիշէ. քու գործքերդ քեզի բաւական զբաղմունք թող ըլլան, որ ուրիշին գործքին խառնուելու ժամանակ չունենաս. աղէկ մտիկ ըրէ՝ երկու կողմն ալ՝ թէ որ մէկը դատելու ըլլաս, ու նայէ՝ որ մէկու մը վրայ՝ մարդկայ վճիռը չընդունիս միշտ, բայց դուն քու խղճմտանքովդ դատէ՝ ամէն բան. որչափ որ կրնաս, միայն աղէկը պատմէ՝ քու ընկերիդ համար ։ Առաքելին Կորնթացւոց ժգ. գլուխը շատ անգամ կարդա ու մտածէ՝ անոր վրայ. յամբաստանողներուն ընկերութենէն հեռու կեցիր. և թէ որ անոնց հետը գտնուիս ու ուրիշ բան մը չկրնաս ընել՝ անոնց բանսարկութիւնները խափանելու, քու լռութիւնդ թող յանդիմանէ անոնք ։ Վերջապէս Աստուծմէ խնդրէ՝ եղբայրսիրութեան շնորհքը ։

Ե. Նաեւ մի՛ ցանկար գէշութիւն ընելով չար մարդոց մէջ անուն ստանալու. աշխարհ ինչ որ ըսելու ըլլայ քու վրայովդ՝ դուն անմեղ խղճմտանք մը ունեցիր Աստուծոյ ու մարդոց առջեւը. համբերէ՝ երբոր քեզի զրպարտութիւն

ընէն ու անիրաւութեամբ դատէն. Աստուծոյ ձգէ քու դատաստանդ. յօժարութեամբ դէպ'ի ան դատաստանին նայէ՛, երբոր ամէն մարդ իր գործքին համեմատ գովութիւն պիտի առնէ Աստուծմէ։ Մատթ. Ե. 11։ Ա Կորնթ. Դ. 3–5։

Ծ. Քրիստոնեաները յատկապէս իրենց բարի անունն ու իրենց եղբայրներուն բարի անունը զգուշութեամբ պահելու են, որ անօգուտ չըլլան աշխարհի մէջ, և մնաս չընեն Աւետարանին պատուոյն ու Քրիստոսի փառքին։

---

### Տասներորդ Պատուիրանքը։

Գ Թագ. ԻԱ. 1–16։

Հ. Ո՞րն է տասներորդ Պատուիրանքը։

Պ. “Քու դրացիիդ տունը մի՛ ցանկար. քու դրացիիդ կնկանը՝ կամ անոր ծառային՝ կամ անոր աղախինին՝ կամ անոր եզին՝ կամ անոր էշուն՝ և քու դրացիիդ ամենևին մէկ բանին մի՛ ցանկար”։

Հ. Աստուած ի՞նչպէս կը պահանջէ ինծմէ որ իմ ընկերս սիրեմ։

Պ. Իմ անձիս պէս։ Մատթ. ԻԲ. 35–40։ Հռովմ. ԺԳ. 9, 10։

Հ. Ուրեմն պարտաւոր չե՞մ ուրախանալու, երբոր տեսնեմ զինքը որ ամէն բարիքներով լեցուն է ու անոնք կը վայելէ։

Պ. Հրամերես։

Հ. Բայց դիցուք թէ ես անոր ունեցած պատուական բաներուն վրայ նախանձիմ, ցանկալով որ անոնք իմս ըլլան, ան ատենն ի՞նչ ըրած կ'ըլլամ։

Պ. Աչք տնկած կ'ըլլաս, որ աս տասներորդ պատուիրանքին դէմ է։



Հ. Աս չէ՞ իմ պարտաւորութիւնս, որ իմ ունեցած բաներովս գոհ ըլլամ, առանց իմ ընկերիս ունեցածին նախանձելու։

Պ. Հրամերես։

Հ. Ի՞նչ կ'ըսէ Պօղոս առաքեալ իր բաւականութիւն սորվելուն վրայով։

Պ. “Ես սորվեցայ գոհ ըլլալ իմ գտնուած վիճակիս մէջ։ Գիտեմ չքաւորութիւն քաշելը. գիտեմ շատը ունենալը. ամէն բանի մէջ ամէն կերպով աղէկ սորվեր եմ թէ՛ կշտանալը, թէ՛ անօթենալը, թէ՛ շատ ունենալը, և թէ՛ պակսութիւն քաշելը”։ Փիլիպ. Դ. 11, 12։ Գործ. Ի. 33։

Հ. Ուրիշ ի՞նչ կ'ըսէ։

Պ. “Աստուածպաշտութիւնը բաւականութիւնով մէկտեղ՝ մեծ շահավաճառութիւն մըն է։ Ինչու որ բան մը չբերինք աշխարհ, ու յայտնի է որ չենք կրնար անկէ բան մը տանիլ։ Հապա կերակուր ու հանդերձ ունենալով, անոնցմով բաւականանանք”։ Ա Տիմ. Զ. 6–8։

Հ. Ո՞րմէն կ'իջնեն ամէն բարի պարգևները և ամէն բարի շնորհքները։

Պ. Աստուծմէ։ Յակ. Ա. 17։

Հ. Թէ որ մէկը ժրաջան ըլլայ ու աշխատի և միշտ արդարութիւն գործէ Աստուծոյ առջևը, արդեօք Աստուած թող կուտա՞յ որ ան մարդուն պէտք եղած բան մը պակսի իրմէն։

Պ. Չէ՛։

Քանզի Տէր Աստուած արև ու վահան է. Տէրը շնորհք ու փառք պիտի տայ. բարութիւն մը պիտի չպակսեցունէ ուղղութեամբ քալողներէն։ Սաղմ. ՁԴ. 11։

Հ. Աս պատուիրանքը կ'արգիլէ՞ մեզ՝ մեր ընկերին դէմ մինչև անգամ չար խորհուրդ մը ունենալէն։

Պ. Հրամերես : Թագաւ. ժզ. 22 : Եսայ. ծզ. 2 : կդ. 9 :

Հ. Մաքուր սիրտ մը ունենալու համար ի՞նչպէս աղօթելու ենք Աստուծոյ :

Պ. «Ո՛վ Աստուած իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ՛, և իմ ներսիս դիս ուղիղ հոգի նորոգէ» : Սաղմ. ծա. 10 :

Հ. Եւ ի՞նչպէս աղօթելու ենք Աստուծոյ՝ մեր սիրտերը փորձելու համար :

Պ. «Փորձէ՛ զիս՝ ո՛վ Աստուած, ու գիտցի՛ր իմ սիրտս. զիս քննէ՛ ու գիտցի՛ր իմ մտածմունքներս, և նայէ թէ արդեօք չար ճամբու մ՞էջ եմ, և զիս դէպ 'ի յաւիտենական ճամբան առաջնորդէ» : Սաղմ. ճլթ. 23, 24 :

Հ. Ի՞նչպէս է առաջին չորս պատուիրանքներուն բովանդակութիւնը :

Պ. «Քու Տէր Աստուածդ՝ բոլոր սրտովդ, բոլոր հոգիովդ ու բոլոր զօրութիւնովդ սիրես» : Բ Օրին. Զ. 5 : Մատթ. իբ. 37 :

Հ. Եւ ի՞նչ է մնացած վեց պատուիրանքներուն բովանդակութիւնը :

Պ. «Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս» : Մատթ. իբ. 39 :

Հ. Պարտաւո՞ր ենք բոլոր պատուիրանքները կատարելապէս պահելու :

Պ. Հրամերես. և մեր պարտաւորութեան անփոփոխելի կանոնն են անոնք :

Հ. Ի՞նչ պիտի ըլլան անոնք՝ որ աս պատուիրանքներուն կատարելապէս չեն 'նազանդիր :

Պ. Պիտի պատժուին յաւիտենական կորուստով : Գաղ. Գ. 10 :

Հ. Բայց մենք որ 'նազանդած չենք աս պատուիրանքներուն, ի՞նչպէս ուրեմն պիտի փրկուինք յաւիտենական կորուստէն :



Պ. Տէր Յիսուս Քրիստոսին հաւատալով :

Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին, ու պիտի փրկուիս դուն՝ և քու տունդ : Գործ. ժզ. 31 : Մարկ. ժզ. 16

---

Տասներորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ մենք այնչափ սիրելու ու պատուելու ենք մեր ընկերը՝ որ սիրտերնուս մէջն անգամ ցանկալու չենք իր ունեցած բաներուն մէկին :

Ա. Ինքն ունենալու և վայելելու է բոլոր իր ստացուածները. ու մենք՝ թէ՛ գործքով և թէ՛ սրտով՝ անիրաւութիւն մը ընելու չենք իրեն : Երբոր ինքը յաջողութիւն ունենայ, մենք ուրախանալու ենք. և իր գործքերուն հոգ տանելու ենք. ու երբոր բանի մը կարօտութիւն ունենայ, իրեն օգնելու ենք : Մենք ալ գոհ ըլլալու ենք մեր վիճակէն, ինչպէս որ սահմաներ է անիկայ մեր երկնաւոր Հայրը :

Բ. Մենք աս պատուիրանքը կ'անարգենք նախ՝ երբոր տժգոհ ըլլանք Աստուծմէ գանգատելով, որ մեզ մեր ընկերին պէս իմաստուն, աղէկ, զօրաւոր, հարուստ, պատուելի, կամ անոր պէս երջանիկ չըրաւ : Երկրորդ՝ երբոր մենք նախանձինք մեր ընկերին, և ցանկանք որ ինքը զրկուի իր ստացած բանին մէկէն, և մենք ունենանք ու վայելենք անիկայ : Երրորդ՝ երբոր զինքը՝ կամ իր կինը կամ իր զաւակները կամ իր անասունը նեղութեան մէջ տեսնենք ու չօգնենք իրեն, այլ մանաւանդ վրան խնդանք :

Գ. Բնականաբար ամէն մարդ ինքզինքը իր ընկերէն աւելի աղէկ կը սիրէ. անոր համար մէկը մէկալին ունեցածին՝ կամ անոր յաջողութեանը նախանձելով՝ անոր աղէկ բաներուն ցանկացող ու անոր երջանկութեանը հոգ չտանող եղած կ'ըլլայ. բայց ասանկ անձնասիրութիւնը՝ բոլորովին դէշ բան է. ուստի անոր վրայ ապաշխարելու

ենք , և նոր սիրտ մը խնդրելու ենք որ կարենանք սիրել մեր ընկերը մեր անձին պէս ։

Դ . Աղօթենք որ կարող ըլլանք միշտ շնորհակալ ըլլալ ինչ որ ըլլայ մեր վիճակը ։ « Աս աշխարհիս մեծութիւնը անցաւոր է » ։ Տժգոհ ու ցանկացող մարդը միշտ նեղութեան մէջ է ։ Դաւիթ՝ ցանկացաւ Ուրիային կնոջը . Աքաաբ՝ Նաբովթին այգիին . Գէեզի՝ Նէեմանին արծաթին ու հանդերձին . Յուդա՝ Մարիամին ծանրագին իւղին . բայց ասոնք ամէնքն ալ իրենց ցանկութիւնէն թշուառ եղան ։ Ցանկացող մարդը ոչ իր ներսիդին խաղաղութիւն ունի , ոչ ալ իր ընկերներուն հետ ։ Թէ որ մեզի բաժին Աստուած ունենանք՝ բաւական է ։

———— Աս վեց պատուիրանքները՝ որոնք որ հիմա քննեցինք , Երկրորդ տախտակ կը կոչուին , և մեզի կը սորվեցունեն մեր պարտաւորութիւնը դէպ'ի մարդիկ . նախ՝ թէ մենք սիրով ու յարգութիւնով հնազանդելու ենք ան ամենուն՝ որոնք որ իշխանութիւն ունին մեր վրայ ։ Երկրորդ՝ թէ մեր ընկերին կեանքին վնաս մը պիտի չհասցունենք ։ Երրորդ՝ թէ անոր ընտանեացը սրբութիւնն ու մաքրութիւնը պահելու և պաշտպանելու ենք ։ Չորրորդ՝ թէ իր ստացուածքը յափշտակելու չենք ։ Հինգերորդ՝ թէ իր բարի անունը պիտի չաւրենք ։ Վեցերորդ՝ թէ իր յաջողութեանն ու հարստութեանը վրայ ուրախանալու ենք , և չարութեան գաղտուկ խորհուրդ մը անգամ սիրտերնուս մէջ ունենալու չենք իրեն դէմ ։

———— Ահա ասանկ են տասը պատուիրանքները , որոնք տուաւ մեզի ամենակարողն Աստուած , մեր Ստեղծիչն ու Թագաւորը ։

Ասոնք են մեր օրէնքը , մեր պարտաւորութեան կանոնը , որուն պարտաւոր ենք հետևելու սրտով ու գործքով կատարելապէս , ապա թէ ոչ՝ դատապարտութեան տակ կ'իյնանք ։

Մենք ամէնքս ալ աս օրէնքին կատարեալ հնազանդութիւն ընելնուս մէջ պակաս գտնուեցանք , ինչպէս որ մեր խղճմտանքն ալ ասանկ կը վկայէ . և անոր համար դատապարտուած ենք ։

Մենք մեզմէ բան մը չենք կրնար ընել , որ Աստուծոյ



հատուցում ըլլայ՝ իրեն դէմ մեր գործած մեղքերուն համար ։

Բայց ինքն իր մեծ ողորմութեամբը մեզի համար Փրկիչ մը նախախնամեց , Յիսուս Քրիստոս իր Որդին . որ մեզի համար Օրէնքին անէծքը կրեց ։ Ուստի փրկուելու համար պարտինք անոր հաւատալ ու անոր ապաւինիլ , ապաշխարելով ու մեր մեղքերը մէկ դի ձգելով ։

Օրէնքը մեզի վարժապետ կ'ըլլայ՝ մեզ Քրիստոսին բերելու համար ։ Մենք մեր սիրտերն ու մեր կեանքը օրէնքին հետ բաղդատելով՝ կը սորվինք մեր անթիւ յանցանքներն ու մեղքերը . կը սորվինք ան սոսկալի պատիժը որ գալու է . ան ատենը կը դողանք , ու կը հարցունենք թէ ի՞նչ պարտինք ընել ։ Ձայն մը կու գայ որ մեզի կ'ըսէ թէ՝ « Ահա Աստուծոյ Գառը որ աշխարհի մեղքը կը վերցունէ » . և թէ՝ « Ան որ հաւատայ պիտի փրկուի , ան որ չհաւատայ , պիտի դատապարտուի » ։ Ուստի ան երկնաւոր ձայնին հաւատալով՝ մեր հոգին կատարեալ ուրախութիւն կ'ունենայ ։

---

## Գ . ՄԱՍՆԱՒՈՐ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ ։

### 1 . Էրիկներուն պարտաւորութիւնը ։

Եփես . Ե . 22–33 ։

Հ . Էրկանն իր կնկանը վրայ ունեցած իշխանութեանը համար ի՞նչ կը սորվեցունէ Աւետարանը ։

Պ . « Էրիկը կնկանը գլուխն է , ինչպէս որ Քրիստոս ալ եկեղեցիին գլուխն է » ։ Եփես . Ե . 23–25 ։ տե՛ս Կորնթ . ԺԱ . 3 ։ տե՛ս Տիմ . Բ . 12 , 13 ։

Հ . Ի՞նչ է էրկանը պարտքը ։

Պ . Աս է՝ իր կնիկը սիրել ու անոր հոգ տանիլ ։ տե՛ս Տիմ . Ե . 8 ։

«Էրիկներ, սիրեցէ՛ք ձեր կնիկները, ինչպէս որ Քրիստոս ալ սիրեց եկեղեցին, ու իր անձը մատնեց անոր համար»: Եփես. Ե. 25:

Հ. Էրիկն իշխանութիւն ունի՞ իր կնիկը ծեծելու կամ անոր հետ չարաչար կերպով վարուելու:

Պ. Չէ. քանզի հրամայուած է էրիկներուն որ իրենց կնիկներուն «դառն չըլլան»: Կող. Գ. 19:

Հ. Պետրոս Առաքեալը ի՞նչ կը հրամայէ էրիկներուն:

Պ. «Նմանապէս էրիկները խոհեմութիւնով անոնց հետը բնակին. տկար անօթի պէս պատիւ տալով կնիկներուն, իբրեւ կենաց շնորհքին ժառանգակիցներ. որ ձեր աղօթքներուն արգելք չըլլայ»: Ա Պետ. Գ. 7:

Հ. Թէ որ բարեպաշտ էրիկ մը աշխարհասէր կնիկ ունենայ, ի՞նչ պիտի ընէ անոր համար:

Պ. Աղօթք ընելու է, և ձեռքէն եկածին չափ Քրիստոսի դարձունելու է անիկայ: Ա Կորնթ. Է. 14-16:

Հ. Անհաւատարիմ, անգութ ու իրենց կնկանը հոգ չտանող էրիկները պիտի փրկուի՞ն:

Պ. Չէ՛:

---

Ա. Աւետարանը կը սորվեցունէ որ էրիկներն իրենց կնիկներուն գլուխն են: Բայց անոնք թո՛ղ զգուշանան իրենց իշխանութիւնն ու զօրութիւնը չարաչար գործածելէն. ու նային որ բարկացող, անգութ, դաժան կամ անհամբոյր չըլլան: Իսկ ան էրիկը որ սաստիկ կերպով կը վարուի իր տկար ու անօգնական կնկանը հետ, անիկայ նուաստ ու թշուառ հոգւոյ տէր մարդ մըն է:

Բ. Էրիկները պարտին սիրել իրենց կնիկները, երկրի վրայ ունեցած իրենց խիստ մտերիմ ու սիրելի բարեկամները սեպելով անոնք:

Գ. Էրիկները խնամելու են իրենց կնիկները: Պէտք է որ ժրաջան, զգաստ ու խնայող ըլլան, որ կարողանան իրենց կնիկներուն պիտոյքներն ու մխիթարութիւնները հոգալու:



Դ. Էրիկները պատուելու են իրենց կնիկները: Եւ պէտք է որ յարգութիւն ու պատիւ ցուցնեն անոնց՝ թէ տանը մէջ ու թէ տնէն դուրս. մանաւանդ անոնց հիւանդութեան ժամանակը քաղցրութեամբ և մարդասիրութեամբ վարուին, համբերելով անոնց տկարութեանը, հեռու կենալով նախանձոտ բնութենէ, և մանաւանդ զգուշանալով որ պատճառ չտան կնիկներնուն՝ իրենց հաւատարմութեանը վրայ կասկածելու:

Ե. Էրիկները հոգ տանելու են իրենց կնկանը փրկութեանը համար: Ահա էրկանն ամենէն մեծ պարտաւորութիւնը՝ որ ունի իր կնկանը վրայ: Ուստի էրիկ մը թո՛ղ միշտ միտքը բերէ որ ինքը պիտի կայնի Աստուծոյ ատեանին առջեւը, ու հաշիւ պիտի տայ կնկանը հետ ունեցած՝ իր ամէն վարմունքին համար, և անոր վրայ ունեցած իր բոլոր ազդեցութիւններուն համար: Ա Կորնթ. Է. 16, 29-34:

---

## 2. Կնիկներուն պարտաւորութիւնը

Առակ. ԼԱ. 10-31:

Հ. Ի՞նչ է կնիկներուն յատուկ պարտաւորութիւնը:

Պ. Սիրել ու հնազանդիլ իրենց էրկանը:

Կնիկները իրենց էրիկներուն հնազանդ ըլլան՝ որպէս թէ Տէրոջը: Եփես. Ե. 22: Կող. Գ. 18: Ա Պետ. Գ. 1: Ա Տիմ. Բ. 11-15: Տիտ. Բ. 4, 5:

Հ. Պէ՞տք է որ կնիկները զարդարանք սիրեն, աշխարհի զուարճութիւն փնտռեն, ու տնէ տուն պտըտելով ամէն օր այցելութեան երթան:

Պ. Չէ՛: Ա Տիմ. Բ. 9, 10: Ա Պետ. Գ. 3, 4:

Հ. Ի՞նչ տեսակ հոգի ունենալու են անոնք:

Պ. “Հեզ ու հանդարտ հոգի մը” : ա Պետ. Գ. 4 :

Հ. Իսկ ան կնիկները՝ որոնք աստուածպաշտութեանը յանձնառու կ՚ըլլան, ինտո՞ր կը վայլէ որ զարդարուին :

Պ. Կը վայլէ որ բարի գործքերով զարդարուին” : ա Տիմ. Բ. 9, 10 :

Հ. Ո՞րն է կնիկներուն սեպհական տեղը, և ո՞ւր կը կայանայ իրենց գլխաւոր հոգն ու պարտաւորութիւնը :

Պ. Իրենց ընտանիքին մէջ : Առակ. ԼԱ. 10–31 :

Հ. Էրիկներն իրենց ընտանիքին հոգ տանիլը, ու ժրութեամբ և խնայողութեամբ ամէն բան մաքուր և ՚ի կարգի պահելը՝ որոնցմէ՞ կը յուսան

Պ. Իրենց կնիկներէն :

“Որ խրատեն նորահասակ կնիկները՝ էրիկնին սիրող, զաւակնին սիրող ըլլալ, խոհեմ, ողջախոհ, տնաշէն, բարեգործ, իրենց էրիկներուն հնազանդ. որ չըլլայ թէ Աստուծոյ խօսքը հայհոյուի” : Տիտ. Բ. 4, 5 :

Հ. Բարեպաշտ կնիկները՝ որ աշխարհասէր էրիկներ ունին, ի՞նչպէս պիտի աշխատին անոնք Քրիստոսի դարձունելու :

Պ. Իրենց բարի վարքովը : ա Կորն. Է. 16 : ա Պետ. Գ. 1, 2 :

Հ. Էրիկներուն և կնիկներուն ընտանեկան հոգևոր պարտաւորութիւնն ի՞նչ է :

Պ. Իրարու համար և իրարու հետ աղօթք ընել, և իրենց ընտանիքին հետ ալ, և իրարու երջանիկ ըլլալուն աշխատիլ, թէ աս աշխարհիս և թէ հանդերձեալ աշխարհին համար :

---

Ա. Կնիկները՝ Աստուծմէ ետքը իրենց էրիկներուն վրայ սէր ունենալու են :

Բ. Փոխանակ՝ բարկացող, անձասէր ու հակառակող ըլլալու, կնիկները պիտի հնազանդին իրենց էրիկներուն ամէն բանի մէջ, բաց ՚ի անոնցմէ՝ որ օրինաւոր չեն :



Գ. Իրենց ամենէն մեծ հոգն ու գլխաւոր պարտաւորութիւնը կը կայանայ բուն իրենց ընտանիքին մէջ : Ուստի հարկաւոր է որ տնաշէն, ժրաջան, կանուխ արթընցող, մաքրասէր, խնայող, զգուշաւոր, խաղաղարար և ծանրաբարոյ ըլլան. ու նաև աղէկ կառավարեն իրենց զաւկըներն ու ծառաները, առանց սաստիկ տռտըռալու, սպառնալու, ու ամէն ատեն գանգատ ընելու : Ան կնիկները՝ որ չափազանց զարդարանք կը սիրեն, ու միշտ տնէ տուն կը պտըտին, շաղակրատութիւն կ՚ընեն, ուրիշներուն բերնէն կը ջանան լուրեր առնել՝ որ ետքը բամբասանք ընեն ու խռովութիւն հանեն, անանկները թըշուառութեան մէջ կը ձգեն իրենց էրիկներն ու ընտանիքը, ու իրենց անձինքը փորձութեան ու դժբախտութեան կը տանին :

Դ. Բարեպաշտ կնիկները՝ որ աշխարհասէր էրիկներ ունին, պարտին զգուշ ըլլալ իրենց վարմունքին ու խօսակցութեանը մէջ, որ չըլլայ թէ նախապաշարմունքի տակ ձգեն իրենց էրիկները. այլ ընդ հակառակն պէտք է որ ամէն միջոցով համոզեն անոնք որ դարձի գան, ապաշխարեն ու հաւատան :

Ե. Էրիկներն ու կնիկները պէտք է որ միշտ միտքերնին բերեն իրենց խոստմունքները և իրենց պարտաւորութիւնները մէկզմէկու վրայ, իրենց զաւկըներուն և ծառաներուն վրայ, ու մանաւանդ դէպ՚ի Աստուած ալ. ու ամէն բանի մէջ պէտք է որ ջանան Աստուծոյ օրհնութիւնը ձեռք բերելու : Սաղմ. ՃԻԷ. 1 :

---

3. Ծնողքներուն պարտաւորութիւնը :

Հ. Ի՞նչ է բարեպաշտ ծնողաց առաջին պարտաւորութիւնը և արտօնութիւնը, իրենց զաւկըներուն վրայով :

Պ. Անոնց պարտաւորութիւնը և արտօնութիւնն է՝

անոնք Մկրտութեամբ ընծայել Տէրոջը՝ որմէ որ ընդունեցին անոնք ։ Ծննդ. ԺԷ. 7–14 ։ Հռոմ. Բ. 28, 29 ։ Դ. 11 ։ Կող. Բ. 9–12 ։ Գործ. Բ. 38, 39 ։ ԺԶ. 14, 15, 26–34 ։ Մատթ. ԺԹ. 13–15 ։ Բ Օրէն. Զ. 7 ։ ԼԲ. 46 ։ Բ Տիմ. Ա. 5 ։ Գ. 15 ։ Յես. ԻԴ. 15 ։ Սաղմ. ՀԸ. 4–8 ։ Ղուկ. Բ. 21 ։

Հ. Ի՞նչ ըսաւ մեր Փրկիչը՝ պզտիկ տղոց իրեն գալուն համար ։

Պ. « Թող տուէք մանր տղոց որ ինծի գան, և մի արգիլէք ատոնք. ինչու որ Աստուծոյ թագաւորութիւնը ատանկներունն է » ։ Մարկ. Ժ. 14–16 ։ Մատթ. ԺԹ. 14, 15 ։

Հ. Զաւկըները ի՞նչպէս կրթելու հրամայուեցաւ ծնողքներուն ։

Պ. « Տէրոջը վարժութիւնովը ու խրատովը » ։ Եփես. Զ. 4 ։

Հ. Ծնողքներն ամէն բանէն աւելի՝ ի՞նչ բանի պէտք է որ փափաքին իրենց զաւկըներուն համար ։

Պ. Հոգիներնուն փրկութեանը ։ Մատթ. Զ. 33 ։

Հ. Եւ ծնողքներն ի՞նչ պարտք պիտի պահանջեն իրենց զաւկըներէն ։

Պ. Շարունակ և կատարեալ հնազանդութիւն ։

Հ. Ի՞նչ պէտք է որ սորվեցունեն անոնց՝ որ ամէն իրիկուն ու առտու անպատճառ կատարեն ։

Պ. Աղօթք ընել Աստուծոյ ։

Հ. Ծնողքներն ի՞նչ գիրք պիտի կարդացունեն իրենց զաւկըներուն, և միշտ անկէ սորվեցունեն անոնց ։

Պ. Աստուածաշունչ Գիրքը ։

Հ. Ծնողքներուն պարտաւորութի՞ւնն է որ իրենց զաւկըներուն հետ՝ և իրենց զաւկըներուն համար՝ ամէն օր աղօթք ընեն ։



Պ. Հրամերես ։

Հ. Ի՞նչ տեսակ խօսակցութիւն պէտք է որ ընեն անոնք՝ իրենց զաւկըներուն առջևը ։

Պ. Բարի և օգտակար խօսակցութիւններ ։

Հ. Եւ ի՞նչ տեսակ օրինակներ տալու են անոնց ։

Պ. Բարի և գովելի օրինակներ ։

Հ. Արժա՞ն է որ ծնողքները բարկութեան գրգռեն իրենց զաւկըները, զբօսանքի համար ։

Պ. Ոչ. քանզի գրուած է. « Հայրեր՝ ձեր որդիները մի բարկացունէք » ։ Եփես. Զ. 4 ։ Կող. Գ. 21 ։

Հ. Ծնողաց պարտքն է որ զաւկըներնին չար ընկերութենէ զգուշացընեն ու անկէ հեռու պահեն ։

Պ. Հրամերես ։ Առակ. Ա. 10–15 ։ ԺԳ. 20 ։ Ա Կորն. ԺԵ. 33 ։

Հ. Երբոր տղաք չար ու կամակոր ըլլալով չհնազանդին իրենց ծնողացը, անատեն ի՞նչ է ծնողաց պարտքը ։

Պ. Պէտք է որ պատժելով խրատեն անոնք ։ Առակ. ԺԳ. 24 ։ ԺԹ. 18 ։ ԻԲ. 15 ։ ԻԹ. 15, 17 ։

Հ. Ի՞նչ խրատ տուաւ Իմաստունն ասոր վրայով ։

Պ. « Տղայէն խրատը մի՛ կտրեր. վասն զի թէ որ զանիկայ գաւազանով ծեծես, չմեռնիր ։ Դուն անիկայ գաւազանով կը ծեծես, բայց անոր հոգին դժոխքէն կ՚ազատես » ։ Առակ. ԻԳ. 13, 14 ։

Հ. Եւ ի՞նչ ըսաւ անիկայ, զաւկի մը կրթութեանը համար ։

Պ. « Կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատենը, որ իր ծերութեան ատենն ալ անկէ չխոտորի » ։ Առակ. ԻԲ. 6 ։

Հ. Հաւատարիմ և արդար ծնողքներուն զաւկըները յատուկ պիտի օրհնուի՞ն ։

Պ. Հրամերես : Ծննդ. ԺԸ. 19 : Բ Օրէն. Դ. 40 : Է. 9 :

Հ. Ի՞նչ կ'ըսէ Դաւիթ ասոր վրայով :

Պ. “Տղայ էի ու ծերացայ. բայց արդարը անտես եղած չտեսայ, կամ անոր զաւակը հաց մուրացող : Ամէն օր կ'ողորմի ու փոխ կու տայ, և անոր սերունդը օրհնուած է : Սաղմ. ԼԷ. 25, 26 :

Հ. Չար ծնողաց պատիժը՝ իրենց զաւկըներուն կը հատուցանէ՞ Աստուած :

Պ. Հրամերես : Ելից Ի. 5 : ԼԴ. 7 : Թուոց ԺԴ. 18 : Սաղմ. ԼԷ. 28 :

---

Ա. Բարեպաշտ ծնողաց առաջին պարտաւորութիւնը և արտօնութիւնը՝ իրենց զաւկըները մկրտութեան բերելն է. քանզի ատանկով իրենց զաւկըներուն համար ուխտ մը ըրած կ'ըլլան Աստուծոյ հետ՝ որ Աստուած իրենց զաւկըներուն Աստուած ըլլայ, և ան զաւակներն Աստուծոյ ծառաներ ըլլան : Ուստի ան զաւկըներն հասկընալու կարող ըլլալնուն պէս, պէտք է որ ծնողքերը պատմեն անոնց աս ուխտը, ըսելով թէ անոնք՝ Աստուծոյ ընծայուած են, ու իր եկեղեցիին մէջ մկրտուած են, և թէ իրենց պարտաւորութիւնն է որ ապաշխարեն ու հաւատան Յիսուս Քրիստոսի, և ինքզինքնին Աստուծոյ յանձնեն. և թէ այնուհետև խոստովանելով զիրենք Աստուծոյ զաւակները՝ պէտք է որ ընդունին ու յանձն առնեն ան ամէնը՝ որ ծնողքներն իրենց մանկութեան ատենն ըրին իրենց համար՝ Աստուծոյ հրամանին պէս :

Բ. Ծնողքները պէտք է որ հոգ տանին զաւակներնուն, համբերող ըլլան անոնց տկարութիւններուն ու պակսութիւններուն. հոգան անոնց պէտք եղածը, պահպանեն անոնք վնասներէ, աշխատասէր ըլլալ սորվեցունեն անոնց, ու անոնք աղէկ վարժեցունեն գիտութեան մէջ, որ տուներէն ու կալուածքներէն աւելի աղէկ բան է :



Պէտք է նաև սորվեցունեն անոնց աղօթք ընել, ու ստէպ աղօթք ընեն անոնց հետ՝ և անոնց համար : Անոնք տակաւին կարդալ չսորված՝ սորվեցունեն անոնց Սուրբ Գիրքին մէջէն : Պզտիկուց տանին անոնք Աստուծոյ տունը, ու մեծ պատիւ մատուցանել տան Աստուծոյ սուրբ օրուան՝ այսինքն Կիրակիին. զգուշացունեն ու հեռու պահեն անոնք չար ընկերներէ. յանդիմանեն անոնց յանցանքը՝ գաւազանին ալ չխնայելով : Թող ծնողքները չբարկացունեն զաւկըներնին. հապա արմատացունեն անոնց ներսը՝ ժրաջան, հեզ, խաղաղ, գոհ, ողորմած և ուրախ բնաւորութիւն մը : Հոգ տանին որ անոնք սիրեն եղբայրնին ու քոյրերնին. բարերար և ակնածու ըլլան ամէնամարդու, մանաւանդ ծերերուն. միշտ անոնց միտքը ձգեն՝ որ երջանիկ ըլլալու համար, անոնք պարտին օգտակար գործի մը մէջ ըլլալ. մանաւանդ պարտին նոր սիրտ մը ունենալ, սիրել Աստուած ամէն բանէն աւելի, և իրենց դրացին ալ իրենց անձին պէս : Իսկ թող ծնողքները միշտ յիշեն՝ որ անօգուտ կ'ըլլան իրենց բոլոր խրատները, քանի որ բարի օրինակ չտան իրենց զաւկըներուն :

Գ. Աստուած՝ մասնաւոր խոստմունքներ կ'ընէ հաւատարիմ ու բարեպաշտ ծնողքներուն, թէ անոնց սերունդը պիտի օրհնուի : Բայց ասանկ խոստմունքներ չկան՝ անհաւատարիմ ու անբարեպաշտ ծնողքներուն. ասոնք Աստուծոյ անէծքը պիտի բերեն իրենց զաւկըներուն վրայ : Ուստի պէտք է որ՝ առաջ իրենք սկսին Աստուծոյ ծառայել, ու ան ատեն Աստուած անոնց՝ և զաւկըներնուն Աստուած պիտի ըլլայ :

4 . Տղայոց պարտաւորութիւնը :

(Տե՛ս Հինգերորդ պատուիրանը :)

---

5 . Տէրերուն պարտաւորութիւնը :

Ղուկ . Է . 1–10

Հ . Աստուած ի՞նչ պատուէր տուաւ տէրերուն :

Պ . «Դուք ալ տէրեր՝ նոյնը ըրէք անոնց , ու սպառնալիքը թող տուէք , գիտնալով որ անոնց ալ ձեր ալ Տէրը երկինքն է . ու անոր քովը աչառութիւն չկայ : Եփես . Զ . 9 : Տէրեր՝ ձեր ծառաներուն իրաւունք ու հաւասարութիւն տուէք , գիտնալով որ դուք ալ Տէր ունիք երկինքը» : Կող . Դ . 1 :

Հ . Ո՞վ է մեր ամենուս Տէրը երկինքին մէջ :

Պ . Աստուած է :

Հ . Ուստի տէրերն ու ծառաները՝ ամէնքն ալ հաւասա՞ր են Աստուծոյ առջեւը :

Պ . Այո , քանզի անիկայ աչառութիւն չըներ : Յոբ . ԼԱ . 13–15 :

Հ . Ի՞նչպէս պիտի վարուին տէրերը իրենց ծառաներուն հետ :

Պ . Արդար ու մարդասէր վարմունքով :

Հ . Ի՞նչպէս կրնան տէրերը անիրաւութիւն ընել իրենց ծառաներուն :

Պ . Անոնց բաւական ու աղէկ կերակուր տալը զանց ընելով , կամ անոնցմէ չափազանց աշխատութիւն պահանջելով , կամ իրենց ծառայութեանը փոխարէն արժանաւոր վարձք չտալով , կամ իրենց խոստացած վարձքին



մէկ մասը կտրելով , կամ վճարումը երկնցունելով՝ և ուշ հատուցանելով :

Հ . Ի՞նչ պատուէր տուաւ Մովսէսին օրէնքը , ծառաներուն վարձքը ժամանակին վճարելու համար :

Պ . «Քեզի վարձքով բանողին օրական վարձքը մէկ գիշեր մինչև առաւօտ քու քովդ չմնայ» : Ղևտ . ԺԹ . 13 :

Հ . Երեմիա մարգարէին բերնովը Աստուած որո՞ւ դէմ կը գոչէ :

Պ . Անոր դէմ՝ որ կը շինէ իր տունը անարդարութեամբ , ու իր վերնատունն անիրաւութեամբ . իր դրացին ձրի կ'աշխատցունէ , ու անոր վարձքը չհատուցաներ : Երեմ . ԻԲ . 13 :

Հ . Որո՞ւ դէմ Աստուած պիտի գայ դատաստան ընէ , կ'ըսէ Մաղաքիա մարգարէն :

Պ . Անոնց դէմ՝ որոնք կը չարչըրկեն վարձկանները իրենց վարձուցը համար : Մաղաք . Գ . 5 :

Հ . Ի՞նչպէս կրնան տէրերը անմարդասէր ըլլալ իրենց ծառաներուն :

Պ . Խիստ և դաժան կամ տռտռացող վարմունք մը ունենալով անոնց հետ :

Հ . Տէրերը իրենց ծառաներուն հոգիներուն համար պարտաւորութիւն մը ունի՞ն :

Պ . Հրամերես պարտական են կրթել իրենց ծառաները , Սուրբ Գիրքը անոնց սորվեցունելով , և ամէն պատեհութիւն ու քաջալերութիւնը տալով՝ որ իրենց հոգիներուն փրկութեանը հոգ տանին :

---

Աստուած արդար Աստուած մըն է , ու վերջին օրը պիտի պատժէ ան ամէն անիրաւութիւնը՝ որ մարդիկ տկար և անօգնական անձանց կ'ընեն : Ան ատենն ամենուն Տէրը

Ճշդիւ պիտի քննէ բոլոր մեր ունեցած վարմունքներն ան մարդոց հետ՝ որ Ինքը դրաւ մեր իշխանութեանը տակը ։ Ընդհանրապէս ծառաներուն վիճակն անարգ ու թշուառ է ։ Բայց տէր մը՝ բոլոր իր ջանքը պիտի թափէ, արդար ու քաղցր վարմունքով հաճելի ընելու անոնց վիճակը՝ աս կեանքին մէջ. նաև իր կրցածին չափ պիտի աշխատի խրատով ու օրինակով անանկ ընթացք մը բռնել տալ անոնց՝ որ երջանիկ ու կատարեալ ըլլան հանդերձեալ կեանքին մէջ ։

---

## 6. Ծառաներուն պարտաւորութիւնը ։

Ծնն. իդ. 1–67 ։

Հ. Ծառաներուն ի՞նչ պատուէր տուաւ Աստուած՝ իրենց տէրերուն հնազանդելու վրայով ։

Պ. «Ծառաներ՝ ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերուն. չէ թէ աչքի առջև ծառայելով՝ մարդահաճոներու պէս, հապա սրտի միամտութեամբ՝ Տէրոջմէ վախնալով» ։ Կող. գ. 22 ։

Հ. «Աչքի առջև ծառայելը» ի՞նչ ըսել է ։

Պ. Աս խօսքը կը վերաբերի ան ծառաներուն վարմունքին՝ որոնք միայն իրենց տիրոջը աչքին առջևը աղէկ կը ծառայեն ։

Հ. Ան ծառան՝ որ իր երկրաւոր տիրոջը աչքին առջևը միայն կը ծառայէ, իր երկնաւոր Տէրոջը առջևն ալ նոյնպէս պիտի վարուի՞ ։

Պ. Հրամերես ։

Հ. Ուրեմն ծառաներն ի՞նչպէս պիտի ծառայեն իրենց տէրերուն ։

Պ. «Յօժարութեամբ պիտի ծառայեն որպէս թէ Տէրոջը, ու չէ թէ մարդոց» ։ Եփես. զ. 7 ։



Հ. Իրենց տէրերուն ի՞նչ բանի մէջ հաճելի ըլլալու պիտի ջանան ։

Պ. «Ամէն բանի մէջ հաճելի պիտի ըլլան, ոչ հակառակախօսներ» ։ Տիտ. բ. 9 ։ Ա Պետ. բ. 18–21 ։

Հ. «Ո՛չ հակառակախօս» ըսելով ի՞նչ ըսել կ'ուզէ ։

Պ. Ըսել կ'ուզէ որ՝ պէտք չէ անխոհեմութեամբ դիմադարձութիւն ընել՝ երբոր կը յանդիմանուի յանցանքի մը համար ։

Հ. Ծառայի մը ներուած է որ իր տիրոջմէն գողութիւն ընէ, սուտ խօսի անոր, կամ խաբէութիւն բանեցունէ՝ անոր համար բան մը ծախու առած ատենը ։

Պ. Ոչ. վասն զի իր պարտաւորութիւնն է, «բոլորովին բարի հաւատարմութիւն ցուցընել» ։ Տիտ. բ. 10 ։

Հ. Թէ որ ծառաներն իրենց պարտաւորութիւնը հաւատարմութեամբ կատարեն, ու իրենց ծառայական վիճակին մէջ Աստուծոյ ծառայեն, ան ատենը յարգելի պիտի չըլլա՞ն մարդոց քով, ու օրհնեալ և պատուելի Աստուծոյ առջևը ուրիշներուն պէս ։

Պ. Այո պիտի ըլլան. որովհետև «Ամէն մէկը ինչ բարիք որ ընէ, նոյնը Տէրոջմէն պիտի ընդունի, թէ ծառայ ըլլայ և թէ ազատ» ։ Եփես. զ. 8

---

Ա. Թող ծառաները հաւատարմութեամբ ծառայեն իրենց տէրերուն՝ նաև անոնց ետևէն ալ, ինչպէս որ անոնց առջևը ։ Աստուած միշտ կը տեսնէ, թէ և տէրերը հոն չըլլան ։

Բ. Ծառաները երբեմն անանկ կը կարծեն, որ առանց Աստուած բարկացունելու՝ կրնան իրենց տիրոջը

սուտ խօսիլ ու խաբէութիւն ընել, և անկից գողնալ. բայց ասանկ չէ. ինչու որ Աստուած չհաճիր ասանկ բանին. անիկայ կը պահանջէ արդարութիւն ու հաւատարմութիւն ամէն մարդոցմէ և ամէն պարագայի մէջ։

---

7. Իշխաններուն պարտաւորութիւնը։

Գ Թագ. Գ. 1–28։ Դան. Զ. 1–37։

Հ. Պէ՞տք է որ ամէն երկիր և ամէն ժողովուրդ օրէնք ունենայ, և հասարակութիւնը ան օրէնքին հնազանդեցունելու համար ալ՝ իշխաններ և կառավարիչներ ըլլան։

Պ. Հրամերես։

Հ. Թէ որ քաղաքներնուս մէջ ոչ օրէնք ունենանք ու ոչ ալ կառավարիչ, կրնա՞նք ապահով կամ երջանիկ ըլլալ։

Պ. Ոչ. քանզի ան ատենն ամէն մարդ իր ուզածը կ՚ընէ։ Դատ. ժէ. 6։ Տես նաև ժը և ժթ գլուխները։

Հ. Պէ՞տք է որ ամէն կառավարիչ Աստուծմէ կարգուած՝ և Անով մեզ կառավարելու դրուած սեպենք։

Պ. Հրամերես. “Վասն զի չկայ իշխանութիւն մը որ Աստուծմէ չըլլայ. և անոնք որ կան՝ Աստուծմէ կարգուած են”։ Հռով. ժգ. 1։

Հ. Իշխաններն ի՞նչպէս մարդիկ ըլլալու են։

Պ. “Կարող մարդիկ՝ Աստուծմէ վախցող՝ ճշմարտասէր ու ագահութիւնը ատող մարդիկ”։ Ելից ժը. 21։

Հ. Անոնք որո՞ւն վախովը ժողովուրդը կառավարելու են։

Պ. Աստուծոյ վախովը։ Բ Օրին. ժէ. 14–20։ Յես. ա. 8։ Բ Թագ. իգ. 3։ Բ Մնաց. ժթ. 4–11։



Հ. Իշխանները երկու մարդոց դատը ի՞նչպէս պիտի տեսնեն։

Պ. Արդար դատաստանով։ Բ Օրին. ժզ. 18, 19։ ժէ. 6։ Առակ. իթ. 12–14։ Երեմ. իբ. 2–4։

---

Ա. Բոլոր երկրիս վրայ եղած ամէն ազգի և ժողովուրդոց անշուշտ հարկաւոր է օրէնքներ և իշխաններ ունենալ։ Մարդս բնականաբար անօրէն էակ մըն է. ուստի պէտք է որ միշտ իշխանութեան տակ ըլլայ։

Բ. Երբոր մէկը իշխան կ՚ըլլայ, Աստուծոյ ձեռքովը կ՚ըլլայ. այսինքն՝ Աստուած կը կանչէ անիկայ ան պաշտօնին։ Աստուած՝ իր նախախնամութեամբը թող կու տայ որ կառավարէ։ Եւ անիկայ Աստուծոյ սպասաւորն է, և պէտք է որ ան պաշտօնովը ծառայէ Աստուծոյ։ Եւ ժողովուրդն ալ պէտք է որ իբրև “Աստուծոյ սպասաւոր” համարին անիկայ։ Հռով. ժգ. 4։

Գ. Իշխանները բարձր պաշտօնի կանչուած են. և որովհետև կրնան ժողովուրդին շատ բարիք կամ չարիք ընել, անոր համար պէտք է որ “կարող մարդիկ՝ Աստուծմէ վախցող՝ ճշմարտասէր ու ագահութիւնը ատող մարդիկ” ըլլան. բարեմիտ և բարեսիրտ մարդիկ. որ մէկուն՝ մէկալէն աւելի աչառութիւն չընեն, որ մէկու մը երեսպաշտութիւն չընեն, որ ծուռ դատաստան կտրելու համար կաշառք չուտեն։

Դ. Անոնք պէտք է վարձատրեն արդարները և պատժեն չարերը, ամէն մարդոց իրաւունքը և ապրանքը պաշտպանելով, անանկ որ չարութիւն ընողներն իրենցմէ վախնան, և բարիները քաջալերութիւն առնեն. որ այսպէս իրենց երկիրը բարեհամբաւ ըլլայ ու յաջողութեամբ յառաջ երթայ. և ժողովուրդը հանգիստ և ուրախ ըլլայ։

8 • Ժողովուրդին պարտաւորութիւնը ։

Հռովմ . ԺԳ . 1–14 ։

Հ • Որովհետեւ իշխանները մեր աղէկութեանը համար դրուած Աստուծոյ պաշտօնեաներն են, ուստի պէտք չէ՞ որ պատուենք եւ յարգենք անոնք ։

Պ • Հրամերես ։ Ա Պետ . Բ . 17 ։ Առակ . ԻԴ . 21 ։

Հ • Հրաման ունի՞նք մեր իշխանները վար զարնելու կամ անոնց դէմ խօսելու ։

Պ • Ոչ . ինչու որ գրուած է, թէ "Դատաւորները մի հայհոյեր, եւ քու ժողովուրդին իշխանը մի անիծեր" ։ Ելից ԻԲ . 28 ։ Ու դարձեալ "Ուստի հատուցէք պէտք եղածը ամենուն . որուն որ տուրք պարտ է՝ տուրքը, որուն որ մաքս՝ մաքսը, որուն որ վախ՝ վախնալը, որուն որ պատիւ՝ պատիւը" ։ Հռովմ . ԺԳ . 7 ։ Մատթ . ԻԲ . 21 ։ ԺԷ . 24–26 ։

Հ • Բարի քաղաքացին ինչո՞վ կը ճանչցուի ։

Պ • Իշխաններուն հնազանդելովը ու քաղաքին ամէն օրէնքները բռնելովը ։

Հ • Մենք օրէնքին հնազանդելէն 'ի զատ՝ ուրիշներն ալ համոզելու պարտաւո՞ր ենք ։

Պ • Հրամերես ։

Հ • Ան որ օրէնքը կ'աւրէ՝ չհնազանդիր՝ մարդասպանութիւն ու գողութիւն կ'ընէ, արժան չէ՞ որ բռնուի եւ օրէնքին հրամայածին պէս պատժուի ։

Պ • Հրամերես ։ Բ Օրին . ԻԵ . 1–3 ։

Հ • Ուստի աղէ՞կ բան է որ գող մը կամ մարդասպան մը ազատենք, ծածկելով իր եղած տեղը եւ իր փախչելուն օգնելով ։



Պ • Ոչ . քանզի այսպէս՝ քաղաքին ապահովութեանը կը վնասենք ։

Հ • Մեր իշխաններուն համար աղօթելու յատուկ հրաման մը եղած կա՞յ մեզի ։

Պ • Հրամերես ։ "Արդ՝ կ'աղաչեմ . ամէն բանէն առաջ՝ աղօթք ընել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն՝ ամէն մարդոց համար, մանաւանդ թագաւորներուն եւ բոլոր իշխանաւորներուն համար . որ խաղաղ ու հանդարտ կեանք վարենք՝ բոլորովին աստուածպաշտութիւնով ու պարկեշտութիւնով ։ Ինչու որ ան է աղէկը ու ընդունելին մեր Փրկիչ Աստուծոյն առջեւը" ։ Ա Տիմ . Բ . 1–3 ։

---

Ա • Ժողովուրդին պարտաւորութիւնն է իրենց իշխանները պատուել եւ յարգել . անոնք Աստուծոյ սպասաւորներն են . ուստի պէտք է որ ժողովուրդը իշխաններուն պատիւն ու յարգը ճանչնայ, արժանաւոր գովութիւն տալով իրենց պաշտօնին մէջ ցըցուցած աղէկ վարքերնուն համար . ու իրենց երբեմն ըրած պակսութիւննին եւ մոռացկոտութիւննին ալ ծածկելով ։ Անոնց վրայով նախապաշարմունքներ ունենալէն եւ գէշ լուրեր լսելէն՝ պէտք է փախչին, եւ ամէն ինչ որ կ'ընեն կամ կ'ըսեն, զգուշանան իրենց իշխաններուն պատուոյն դպչելէն ։

Բ • Պէտք է որ ժողովուրդը երկիւղածութիւնով եւ կատարելապէս հնազանդի քաղաքին օրէնքին եւ իշխաններուն ։ Ան՝ որ իշխանները վար կը զարնէ եւ օրէնքը կ'անարգէ, բոլոր իր քաղաքակից ժողովուրդին դէմ կը մեղանչէ . նաեւ կը մեղանչէ մեր Տէր Յիսուսին կրօնքին դէմ՝ որ կը սորվեցունէ մեզի հնազանդ ըլլալ ամէն անոնց՝ որոնք մեզ կառավարելու իշխանութիւն ունին ։

Գ • Մենք չէ՛ թէ միայն օրէնքին հնազանդելու ենք, հապա նաեւ ջանք ընելու ենք բոլոր մեր քաղաքակիցներն ալ մեզի պէս հնազանդեցունելու ։ Ու երբոր մէկը օրէնքն անարգէ՝ գողութիւն, սպանութիւն կամ ինչ եւ իցէ չա-

րագործութիւն ընելով , պէտք չէ որ մենք մեր օգնութիւնովն անխնայ պաշտպանենք կամ փախցունենք , քանզի ասանկով քաղաքին ապահովութիւնը և համբաւը կ'աւրուի :

Դ . Աստուած կ'ուզէ մեզմէ որ , չէ՛ թէ միայն յարգութիւն տանք և հնազանդինք իշխաններուն , հապա նաև աղօթք ընենք անոնց համար , որ Աստուած օրհնէ անոնք , և անոնց ընտանիքները . որ բարի իշխաններ ըլլան , աստուածավախ , իրենց պաշտօնը հաւատարմութիւնով կատարող , ժողովրդոց աղէկութիւնը փնտռող , անանկ որ՝ ամէն խաղաղութիւնով մենք ալ մարդոց ու Աստուծոյ մեր ունեցած պարտաւորութիւննիս աղէկ կատարենք :

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Пуб. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

3312

ՀՀ Ազգային գրադարան
NL0030089